ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

5

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵՄԱՆ ARCH. MESROB ASHJIAN
ՄԱՏԵՆԱՇԱՐ BOOK SERIES
2 2

A II 90224

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Հ 282

Ժողովածուն տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.դ.,պրոֆ. Ա.Ա. Մելքոնյան

Հ 282 Հայոց պատմության հարցեր /գիտական հոդվածների ժողովածու/, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ , 2005, 181 էջ

«Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների V ժողովածուն նվիրված է ժողովրդագրության հարցերին: Այստեղ ընդգրկված են 2004թ. հունիսի 17-19 տեղի ունեցած «Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան» գիտաժողովի նյութերը:

Գրքում ժամանակագրորեն ներկայացված են Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական, էթնոկրոնական գործընթացները՝ հին դարերից մինչև XXI դարի սկիզբ:

Ժողովածուում զետեղված հոդվածները խթան կհանդիսանան պատմագիտության մեջ համեմատաբար քիչ ուսումնասիրված Հայաստանի պատմական ժողովրդագրության բնագավառի զարգացման համար:

Ժողովածուն նախատեսված է հայագետների, պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ԳՄԴ 63 3 (2Հ)

ISBN 99941 – 969 – 0 – 1 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

2005

ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմագիտության բնագավառում ժողովրդագրական խնդիրներին հատկացվում է առանձնահատուկ տեղ: Այդ հանգամանքը պայմանավորված է ոչ միայն զուտ գիտական, այլ նաև քաղաքական հանգամանքներով: Էթնոժողովրդագրական հարցերի պարզաբանումը հրամայական խնդիր է այն առումով, որ ի վերջո հնարավորություն է տալիս պատասխանել այն հարցին, թե տվյալ տարածաշրջանում կոնկրետ պատմության, մշակույթի և առհասարակ՝ քաղաքակրթության կրողներն ովքե՞ր են, ի՞նչ ազգություն ու էթնիկ հանրություն են ներկայացնում: Այդ տեսակետից ժողովրդագրական հիմնահարցերն առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հայ ժողովրդի համար, որը 1915թ. Հայոց մեծ եղեռնից հետո կորցրեց իր պատմական հայրենիքի մեծագույն մասը:

Հայաստանի ժողովրդագրության հիմնահարցերը բազմապիսի են: Դրանք ընդգրկում են Հայոց վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերն ընկած դարաշրջանների խնդիրները՝ հայ ժողովրդի էթնոգենեզի հարցեր, Հայկական լեռնաշխարհում առաջին պետական կազմավորումների, Ուրարտու պետության էթնիկ դիմագծի վերհանում, հին և միջնադարյան Հայաստանի բնակչության թվաքանակի, տեղաբաշխման ու տեղաշարժերի լուսաբանում, օտար տիրապետությունների երկարատև ժամանակաշրջաններում այլալեզու էթնիկ տարրերի ներթափանցում և ոչ հայանպաստ էթնոգործընթացներ և այլն:

Հայ պատմաբանների ու ժողովրդագիրների գլխավոր խնդիրներից մեկը պետք է հանդիսանա նաև այն հարցի պարզաբանումը, թե թուրքական դժնդակ տիրապետության շրջանում հայ ժողովուրդը ինչպես է դարեր շարունակ ենթակվել բռնի ազգածուլման, կրոնափոխության, արտագաղթերի և ի վերջո, Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում վերածվել է բնակչության փոքրամասնության, հանգամանք, որը մեծապես պայմանավորել է հայ ազատագրական շարժման անհաջողությունները և արևմտահայության նկատմամբ ցեղասպանության երիտթուրքական դիվային ծրագրի իրագործման հնարավորությունը:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը, հանրապետության համապատասխան մասնագետների հետ կարևորում է այդ հարցերին նվիրված ժողովածուի հրատարակումը: Գրքում տեղ գտած հոդվածները նախապես ներկայացվել են մասնագետների ուշադրությանը «Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան» հայագիտական գիտաժողովի /2004թ. հունիսի 17-19/ շրջանակներում:

«Հայոց պատմության հարցեր» հանդեսի սույն համարն իր բնույթով տարբերվում է նախորդ համարներից, այն Հայաստանի պատմական ժողովրդագրությանը նվիրված առաջին ժողովածուն է և համոզված ենք, լուրջ խթան կհանդիսանա պատմագիտության այդ կարևոր բնագավառի հետագա զարգացման համար:

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՂՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Պատմական աշխարհագրության լույսի տակ)

Հայոց պատմության կարևոր բնագավառն է ժողովրդագրությունը: Տարբեր դարաշրջաններում ժողովրդագրության պատկերի վրա ազդել են աշխարհաքաղաքական փոփոխությունները: Հայ իրականության մեջ այս բնագավառում եղած տեղեկություններից, կարելի է ասել, առաջիններից է Դվինի 647 թ. եկեղեցական ժողովի կանոնը, որով կարգավորվում էր խալիֆայության զորքերի ավերիչ արշավանքներից տուժած հայ ընտանիքների ծանր վիճակը[1]:

Պատմագիտական հետազոտությունների հետ մեկտեղ ավելի ընդգրկուն են դառնում ժողովրդագրական ուսումնասիրությունները[2]: Քաջ հայտնի են ժողովրդագրության բաղադրամասերը՝ բնակչության էթնիկական կազմը, սոցիալական ու սեռա-տարիքային կառուցվածքը, ներքին և արտաքին տեղաշարժերը: Պարզ է, որ որքան գնում ենք դարերի և հազարամյակների խորքը, այնքան խնդիրները բարդանում են, քանի որ ժողովրդագրության համար կարևորագույն սկզբնաղբյուրը՝ վիճակագրական տվյալներն են, որոնք հնում, միայն որոշ ժամանակաշրջանից սկսած, հանդես էին գալիս աշխարհագիրների տեսքով:

Ի տարբերություն նոր ժամանակների վիճակագրական տեղեկությունների, հին ժամանակների պատմության առումով ժողովրդագրության առանձին տարրերի մասին պատկերացումներ կարելի է կազմել հնագիտական նյութերի և գրավոր սկզբնաղբյուրների վկայությունների համեմատական համադրության հիման վրա:

Հայոց հին պատմության ուսումնասիրության համար ժողովրդագրությունը մի բնագավառ է, որը հայագիտական որոշակի հայեցակարգային մոտեցմամբ է. բնորոշվում: Մինչև վերջին տասնամյակները հայ ժողովրդի եկվորության տեսության պաշտոնական տեսակետի պայմաններում, որքանով կարելի է զարմանալ, ժողովրդագրության չափորոշիչներից գերակայել է միգրացիոն՝ ներգաղթի տեսությունը: Մնացյալը բխեցվել է դրանից, աղավաղելով Հայոց պատմության ժողովրդագրական ողջ պատկերը:

---

[1] Կանոնագիրք Հայոց, Բ: Աշխատասիրությամբ Վ.Հակոբյանի, Երևան, 1971, էջ 200: Դանիելյան Է.Լ., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, 178-181:

[2] Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Երեւան, 2001:

Հայկական լեռնաշխարհում բնակչության տեղաբաշխման մասին տեղեկությունների համադասությունը ըստ հնավայրերի, քաղաքային կենտրոնների և լեռնագրությամբ պայմանավորված բնական գոտիականության ժողովրդագրության կարևոր ցուցիչ է: Իսկ այդ ամենը բնորոշվում է հնագիտական մշակութային աշխարհագրությամբ: Ուստի, որքանով ստույգ են կիրառվում պատմա-աշխարհագրական տերմինները, այնքանով ճշգրիտ է ամբողջական ժողովրդագրական պատկերի բնութագրումը:

Անհրաժեշտ է նշել, որ հնագիտական որոշ հրապարակումներում Հայկական լեռնաշխարհի նյութական մշակույթի պատմա-աշխարհագրական պատկերը խաթարվում է տերմինների միտումնավոր աղավաղման և սխալ օգտագործման հետևանքով, ինչը հանգեցնում է մշակութային միջավայրի օտարեցմանը հայոց էթնիկական պատմությունից: Օրինակ՝ Արևմտյան Հայաստանում, Կարին-Էրզրումի շրջանում թուրք-ավստրալիական հնագիտական արշավախմբի կողմից կատարվող Աոս հնավայրի պեղումների արդյունքներն ամփոփելիս, այն համարվել է մ.թ.ա. IV հազարամյակի կեսերի բնակավայր, որի բնակիչները, ըստ հեղինակների ոչ ճիշտ ձևակերպման, «անդրկովկասյան» և «Արևելյան Անատոլիայի» «հետքերի խառնուրդին»՝ «կուր արաքսյանին» համապատասխանող մշակութային ավանդույթի կրողներն էին[3]:

Հնագիտության մեջ կիրառվող «կուր-արաքսյան», երբեմն նաև «անդրկովկասյան», իսկ այժմ նաև «հարավկովկասյան», ինչպես նաև, անհարիր կերպով, որոշ օտար հեղինակների կողմից հակագիտական՝ «անատոլիական» տերմինի ներմուծումը Արևմտյան Հայաստանի կապակցությամբ, բացարձակապես չեն բնութագրում Հայկական լեռնաշխարհի էթնո-մշակութային զարգացման շարունակական պատկերը:[4] Իսկ հնագիտական որոշ հրապարակումներում, անտեսելով Գուգարաց աշխարհի Թռեղք գավառի անվանումը, օգտագործվում է «թրիալեթյան» ձևը, հյուսիսային Հայաստանի հնագիտական բնութագիրն օտարացնելով հայկական նյութական մշակույթից:

Տերմինների աղավաղումը խոչընդոտում է ժողովրդագրության հատկանիշները ճշգրիտ բնութագրմանը:

Հնագիտական նյութի յուրահատկությունը, համանմանության դրսևորմամբ, հրամայական է դարձնում «Հայկական լեռնաշխարհի

---

[3] **Sagona A., Sagona C.**, Excavations at Sos Höyük, 1998 to 2000: Fifth Preliminary Report, Ancient Near Eastern Studies, 2000, N 37, p. 67.

[4] Տես՝ Դանիելյան Է.Լ., Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ. - Զեկուցում կարդացված «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովում, Երևան, 15-20-ը սեպտեմբերի: ՊԲՀ, N 3, էջ 30-37:

մշակույթ» հնագիտական տերմինի միանշանակ կիրառումը իր առանձին հայկական պատմա-աշխարհագրական անունների դրսևորումներով, այնպես, ինչպես այն արտահայտվում է հայ հնագիտական գրականության մեջ՝ *լճաշեն-մեծամորյան, կարմիրբերդյան և թեղք-վանածորյան* և այլ մշակութաբանական տերմինների կիրառմամբ: Շրջանակները պետք է լայնացնել և թարգմանաբար մտցնել նաև միջազգային մասնագիտական ոլորտները:

Հայկական լեռնաշխարհը զտվելով, ըստ համեմատական լեզվաբանության, հնդեվրոպական ընտանիքի նախահայրենիքի կենտրոնական մասում՝ հայ ազգի բնօրրանն է և որպես այդպիսին, իր ակունքներում, առնվազն նոր քարի և պղնձաքարի դարաշրջաններից՝ հնագիտորեն վավերացված մարդու գործունեության որոշակի էթնիկական կնիքն է կրում: Ուստի, կարելի է զարմանալ, որ հնդեվրոպական նախահայրենիքին նվիրված իրենց երկու հատորանոց աշխատությունում Թոմազ Գամկրելիձեն և Վյաչեսլավ Իվանովը գրել են, որ հեշտ է բացատրել հնդեվրոպական էթնիկական խմբերի տեղաշարժերը, «При допущении территории индоевропейской прародины, совпадающей пространственно с областью в пределах восточной Анатолии, Южного Кавказа и Северной Месопотамии V-IV тысячилетий до н.э. ...».[5] էթնոհնագիտության խնդիրների ճշգրիտ լուծման մասին այստեղ՝ նման տերմինաբանական խառնաշփոթի պայմաններում, անկարելի է խոսել, քանի որ «Արևելյան Անատոլիա», «Հարավային Կովկաս» և «Հյուսիսային Միջագետք» տերմինները, տվյալ ընդգրկմամբ, անհարկի կերպով օգտագործվել են Հայկական լեռնաշխարհ տերմինի փոխարեն: Անհրաժեշտ է նշել, որ նրանք քաջ տեղյակ են Հայկական լեռնաշխարհ տերմինի մասին, քանի որ այն հիշատակել են մի քանի էջ հետո, խոսելով հայ ժողովրդի կազմավորման մասին:[6] էթնոհնագիտությունը ևս ենթակա է աղավաղման, քաղաքական նկատառումներով: Ըստ թուրք-ավստրալիական նույն խմբի եզրահանգման էրզրումի նահանգի մոտ գտնվող մի քաղաքում տնային օջախի կրակի՝ խեթական ժամանակներից սերող պաշտամունքի հետքեր են պահպանվել, որի բառիմաստային նշանակությունը հուրիական տարրեր է պարունակում, իսկ, իբրև թե, ներգաղթած հնդեվրոպացիները ծանոթացան այդ պաշտամունքին հուրիների միջոցով: Այսպիսի գիտականորեն չհիմնավորված եզրակացությունը ոչ մի փաստով չի հիմնավորված, այլ ծառայեցված է իր դարը սպառած «ներգաղթի» տեսությանը:

---

[5] Гамкрелидзе Т., Иванов Вяч., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с . 895.

[6] Там же, с. 913.

Այնինչ, հնդեվրոպական ընդհանրության տրոհմամբ հայ էթնոսը մնաց իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում, իսկ այստեղից հեռացող և Հնդկաստանից մինչև Եվրոպա սփռվող ցեղերի մշակութային կյանքի, հատկապես լեզվամտածողության, առասպելաբանական և հոգևոր ընկալումների վրա իրենց կնիքն էին թողել դեռևս «նախահայրենիքում» սկզբնավորված պատկերացումները: Այստեղ կարևոր է ժողովրդագրական տեսանկյունից ընդհանրական հոգևոր հասկացության *արիականության* խնդիրը: Համեմատական լեզվաբանության մեջ համարվել է, որ *արիականության* տրոհմամբ առաջացել են իրաներենը և հնդկերենը: Սակայն *արիականությունը* հոգևոր վիճակ էր, իսկ հետագայում, հատկապես սկսած միջնադարից, դրա կիրառումը որոշակի փոխակերպությունների է ենթարկվել:

Հնում կարևոր սկզբնաղբյուր է եղել պատգամախոսական գրականությունը, որը պարբերաբար, որոշակի նպատակով, ոչնչացվել է: Պահպանվել են առանձին պատառիկներ: Բերսյան Սիբիլայից պահպանված պատառիկը, ըստ Մովսես Խորենացու. «Բայց ես այժմ ուրախացայց, հաւ առնելով առաջիկայիցս իմոց բանից ի սիրելւոյն իմմէ և քան զշատս արդարախօսողէ, ի Բերոսեանն Սիբիլլայ: «Յառաջ քան զբուրգն, ասէ, և զբազմաբարբառն լինել ծայնի ազգի մարդկան, և զկնի նաւարկութեանն Քսիսութրեայ ի Հայս՝ Զրուանն և Տիտանն և Յապետոսքէ լինէին իշխանք երկրի»: Հետո որպես մեկնություն կարդում ենք. «Որ ինձ թուին Սեմ, Քամ և Յաբեթ»: Այնուհետև Սիբիլայից պահպանված տողերի շարունակությունն է. «Եւ ի բաժանեալ սոցա, ասէ, զամենայն տիեզերս ընդ իւրեանց իշխանութեամբ՝ հարստացեալ տիրէ ի վերայ երկոցունցն ևս Զրուանն»: Հետո որպես մեկնություն կարդում ենք. «Զոր աստ ուրեմն Զրադաշտ մոգ, արքայ Բակտրիացւոց, որ է Մեդաց, սկիզբն և հայր աստուածոցն ասաց լնել»: Այնուհետև Սիբիլայից պահպանված տողերի շարունակությունն է. «Արդ՝ ի բռնանալն, ասէ, Զրուանայ՝ ընդդիմացան նմա Տիտանն և Յապետոսքէ... ի Տիտանացն՝ ապրեցուցանել զայլ մանուկս, և յարևմուտս կոյս յուղարկել ի լեառնն, որ անուանեալ կարդային Դիւցընկեց, իսկ այժմ կոչի Ողիմպոս»: «Արդ՝ զայսոսիկ այլ ոք թէպէտ առասպելս, թէպէտ ճշմարտութիւն հաշուեալ համարեսցի՝ *բայց որպէս ես հաւանեալ եմ, բազում ինչ ճշմարիտ է»*: Այստեղ վերջանում է Բերոսյան Սիբիլլայից քաղված պատառիկը: Զրվանի հետ Սեմի համադրությունը և ներմուծումը գալիս է Ոլիմպիոդորոսից, որի, ըստ Սովսես Խորենացու, չպահպանված պատմության մեջ՝ Քսիսութրոսի Հայաստան գալուց հետո Սեմի դեգերումներն են նկարագրվում Տարոնի կողմերում: Ավարտելով Ոլիմպիոդորոսից բերված քաղվածքը Պատմահայրը գրել է. «Բայց... այսոքիկ զրոյցք սուտ և կամ թէ արդարև լեալ՝ մեզ չէ ինչ փոյթ»: Այս երկու հատվածներից երևում է, որ պատգամախոսական շարադրանքում ջրհեղեղից հետո ընկած ժամանակաշրջանի մասին Հայկական լեռնաշխարհի կապակցությամբ

ընդհանրապես սեմական տարրի մասին խոսք չի եղել, այն պատմագրության մեջ ներմուծվել է հետագայում՝ Ոլիմպիոդորոսի միջոցով, որին, Մովսես Խորենացին խիստ թեական է մոտեցել: Եթե հիշենք նախորդ բաժնում Նոյի և նրա սերունդների մասին եղած շարադրանքը, ապա կտեսնենք, որ ազգաբանության տեսանկյունից, Պատմահայրը հակված է եղել Քսիսութրոսի հետ կապված շարադրանքում Հայկական լեռնաշխարհում ծագումնաբանորեն տեսնել հնդեվրոպական տարրը:

Ինչ վերաբերում է Հայկ նահապետի հետ կապված շարադրանքում Մովսես Խորենացու տեղեկությանը՝ «Բայց սքանչելի իմն ասէ պատմագիրն, թէ ի յոլով տեղիս գտանէին բնակեալք ի մարդկանէ յերկիրս մերում ցան և ցիր սակաւք յառաջ քան զգալուստ բնիկն մերոյ նախնւոյն Հայկայ» (I. ԺԲ), ապա այստեղ ոչ թե ինչ-որ այլացեղ տարրի մասին է, այլ Աստվածաշնչի ազդեցությամբ տեղ գտած ցեղագրական պատկերի բաղարկություն է, ուր նախքան ջրհեղեղի նկարագրությունը կարդում ենք. «Եւ եղեւ իբրեւ սկսան մարդիկն բազմանալ ի վերայ երկրի» (Ծնն. Զ.1): Պատմահայրը, հավանաբար, հենց այսպիսի ընկալմամբ «մնացորդների» մասին է խոսում, ամենևին էթնիկական իմաստ չդնելով դրա մեջ:

Հայկական էթնիկական հիմքի վրա հին Հայաստանում բարձրացան ցեղային միությունները և վաղ պետական կազմավորումները, որոնք համախբում էին պղնձաքարի և բրոնզի դարաշրջանների Հայկական լեռնաշխարհի մշակույթի կերտողները: Ուշագրավ է, որ Ք.ծ.ա III հազարամյակից մինչև Ք.ծ.ա II հազ. առաջին քառորդը ընդգրկող ժամանակային կտրվածքով հնագետները Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջաններում պեղել են դամբարանադաշտեր, որոնցում առանձնանում են «արքայական» ծեսին բնորոշ մի շարք հատկանիշներ: Այդ խնդրին են նվիրված Հ.Ամիմոնյանի և Պ.Ավետիսյանի զեկուցումները: Միայն կարելի է ցավել, որ հայ հնագետների համար փակ է Արևմտյան Հայաստանի տարածքում պեղումներ կատարելու հնարավորությունը, քանզի վստահ ենք, որ նման թաղումների գերակայությամբ դամբանադաշտեր առկա են նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում:

Գրավոր կերպով հայկական «արքայական» մշակույթի հեռավոր արձագանքը կարելի է համարել դարեր անց Աստվածաշնչում արտացոլված պատկերացումը Արարատյան թագավորությունների մասին («Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն եւ Ասքանազեան գնդին» (Երեմ. ԾԱ. 27): Արարատյան թագավորություններ հասկացությունը միանշանակ վերաբերում է Հայկական լեռնաշխարհի պետական միավորներին, քանզի Ծննդոց Գրքի Արարատյան լեռները նույն Հայկական լեռնաշխարհն է, և այդ, ինչպես նաև դրախտի տեղադրության հարցերին միանշանակ պատասխան է տվել դեռևս

Եղիշեն իր «Արարածոց մեկնութիւն» աշխատությունում, քանզի հնուց եկող մերժողական կարծիքներ կային թե դրախտի և թե տապանակիր լեռան Հայաստանում գտնվելու մասին[7]: Օրինակ, դրախտի այդպիսի տեղադրության մերժողական ջատագովներից էր Փիլոն Եբրայեցին[8]:

Արարատյան թագավորություններ հասկացությունը, որը Աստվածաշնչում կիրառված է Ք.ծ.ա. VI դարի առումով, իր մեջ ավելի հին բովանդակություն է պարունակում, ընդգրկելով հայոց ցեղային և պետական միավորները, որոնք գոյություն ունեին հնդեվրոպական ընդհանրության տրոհումից հետո: Մովսես Խորենացին (V դար) պահպանել է Հայկազունների գլխավորած՝ Հայոց ազգաբանության պատմությունը, ինչպես առանձին նախարարական տոհմերի ծագումնաբանության, այնպես էլ նրանց բնական միջավայրի՝ Հայկական լեռնաշխարհի բնութագրմամբ:

Հին Հայոց պատմության, ըստ հնավայրերի, հնագիտական պարբերացման կողքին առաջարկում եմ մտցնել Հայկազունների արքայատոհմային հաջորդականությանը համապատասխանող պարբերացում՝ Հին (Ք.ծ.ա. III-I հազ. սկիզբ), Միջին (Ք.ծ.ա. IX դարի երկրոդ կեսից Ք.ծ.ա. III դարի վերջ), որը բաղկացած է երկու ենթափուլերից՝ ա. Հայկազուններից ճյուղավորված Արծրունիների նախնիների և բ. Հայկազունների գլխավոր ճյուղի շառավիղ ի դեմս Արուանդյան կամ Երվանդյան հարստության, և Նոր (Ք.ծ.ա. II-I դդ.) ի դեմս Արտաշեսյանների փուլերը:

Արտաքին աշխարհի հետ հարաբերությունները ծավալվում էին ռազմա-քաղաքական և տնտեսական ու մշակութային վաղ դրսևորումների արտահայտությամբ: Հայկական լեռնաշխարհի հին ժամանակաշրջանի ժողովրդագրությունը աչքի էր ընկնում էթնիկական միատարրությամբ, ինչը բացատրվում է հազարամյակների ընթացքում հայկական էթնիկական հիմքից եկող պետական միավորների հզորությամբ, որոնք իրականացնում էին Հայոց աշխարհի պահպանությունը:

---

[7] Խաչիկյան Լ. Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Երևան, 1992, էջ 245:

[8] Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս որ են մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, Վենետիկ, 1826, էջ 9:

ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ժողովրդագրական նշանակալից տեղաշարժեր Հայկական լեռնաշխարհում նկատելի են դեռևս մ.թ.ա. VI-V դդ.: Այս կարծիքին հանգել ենք հելլեն պատմահայր Հերոդոտոսի և նրա կրտսեր ժամանակակից մեծանուն Քսենոփոնի համապատասխան հաղորդումներն իրար հետ համեմատելով: Այսպես, ըստ Հերոդոտոսի հաղորդման (III գիրք, 93-94), պարսիկ Աքեմենյանների գերիշխանության օրոք հայազգի ցեղերը բնակվելիս են եղել երկու՝ XIII և XVIII սատրապություններում, մինչդեռ ականատես Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» երկերում այնպիսի տպավորություն է, որ Հայկական լեռնաշխարհը կազմում էր վարչական մեկ միավոր:

Արտաքինից իրար հակասող այս հաղորդումներից ո՞ր մեկն է ճիշտ: Ոմանց կարծիքով ճիշտ է Հերոդոտոսը. այլոց կարծիքով՝ Քսենոփոնը: Մեր համոզումով՝ ճիշտ է և՛ մեկը, և՛ մյուսը, քանի որ երկու պատմիչներն էլ գրանցել են յուրաքանչյուրն իր ժամանակի իրավիճակը: Բանն այն է, որ նշված հաղորդումների միջև ընկած է մի ամբողջ դարից ավելի ժամանակահատված, որի ընթացքում տեղի էին ունեցել լուրջ տեղաշարժեր: Բացատրենք.

Ո՞րն էր այս կամ այն երկրամասից սատրապություն կազմելու սկզբունքը: Նկատի առնվում էր երկու հիմնական սկզբունք՝ բնական-աշխարհագրական որևէ սահման (լեռնազանգված, ծով, գետային պատվար), կամ էթնիկ միասնական հոծ բնակչության զբաղեցրած տարածք:

Հերոդոտոսի նկարագրած փուլում հայերը բնակվում էին երկու տարբեր սատրապություններում: Ուրեմն, նրա հաղորդածը ճիշտ էր և վերաբերում էր Դարեհ Ա-ի ժամանակին: Քսենոփոնի հաղորդածը վերաբերում է տասը հազար հույների վերադարձին: Ուրեմն, արդեն անցել էր 120 և ավելի տարիների մի ժամանակամիջոց, որի ընթացքում հայկական լեռնաշխարհը հիմնականում բնակված էր մեկ էթնիկ տարրով, և այլևս անիմաստ էր երկիրը երկու սատրապության բաժանելը: Հետևաբար, հայ ժողովրդի կազմավորման փաստը պիտի համարել մ.թ.ա. V դարում ստեղծված իրավիճակը: Ցարդ ժողովրդագրական այս խոշոր տեղաշարժի վրա պատշաճ ուշադրություն չենք դարձրել: Հատկապես կարող ենք ասել, որ մ.թ.ա. V դարում հայ հասարակությունն արդեն ուներ նոր որակ և հայալեզու ցեղախմբերի կարգավիճակից բարձրացել էր միասնական ժողովրդի աստիճանին:

Այժմ անցնենք մեր հոդվածի հաջորդ կետին, սինոյկիսմոսի երևույթին, որը նոր դուռ է բացել էթնիկ տեղաշարժերի համար, նոր թափ հաղորդելով վերջինիս:

Սինոյկիսմոս:- Բառս հունարեն է. այն նշանակում է համաբնակեցում, միասին բնակվել, և դարձել է հին աշխարհում անտիկ քաղաքի իրավա-քաղաքական կարգավիճակը բնորոշող եզրերից: Այն հաճախ հանդիպում է Պոլիբիոսի, Դիոդորոսի, Ատրաբոնի, Պլուտարքոսի, Դիոն Կասսիոսի և այլոց պատմագիտական երկերում:

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո Արևելքի երկրներում ստեղծված հելլենիստական միապետություններում աննախընթաց թափ է ստանում քաղաքաշինությունը: Նոր քաղաքներ հիմնադրելու հարցը հելլենիստական թագավորների առաջ դժվարին խնդիր էր դնում,- այդ քաղաքները ապահովել անհրաժեշտ բնակչությամբ: Այդ խնդիրը նրանք լուծում էին սինոյկիսմոսի միջոցով: Սինոյկիսմոսը հույներին հայտնի է եղել դեռևս հնագույն ժամանակներից: Աթենքը, օրինակ, առաջացել է մի քանի փոքր համայնքների մի մեծ համայնքի մեջ կամավոր և տարերայնորեն միավորվելու հետևանքով:

Սինոյկիսմոսը տարածված երևույթ էր հատկապես հելլենիստական ժամանակաշրջանում, բայց այն որակապես տարբերվում էր մինչ-հելլենիստական շրջանի սինոյկիսմոսից: Եթե նախկինում սինոյկիսմոսը տեղի էր ունենում տարերայնորեն, ապա հելլենիզմի շրջանում այն կիրառում էին իրենք՝ թագավորները, երբեմն նաև բռնի:

Հելլենիստական թագավորները լայնորեն կիրառում էին սինոյկիսմոսը որպես քաղաքներ հիմնելու և քաղաքային կյանքին զարկ տալու միջոց: Նրանք գերադասում էին մեծ թվով փոքր բնակավայրերի փոխարեն իրենց տիրապետության տակ ունենալ մի քանի խոշոր քաղաքներ, որոնք հանդիսանային իրենց համար ոչ միայն սոցիալ-տնտեսական, քաղաքական և ռազմական հենարան, այլև նպաստեին իրականացնելու տնտեսական վերահսկողությունը ագրարային այն տարածքի, որի վարչական կենտրոնն էր տվյալ քաղաքը:

Սինոյկիսմոսի միջոցով թագավորները հետամտում էին հիմնականում տնտեսական նպատակներ: Փոքր քաղաքներն իրենց սահմանափակ նյութական միջոցներով տառապում էին մշտական տնտեսական ճգնաժամով և ի վիճակի չէին թագավորի համար ապահովել կայուն տնտեսական բազա:

Բնակչության բռնի և զանգվածային գաղթեցման և նոր քաղաքում վերաբնակեցման միջոցով կատարվող սինոյկիսմոսը կիրառվում էր դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու օրոք: Բուն Հունաստանում բնակչության բռնագաղթի անմիջական նպատակն էր նոր քաղաքի հիմնադրումը կամ էլ հնի ընդարձակումը: Արևելքում Ալեքսանդրը և նրա հետնորդները սինոյկիսմոսը նույնպես կիրառում էին Արևելքի ժողովուրդներին և հունա-մակեդոնական գաղութարարներին միաձուլելու նպատակով: Սինոյկիսմոսը չէր նշանակում նոր կենտրոն տեղափոխված բնակավայրերի ֆիզիկական ոչնչացում. դրանք սոսկ անկում էին ապրում, կորցնելով իրենց քաղաքական

ինքնուրույնությունը, և երբեմն վերածվում էին գյուղական վայրերի (А.Б.Ранович, Эллинизм и его историческая роль, М.-Л., 1950, ст. 99):

Հայաստանում ևս նոր քաղաքներ կառուցելը հայ թագավորներին կանգնեցնում էր այդ քաղաքները անհրաժեշտ բնակչությամբ ապահովելու խնդրի առաջ: Հանգամանքների բերումով նրանք երկու կարգի հնարավորություններ ունեին այդ խնդիրը լուծելու. 1/ հարևան, անգամ հեռավոր, երկրներ արշավելով, այնտեղից բնակիչներին բռնի տեղափոխել Հայաստան և բնակեցնել նորակառույց քաղաքում: 2/ Երկրի ներսում բնակիչներին նախկին բնակավայրերից տեղափոխել նոր քաղաքներ:

Եթե քաղաքները նոր բնակչությամբ ապահովելու այս եղանակներից առաջինը բնորոշ էր հայկական թագավորության սկզբնական շրջանի համար (Երվանդունիներ, Արտաշեսյաններ), ապա երկրորդ եղանակը՝ Արշակունյաց ժամանակաշրջանի համար: Արտաշեսյանների օրոք հայոց թագավորների համար ստեղծվեցին միջազգային բարենպաստ պայմաններ արտաքին նվաճումների միջոցով ընդարձակելու իրենց տերության սահմանները: Հռոմը, ծանր հարված հասցնելով Սելևկյան տերությանը, նրան դուրս էր մղել Փոքր Ասիայից, իսկ ինքը դեռևս հաստատուն ոտքերով չէր կանգնել այն երկրում, որտեղ դուրս էին մղվել Սելևկյանները: Դրանով իսկ հնարավորություն էր ստեղծվել Մերձավոր Արևելքի երկրների տիրակալների համար փորձել իրենց տիրույթներն ընդարձակելու: Այդ շրջանում էր, որ Արտաշեսյանները օգտվելով հարմար առիթից, արշավանքներ են ձեռնարկում հարևան երկրներ և բնակիչներին գերևարելով, բնակեցնում Հայաստանի նորակառույց քաղաքներում: Հետագայում հայ Արշակունիները սեղմված լինելով մի կողմից հզոր Հռոմի, մյուս կողմից՝ օր-օրի բարձրացող Պարթևական (հետագայում՝ Սասանյան) պետության միջև, հրաժարվեցին արտաքին նվաճումներից և, նոր քաղաքներ կառուցելիս, ստիպված էին օգտագործել երկրի ներքին հնարավորությունները: Դրանով պիտի բացատրել այն փաստը, որ Արշակունիներն առանձնապես չփայլեցին որպես քաղաքաշինարարներ:

Սինոյկիսմոսը Հայաստանում կիրառվել է դեռևս Արտաշես Ա-ի ժամանակ: Ստրաբոնը նշում է, որ Արտաշեսը, Մեծ Հայքի թագավոր հռչակվելուց հետո, հայկական հողերը միավորելով, ընդարձակեց իր տերության սահմանները: Նորաստեղծ թագավորության համար անհրաժեշտ էր նորակառույց մայրաքաղաք: Արմավիրը կորցրել էր իր փայլը, իսկ նորակերտ Երվանդաշատը, Արտաշեսի թշնամի Երվանդի ձեռակերտը, դեռևս չուներ հզոր տերության գահանիստին վայել շքեղություն: Ուստի Արտաշեսը հելլենիստական, թագավորների օրինակով, կառուցում է Արտաշատ մայրաքաղաքը, ինչը կստեղծեր վարչա-տնտեսական ամուր հենարան երկրի ներսում և միաժամանակ

կբարձրացներ հայոց թագավորի հեղինակությունը միջազգային ասպարեզում:

Ստրաբոնը. Պլուտարքոսը և Խորենացին իրար համերաշխ են այն բանում, որ քաղաքը կառուցվել էր անբնակ վայրում: Բնորոշ է, որ Ստրաբոնը քաղաքի բնակեցման մասին խոսելիս օգտագործում է συνωk4Φμέν0 kα8φH- «լավ բնակեցված, գեղակառույց» արտահայտությունը: Հավանաբար, Արտաշեսն այնտեղ բնակեցրեց իր տերությանը միացրած նոր երկրների բնակիչների մի մասին: Խորենացին պատմում է, թե քաղաքը կառուցելուց հետո Արտաշեսը «կանկգնէ ի նմա մեհեան և փոխէ ի Բագարանէ զպատկերն Արտեմիտայ և զամենայն կուռս հայրենիս»: Նշանակում է, այնտեղ բնակվեցին առաջին հերթին քրմերն ու տաճարների սպասավորները: Շարունակելով, պատմահայրը հաղորդում է, որ Արտաշեսը «յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն հրէիցն, որ փոխեալ էին անդ յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ» (Խորենացի, Բ, խթ): Այստեղ անախրոնիզմը ակներև է: Հրեաներին Հայաստան բերել է Տիգրան Մեծը, Երվանդ Վերջինից և Արտաշեսից հետո, այսինքն՝ Երվանդաշատի և Արտաշատի կառուցումից հետո: Հետևաբար, հնարավոր է երկու ենթադրություն,- կամ Արտաշատ փոխադրվածները հրեաներ չէին, կամ էլ նրանք փոխադրվել են ավելի ուշ, ասենք, քաղաքը Կորբուլոնի կողմից ավերվելուց հետո Տրդատ Ա-ի ձեռքով վերակառուցվելու կապակցությամբ: Այս ենթադրությունը մեզ ավելի հավանական է թվում, քանի որ մեծ թվով հրեաների գոյությունը Արտաշատում անժխտելի փաստ է: Տվյալ դեպքում մեզ համար կարևոր է ոչ թե բնակիչների էթնիկ կազմը որոշելը, այլ նրանց տեղափոխման փաստը ինքնին:

Ինչպես Փոքր Ասիայի հելլենիստական երկրներում սինոյկիսմոսի դեպքում վերաբնակիչներն ստանում էին թագավորից որոշակի առանձնաշնորհումներ, այդպես էլ, հավանաբար, Արտաշեսը Արտաշատ վերաբնակվողներին շնորհում էր զանազան արտոնություններ, նրանց դեպի նորակառույց քաղաք հրապուրելու համար: Խորենացին (Բ,խթ) վկայում է, որ Արտաշեսն իր քաղաքն արագ կառուցեց և այդ վերագրում է այն բանին, որ «ձեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրից, վասն որոյ անաշխատ և երագ շինեալ...»: Քաղաքի արագ կառուցման կարող էին նպաստել վերաբնակվողներին թագավորի շնորհած արտոնությունները (վարելահող տրամադրել, հարկերից ազատել և այլն): Պիտի ենթադրել, որ թագավորը, ում սեփականությունն էին անտառները, թույլ էր տվել վերաբնակվողներին նոր քաղաքի կառուցման համար անարգել օգտվել անտառանյութից, որը փոխադրվում էր Արաքսի վրայով:

Արտաշատի դարեր հարատևած կենսունակությունը պիտի բացատրել նրա բնակիչների վայելած արտոնություններով, որոնց

համար բնակիչները սիրում էին իրենց քաղաքը և ամեն գնով պաշտպանում այն: Մի քանի փաստ:

Պատմելով Տիգրան Մեծի դեմ նրա որդու, Տիգրան Կրտսերի բարձրացրած խռովության մասին, Դիոն Կասիոսը (36, 51, 2) հաղորդում է, որ մինչ Պոմպեոսը զբաղված էր Միհրդատի դեմ Պոնտոսում կռվելով, պարթևների թագավոր Հրահատ III-ը Տիգրան Կրտսերի և սրան հարած խռովարար հայ նախարարների ուղեկցությամբ ներխուժել էր Հայաստան և հասել մինչև մայրաքաղաք: Հանկարծակիի եկած Տիգրան արքան ստիպված հեռանում է երկրի լեռնային շրջանները: Բայց Արտաշատի բնակչությունը մինչև վերջ հավատարիմ մնալով իր թագավորին, հաջող կերպով դիմադրեց քաղաքը պաշարողներին: Տակիտոսը (Annal., 13, 41) վկայում էր, որ հռոմեացի զորավար Կորբուլոնը հիմնահատակ ավերեց Արտաշատը, բայց, չանցած մեկ տասնամյակ, այն նորից վերականգնվեց որպես հայոց մայրաքաղաք: Մեր ենթադրության օգտին նշենք նաև հետևյալ փաստը: Երբ II դարի 60-ական թթ. հայերը, հատկապես Արտաշատի բնակիչները, ապստամբեցին երկրում հաստատված հռոմեական կայազորների դեմ, հռոմեացի զորավար Մարտիոս Վերոսը, ապստամբությունը ճնշելուց հետո, երկրի քաղաքամայր հռչակեց Վաղարշապատը: Կ.Վ.Տրևերը (Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953, ст. 232) ենթադրում է, որ հռոմեացիներն այդ քայլին դիմեցին ջնջելու համար հայոց գիտակցությունից Արտաշատի, որպես հայկական ինքնուրույն թագավորության կենտրոնի մասին հիշողությունը: Մեզ ավելի հավանական է թվում, որ հռոմեացիները Վաղարշապատը մայրաքաղաք հայտարարեցին Արտաշատի բնակիչներին պատժելու նպատակով, քանի որ նրանք, իբրև մայրաքաղաքի բնակիչներ, վայելում էին որոշ արտոնություններ, իսկ այժմ կզրկվեին դրանցից:

Արտաշեսյանների տերությունը քանի դեռ պարփակված էր Մեծ Հայքի սահմանների մեջ, Արտաշատը մնում էր որպես երկրի միակ վարչա-տնտեսական և քաղաքական կենտրոնը և կարիք չէր զգացվում մի երկրորդ, զուգահեռ կենտրոն ստեղծելու: Տիգրան Մեծի նվաճումներով հայկական թագավորությունը դուրս եկավ իր բնական աշխարհագրական սահմաններից, հասնելով մինչև Կիլիկիա, Միջերկրական ծով և Պաղեստին: Այս պայմաններում Տիգրան Մեծի համար պարզ է դառնում, որ մայրաքաղաք Արտաշատը, մնալով լայնատարած պետության հյուսիս-արևելյան ծայրամասում, չէր կարող ընդարձակ տերության վարչա-տնտեսական կենտրոնին առաջարկվող դերը լիովին կատարել: Արշավանքների ընթացքում Տիգրանը տիրացավ Ասորիքի խոշորագույն քաղաքին, Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքին: Թվում էր, թե Անտիոքը նվաճելուց հետո Տիգրանն այստեղ կփոխադրեր իր տերության մայրաքաղաքը: Բայց այդպես չարեց: Անտիոքը ևս, Արտաշատի նման, աշխարհագրական տեսակետից չէր

գտնվում տերության կենտրոնում: Այն ուներ մեկ ուրիշ թերություն ևս, որ չուներ Արտաշատը.- բնակչությունն օտար էր, ոչ հայ, ուստիև Հայաստանից կտրված լինելու պայմաններում այն չէր կարող հենարան դառնալ հայոց արքային:

Նոր մայրաքաղաքի հարցը լուծելու համար Տիգրանին մնում էր մեկ ճանապարհ.- հարմարագույն վայրում կառուցել մի նոր քաղաք և այն դարձնել իր տերության վարչա-տնտեսական ու մշակութային կենտրոնը: Նա այդպես էլ արեց, քանի որ դրա համար նա արդեն ուներ անհրաժեշտ բոլոր միջոցները.- կառուցող վարպետներ, դրամ և քաղաքային բավարար բնակչություն: Այս ամենը Տիգրանը ձեռք էր բերել իր արշավանքների ընթացքում նախքան կսկսեր քաղաքի կառուցումը: Որպես շինարարական գործի վարպետների նա օգտագործեց Կորդուքի բնակիչներին, որոնց մասին Ստրաբոնը (XVI, 1, 24) վկայում է, որ «համարվում էին լավագույն ճարտարապետներ և պաշարողական գործիքների լավագույն շինողներ: Ուստի նրանց հենց այդպիսի գործերի համար էլ օգտագործում էր Տիգրանը»: Դրամ և այլ միջոցներ նա ձեռք էր բերել ոչ միայն Ասորիք, Կիլիկիա և Պաղեստին կատարած իր արշավանքների միջոցով, այլև Աիհրդատ Եվպատորի հետ համատեղ Կապադովկիա արշավանքի ժամանակ, որի մասին Յուստինոսը (38, 3, 1-5) հաղորդում է, թե երկու թագավորները «պայմանավորվել էին իրար հետ, որ քաղաքները և հողերը պատկանելու են Աիհրդատին, իսկ մարդիկ և ինչ որ հնարավոր է տանել՝ Տիգրանին»:

Ունենալով այս բոլոր միջոցները՝ Տիգրանը ձեռնամուխ է լինում նոր մայրաքաղաքի կառուցմանը:

Տիգրանակերտի կառուցման վերաբերյալ սկզբնաղբյուրներում պահպանված տվյալների մանրախույզ քննարկումը մեզ բերում է այն եզրակացության, որ Տիգրանի նոր քաղաքը կառուցվել է նույն եղանակով, ինչ Փոքր Ասիայի հելլենիստական շատ քաղաքներ, այն է՝ սինոյկիսմոսի, այս և այն բնակավայրի բնակիչներին նոր քաղաք բռնի տեղափոխելու եղանակով: Սկսենք Ստրաբոնի (XI, 14, 15) վկայություններից: «Զորեղանալով այդքան, Տիգրանը Օլիբերիայի մոտ կառուցեց քաղաք, որն անվանեց Տիգրանակերտ, քշել բերելով այնտեղ մարդիկ իր կողմից ավերված հելլենական 12 քաղաքներից»: Կապադովկիայի Մաժակ քաղաքի մասին պատմելիս, Ստրաբոնը (XII, 2, 9) դարձյալ գրում է. «Վատ վերաբերվեց Տիգրան Արմենը, երբ արշավեց Կապադովկիա: Նա բոլորին տեղափոխեց Միջագետք և Տիգրանակերտը մեծ մասամբ բնակեցրեց նրանցով»:

Մեզ թվում է, որ Ստրաբոնը գիտի Տիգրանի երկու տարբեր արշավանքների մասին: Առաջինը, որի ընթացքում նա ավերել էր հելլենական 12 քաղաք, տեղի էր ունեցել նախքան հայ-պոնտական դաշինքի կնքելը և Միհրդատյան պատերազմները: Տիգրանի երկրորդ արշավանքը Կապադովկիա, որի ժամանակ նա ավերել էր Մաժաքը,

տեղի էր ունեցել Միհրդատյան երկրորդ պատերազմի ընթացքում, որի մասին Ապպիանոսը (Mithr., 67) մանրամասն խոսելիս, հաստատում է Ստրաբոնի վկայությունը գրելով. «Իսկ Արմենը գերեվարելով Կապադովկիան, մոտ 30 բյուր մարդկանց տեղահանելով բնակեցնում է (ΦΛ<Τ64.,<) նրանց այլոց հետ այն վայրում, ուր առաջին անգամ իր գլխին դրեց Հայաստանի թագը և որը իր անունով կոչեց Տիգրանակերտ»:

Նույնը հաստատում է և Պլուտարքոսը (Lucull., 26) նշելով, որ Տիգրանակերտում «ապրում էին շատ հույներ, որոնք բռնի տեղահանվել էին Կիլիկիայից, ինչպես և բնիկներ, ասորիներ, կորդուքներ, կապադովկիացիներ: Արքան ավերեց նրանց քաղաքները, իսկ բնակիչներին իր հետ բերելով ստիպեց ապրել այստեղ»: Այս վկայություններին համերաշխ է նաև Դիոն Կասսիոսը (36, 2): Խոսելով Լուկուլլոսի կողմից Տիգրանակերտի գրավման մասին, նա այդ կապում է առավելապես այն այլազգիների խռովության հետ, որոնք բերվել ու բնակեցվել էին այնտեղ:

Հետաքրքիր է անտիկ հեղինակների տերմինաբանությունը Տիգրանակերտի բնակեցման մասին գրելիս: Այսպես, Ստրաբոնը և Ապպիանոսը օգտագործում են ΦΛ<ϕ64Φ, (բնակեցրեց սինոյկիսմոսի միջոցով) բայը, իսկ Դիոն Կասսիոսը նույն բայի դերբայական ձևը (ΦΛ<≈46≈β<ϑΤ<): Այս փաստը պերճախոս վկայություն է այն մասին, որ Տիգրանակերտը հիմնադրվել և բնակեցվել է սինոյկիսմոսի եղանակով, ինչպես հելլենիստական շատ քաղաքներ:

Հայկական աղբյուրներում Տիգրանակերտի հիմնադրման և կառուցման մասին տվյալներ գրեթե չկան: Սակայն մեր պատմիչները խոսում են նվաճված երկրներից Տիգրանի Հայաստան բերած գաղթականների և նրանց բնակեցման մասին: Նրանք չգիտեն փոքրասիական երկրներից Տիգրանի բերած գաղթականության մասին: Միայն Խորենացին (Բ, ԺԴ) մեկ անգամ հիշատակում է Տիգրանի բերած հունական աստվածների և քրմերի մասին, «որ եկեալ էին ի Յունաց»: Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե բուն Հունաստանին, այլ Փոքր Ասիայի հելլենիստական քաղաքներին: Շարունակելով, Խորենացին Տիգրանի մասին վկայում է, որ «առեալ գերի բազում և ի հրէիցն, նստի շուրջ Պտղոմայիդ քաղաքաւ»: Այնուհետև պատմահայրը (Բ, ԺԶ) ուղղակի գրում է Հրեաստանից բերված գերիներին Հայաստանի քաղաքներում բնակեցնելու մասին: «Իսկ թագաւորն հայոց Տիգրան զգերութիւն հրէիցն նստուցեալ ի յԱրմաւիր և ի յաւանին Վարդգէսի, որ ի վերայ Քասախ գետոյ»: Դարձյալ (Բ, ԺԹ) «և զՀիւրկանոս կապելով ածեն Տիգրանայ հանդերձ գերութեամբն, և Տիգրան հրաման տայ Բարզափրանայ նստուցեալ զգերին հրէից... ի քաղաքն Շամիրամայ»:

Փավստոսը ևս (Դ, ժէ) Շապուհի Հայաստան կատարած ավերիչ արշավանքները նկարագրելիս, խոսում է հայկական քաղաքներից գերի

ԳՐԱԴԱՐԱՆ

տարված մեծ թվով հրեաների մասին և ավելացնում. «Զայս ամենայն բազմութիւն հրէից, զոր գերեցին տարան...., ածեալ էր երկրէն պաղեստինայւոց մեծի թագաւորին հայոց Տիգրանայ...: Եւ էած մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէութիւնն զայն՝ բնակեցուց ի քաղաքն հայոց յիւրում դարուն ի ժամանակին»:

Տիգրանակերտի կառուցման և բազմահազար գերիների Հայաստան փոխադրման ու բնակեցման մասին անտիկ աղբյուրների հաղորդումները մեր մատենագիրների վկայությունների հետ համեմատելիս, աչքի է զարկում այն, որ հունական աղբյուրները խոսում են առավելապես Տիգրանի կողմից հելլենական քաղաքների նվաճման և ավերման մասին, մինչդեռ մեր պատմիչները խոսում են բացառապես Պաղեստինից բերված գերիների մասին: Այդ երկու կարգի աղբյուրների տվյալների համադրումով կարող ենք ստանալ այդ դեպքերի ճիշտ պատկերը. այն, որ Տիգրանը գերիներ բերել էր Հայաստան և Փոքր Ասիայի հելլենական քաղաքներից, և՛ Պաղեստինից ու Ասորիքից: Իրավացի են նրանք, որ գտնում են, թե հունական աղբյուրների վկայությունը, որ իբր այդ գերիներին Տիգրանն ամբողջովին բերել ու բնակեցրել է Տիգրանակերտում, չի համապատասխանում իրականությանը: Ավելի ճիշտ են հայկական աղբյուրները, որոնց համաձայն գաղթականների այդ հսկա զանգվածը բնակեցվել է Հայաստանի մի շարք քաղաքներում, ինչպիսիք էին Տիգրանակերտը, Արտաշատը, Արմավիրը, Վանը և այլն:

Իր նոր մայրաքաղաքը կառուցելիս և բնակեցնելիս, դիմելով հելլենական և սեմական տարրերին այնտեղ վերաբնակեցնելու միջոցին, այդուհանդերձ չէր կարող անտեսել Հայաստանի ընձեռած ներքին հնարավորությունները ևս: Բացառապես օտարներով բնակեցված քաղաքը չէր կարող հուսալի հենարան դառնալ հայոց թագավորին: Ուստի, նա քաղաքի կառուցման և բնակեցման գործին մասնակից դարձրեց նաև ազգային ուժերին, ինչպես հասարակ ռազմիկներին, այնպես էլ ավագանու ներկայացուցիչներին: Ապպիանոսը (Mithr., 84) հստակ գրում է. «Այստեղ նա հավաքեց իր տերության ամենահայտնի մարդկանց, սպառնալով նրանց, որ այն, ինչ չեն վերցնի իրենց հետ, կբռնագրավվի»: Իսկ Պլուտարքոսը (Lucull., XXV) գրում է, որ «ինչպես քաղաքի հասարակ մարդիկ, այնպես և մեծամեծերը, թագավորին հաճոյանալու միտումով մրցակցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման համար»: Տիգրանի այս ձեռնարկումն ուներ ռազմա-քաղաքական խոշոր նշանակություն: Հայերին ևս բնակեցնելով նոր մայրաքաղաքում, իր համար իր իսկ ժողովրդից հենարան էր ստեղծում այնտեղ. հենարան, որն, ի դեպ, հավատարիմ մնաց իրեն: Մեր այս եզրակացության որպես հիմք բերենք Դիոն Կասիոսի (36, 1) հետևյալ վկայությունը. «Պաշարեց (Լուկուլլոսը) Տիգրանակերտը: Նրան խիստ նեղեցին բարբարոսները (իմա՝ հայերը - Ա.Կ.) և՛ նետահարությամբ, և՛

պաշարողական մեքենաների վրա նավթ թափելով»: Դրան հակառակ, Փոքր Ասիայի քաղաքներից բռնագաղթվածները վճռական պահին դավաճանեցին և քաղաքը հանձնեցին Լուկուլլոսին: Մյուս կողմից, հայ մեծամեծերին ստիպելով հաստատվել Տիգրանակերտում և ապրել իր հետ, նա ավելի հեշտությամբ կկարողանար վերահսկել նրանց գործունեությունը և անմիջապես կանխել նրանց կողմից հավանական խռովությունն իր դեմ: Եվ վերջապես, նա դրանով հնարավորություն էր ստանում մեծամեծների նյութական միջոցները ևս ներդնելու նոր քաղաքի կառուցման գործում:

Արտաշատի և Տիգրանակերտի բնակեցման օրինակով մենք փորձեցինք ցույց տալ, որ Հայաստանում կիրառված սինոյկիսմոսը շատ բանով նման էր եղել հելլենիստական աշխարհում կիրառվող սինոյկիսմոսին: Սակայն դրանց միջև կար մի էական տարբերություն: Հելլենականացած երկրներում, ուր զարգացած էր քաղաքային կյանքը, սինոյկիսմոսն ուներ տեղական բնույթ և կիրառվում էր տեղական հիման վրա, մինչդեռ Հայաստանում այն ընդգրկում էր հեռավոր երկրների բնակիչներին: Փոքր Ասիայում զարգացած քաղաքային կյանքը և մեծաթիվ քաղաքային բնակչությունը հնարավորություն էր տալիս տեղում լուծելու նոր քաղաքը բնակեցնելու հարցը: Հայաստանում դեռևս չկար քաղաքային համապատասխան բնակչություն: Հայոց թագավորներն ստիպված էին այդ բնակչությունը համալրել այլ երկրներից:

Այսպիսով, հելլենիստական աշխարհում սինոյկիսմոսի եղանակով նոր քաղաքների հիմնադրման պատմության ընդհանուր ֆոնի վրա հայկական հնագույն քաղաքների առաջացմանը վերաբերող աղբյուրներում եղած տվյալների քննարկումը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ հելլենիստական աշխարհում ընթացած քաղաքաշինության և ժողովրդագրական հուժկու գործընթացներն ընդգրկել էին նաև հայոց աշխարհը, և քաղաքների առաջացումը և բուռն զարգացումը այդ պատմական գործընթացների կարևոր օղակն էր:

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԻՄՆՈՒՄՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջնադարյան Հայաստանի բնակչության հիմնական զանգվածն ապրում էր գյուղերում կամ գյուղական տիպի բնակավայրերում: Հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանում գյուղերի առկայությունն անժխտելի իրողություն է:

Օտար նվաճողների արշավանքների ու ասպատակությունների հետևանքով Հայաստանի քաղաքները, ավանները, ամրոցներն ու գյուղերն ավերվում, դաշտերն ու մշակելի տարածքներն ամայանում էին, իսկ բնակչության մի մասն սպանվում կամ գերեվարվում էր: Մարդկանց պակաս վնաս չէին պատճառում տարերային աղետներն ու համաճարակները, որոնց հետևանքով նրանք հարկադրված փոխում էին իրենց բնակության վայրը կամ էլ հարմարվում նոր պայմաններին:

Միայն ժամանակի ընթացքում և քաղաքական նպաստավոր պայմանների դեպքում էր հնարավոր լինում դժվարին ու երկարատև աշխատանքով վերականգնել հին բնակավայրերը կամ էլ հիմնել նորերը: Նոր բնակավայրերի երևան գալը պայմանավորված էր տարաբնույթ գործոններով:

Միջնադարյան Հայաստանի նոր բնակավայրերի հիմնադրումն ու բնակչության վերաբնակեցումն իր մեջ է ընդգրկում բազմաբնույթ, միմյանց լրացնող ու փոխկապակցված հարցերի մի ամբողջ շարք: Դրանք բնակչության տեղաշարժերի, տարբեր բնական գոտիներում տեղի ունեցած բնապատկերների փոփոխությունների՝ ամայի ու անմշակ հողատարածքների յուրացման, ջրային տարբեր մակերեսների չորացման, անտառների հատման, ջրանցքների, կամուրջների ու հաղորդակցության այլ ուղիների կառուցման, այգիների հիմնման և բնության հետ մարդու կապերի այլ ձևերի ու եղանակների վերաբերյալ տվյալներ են: Թվարկվածների հետ սերտորեն աղերսվում են նաև խնդրո առարկա ժամանակաշրջանում առաջին վերաբնակեցումների, դրանց շեշտակի դառնալու կամ թուլանալու պատմական հանգամանքները, որևէ տեղում առավել տարածվելու, պատճառահետևանքային կապերի երևան հանումն, այդ գործընթացներում ավատական հաստատությունների ու հասարակաշերտերի խաղացած դերի բացահայտումն և այլ հարցեր:

Թվարկված հիմնահարցերը մեզանում հատուկ քննության նյութ չեն դարձել: Միայն նրանցից մի քանիսը որոշ չափով ներկայացվել են ընդհանուր բնույթ կրող՝ Հայաստանի ոռոգման համակարգերին,

հողամշակման գոտիներին, վանական տնտեսություններին նվիրված աշխատություններում:

Թեև մեր սկզբնաղբյուրները հնարավորություն չեն տալիս մատնանշված հարցերի մեծ խումբ լուսաբանել, այդուհանդերձ, դրանց մի մասի առաջադրումն իսկ կարևոր նպաստ կարող է բերել ցարդ անտեսված որոշ հարցերի պարզաբանմանը:

Ներկայացվող թեմայի ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են VII-XIIIդդ., երբ Հայաստանում տեղի էին ունենում էթնո-քաղաքական ու տնտեսական ուշագրավ տեղաշարժեր:

Ինչպես արդեն ասվեց, սկզբնաղբյուրների մատուցած նյութերը սակավ են: Դրանք հիմնականում VII-XIIIդդ. հայ մատենագիրների երկերն են ու վիմագիր արձանագրությունների տվյալները: Մեր տեղեկություններն որոշ չափով հարստանում են կողմնակի փաստերով՝ բնակավայրերի կամ դրանց հիմնադիրների անուններով, բնակատեղերի տեղագրությամբ և ուրիշ տվյալներով:

Գյուղական նախկին բնակավայրերի վերականգնումն ու նորերի հիմնումն ընդունված իրողություն էր, որովհետև դրանց վերաբերյալ մշակվել էին որոշակի սկզբունքներ: Վերջիններս իրավական նորմի ուժ էին ձեռք բերել: Միջնադարյան հայ իրավունքի նշանավոր հուշարձաններից մեկում՝ Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» երկում ուշադրություն է դարձվում նոր գյուղեր հիմնելու պարագայում հողային և բնական այլ արժեքները գյուղական համայնքի անդամների միջև բաժանելու հետևյալ սկզբունքներին՝

ա) Նոր գյուղեր հիմնելիս անհրաժեշտ թվով բնակչության առկայության դեպքում էր միայն հնարավոր հողը, ջուրը և բնական այլ միջոցները համայնքի անդամների միջև համարել վերջնականապես բաժանված:

բ) Ոչ հեռավոր անցյալում ավերակ դարձած գյուղերը վերականգնելիս , նրանց նախկին բնակիչները կարող էին վերստին տիրել իրենց կալվածքներին, իսկ եթե դրանք ավերվել էին շատ ավելի վաղ, ու նրանց սահմաններն անճանաչելի էին դարձել, կամ տերերը փոխվել էին, այդ դեպքում թույլատրվում էր բաժանումը կատարել հավասար սկզբունքով:

գ) Տիրույթները բաժանելիս առաջին հատկացումը սահմանվում էր եկեղեցուն, իսկ գյուղի ավագին առաջարկվում էր տալ մեկ բաժին հավելյալ տիրույթ, քանի որ նա հոգում էր այլոց հոգսերը[1]:

Նոր բնակավայրեր հիմնելու և բնակչության վերաբնակեցման հարցերը հայոց թագավորների, իշխանական տոհմերի առաջնորդների,

[1] Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, էջ 127:

բարձրաստիճան հոգևորականների, եկեղեցիների ու վանքերի, ինչպես նաև գյուղական համայնքների իրավասության ներքո էին:

640թ. աշնանը արաբական զորքերը Հյուսիսային Միջագետքին տիրելուց հետո մտան Հայաստան: Հոկտեմբերի 6-ին նրանք պաշարեցին Դվին մայրաքաղաքը: Հայ իշխաններից Թեոդորոս Վահևունին, Խաչեան Առավելյանը և Շապուհ Ամատունին փորձեցին հայոց ցրված ուժերը համախմբել և դեպի Դվին թշնամու առաջխաղացումը կանխելու համար քանդեցին Մեծամոր գետի վրա կառուցված կամուրջը: Այնուհետև նրանք քաղաքի բնակչությանը պատսպարեցին նրա ամրոցում: Դվինում աշնան այդ օրերին բացի տեղաբնիկներից հավաքվել էին նաև Հայաստանի լեռնային ու նախալեռնային շրջաններից եկած մարդիկ, ովքեր վարձակալությամբ մասնակցում էին այգեկութին[2]: Նշենք, որ լեռնային ու նախալեռնային շրջանների բնակչությունը Արարատյան դաշտում վարձակալությամբ այգեկութին մասնակցելով չէր սահմանափակվում: Նրանք նաև մասնակցում էին խաղողի այգեթաղին, իսկ գարնանը՝ այգեբացին: Սա հնամենի մի սովորույթ էր, որը սկիզբ էր առել վաղնջական ժամանակներից և շարունակվում էր մինչև վերջերս:

Թշնամու հարձակումը կանխելու կամ նրա սրընթաց գրոհը թուլացնելու նպատակով մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող երկրի կարևոր հաղորդակցության միջոցներից մեկի՝ Մեծամորի կամրջի հարկադրական ավերումը թեև եզակի է, բայց կողմնակի փաստերը նույնպես ցույց են տալիս եկվորների կողմից Հայաստանի բնական միջոցներին պատճառած վնասները:

Սեբեոսի տեղեկությամբ մինչև Դվինի գրավումը արաբները հաստատվեցին Խոսրովակերտ անտառի մերձակայքում[3]: Նրանք քաղաքը գրավեցին՝ շուրջը կրակ վառելով, որի ծխից պարսպի պահապանները չկարողացան հակառակորդին լրջորեն դիմադրել: Կարծում ենք, որ Դվինի նման մեծ քաղաքի պարիսպների շուրջը կրակ վառելն ու ծխով պատելը կարող էր կատարվել ի հաշիվ Խոսրովակերտի անտառի փայտի:

Մեծ էր նաև թշնամու հասցրած վնասը քաղաքի բնակչությանը: Աղբյուրների հավաստմամբ առաջին արշավանքի ժամանակ Դվինում

[2] Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ.Վ.Աբգարյանի, Երևան, 1979, էջ 138:
[3] Նույն տեղում:

արաբների կողմից սրածվածների թիվը հասնում էր 12 հազարի[4], իսկ գերեվարվածներինը՝ 35 հազարի[5]:

Արաբական ներխուժումների հետևանքով հայ բնակչության տեղահանություններն ու գերեվարումներն այնքան տարածված էին, որ Ներսես Տայեցի կաթողիկոսը (641-661) 645թ. Դվինում եկեղեցական ժողով գումարեց, որի քննության առած առանցքային հարցերից մեկը վերաբերում էր գերեվարվածների ընտանիքներին: Ժողովի ընդունած 7-րդ կանոնը գերության քշվածների ամուսիններին արգելում էր ուրիշների հետ ամուսնանալ: Ժողովը նրանցից պահանջում էր սպասել 7 տարի, եթե նրանք գերությունից չվերադառնային, նոր միայն կարող էին ամուսնանալ: Եկեղեցաժողովը հիշյալ կարգը զանց առածների ամուսնությունը դիտում էր ապօրինի, պոռնկություն և անհրաժեշտ համարում նրանց բաժանել, իսկ ունեցվածքն աղքատներին տալ: Պարտադրվում էր նաև գերեվարվածների վերադարձից հետո վերականգնել նրանց նախկին ամուսնությունը[6]:

Ինչպես տեսնում ենք, Դվինի ժողովի կանոնադրական նշված որոշումը մի փորձ էր կանոնակարգել քաղաքական պայմանների փոփոխության հետևանքով հայկական ընտանիքի ներսում տեղի ունեցած ձևախեղումը: Եկեղեցական ժողովն ամուսնալուծության համար խոչընդոտներ հարուցելով ու երկրորդ ամուսնությունն արգելելով հավատարիմ էր մնում քրիստոնեական եկեղեցու բարոյական ոգուն: Հայոց եկեղեցին ընտանիքը դիտում էր ավատական հասարակարգի սոցիալական կարևորագույն բջիջ և ձգտում էր դրանով ամրապնդել այդ հասարակարգի հիմքերը:

Ներսես Գ-ի կողմից կյանքի կոչված հաջորդ ձեռնարկն ևս առնչվում է մեր շոշափած հարցերին:

Սեբեոսի տեղեկացմամբ Ներսես Գ-ը Վաղարշապատի եկեղեցիների մերձակայքում, այն ճանապարհին ուր հայոց թագավոր Տրդատ Գ-ը (298-330) դիմավորել էր Գրիգոր Լուսավորչին, կառուցեց Զվարթնոց եկեղեցին: Այն աչքի էր ընկել իր բարձր շինությամբ: Եկեղեցու կողքին կաթողիկոսը հիմնադրել էր այլ կառույցներ: Նրա անցկացրած կամ վերակառուցած ջրանցքով տաճարի հարևանությամբ

---

[4] Տես Chronique de Denys de Tell Mahré, pub. et trad. par J.B.Chabot, Paris, 1895, p.6, Մանանդյան Հ., Արաբական արշավանքները Հայաստանում, Երկեր, Բ, Երևան 1978, էջ 514-515:

[5] Սեբէոս, էջ 138: Ուսումնասիրողները մի դեպքում Դվինից գերեվարվածների հիշյալ թիվը կասկածելի են համարել (Տես Тер-Гевондян А., Армения и Арабский Халифат, Ереван, 1977 , с.26), մեկ ուրիշ դեպքում՝ հավաստի (Տես Большаков О.Г., Рабство в Халифате, В книге Рабство в средние века, Москва, 1988, с.429):

[6] Կանոնագիրք Հայոց, Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 205-206:

գտնվող առապար վայրը դարձել էր մշակելի, հիմնել էր խաղողի և այլ պտղատու ընդարձակ այգիներ[7]:

Զվարթնոցի շինությունների և այգեգործական տնտեսության վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ենք կորզում այնտեղ կատարված հնագիտական պեղումների արդյունքներից, որոնք 1900 թվականից սկսել էր Խաչիկ վարդապետ Դադյանը, ապա այն շարունակել էր Թորոս Թորամանյանը, իսկ 1950-ական թթ.՝ Վարազդատ Հարությունյանը[8]: Պեղումներն ի հայտ են բերել երեսունից ավելի սենյակներ ու դահլիճներ, կաթողիկոսական պալատ, բազիլիկ ոճի եկեղեցի, խաղողի մշակման արտադրական ձեռնարկություն՝ հնձանի համալիրով, ընդ որում վերջինս կառուցվել էր տարբեր ժամանակներում: Մկզբում կառուցվել էր հարավայինը, իսկ հետո՝ նրան կցվել էր հյուսիսայինը, որի հավելումը բացատրվում է խաղողի մշակության ընդլայնումով: Հնձանն ուղղանկյունաձև ընդարձակ մի կառույց էր 620 մ^2 մակերեսով: Միայն հարավային կողմի հնձանում եղած տաքարներում, ինչպես ցույց են տվել հաշվումները, հնարավոր է եղել տեղավորել 10 հազար լիտր քաղցու, իսկ հյուսիսային շարքի տաքարների ընդհանուր տարողությունը եղել է 12,300 լիտր: Բացի նշված հնձանից, կաթողիկոսական պալատի ներքնահարկում հայտնաբերվել են գինու կարասներ[9]:

Զվարթնոցին վերաբերող հաջորդ տվյալները քաղում ենք Հովհաննես Դրասխանակերտցուց, որը նրա կառուցումը և տեղում բնակավայր հիմնելը նկարագրելիս թեև օգտվում է Սեբեոսի երկից, և որոշ դեպքերում կրկնում է նրան, այդուհանդերձ, իր նախորդի վկայությունների համեմատ կատարում է հետևյալ էական լրացումները: Նրա ասելով Ներսես Գ-ը առապարի դաշտը ջրարբի էր դարձրել Քասաղ գետից անցկացրած ջրանցքով, բացի պտղատու այգիներից հիմնել էր նաև պարտեզներ: Եվ ամենակարևորը, որ անուշադրության էր մատնել Սեբեոսը, Ներսես Գ-ը «Այլ և կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց»[10]:

Մեջբերված կապակցությունը տարբեր կերպ է մեկնաբանվել: Այն դիտվել է իբրև ուխտավորների հյուրանոցներ[11], կամ ամբողջ մեջբերումը թարգմանվել է. «Այլև կարգում և բնակեցնում էր այնտեղ շինականների

---

[7] Սեբէոս, էջ 147:
[8] Հարությունյան Վ., Զվարթնոցի պալատն ու հարակից շենքերը, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1962, թ.12, էջ 57-59:
[9] Նույն տեղում:
[10] Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 88:
[11] Օրմանյան Մ., Ազգապատում, հ.Ա, Ա.էջմիածին, 2001, սյունակ 858:

բազմություն աշխարհը բարեկարգելու (կամ աշխարհավարական) կանոնների համաձայն»[12]: Հիշյալ մեկնության՝ աշխարհը բարեկարգելու կանոնների համաձայն արտահայտությունը ճիշտ չի ներկայացնում Հովհաննես Դրասխանակերտցու մտքի իմաստը: Այժմ ընդունելի է համարվում տվյալ հատվածի՝ Հ.Մանանդյանի բացատրությունը, ըստ որի խոսքը վերաբերվում է Ներսես Գ-ի կողմից Զվարթնոցում վերաբնակեցված անձանց արտոնյալ կարգավիճակ տալուն, այսինքն՝ նրանք համահավասարեցվել էին քաղաքային բնակչության կարգավիճակին[13]: Ներսես Գ-ի կողմից Արարատյան դաշտում խաղողագործական ու գինեգործական համալիր տնտեսության հիմնումն ու զարգացումը ենթադրում էին մեծ ծավալի աշխատանքների իրականացում: Դրանք կարող էին կյանքի կոչվել միայն մարդկային հոծ զանգվածների ընդգրկումով: Հայտնի է նաև, որ գյուղատնտեսության հիշյալ ճյուղը և՛ աշխատատար էր, և՛ կապվում էր ֆիզիկական ծանր աշխատանքների հետ (այգեթաղ, այգեբաց, էտ և այլն): Բացի նշվածից, խաղողագործությունը՝ և նրա արդյունքը՝ գինեգործությունը, պահանջում էին ոչ միայն ֆիզիկական աշխատանքի ներդրում, այլև՝ մասնագիտական նրբին գիտելիքներ: Հետևաբար, Զվարթնոցում վերաբնակվածներն այդ ունակություններով օժտված անձինք պետք է լինեին կամ եթե այդպիսիք չէին, ապա այսօրվա ըմբռնումով պետք է վերամասնագիտանային:

Կարևոր նշանակություն ուներ նաև Ներսես Գ-ի հիմնած տնտեսությունում աշխատող անձանց անձնական ազատությունն ու նյութական շահագրգռվածությունը, մի բան, որ հստակորեն նկատելի է նրանց կարգավիճակից:

Արդ, բնակավայրերի ո՞ր տիպերին կարելի է վերագրել Ներսես Գ-ի հիմնադրածը: Այն գյո՞ւղ էր, ավա՞ն, դաստակե՞րտ, թե՞ մեկ ուրիշ բնակավայր: Նշենք, որ և՛ Սեբեոսը, և՛ Հովհաննես Դրասխանակերտցին այս հարցի պատասխանը չեն տալիս: Թ.Ավդալբեգյանը հակված է կարծելու, թե Զվարթնոցի շուրջը եղել է գյուղ, ուր նրա հիմնադիրը ոչ միայն խմբել է կրոնավորների, այլև՝ շինականների երդեր, որպեսզի վերջիններս նրանց համար «վար ու ցանք և կալ ու կուտ անեին՝ նրանց հացիւ ապրեցնելու համար»[14]: Նա նշում է նաև այդ գյուղի անունը՝

---

[12] Ավդալբեգյան Թ., Զվարթնոցի շուրջը, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 156-158:

[13] Манандян Я.., Проблема общественного строя доаршакидской Армении, Երկեր, Դ, Երևան, 1981, էջ 451, հմմտ. Еремян С.Т., О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, N1, с.19. Սարգսյան Գ.Խ., Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962, էջ 27, ծանթ.1:

[14] Ավդալբեգյան Թ., էջ 158:

Ս.Գրիգոր, հերքելով Հովհ.Շահխաթունյանցի տեսակետը, որը նկատի առնելով Փարպիի Ս.Գրիգոր փոքրիկ մենաստանը, գյուղը՝ Փարպին նույնացնում է Ս.Գրիգորի հետ[15]:

Թեև Սեբեոսը և Հովհաննես Դրասխանակերտցին չեն նշում Ձվարթնոց բնակավայրի բնույթը, բայց Հ.Մանանդյանն իրավացի է, երբ այն համարում է կալվածատուն-դաստակերտ: Վերջիններս, նրա կարծիքով, թագավորական, նախարարական և եկեղեցական վիլլաներ ու կալվածատներ էին: Հավելենք, որ հակառակ որոշ ուսումնասիրողների, Հ.Մանանդյանը դրանք չի դիտում ստրկատիրական տնտեսություններ[16]:

Գ.Սարգսյանը ստրկատիրական տնտեսությանը բնորոշ բնակչության կազմակերպման ձևերի փոփոխության հետևանք է համարում Ձվարթնոցի վերաբերյալ Սեբեոսի և Հովհաննես Դրասխանակերտցու հիշյալ դիտարկումը, որը հետևանք էր բնակչության կազմակերպման նոր՝ ավատատիրական ձևերի, երբ եզրույթները (դաստակերտ, ագարակ և այլն) փոխում են իրենց բովանդակությունը կամ էլ նոր երանգ ստանում[17]: Բայց Գ.Սարգսյանն անպատասխան է թողնում այն հարցը, թե նոր պայմաններում դրանք ինչ բովանդակություն կամ երանգ ստացան:

Այնուհետև, Սեբեոսը կարևոր տվյալներ է հաղորդում մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ: Նա անդրադառնում է Աղթամար կղզում իրականացված բնական պայմանների փոփոխությունների և այնտեղ հայերի, իսկ հարևան գավառներում՝ օտարների վերաբնակեցումների մասին: Ըստ պատմիչի, Թեոդորոս Ռշտունին մտահոգված սեփական երկրի անվտանգությամբ, իր ուժերը մշտապես պատրաստի վիճակում էր պահում՝ հարկ եղած դեպքում հակահարված տալով հակառակորդին: Իշխանը բարեկարգեց ու բնակեցրեց Աղթամարը և փրկեց շատ գավառներ[18]: Կղզու բնակեցումը ենթադրում է այնտեղ նոր բնակավայրերի հիմնում:

Բայց քաղաքական կուրսի կտրուկ փոփոխությունից և Արաբական խալիֆայության հետ 652թ. պայմանագիր կնքելուց հետո, Հայոց իշխանը հարկադրված էր երկրի պաշտպանության համար Ասորիքի արաբ կառավարիչ Մուավիայից պահանջել 7 հազար արաբ օգնական զինվորներ, որոնց նա բնակեցրեց Վանա լճի մերձակայքում՝

---

[15] Նույն տեղում:
[16] Մանանդյան Հ., c. 450-451.
[17] Սարգսյան Գ.Խ., էջ 27, ծանթ.1, նույնի "О двух значениях термина дастакерт в ранних армянских источниках" Эллинистический Ближний Восток, Византия и Иран. История и филология. Сборник в честь семидесятилетия члена-корреспондента АН СССР Н.В.Пигулевской, М., 1967, с. 101, прим. 12.
[18] Սեբէոս, էջ 134:

Աղիովիտ ու Բզնունիք գավառներում[19]: Սա Հայաստանում արաբների հիմնավորվելու առաջին փաստերից մեկն է:

Եթե նշված համեմատաբար սահմանափակ թվով արաբ զինվորների հաստատումը Հայաստանում ինչ որ չափով թելադրված էր բյուզանդացիներից երկրի անվտանգությունն ապահովելու հանգամանքով, ապա հետագայում նրանց զանգվածաբար ներթափանցումը Հայաստան կապվում էր վերջինիս նվաճման ու հնազանդ պահելու, ինչպես նաև՝ արաբաբյուզանդական ու արաբախազարական զինված բախումների ժամանակ ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած Հայաստանում հուսալի նեցուկ ունենալու անհրաժեշտության հետ[20]:

Հայաստան գաղթեցված արաբական ցեղերի տարածման աշխարհագրությունը հետևյալ պատկերն էր ներկայացնում: Ապահունիքում հաստատվել էին Սուլամի ցեղին պատկանող Ջահհաֆյանները, որոնք որոշ ժամանակ տիրում էին Արշարունիքին ու Դվինին: Աղձնիքը Շայբանիների ձեռքում էր, Ապահունիքն անցավ Կայսիկներին, Բերկրին՝ Ութմանիկներին: Արաբները տիրում էին Հայաստանի ռազմատնտեսական կենտրոններ Դվինին, Նախճավանին, Կարնո քաղաքին, Մանազկերտին, Խլաթին, Բաղեշին, Աշմուշատին և ուրիշ բնակավայրերի[21]: Կարևոր էր նաև ռազմավարական ճանապարհների վրա նրանց հաստատած հսկողությունը:

705թ. Նախճավանում և Խրամում հայ ազնվականության դեմ կազմակերպված սպանդից հետո Հայոց իշխան Սմբատ Բագրատունին (693-726) հարկադրված էր հեռանալ Բյուզանդիայի սահմանները և հաստատվել Սև ծովի ափամերձ շրջանում՝ Փոթիում[22]:

Հայերի արտագաղթն ավելի ծավալվեց, երբ 774-775թթ. ապստամբությունը ճնշվեց արաբական ուժերի կողմից: Շապուհ Ամատունու ու նրա որդու՝ Համամի առաջնորդությամբ 12 հազարանոց հայ գաղթականների հեռանալը[23] տվյալ ժամանակաշրջանում հանգեցնելու էր բնակչության կազմում որոշ տատանումների: Այս երևույթն առավել նկատելի եղավ Սամիկոնյան նախարարական տոհմի Բյուզանդիա կամ Վրաստան անցնելու օրինակով: Զրկվելով իրենց նախկին տերերից, Սամիկոնյանների կալվածքներին տեր դառնալու

---

[19] Նույն տեղում:

[20] Տես Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 59:

[21] J.Laurent, L'Armnme entre Byzance et L' Islam. Nouvelle ed., revue et mise a'jour par M.Canard, Lisbonne, 1980, p. 382-394, հմմտ. Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները, էջ 66-86, 96-120:

[22] Ղևոնդ, էջ 35:

[23] Ղևոնդ, էջ 168:

փորձեր կատարեցին եկվոր արաբները: Բագրևանդի ճակատամարտում (775) զոհված Մուշեղ Մամիկոնյանի դուստրն, օրինակ, ամուսնացել էր արաբ Ջահհաֆյանի հետ: Վերջինս տիրել էր Արշարունիքի մի մասին և փորձում էր ձեռք բերել նրա մյուս մասը ևս[24]:

Երկրի բնիկ տերերը հայրենիքի սահմանները լքելուց բացի հարկադրված էին փոխել իրենց բնակության վայրերը երկրի ներսում: Այս երևույթն ակնհայտ է դառնում Գնունիների օրինակով: Աղիովիտ գավառին տիրող նշանավոր տոհմի ներկայացուցիչներն ի վիճակի չլինելով հակազդել Վանա լճի հյուսիսային շրջաններում հաստատված արաբներին, դիմեցին հայոց իշխան Աշոտ Մսակերին (մոտ 790-826): Վերջինս հազար հոգուց բաղկացած իր մարդկանցով նրանց գաղթեցրեց ու վերաբնակեցրեց Տայքում[25]. Տայքը, տվյալ ժամանակաշրջանում, իրոք, ապահով տեղ էր: Այն արաբներից մաքրել էր Աշոտ Մսակերը, այնտեղ կառուցել էր Կամախ ամրոցը, ուր հաստատել էր իր ընտանիքը[26]:

Հայաստանի արաբ գաղթականներն ակտիվացան երբ IXդ. կեսին սկսված ապստամբությունը ճնշելու համար Աբասյան ալ-Մուտավաքիլ աբուլ Ֆադլ Ջաֆար Մուհամմադ (847-861) խալիֆն այստեղ ուղարկեց պատժիչ մի զորախումբ՝ ազգությամբ թուրք Բուղա ալ-Կաբիրի գլխավորությամբ: Դրանից հետո տեղի արաբներն այնքան անկաշկանդ ու համարձակ դարձան, որ ամենուրեք առաջնորդում էին Բուղային՝ ի մուտ և ելս աշխարհիս[27]: Բուղայի արշավանքը նպաստեց Հայաստանում արաբ տարրի նոր ալիքի տարածվելուն: Նրանք, «որ ելեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց, և ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս...»[28]:

VIIդ. Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի բնականոն ընթացքը կաշկանդում էին ոչ միայն արաբների տիրապետության հետ կապված իրադարձությունները: Դրանցից բացի զգալի էր նաև խազարական գործոնը: Հյուսիսկովկասյան ռազմատենչ այս ցեղերը երբեմն խուժում էին Հայաստանի սահմանները, երկիրն ու բնակչությանը ենթարկում ասպատակությունների ու նորանոր փորձությունների: Ի պատասխան դրանց՝ արաբները խազարների դեմ

---

[24] Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 105:
[25] Վարդան, էջ 106:
[26] Նույն տեղում, էջ 105:
[27] Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս.Պետերբուրգ, 1887, էջ 131:
[28] Նույն տեղում, էջ 152:

ռազմերթեր էին կազմակերպում, որոնց մասնակցում էին հայկական ուժերը կատարելով զինվորական ծառայության որոշակի պարտիք, որոնցից նրանք քիչ չէին տուժում:

Արաբական իշխանություններն երկրի բնական հարստությունների շահագործումը դարձրել էին իրենց մենաշնորհը և դրանցից օգտվում էին անխնայաբար:

Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրն անդրադառնալով VIIդ. 90-ական թվականների սկզբներին Մուհամմադ իբն Մարուանի՝ Ջազիրիայի և Հայաստանի կառավարիչ նշանակելուն, հայտնում է, որ մինչև նրա արշավանքը Տառեխի (Թիրրիխ) լիճը ձկնորսության համար ազատ է եղել, բայց Մարուանը արգելել է ձկան որսը և դրա համար նշանակել հատուկ պաշտոնյա, որը զբաղվել է նրա որսով և վաճառքով[29]: Այնուհետև նա շարունակում է . «Այս տառեխը (թիրրիխ) աշխարհի հրաշալիքներից է, քանզի փոքր ձուկ է, որը տարվա որոշ եղանակին է երևան գալիս լճում: Առաջանում է մի գետի մեջ, որը թափվում է լիճը, այնքան շատ, որ կարելի է ձեռքով որսալ և մանավանդ հատուկ պատրաստված գործիքների միջոցով: Երբ այդ եղանակը վերջանում է, այլևս ոչինչ չի մնում»[30]: Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը Վանա լճի և նրանում բազմացող տառեխ ձկան մասին է, իսկ գետը նույնանում է լիճը թափվող Առեստի հետ:Հիշյալ գետի ափին էր գտնվել Առեստավանը, որը Արշակունիների օրոք արքունական ձկնորսարան էր[31]: Տառեխ ձուկը, ըստ Xդ. արաբ աշխարհագետ Իբն Հաուկալի, արդյունաբերական նշանակություն է ունեցել: Այն աղվել է, չորացվել և արդյունահանվել շատ երկրներ, որոնց թվում՝ Ասսուլ, Ջազիրա, Իրաք և Ասորիք[32]:

Տառեխի իբրև Հայաստանից գանձվող բնահարկի մի տեսակի մասին վկայություն ենք գտնում X դարի մեկ ուրիշ արաբ հեղինակի՝ Ջահշիարիի հարկային ցուցակում, որի տվյալները վերաբերում են Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի (785-809) ժամանակաշրջանին: Այս հարկացուցակի համաձայն Հայաստանը արաբներին տարեկան տվել է

---

[29] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ, Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 62:

[30] Իբն ալ-Ասիր, էջ 62:

[31] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի» Երևան, 1963, էջ 37, 50, 98, 99, 109:

[32] Տես Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում, «Հոդվածների ժողովածու» , Երևան, 2004, էջ 202:

10 հազար ռաթլ (լիտր) տառեխ[33]: Բացի վերջինից հիշյալ հարկացուցակում նշվել է նաև նույն չափի աղած՝ մշակված ձուկ:

Զահիշիարիի հարկացուցակը կրկնում է 14-15-րդ դդ. հեղինակ Իբն Խալդունը, որի հարկացուցակում Զահիշիարիի կողմից նշված «աղած, մշակված ձուկ՝ տաս հազար ռաթլ» արտահայտության փոխարեն գտնում ենք «աղած սուրմահի տաս հազար ռաթլ» կապակցությունը: Սուրմահին կամ շուրմահին պարսկերեն է, որը նշանակում է աղած ձուկ: Այս բառը հիշատակվում է IX դ. աշխարհագետ Իբն ալ-Ֆակիհի կողմից, երբ նա նշում է Արաքս գետի մեջ եղող շուրմահի մասին, որը միայն այդ տեղում է լինում՝ տարվա որոշ եղանակի: Իբն ալ-Ֆակիհը այնուհետև նշում է ձկան այս տեսակի համեղ ու փափուկ լինելը[34]:

Ձկան պաշարներից բացի երկրի բնական հարստությունները գիշատչորեն օգտագործելու վերաբերյալ առավել հատկանշական կարող է լինել ընդերքի հարստություններից արծաթի հանույթի սպառման փաստը: Այս երևույթն այնքան տարածում էր գտել, որ Ղևոնդ պատմիչը եզիդ իբն Ոխայդ ալ-Սուլամիի VIIIդ. երկրորդ կեսի՝ (759-769) և Հասան Իբն Կահթաբայի (771-775) ոստիկանության երկրորդ շրջանների կապակցությամբ պարզորոշ գրում է. «զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս»[35] կամ «քանզի ամենևին նուազեալ էր գիւտ արծաթոյ յաշխարհէս հայոց»[36]:

Հայաստանի բնական հարստությունները մեծ չափերով օգտագործելու վերաբերյալ կան ուրիշ փաստեր ևս: Հայաստանն ընդհանրապես համարվում էր «որդան կարմիրի» հիմնական մատակարարը: Այս արժեքավոր հումքը հասնում էր մինչև Հնդկաստան, իսկ Վանա լճից արդյունահանվող բորակն օգտագործվում էր արաբական երկրներում հրուշակեղենի արտադրության մեջ[37]:

Երկրից դուրս տարվող բնական միջոցների որոշ մասը տեղափոխվում էր Տիգրիս և Եփրատ գետերով: Զանգվածային բնույթ էր կրում Հայաստանի հարավային լեռնային անտառապատ գոտուց հատված շինափայտի տեղափոխումը Եփրատ գետով: Տիգրիսը ևս ծառայում էր իբրև նավագնացության հարմար միջոց: Նրանով Հայաստանից ապրանքները հասնում էին Մոսուլ[38]:

---

[33] Իրաքում այս կշռաչափը հավասար էր 406,25 գրամի (Տես Хинц В., Мусульманские меры и веса с переводом в метрическую систему, Перевод с немецкого Ю.Э.Брегеля, Москва, 1979, с. 37.):
[34] Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանի բնահարկը, էջ 202:
[35] Ղևոնդ, էջ 135:
[36] Նույն տեղում, էջ 139:
[37] Տես Мец А., Мусульманский ренессанс, Москва, 1966, с. 342.
[38] Նույն տեղում, էջ 377-378:

Բայց եղան երկիրը տնտեսական փլուզման ուղիով տանելու ուրիշ եղանակներ, որոնք կյանքի կոչվեցին Եզիդ Բ խալիֆայի կողմից (720-724), երբ հսկայական վնաս հասցվեց անասնապահությանը: Նրա հրամանով ոչնչացվեցին խոզերը[39]: Այս քայլի դրդապատճառները մութ են մնում: Խոզերից բացի ոչնչացվել են նաև ուրիշ կենդանիներ[40]:

IX դարից լայն թափ ընդունեցին նոր բնակեցումներն ու մշակելի տարածքների յուրացումը, որոնք համընկան երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած հիրավի վիթխարի վերափոխումների հետ:

Բագրատունի ինքնակալների գիտակցական քաղաքականությունը ընդպատակամղված էր երկրի քաղաքական և սոցիալ տնտեսական վերելքի ապահովմանը: Այս մասին մեզ ուղղակի տեղեկություններ է փոխանցում Հովհաննես Դրասխանակերտցին: Ի թիվս երկրի զբաղարեշինության, տնտեսական վերելքի ու բնակչության կենսամակարդակի բարձրացման վերաբերյալ թափանցիկ ակնարկների, նա շեշտադրում է նաև Բագրատունի թագավորների կողմից իրագործած հայանամասշտաբ բնակեցումներն ու նոր ընդարձակ տարածքների յուրացումը[41]:

Նույն գործընթացը տեսանելի էր դառնում Հայաստանի մյուս հատվածներում, անշուշտ, արդեն տեղական ավագանու նախաձեռնությամբ ու տարբեր գործոնների ազդեցությամբ: Վասպուրականում Թովմա Արծրունու հաղորդմամբ իշխան Գագիկ Արծրունին Օձ կոչված ձորի գլխին Xդ. սկզբին տեղափոխեց գյուղեր, որոշեց դրանց սահմանները և իր անունով բնակավայր կառուցեց: Այսպիսով Գագկաերտը իշխանանիստ ամրացված բնակավայր էր, որի շուրջը սփռված էին նորաշեն գյուղերը[42]:

Xդ. կեսերից հայկական տարածքները բռնակցելուց, իսկ XI դարի կեսից Հայաստանի անկախությունը կորստի մատնելուց հետո, Բյուզանդիան հայ բնակչությանը կամովին թե ակամա գաղթեցնում էր ոչ միայն իր սահմանները, այլև իրականացնում էր այս գործընթացին նպաստող ամայն հակառակ գործողություն՝ Հայաստանում հաստատելով Բյուզանդացի վերաբնակիչների: Կայսրությունն հիշյալ եղանակով փորձում էր նվաճված Հայաստանում ստեղծել հուսալի հենակետ: Բյուզանդական տարրի Հայաստանում հիմնավորվելու վերաբերյալ ունենք եզակի վկայություն: Դա նահանգային ազնվականության ներկայացուցիչ Եվստաթիոս Բոյիլասի 1059թ. կազմած կտակն է: Նշված

[39] Ղևոնդ, էջ 100:
[40] Chronique de Denys de Tell Mahre', p.17.
[41] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 139:
[42] Թովմա Արծրունի, էջ 256:

վավերագիրն ու նրա հեղինակն արժանացել են հետազոտողների ուշադրությանը[43]: Մասնավորապես նրանք կանգ են առել Եվստաթիոս Բոյիլասի հայրենի Կապադովկիայից գաղթելու և նոր բնակավայրում հաստատվելու մանրամասներին՝ իբրև նրա վերջնական հանգրվան մատնանշելով տարբեր վայրեր: Ուշադրություն է դարձվել Եվստաթիոս Բոյիլասի տիրույթների տեղագրությանը, սեփականության ձևերին, եկամտի աղբյուրներին, նրա հովանավորներին, հպատակներին և կտակի ուսումնասիրության պատմությանը:

Բոյիլասը Կ.Պոլսի արքունիքում գրավում էր բարձր դիրք: Դա է հաստատում մայրաքաղաքի «Ոսկե պալատ»ում նրա ունեցած պրոտոսպաթար աստիճանն ու հյուպատոս տիտղոսը: Նա ծնունդով Կապադովկիայից էր, որտեղից մեկ և կես շաբաթվա ճանապարհ անցնելուց հետո հաստատվել էր Կղարջքում, ավելի ստույգ Արտանուջում, ուր տեր էր դարձել մի շարք կալվածքների: Ենթադրվում է, թե այս տիրույթները նա ստացել էր բյուզանդական կառավարությունից[44], թեև հիշյալ վարկածը միանշանակ չի ընդունվել[45]:

Բոյիլասը բնակվել էր հայերի միջավայրում «այլ հավատք պաշտող ու այլ լեզվով խոսող ժողովուրդների մեջ»: Նա առանձնապես համակրանքով չի խոսում նրանց մասին: Բոյիլասն անուն առ անուն հիշատակում է բոլոր այն տասնմեկ տիրույթները, որոնք նոր բնակավայրում իրեն էին պատկանել: Դրանք էին՝ Բուզինան, Եսայասը, Տանձուտ-Չալիման, Ուզիկի գյուղը, Կոպտերիոնը, Խոսպակրատը, Օփիդոբունին, Կուսներիան, Կալմուխը, Վարդան և Պարարունին:

Ինչպես նշվեց, հիշյալ բնակավայրերը հայկական էին: Այդ են հաստատում ոչ միայն Բոյիլասի հաղորդումը, այլև դրանց մի մասի դեռևս պահպանված հայերեն անվանումները (Բուզինա-Վժան, Կալմուխի-Կամախ, Տանձուտ-Չալիմա), իսկ մյուսները կամ հայերենի աղավաղումներ են կամ էլ հայերենից ուղղակի թարգմանություններ (Վարդա, Խոսպակրատ-Խոզաբիր-Խոտաբարտ, Օփիդոբունի= Օձերի լեռ):

Կտակում Բոյիլասը նշված ստացվածքները հիշատակում է տարբեր տերմիններով՝ գյուղ, պրոաստիոն, կալվածք: Բուզինան,

---

[43] Այս մասին տես Բարթիկյան Հ., Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ.առաջին, Երևան, 2002, էջ 57-94, նույնի Критические заметки о завещании Евстафия Воилы (1059), նույն ժողովածուի երկրորդ հատորում, էջ 63-74, Литаврин Г.Г., Относительные размеры и состав имущества провинциальной византийской аристократии во второй половине XI в. (По материалам завещаний), Византийские очерки, Москва, 1971, с. 152-168.

[44] Բարթիկյան Հ., Եվստաթիոս Բոյիլասի կտակը, էջ 398:

[45] Литаврин Г.Г., Относительные размеры, с. 160.

օրինակ, հիշվում է կալվածք (հունարեն՝ Κτῆμα): Կալվածքը և գյուղը (χωρίον) թեև նույնական են, այսինքն նրանք գյուղական բնակավայրեր են, բայց ունեն նաև տարբերակիչ գծեր: Գյուղերում տները միմյանց մոտիկ են, մինչդեռ կալվածքներում դրանք միմյանցից զգալիորեն հեռու են և յուրաքանչյուրը կառուցված է առանձին հողակտորի վրա[46]: Վարդան հիշատակվում է իբրև պրոաստիոն (προάστειον), իր նախնական իմաստով պրոաստիոնը քաղաքի արվարձանն էր, բայց միջնադարյան Բյուզանդիայում այն նոր բովանդակություն էր ստացել և ցույց էր տալիս կալվածատիրոջ հողերը մշակողների բնակության վայր: Հարկ է նշել, որ այս համատեքստում նկատվում է տերմինի երկու իմաստներից շեղում Տանձուտ-Սալիմ պրոաստիոնը, իր կալվածատիրոջ՝ Եվստաթիոս Բոյիլասի բնակության վայրն էր դարձել: Պրոաստիոնում կային հողային տարբեր տիրույթներ՝ մշակելի տարածքներ, արոտավայրեր, անտառապատ շերտեր և այլ նշանակության զանգվածներ[47]:

Նկարագրելով իր նոր բնակավայրը, Եվստաթիոս Բոյիլասը դիտել է տալիս նրա անբարեկարգ և բնակության համար ոչ պիտանի լինելը: Դա գարշահոտ, անտանելի տեղ էր, օձերի, կարիճների ու վայրի գազանների բույն, որը հանգիստ չէր տվել դիմացում ապրող հայերին, որոնք սարսափահար էին եղել: Այդ վայրը նա սրով ու հրով մոխրի էր վերածել[48]: Կտակի այս հատվածը Հ.Բարթիկյանը մեկնաբանել է այլաբանորեն՝ օձերին, կարիճներին ու վայրի գազաններին դիտելով թոնդրակեցի աղանդավորներ[49]: Հ.Բարթիկյանի ենթադրությունը Գ.Գ.Լիտավրինը իրավացիորեն պակաս հավանական է դիտել: Կտակում տեղ գտած արտահայտության հիշյալ ձևը, ըստ նրա, բնորոշ է բյուզանդական, մասնավորապես, վարքագրական գրականությանը: Բոյիլասի տվյալ հաղորդումը նա դիտում է չափազանցություն, որը բնորոշ է կտիտորին կամ վերաբնակիչին և միայն այդքանը: Գ.Գ.Լիտավրինի եզրահանգմամբ տվյալ արտահայտությունը պետք է ուղղակի իմաստով հասկանալ: Այդ է հաստատում ըստ նրա նաև Օփիդոբունի տեղանունը, որը թարգմանվում է «Օձերի լեռ»[50]:

Եթե հավատանք Եվստաթիոս Բոյիլասի խոսքերին, ապա նոր բնակավայրում նրա գործունեությունն ընթացել է հիմնականում երկու ուղղությամբ՝ մի կողմից նոր տարածքների յուրացում, մյուս կողմից շինարարության ու վերակառուցողական աշխատանքների ծավալում: Նա կարգի է բերել արոտավայրերն ու ագարակները, հիմնել անտառներ,

---

[46] Բարթիկյան Հ., Եվստաթիոս Բոյիլասի կտակը, էջ 85, ծանթ.15:
[47] Տես Նույն տեղում, էջ 85-86, ծանթ. 19:
[48] Նույն տեղում, էջ 76-77:
[49] Նույն տեղում, էջ 71:
[50] Литаврин Г.Г., Относительные размеры, с.160, прим.22.

այգիներ ու պարտեզներ, իրականացրել ջրաշինարարություն, կառուցել ջրաղացներ, բնակարան, հիմնել վանք և իրագործել այլ ձեռնարկումներ:

Վերը նշված տիրույթների մեծ մասը եղել են լքված ու անմարդաբնակ: Բոյիլասի հավաստումով ինքը դրանցում կատարել է վերականգնողական աշխատանքներ՝ ծախսելով զգալի միջոցներ[51]:

Բոյիլասի վկայությամբ նշված կալվածքները տարբեր միջոցներով դուրս էին եկել իր իրավասությունից: Չորս կալվածք վաճառքի կամ օգտագործման պայմանով փաստորեն բռնագրավել էին նրա «տերերը»՝ բանակաթեմի դուքս Միքայելը, և նրա որդի մագիստրոս Վասիլիոսը, իսկ երեքը նա կտակել էր տարբեր անձանց: Նրա տնօրինության տակ եղած տասնմեկ տիրույթներից միայն չորսն էին մնացել՝ Տանձուտ-Սալիմը, Բուզինան, Պարաբունիոնը և Եսայասը: Վերջինս էլ հինգ լիտր ոսկով նա կտակել էր իր փեսային՝ Միքայելին: Այստեղ փաստորեն առկա է սովորական առք ու վաճառքի գործառույթ[52]:

Վերը տեսանք, որ Բոյիլասը տեղեկացնում է շրջապատում բնակվող հայերի մասին: Նա նաև ցույց է տալիս բնակավայրերից շատերի լքյալ, անմարդաբնակ ու ամայի լինելը, որոնք իր ջանքերով բարեկարգվել են: Եթե վերջինս արդյունք չէ ցանկալին իրական ներկայացնելու նրա ջանքերի, ապա լքյալ բնակավայրերի առկայությունը կարելի է կապել հայ բնակչությանն իր բնօրրանից գաղթեցնելու Բյուզանդիայի քաղաքականության և սելջուկյան արշավանքների հետ:

Կարելի է կարծել, որ Բոյիլասի նոր բնակավայրում բնակվում էին զգալի թվով բյուզանդացիներ կամ քաղկեդոնականություն ընդունած բնիկներ: Օրինակ՝ միայն նրա կողմից ազատություն ստացած և անուն առ անուն թվարկված ստրուկների թիվը 13 էր: Եթե սրանցից յուրաքանչյուրի ընտանիքը բաղկացած լիներ նվազագույնը հինգ շնչից, ապա միայն ազատություն ստացած ստրուկներն իրենց ընտանիքների անդամների հետ կկազմեին 65 հոգի: Թեև նշված անձանց մի քանիսի անուններից դատելով նրանց բյուզանդացի լինելը անհավանական է համարվել, բայց նույնիսկ այդ դեպքում վերջիններիս թիվը մեծ չէ, դրանից բացի եղել են նաև ազատություն չստացած ստրուկներ, որոնց ոչ անունները, ոչ էլ թիվը կտակագիրը ցավոք չի նշում: Բոյիլասի 11 տիրույթներում նրա կախյալ մարդկանց թիվը չէր կարող անցնել 200-ից[53]:

Եվստաթիոս Բոյիլասն իր նստավայր դարձրած Տանձուտ Սալիմա գյուղում կառուցել էր Ս.Աստվածածնի վանքը, իսկ նրա մայրը,

---

[51] Բարթիկյան Հ., Եվստաթիոս Բոյիլասի կտակը, էջ 77:
[52] Նույն տեղում, էջ 77-78:
[53] Литаврин Г.Г., Относительные размеры, с.165.

կինը և որդին թաղված էին մեկ ուրիշ՝ Ս.Վարվառայի վանքում: Բյուզանդական վանքերն ու եկեղեցիներն ինչպես հայտնի է, բավարարում էին ոչ միայն հավատացյալների կրոնական պահանջմունքները, այլ տնտեսական ու մշակութային կարևոր կենտրոններ էին: Նշենք, որ նա ոչ միայն ղեկավարում էր վանքերի տնտեսությունն, այլև միջամտում էր վանականների կյանքի հարցերին: Վանքերը հենակետ էին ծառայում նաև քաղկեդոնականությունը ոչ դավանակից բնակչության մեջ տարածելու գործում: Այս առումով Բոյիլասի վանքերը չպետք է բացառություն լինեին:

Այն, որ Բոյիլասի համար դավանանքը ոչ երկրորդական նշանակություն ուներ, ակնհայտ է դառնում նրա կտակից: Սկզբում, ինչպես ասվեց, նա շեշտում է իր և հայերի դավանանքի ու լեզվի տարբերությունը, իսկ վերջում ազգականներին, ժառանգներին և ազատ արձակվածներին խստորեն պատվիրում է չշեղվել ուղղափառ հավատից, հակառակ դեպքում պահանջում է ժառանգներին, զրկել ժառանգությունից, ազատ արձակվածներին նորից ստրկացնել, իսկ «դրսի մարդկանց» վռնդել իր տիրույթներից[54]:

XI-XIIդդ.Բյուզանդական վանքերի կանոնադրությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ նրանցից յուրաքանչյուրում վանականների թիվը կարող էր նվազագույնը լինել հինգ, իսկ առավելագույնը՝ մի քանի հարյուր[55]: Մենք Ս.Աստվածածնի և Ս.Վարվառայի վանքերի վանականների թվի վերաբերյալ տեղեկություն չունենք: Բայց անուղղակի տվյալներից կարող ենք եզրահանգել, որ դրանց թիվը զգալի է եղել: Այդ են հաստատում կտիտորի կողմից վանքերին կատարած չափազանց հարուստ շարժական ու անշարժ արժեքների նվիրաբերումները, հատկապես բազմաթիվ ու բազմապիսի արարողական պարագաներն ու սպասքները:

Կտակի վերջում Բոյիլասը պայման է դնում իր դուստրեր Իրենեի և Մարիայի վրա, որ այլ տեղում բնակվելու դեպքում նրանք կառուցեն Աստվածածնի վանքի նմանը կամ՝ ավելի փոքրը[56]: Այս պայմանը ևս անուղղակի կարող է ցույց տալ Աստվածածնի վանքի վանականների թվի զգալի լինելը:

Բոյիլասի կտակում առկա են սոցիալական մի քանի տերմիններ: Սրանցից է ստրուկ տերմինը, որը բնագրում նշված է հունարենի տարբեր երանգներով: Նրա ստրուկներից ոմանք ազատություն ստանալով՝

---

[54] Բարթիկյան Հ., Եվստաթիոս Բոյիլասի կտակը, էջ 82:

[55] Տես Каждан А.П., Византийский монастырь XI-XII вв. как социальная группа. Византийский временник, том 31, 1971, с.52.

[56] Բարթիկյան Հ., Եվստաթիոս Բոյիլասի կտակը, էջ 82-83:

դարձել էին վարձակալներ և այդ եղանակով մշակում էին նրա տիրույթները:

Կտակում հանդիպում ենք նաև «դրսի մարդիկ» արտահայտությանը, որոնք դիտվում են վարձակալներ: Վերջիններս բյուգանդական սկզբնաղբյուրներում հայտնի են միսթիոս անունով[57]:

Այսպիսով, Եվստաթիոս Բոյիլասի կտակը կարևոր տեղեկություններ է ամփոփում հայկական տարածքները բյուգանդական կայսրության կողմից զավթելու հետևանքով նրանցում կայսերական վարչակառավարման համակարգ ստեղծելու և սոցիալ-տնտեսական հարաբերություններ ձևավորելու գործում: Բոյիլասի կտակը անհրաժեշտ է առավել մանրակրկիտ ուսումնասիրել:

Ինչպես վերը նշվեց, նոր բնակավայրերի հիմնումն ու բնակչության վերաբնակեցումը հիմնականում առնչվում էր նոր տարածքների յուրացման հետ, որը կյանքի էր կոչվում տարբեր եղանակներով ու միջոցներով:

936թ. Սյունիքի տիկին Սոփիան, Գնդեվանքի հարևանությամբ, հիմնեց համանուն գյուղը, որը նվիրեց վանքին[58]: Իսկ Շահանդուխտ թագուհու 998թ. վճռագիրը տեղեկացնում է նրա կողմից Հաբանդ գավառի խոպան վայրերից մեկը մշակելու, Տեղ բնակավայրը հիմնելու և այն Տաթևի վանքին նվիրելու մասին[59]:

985թ. Բյուրականի հանդերի ոռոգման համար հայր Գրիգորը ջրանցք է կառուցում[60], իսկ Տաթևի վանահայր Հակոբի 932թ. կառուցած 30 կմ երկարությամբ ջրանցքը ջրարբի էր դարձրել 150-ից 200 հեկտար հողատարածք[61]:1008թ. կառուցված Գնդեվազի ջրանցքի երկարությունը 24 կմ էր, որն ուներ երեք ջրամբար[62]:

Անիի ընչեղներից Տիգրան Հոնենցն իրեն պատկանող 7 գյուղերի մի մասն ամբողջովին, իսկ մյուսներն մասնակիորեն 1215թ. նվիրաբերել էր

---

[57] Բարթիկյան Հ., նույն տեղում, էջ 93, ծանթ.91:
[58] Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 261:
[59] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 291-292:
[60] Վիմական տարեգիր, կազմեաց Կ.Կոստանեանց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 9, Հմմտ. Բարխուդարյան Ս., Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հ.I , Երևան, 1964, էջ 265: Ս.Բարխուդարյանի տեքստում ջրանցքի կառուցման թվական է նշվել 981-ը:
[61] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 253-254: Բարխուդարյան Ս., Դիտողություններ, էջ 266:
[62] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 262-263: Բարխուդարյան Ս., Դիտողություններ, էջ 266:

իր կառուցած Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն: Ընդգծենք, որ նշված 7 գյուղերից մի քանիսն ինքը՝ նվիրատուն էր հիմնադրել[63]:

Երբեմն քաղաքական պայմանների հետևանքով նախկին բնակավայրերը վերածվում էին վարչական կամ տոհմական կենտրոնների, երբեմն էլ այդ նպատակի համար հիմնադրվում էին նոր բնակավայրեր:

Երբ XIII դ. սկզբին Խաղբակյանները Խաչենից վերահաստատվեցին Վայոց ձորում նրանք կենտրոն դարձրին Սրկողունք ավանը և Բոլորաբերդը: Առաջինը նույնանում է հետագայի Բաշքենդ գյուղին, որտեղ, ըստ ավանդության, գտնվել է Պռոշ իշխանի պալատը, որի առանձին բեկորները Գ.Հովսեփյանի տեղեկությամբ «մինչև վերջին ժամանակները մնացել էին»: Սրկողունքից հետո հիշյալ իշխանական տոհմի երկրորդ գլխավոր կենտրոնը Մարտիրոս գյուղն էր, որը Պռոշ իշխանի և իր որդի Սմիր Հասանի հրամանով 1283թ. հիմնադրել էր Դեղիկի որդի Մխիթարը[64]: Մարտիրոսի հիմնադրման վավերագիրը պահպանվել է գյուղում, աղբյուրի մոտ կանգնեցված դեղնավուն գրանիտե վեհատեսիլ խաչքարի չորս կողմում գրված հետևյալ արձանագրության մեջ.

«ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ. ԵՄ ՄԽԻԹԱՐ, ՈՐԴԻ ԴԵՂԿԱ, ՀՐԱՄԱՆԱՒ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՄԵԾԻՆ ՊՌԱՒՇՈ ԵՒ ՈՐԴՈ ԻՒՐՈ ՊԱՐՈՆ ՀԱՍԱՆԱ, ՇԻՆԵՑԻ ԶԳԵԱՒՂՍ ԶՄԱՐՏԻՐՈՍՍ ԵՒ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԴՈՒՌՆ ՄԲ. ՎԿԱՅԱՐԱՆԻՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ. ԻՆՁ ԵՒ ԱՄՈՒՄՆՈ ԻՄՈ ՄԱՄԵՐԻՆ, ԵՒ ՈՐԴՈ ԻՄՈ ԽԱՐԻՓՇԱՀԻՆ, ԵՒ ԴՍՏԵՐ ԻՄՈ ՌԶՈՒՔԱՆԻՆ: /ՔՍ. ՅՍ. ԿԱԶՄԵՑԱՒ ՁԵՌԱՄԲ ՇՆՀ /ԱՒՈՐԻՍ. Ի ԹՎ.: ՉԼԲ: ՈՐՔ /ԸՆԹԵՌՈՒՔ ՅԻՇԵՑԷՔ□ / Ի ՏՐ.[65]»:

Բնակության նոր վայրեր կարող էին հիմնադրվել նաև այն պարագայում, երբ հները դրսեկ նվաճողների կողմից կամ տարերային աղետների հետևանքով ավերվում էին: Այս կապակցությամբ վկայակոչենք Կիրակոս Գանձակեցուն, որի հաղորդմամբ Սարգիս անունով մեկը երկրաշարժի հետևանքով իր ավերված գյուղը տեղահան արեց ու այն վերաշինեց Գետիկ վանքի մոտ[66]:

Այս դեպքերում գյուղերը երբեմն կարող էին կոչվել իրենց հիմնադիրների անուններով, ինչպես որ այդպիսիք գտնում ենք

---

[63] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ.Օրբելի, Երևան, 1966, էջ 63:

[64] Տե՛ս Հովսեփյան Գ., Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 36-38, 44-45:

[65] Տես Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց ձոր, կազմեց Ս.Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 183:

[66] Տես Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 210:

Ստեփանոս Օրբելյանի պատմական երկում՝ Վասակակերտ, Վասակաշեն և Երվանդակերտ[67]:

Սակայն համարձակ քայլ արած կլինենք, եթե անվերապահորեն պնդենք, թե մարդկանց անուններով հայտնի գյուղերի հիմնադիրներն եղել են հենց այդ նույն մարդիկ: Այնինչ Ստեփանոս Օրբելյանի տեքստում հանդիպում են գյուղանուններ, որոնք կազմված են երկու տարրերից՝ անձնանունից և որևէ տիրույթ ցույց տվող բառից, ինչպես օրինակ հուշում են Գեղամաբակ, Սահակաբակք, Վաչէիբակք գյուղանունները[68]: Այս տիրույթները գտնվել են նշված գյուղերի նախկին տեղերում և պատկանել հիշյալ անձանց:

Չպետք է աչքաթող անել գյուղերի հիմնադրման մեկ այլ կարևոր գործոն: Գյուղական բնակչության թվի աճի ու մշակելի տարածքների կրճատման հետևանքով հին գյուղերի կողքին երևան էին գալիս նորերը: 1201թ. Զաքարե ամիրսպասալար Զաքարյանի Հառիճում փորագրված վիմագրում երբ խոսվում է նվիրաբերված տիրույթների սահմանների մասին, նշվում է նաև Հին Հառիճա տեղանունը[69]: Դժվար չէ եզրակացնել, որ հնի կողքին եղել է նաև նոր Հառիճը: Իսկ Ստեփանոս Օրբելյանի երկում բազմաթիվ են վերին, ներքին, մյուս և այլ որոշիչներով տեղանունները: Բերենք դրանցից մի քանիսը միայն. ունենք Լիմ և Վերին Լիմ[70],Գոդաձոր ներքին և Գոդաձոր վերին'',Կարբինք վերին և Կարբինք ներքին[72] տեղանունները: Նշված գյուղերի հիմնադրման գործի նախաձեռնողներն եղել են տվյալ գյուղերի համայնքները:

Առևտրական բանուկ ճանապարհների հանգույցում նույնպես հիմնվում էին գյուղական բնակավայրեր: Խաչեն գավառում հայտնի էր Վաճառատեղ անունով գյուղատեղ, որը գտնվում էր Խաչեն գետի հովտում՝ Վանք և Առաջաձոր գյուղերի միջակայքում: Տեղանունը վկայված է Կոշիկ անապատի մի արձանագրության մեջ[73]: Տվյալ բնակավայրի անունը հուշում է նախապես նրա առևտրական կենտրոն լինելու մասին, որի շուրջը ձևավորվել է համանուն գյուղը:

XIII դարում հիմնադրված գյուղաքաղաքի խմբին է դասվում Առաքելոց վանք-բնակավայրը: Այն գտնվում էր պատմական Կայենո գավառում, Կունեն գետակի ափին: Աշխարհագրական նպաստավոր

---

[67] Ստեփանոս Օրբէլեան, էջ 510, 516, 523, 513, 514, 519:
[68] Նույն տեղում, էջ 515:
[69] Վիմական տարեգիր, էջ 43:
[70] Ստեփանոս Օրբէլեան, էջ 520:
[71] Նույն տեղում, էջ 511:
[72] Նույն տեղում, էջ 517:
[73] Տես Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս.Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 30:

դիրքի շնորհիվ Առաքելոց կոչված տեղանքը դարձել էր Վրաստանի և Աղվանքի հետ Հայաստանին կապող կարավանային ճանապարհների հանգույց, առևտրաարհեստագործական կարևոր կենտրոն: Տեղագիրների նկարագրությամբ տեղացիները գյուղատնտեսությամբ հատկապես երկրագործությամբ զբաղվելու հնարավորություն գրեթե չեն ունեցել նրա անտառապատ բարձր լեռների ու խոր ձորերի պատճառով: Բայց դա չէր խանգարել, որ Առաքելոց վանք բնակավայրը դառնար արևտրաարհեստագործական կարևոր կենտրոն, իսկ նրա բնակիչներն նյութապես բարեկեցիկ վիճակում լինեին[74]:

Վիմագրերում, մատենագիրների երկերում պահպանվել են տեղանուններ, որոնք նախկինում այլ նպատակների են ծառայել կամ օգտագործման համար պիտանի չեն եղել: Սրանցից են՝ Ծովատեղը, Տզրկածովը, Ղամշկուտը, Կորդը, Խուպանը և այլն:

Այսպիսով, VII-XIIIդդ. Հայաստանի բնակչության էթնիկական կազմում նկատելի դարձան հայերի հոծ զանգվածների արտագաղթի դեպքերը: Այս գործընթացին զուգահեռ ծավալվեց օտար՝ արաբական և բյուգանդական տարրերի ներգաղթը: Սակայն եկվորների ու բնիկների էթնիկական միավորում տեղի չունեցավ: Միաժամանակ երկրի ներսում իրականացվում էին բնիկների վերաբնակեցումներ՝ իբրև հետևանք նրանց անապահով կացության:

Բնակչության աճն ու դրա հետևանքով մշակելի հողերի կրճատումը հարկադրում էր գյուղական համայնքներին նոր տարածքներ ձեռք բերել և նոր բնակավայրեր հիմնել: Աշխարհիկ և հոգևոր ավագանու ներկայացուցիչները դրանով ոչ միայն շահագրգռված էին նոր բնակավայրերը դարձնել բարեշեն, այլև՝ դրանցում հաստատված բնակչության հաշվին մեծացնել իրենց եկամուտները:

---

[74] Տե՛ս Սարգսյան Գ., Առաքելոց վանքամրոցը և գյուղատեղը, «Էջմիածին», 1955, թ. VII, էջ 33-39, թ. VIII, էջ 31-39, Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ավագյան, Հռ. Ջանփոլադյան, Երևան, 1977, գրքում հիշյալ բնակավայրի հուշարձանները նկարագրող Ս.Ավագյանը հիմնականում օգտվել է Գ.Սարգսյանի նյութերից:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

ՏՈՀՍԱԾԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Մարդու տոհմագրությունը ուսումնասիրող գիտությունը կոչվում է տոհմաբանություն, որի տվյալները (փաստաթղթեր և նյութեր, որոնք վկայում են տվյալ անձի ծնողների ու ավելի հեռավոր նախնիների մասին) չափազանց կարևոր նշանակություն ունեն պատմագիտության, ազգագրության և պատմական ժողովրդագրության համար: Տոհմաբանական աշխատանքները Հայաստանում ներկայումս կատարվում են մի քանի ուղղություններով միաժամանակ.

ա) Արխիվներում և ընտանիքներում պահպանված տոհմածառերի հայտնաբերում և վերլուծություն,

բ) Նշանավոր մարդկանց տոհմածառերի ուսումնասիրություն,

գ) Հայ արքայական և իշխանական տների տոհմածառերի ուսումնասիրություն:

Հայոց բազմադարյան պատմության ընթացքում մեծաքանակ նյութ է կուտակվել նման աշխատանքների համար: Տոհմածառերի կազմումը և ուսումնասիրությունը կարող է արժեքավոր տեղեկություններ տալ նաև պատմական ժողովրդագրությամբ զբաղվողներին, մանավանդ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երբեմն յուրաքանչյուր ազգ գրավում էր առանձին թաղամաս (օրինակ՝ իշխանական տների հանդես գալու հետ Զեյթունի թաղերը կոչվել են այդ տների անուններով՝ Շովրոյան, Յաղուլյան, Նորաշխարհյան կամ Ենի–Տունյան, Մուրենյան)[1], իսկ երբեմն էլ՝ գյուղ:

Տոհմածառերի ուսումնասիրության շնորհիվ հնարավոր է պարզել այս կամ այն տոհմի միգրացիան (մարդկանց տեղաշարժ՝ կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ) և հետագա տարածումը: Նմանատիպ ուսումնասիրությունները հատկապես կարևոր են մեզ համար, քանզի հայ ժողովրդի պատմությունը միշտ հարուստ է եղել տոհմերի տեղաշարժերով:

Արցախի Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Բեգլարյանների տան տոհմածառի օրինակով հետևենք աստանդական արցախահայության թափառումներին:

Արցախում 1797-1798թթ. սկսված սովի և ժանտախտի հետևանքով «հայաբնակ Ղարաբաղն գրէթէ դատարկացաւ 'ի ժողովրդոց, որք թողեալ զհայրենիս գաղթեցին 'ի Պարսկաստուն, 'ի Ռուսաստուն և 'ի Վրացտուն, գտանել զօրական կտոր հացի... Իբրահիմ խանն տեսանելով

[1] Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը 1409-1921թթ., Երևան. 1969, էջ 57:

զվնասակար ծեռնարկութիւնս Ռուսաց ընդ դէմ իւր թունաւորեաց զՅովհաննէս Կաթուղիկոսն, քարուքանդ արար զերկիրն մելիք Մէջլումի (Զրաբերդ գավառը-Ա.Մ.) և Աբովի (Գյուլիստան գավառը-Ա.Մ.), հազարաւոր Հայք 'ի սուր մատնեցան, հազարաւորք նահատակեցան, և այլ հազարաւորք սոսկալի տանջանօք բռնադատեցան թողուլ զքրիստոնէութիւն. և 'ի վերջոյ բազումք թողեալ զբուն տեղիս ծննդեան իւրեանց տարադէմ գնացին որոնել ինքեանց ապահով տեղիս 'ի Շամշադին, 'ի Ղազախ = Բօրչալի և 'ի Վրացտուն:

Յետ մահուանն Հերակլեայ Բ. Գէորգի արքայ Վրաց՝ նպաստաւոր համարեաց բնակութիւն Հայ մելիքաց բազմաթիւ հպատակօք իւրեանց 'ի Վրացտան, որպէս զօրաւոր դաշնակիցք օգնական լինիլ ընդ դէմ յարձակմանց լեռնականաց և ներքին երկպառակութեանց անդամոց արքունական գերդաստանին, վասն որոյ յօժարութեամբ կատարեաց զպահանջ նոցա՝ շնորհեաց Մելիք Զումշուտին զգաւառսն Լոռւոյ իւր սահմանօքն, Մելիք Փրիդունին զմասն Բօրչալուի և Աղջայ-Կալան, իսկ Մելիք-Աբովին զգաւառն Բօլնիսոյ իւր սահմանօքն»[2]: Մելիք-Աբովի և նրա հպատակների գաղթի մասին գրում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցին՝ հնդկահայ նշանավոր գործիչ Շահամիր Շահամիրյանին հասեագրված նամակում. «Եւ մելիք Ապովն ևս քանի հարիւր տուն ժողովրդովք իւրովք չու արար ի տունն Վրաց և կայ այժմ ի Պոլնիսու ձոր կոչեցեալ գաւառին»[3]:

Հետագայում Արցախի մելիքները ծեռք են բերում նաև այլ տարածքներ, այն չափով, ինչ չափով որ ավելանում էր նրանց հպատակների թիվը: Ահա այս շրջանում է, որ «Առմխեթը դառնում էր մի փոքրիկ Ղարաբաղ, մելիքական երկիր»[4]: Ռուս պատմաբան Վ. Իվանենկոն նշում է, որ արդեն 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին Վրաստանի բնակչության զգալի մասը կազմում էին հայերը ու այնտեղ էին բնակություն հաստատել հայոց հին թագավորության բեկորները[5]:

Սակայն Արցախի մելիքների դերը Վրաստանում, հատկապես վրաց Գեորգի XII թագավորի մահից (1800թ. դեկտեմբերի 28-ին) և

---

[2] «Ազգաբանութիւն նախապատիւ տոհմին Երուանդեանց ի Սանահին», հանեալ ի յիշատակարան գրուածոց Ռոստոմ բէգի Երզնկեաց Հաղբատեցւոյ, Թիֆլիս, 1896, էջ 8-9:

[3] «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797թթ.)», աշխ.՝ Ռ. Տիտանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 97, նույնը տես՝ Գրիգորյան Վ., Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամակները Շ.Շահամիրյանին ու նրա հարազատներին, «Էջմիածին», 2003, թիվ ԺԲ, էջ 71:

[4] Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 30:

[5] Иваненко В., Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, с. 29.

Ռուսաստանի հետ Վրաստանի միավորումից հետո, բավականին ընկնում է: Այդ իսկ պատճառով Մելիք-Բեգլարյանները և նրանց հպատակները սկսում են վերադառնալ Արցախ:

Մելիք-Բեգլարյաններից և նրանց հպատակներից Բոլնիսի ու Բորչալուի գավառներում մնացին քչերը: «Այդ մնացած մասն էլ հետագայում՝ 1812թ. թողեց Վրաստանն ու հեռացավ դեպի Ղարաբաղ՝ իրենց հայրենի վայրերը, ինչպես նաև Ղազախի ու Շամշադինի կողմերը և բնակություն հաստատեցին ոչ հեռու անցյալում Ղարաբաղից այդտեղ տեղափոխված հարազատների ու բարեկամների մոտ»[6]:

Նշենք նաև, որ Մելիք-Բեգլարյաններից ոմանք էլ մնացին այդ թվականներին Վրաստանում հիմնադրված Դաղեթ-Խաչեն և Բոլնիս-Խաչեն գյուղերում: Արցախահայության գաղթի և վերոհիշյալ գյուղերի հիմնադրման վերաբերյալ վրացի հեղինակ Վառլամ Գոնգաձեն գրում է. «Հայերի արքեպիսկոպոս Արղությանի խնդրանքով և միջնորդությամբ Իրակլի II թագավորը Ղարաբաղի Գյուլիստանի և Խաչենի մելիքությունների բնակիչներին թույլ տվեց վերաբնակվել Վրաստանում: Սրանից հետո 1797թ. Գյուլիստանից 400 հայ ընտանիք տեղափոխվում է նախկին Բորչալուի գավառի Շաղիդ գյուղը, երկու տարի անց Խաչենի գավառից ևս գալիս են 68 ընտանիք և բնակություն հաստատում այժմյան Բոլնիսի շրջանի Ջաբարլու գյուղում: Յոթ տարի հետո այդ 68 ընտանիքից 43-ը տեղափոխվում են ներկայիս Դաղեթ-Խաչեն, իսկ մնացած 25 ընտանիքը գնում և հիմնում է Բոլնիս-Խաչենը»[7]: Այսօր էլ այդ գյուղերում կարելի է հանդիպել Մելիք-Բեգլարյանների շառավիղներին[8]:

Իսկ Վրաստանից հայրենիք վերադարձած Մելիք-Բեգլարյանները կրկին ձեռք բերեցին իրենց գյուղերը, «սակայն նրանց պետերը կառավարության կողմից այլևս չճանաչվեցան որպես մելիքներ, այլ լոկ կալվածատերեր և մահալ նահբի: Երկիրը բաժանվեց Մելիք-Աբովի և Մելիք–Ֆրիդոնի ժառանգների միջև, որոնք ռուսական սովորության հետևելով, սկսեցին կոչվել իրենց պապերի անունով. առաջինները՝ Մելիք-Հովսեփի թոռները՝ Մելիք-Հովսեփյաններ, և երկրորդները՝ Մելիք-Բեկլարի թոռները՝ Մելիք-Բեգլարյաններ: Առաջինների ավագը համարվեց Մանաս-բիկը, իսկ երկրորդներինը՝ Մելիք-Ֆրիդոնի որդի Մելիք-Հովսեփը»[9]:

Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը Մելիք-Բեգլարյանների իշխանության ներքո էին գտնվում Գյուլիստան գավառի 18 գյուղեր, որոնցից 15-ը պատկանում էին Մելիք-Բեգլարյաններին, իսկ 3-ը՝ Մելիք-Հովսեփյաններին:

---

[6] Մաղալյան Վ., Դաղեթ-Խաչեն, Երևան, 1999, էջ 77:
[7] გონგაძე გ. [illegible], თბილისი, 1959, გვ. 39.
[8] Մաղալյան Վ., նշվ. աշխ., էջ 325:
[9] Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 240:

Այսպիսով, ձեռքի տակ ունենալով Գյուլիստան գավառի տիրակալ Ալելիք-Բեգլարյանների տոհմածառը և հետևելով այդ տոհմի անդամների տեղաշարժերին, կարող ենք որոշակի պատկերացում կազմել նաև նրանց հպատակների տեղաշարժերի և վերջիններիս կողմից նոր բնակավայրերի հիմնադրման մասին:

* * *

Տոհմածառերի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև բռնությամբ կրոնափոխված հայկական տոհմերի, այդ թվում և իշխանական ու մելիքական տների, դավանափոխված անդամների հետագա ճակատագիրը պարզաբանելիս:

Այսպես, Արցախի Դիզակ գավառում նույն սովի և ժանտախտի տարիներին մնացած Մելիք-Եսայի Մելիք-Եգանյանի որդի Բաղդադ-բեկին և նրա որդիներին՝ Ասլանին ու Վահանին, Իբրահիմ խանը բռնի կրոնափոխ է անում, սակայն չբավարարվելով այդքանով, սպանում նախ Բաղդադ-բեկին, այնուհետև՝ նրա որդի Մելիք-Ասլանին[10]: Վահանի մասին տեղեկություններ չեն պահպանվել:

Ալելիք-Ասլանից մնացել է մի որդի միայն՝ Ֆարհադ բեկը, որին 1881-ին տեսել է Ռաֆֆին[11]: Վերջինս, սակայն, թուրքացել էր և չափազանց հեռացել իր հայրենի արմատներից: Ալելիք-Ասլանի անունով այս տոհմի մահմեդականացված ժառանգները սկսել են կոչվել Մելիք-Ասլանովներ, ընդ որում տոհմի ամբողջ կարողությունն անցել է նրանց, իսկ քրիստոնյա մնացածներին ոչինչ չի հասել: Ալելիք-Ասլանովների մասին Լեոն գրել է. «Այդ մահմեդականացած հայերն այժմ Տող գյուղի բեկերն են և կրում են Մելիք-Ասլանով և Ալելիք-Եգանով հայկական ազգանունները: Բայց կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն: Թեև նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայնիվ այնքան ենթարկված են ամբոխային հասկացողության, որ կրոնն են համարում ազգության նշան, ուստի և ձուլվում են թաթար մահմեդականների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերի դեմ գնալու համար: 1904-1906 թվականներին հայ-թուրքական ընդհարումների ժամանակ այդ Ալելիք-Ասլանովներից մեկը, որ պրիստավի պաշտոն էր կատարում Զանգեզուրի գավառում, անորակելի գազանություններ կատարեց հայերի նկատմամբ: Բարձրագույն ուսումն էլ չի կարողանում ազգության մասին ուղիղ գաղափար տալ Տողի երբեմնի հավատուրացների այժմյան սերնդին: Նույն Ալելիք-

[10] Կոստանեանց Առ., Դիզակի մելիքութիւնը, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Ա, Վաղարշապատ, 1913, էջ 81:
[11] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 530, 609:

Ասլանովներից մեկը, կրթությամբ ինժեներ, մինիստր էր 1918 թվին Ադրբեջանի մուսավաթական կառավարության մեջ, երբ Բաքվում, այդ կառավարության կարգադրությամբ, կոտորեցին մոտ 30 հազար հայեր»[12]: Վերջինիս ազգանվանը հանդիպում ենք նաև Սիմոն Վրացյանի բերած Անդրկովկասյան Սեյմի մուսավաթական ֆրակցիայի ազդեցիկ խորհրդարանականների ցանկում. «Պատգամավորների թվով երկրորդ տեղը գրավում էր «Մուսավաթ և անկուսակցականների խմբակ» ֆրակցիան՝ 30 անդամ, որի մեջ մտնում էին ադրբեջանցի ամենաաչքի ընկնող գործիչները՝ Թոփչիբաշև, Ջաֆարով, Ռասուլ-Զադե, Ուսուպբեգով, Աղաև, դր. Սուլթանով, Խան-Խոյսկի, Մելիք-Ասլանով»[13]:

Հակիրճ անդրադառնանք նաև հայ նախարարական տների քրդացած շառավիղներին. «Ամենքին հայտնի իրողություն է, որ քուրդ ցեղերից մի քանիսն իրանք էին խոստովանում, թե հայկական ծագում ունեն, - գրում է Լեոն: -Հայերի մասսայական քրդացման դեպք հայտնի է և հայ պատմագիրներից մեկին՝ Թովմա Մեծոփեցուն, որն ապրում էր 15-րդ դարում: Հայ նախարարական կալվածքների փոխանցումը քրդերին կատարվում էր և խնամիացման միջոցով: Այսպես, Շիրակի Բագրատունիների անկումից հետո, ամբողջ այդ ճորտատիրական գավառն անցնում էր քուրդ Շադդադյան տոհմին, որի անդամներից մեկն ամուսնացած էր Բագրատունյաց տոհմի տեղային ճյուղին պատկանող մի աղջկա հետ»[14]:

Հայ նախարարական տների քրդացած շառավիղների մասին բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև երկար տարիներ Սասունում դասավանդած նշանավոր մանկավարժ Սեյլանը (Արշակ Մատոյան). «Երբեմն դոքա՝ ռշկոցիք (Ռշտունի), մանգցիք (Մամիկոնյան), սլիվանցիք (Սլկունի), բագրանցիք (Բագրատունի), փնճնացիք (Փնճիկ իշխանի սերունդն), խորոմանցիք (Խոռխոռունիք) պճնազարդ ուղեկցում էին Հայոց Մեծաց թագավորին,-կարդում ենք նրա «Սասուն» պատմաազգագրական ակնարկում,-կարծես այդ ընկած փառքի հիշատակը անջինջ պահելու համար՝ տակավին հայոց ասպետական սովորությունքը, աստիճանքը պահում են նոքա: Տակավին քուրդ ցեղեր Բագրանցոց՝ Մալե-պատրիկ (տուն պատրիկի), միր (իշխան), մանգցոց՝ կտրիճ, քաջ, ռշկոցոց՝ մալե-թոռուն (ազնվական տուն) տիտղոսներով են պատվում»[15]: Փաստորեն, ստեղծված ծանր պայմաններում հայ նախարարական տների քրդացումը մի այլընտրանքային ուղի էր կյանքի և մահվան, լինելու և չլինելու միջև:

---

[12] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 857-858:
[13] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 74:
[14] Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 144-145:
[15] Սեյլան, Սասուն, Երևան, 1990, էջ 34:

Երբեմնի հայ ազնվականների քրդացած շառավիղները այսօր ևս շարունակում են բնակվել իրենց նախնիների հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում:

Այստեղ տեղին է հիշատակել նաև չափազանց ուշագրավ մեկ այլ փաստ, որն առաջին հայացքից թվում է, թե կապ չունի հայերի մահմեդականացման հետ, բայց միայն առաջին հայացքից: Միջերկրական ծովի ավազանի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրներում հանդիպում է ընտանեկան միջերկրածովյան տենդ կամ պարբերական (հայկական) կոչվող ժառանգական հիվանդությունը, որով գերազանցապես հիվանդանում են հայերը, հրեաները, արաբները և հույները: Այս հիվանդությունը երբեմն կրում են նաև սլավոնները, ասորիները, ֆիններ, ճապոնացիները և անգլո-սակսոնների հետնորդները, բայց երբեք չեն հիվանդանում թուրքերն ու վրացիները: Սա հանրահայտ դասագրքային ճշմարտություն է:

Սակայն վերջերս, ի զարմանս մասնագետների, Թուրքիայում ևս ի հայտ են եկել պարբերական հիվանդությամբ տառապող «թուրքեր»: Մինչդեռ, իրականում, այդ հիվանդները ոչ թե թուրքեր են, այլ Օսմանյան կայսրությունում դարեր ի վեր իրագործված ցեղասպանությունից փրկվելու նպատակով դավանափոխված հայերի սերունդներն են, որոնք տարբեր գնահատումներով այժմ դարձել են «մեկից մինչև չորս ու կես միլիոն»[16], ամուսնանում են իրար հետ (խառնամուսնությունը բացառում է այս հիվանդությամբ հիվանդանալը, եթե ամուսիններից մեկը հրեա, արաբ կամ հույն չէ) և շարունակում են ապրել իրենց բնօրրանում:

Ահա սա՛ է ճշմարտությունը պարբերական հիվանդությամբ տառապող «թուրքերի» մասին[17]:

Տոհմածառերի կազմումը և դրանց ուսումնասիրությունը կարող է մեծապես օգնել հետազոտողներին՝ տարբեր տոհմերի ծագման և անհետացման հարցերն, ինչպես նաև ազգակցական կապերն պարզաբանելու գործում: Տոհմածառերի օգնությամբ կարելի է որոշել նաև կանանց և տղամարդկանց կյանքի միջին տևողությունը առանձին սերունդներում և այլն:

Ամփոփելով՝ նշենք, որ վերջին տարիների ընթացքում գիտության զարգացումը գալիս է վերածևելու տարբեր գիտաճյուղերի միջև մինչև այժմ եղած սահմանները և հնարավորություններ է ընձեռում մեկ գիտության տվյալները մեկ այլ գիտության բնագավառում արդյունավետ կերպով օգտագործելու համար: Ըստ այդմ, կարծում ենք, որ

[16] Կ.Խ., Անատոլիայի հայ բեկորները, «Դրոշակ», 2003, թիւ 4, էջ 43:
[17] Մաղալեան Ա., Յարատեւ եղեռն, «Դրոշակ», 2004, թիւ 1, էջ 55:

տոհմածառերի կազմումը և ուսումնասիրությունը ևս կարող են օգտակար լինել պատմական ժողովրդագրությամբ զբաղվող մասնագետներին:





ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ԴԻՄԱԽԵՂՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

XVI դարի սկզբին սկսված թուրք-պարսկական պատերազմների առաջին փուլն ավարտվեց 1555 թ. Ամասիայի հաշտությամբ, ըստ որի Արևմտյան Հայաստանն ընկավ օսմանյան տիրապետության տակ: Թուրքական դժնդակ տիրապետությունը, որն ի սկզբանե ուղեկցվում էր քրիստոնյաների զանգվածային կոտորածներով և բռնի մահմեդականացման գործողություններով, չէր կարող իր բացասական ազդեցությունը չթողնել ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ ամբողջ Փոքր Ասիայի էթնոժողովրդագրական պատկերի վրա: Պատահական չէ, որ օսմանյան գերիշխանության առաջին շրջանում՝ XVI-XVII-րդ դարերում Արևմտյան Հայաստանում արդեն նկատելի էին դեռ նախորդ ժամանակաշրջանում հայտնված օտար էթնիկ տարրերի ստվարացման միտումներ: Սակայն, այդուհանդերձ, դեռ XVII դարում պատմական Հայաստանը, անգամ մահմեդականացման գործընթացներից առավել չափերով տուժած էրզրումի նահանգը, շարունակում էին մնալ գերազանցապես հայահոծ ու միատարր տարածքներ:[1]

Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում էթնիկ օտարացման գործընթացները տեղի էին ունենում տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր եղանակներով: Փորձենք կոնկրետ գավառների ու բնակավայրերի օրինակով ցույց տալ այդ երևույթների միտումները XVII դ. մինչև XIX դ. ընկած ժամանակահատվածում:

Այսպես՝ վերցնենք ավելի արևմուտք ընկած հայտնի պատմական Երիզա, այժմ՝ Երզնկա գավառը, որն ի սկզբանե եղել է հայ էթնոսի բնօրրաններից մեկը և մեծ դեր է ունեցել հայ քաղաքական ու մշակութային պատմության մեջ: Աղբյուրների[2] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երզնկայի գավառակում (առանց Բոլոմորի - Ա.Մ.) XIX-րդ դարի երկրորդ կեսին եղել է միայն քրիստոնյա հայերով բնակեցված

---

[1]Մելքոնյան Ա., ժողովրդագրական տեղաշարժերի միտումները էրզումի նահանգում (16-րդ դ. սկիզբ - 20-րդ դ. սկիզբ), ՊԲՀ, 1999, թիվ 2-3, էջ 122-129, նույնի՝ The Demography of the Provmce of Erzerum£ Sixteenth-Twentieth Centuries. Armeman Karın/Erzerum, Edited hy Richard G. Hovannisian, California, 2003, pp., 134-145 և այլն:

[2] Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 208 ա, վ. 2444, թ. 12, Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, N 1, էջ 501, N 2, էջ 36, 125, Սիւրմենեան Գ., Երզնկա, էջ 74-81:

մոտ 50 գյուղ: Սակայն պարզվում է, որ բացի այդ գյուղերից, եղել են նաև այլ բնակավայրեր, որոնք ունեցել են բավական բարդ ու անհասկանալի դիմագիծ: Խոսքը ժամանակին հայտնի հայկական Թիլ, Խախ, Վարդանշահ, Վասկերտ, Ճիմին, Վաղավեր, Գի /հնում՝ Այգի/, Խորոնքաղ, Գերքաղ, Կեչուտեկ, Շոխա /Շող/, Պահիկ և այլ գյուղերի մասին է: Վերոհիշյալ աղբյուրներում և հեղինակների աշխատություններում նրանք հիշատակվում են իբրև թրքաբնակ գյուղեր:

Նախ ընդգծենք, որ վկայակոչվող նյութերը վերաբերում են XIX-րդ դարի երկրորդ կեսին և XX-րդ դարի սկզբին, այսինքն՝ այն ժամանակաշրջանին, երբ գավառահայության ընդհանուր թիվը՝ թեև XIX-րդ դարի համեմատությամբ փոքր էր, սակայն նրանց բնակավայրերի քանակը գաղթերի, պանդխտության, բռնի մահմեդականացման հետևանքով՝ անհամեմատ նվազ էր: Ամենայն հավանականությամբ, այդ հայալքված կամ մահմեդականացած գյուղերի շարքում կարող էին լինել նաև վերոհիշյալ բնակավայրերը: Դրանում համոզվելու համար՝ մի քանի գյուղերի օրինակով քննության առնենք մեզ հայտնի աղբյուրների տեղեկությունները:

Ղ. Ինճիճյանը, խոսելով XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի Երզնկա գավառի մասին, հիշատակում է ընդամենը չորս գյուղ, մի հանգամանք, որը խոսում է այս շրջանի վերաբերյալ նրա տեղեկությունների թերի լինելու մասին: Ըստ նրա, այդ գյուղերից երկուսը /Աջըկբաշ և Խոզնցիք/ բնակեցված էին հայերով: Ինչ վերաբերում է մյուս երկուսին /Ճիմին և Չարտագլը/, աշխարհագետը լռում է[3]: Սակայն այդ մասին բերված տողերի ուշադիր զննումը համոզում է, որ հեղինակը պարզապես ավելորդ է համարում կրկնել վերջինների հայաբնակ լինելու հանգամանքը: Ճիմինի, որպես հանրահայտ գինեշատ ավանի մասին Ինճիճյանի հաղորդումը[4] վկայում է գավառում ոչ միայն խաղողագործության զարգացման մասին: Տնտեսության այդ ճյուղը Երզնկայի շրջանում հայտնի էր դեռևս հնագույն ժամանակներից, և բնականաբար, այն միայն հայ գյուղացիության մենաշնորհը կարող էր լինել: Դժվար չէ կռահել, որ ճիմինցիները իրենց հայրենակիցների, այսինքն՝ հայերի լավագույն ավանդույթների կրողներն էին:

Այս կապակցությամբ վկայակոչենք նաև գավառին քաջատեղյակ Գ. Սյուրմենյանին. «Ճիմին... բնակչություն ուներ,- գրում է նա,- բոլորն ալ թուրք: Մահմեդական չեն. ունեն հայկական շատ սովորություններ», նրանցից շատերը կրում են հայկական անուններ[5]: Դա նշանակում է, որ Ճիմինի հայերը գտնվում էին թուրքացման պրոցեսում: Հասկանալի է, որ

[3] Տե՛ս Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 101:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս Սիւրմենեան Գ., նշվ. աշխ.,էջ 74, 192:

XIX-րդ դարի սկզբին նրանք դեռ հայեր էին կամ նոր էին բռնել թրքացման ուղին:

Թրքաբնակ լինելու մասին միևնույն թյուր կարծիքը կա նաև գավառի Շոխա կամ Շող գյուղի մասին: «Հոն կային թուրք տուներ,- կարդում ենք Գ. Այուրմենյանի գրքում,- որոնք հայկական ազգանուն կկրեին: Կըսվեր թե ատենին հոն քանի մը բարեկեցիկ հայ ընտանիք կը բնակեին եղեր, բայց տեղացի թուրքերու մոլեռանդութենեն ազատվելու համար իրենք ալ թրքացած են»[6]:

XIX-րդ դ. վերջին Երզնկայից արևմուտք ընկած այսօրինակ «թուրքական» գյուղերում եղած Ամատյանը գրում է. «Հոս ալ հայք աղոտ ու տխուր հիշատակներ թողնելով, անցեր, անհետացեր են»[7], այսինքն՝ կամ արտագաղթել են կամ թրքացել: Այս տողերը ևս խոսում են հօգուտ մեր այն պնդման, որ դարասկզբին մահմեդականացած և մահմեդականացող հայ բնակչությունը Երզնկա գավառում խիստ նկատելի էր և բռնել էր թրքացման անդարձ ուղին: Այս երևույթը այնքան ակնհայտ էր, որ չէր վրիպում անգամ օտարերկրացիների ուշադրությունից: Անգլիացի ճանապարհորդ Դավիդ Հոգարթը նկատել է. «Կրոնափոխ դարձած բնակչություն մը, որոնք կապրին Հայաստանի բոլոր անկյունները իրենց հավատքը պահող մարդկանց կողքին: Այս տեսակ «Թուրքեր» կը գտնվին արևելյան եփրատի արմունկին շուրջ, ամեն տեղ: ... Նման «Թուրքեր» կը կազմեն Քեմախի /Կամախի - Ա. Ա./ գրեթե ամբողջ բնակչության կեսը»[8]: Հոգարթի խոսքերը հաստատում է նաև հայ հեղինակը. «... չկըրնալով դիմանալ տիրող անիշխանության և կատարված բռնություններուն ու հալածանքներուն /այնտեղ բնակչության - Ա.Մ./ մեծ մաս մը կրոնափոխ եղած է իր ֆիզիկական գոյությունը պահելու համար»[9]:

Երզնկա գավառում թրքացած հայության գոյությունը հաստատող վկայությունների շարքը կարելի է լրացնել: Սակայն կարծում ենք, որ վերոհիշյալը ևս բավարար է համոզվելու այն հարցում, որ XIX դարի առաջին տասնամյակներին ի թիվս քրիստոնյա բնակչություն ունեցող բազմաթիվ գյուղերի, կային այնպիսիները, որոնց բնակիչները կամ լիովին մահմեդականացել էին՝ պահպանելով հայ ազգային մի շարք հատկանիշներ, կամ արտաքուստ ընդունելով իսլամը, իրականում գրեթե չէին տարբերվում հարևան քրիստոնյա հայերից:

---

[6] Նույն տեղում, էջ 76:
[7] Ամատեան Ս., Եկեղեաց գավառ, Արևելեան մասուլ, 1889, սեպտ., էջ 173:
[8] Քեչէեան Ա., Պարսամեան Մ., Ակն և Ակնցիք, Փարիզ, 1952, էջ 155:
[9] Սիւրմենեան Գ., Երզնկա, էջ 192:

Ղ. Ինճիճյանը, ապա նրան նույնությամբ կրկնող Ս. Էփրիկյանը[10], հիմք ընդունելով XVII դարի թուրք հեղինակ Քյաթիբ Չելեբիի մի երկտողը[11], երզնկայից հարավ-արևելք գտնվող Գուգուջան նահիեն համարել են բացառապես քրդաբնակ մի շրջան և հավանաբար սկզբնաղբյուրների պակասի պատճառով, չեն փորձել վեր հանել նրա իրական էթնիկական պատկերը:

Ինճիճյանից հետո Գուգուջանի մասին հաջորդ թռուցիկ վկայությունը պատկանում է ռուսական բանակի պորուչիկ Սկալոնին: Արևմտյան Հայաստանի բնակավայրերի և ճանապարհների մասին կազմած իր զեկուցագրում նա արձանագրում է, որ «Կուգուլչայի /իմա՝ Գուգուջանի - Ա. Մ./ 100 գյուղերից հինգը հայկական են»[12]: Ցավոք, նա բավարարվում է այսքանով, անգամ չնշելով այդ գյուղերի անունները: Ի տարբերություն վերոհիշյալ հեղինակների, XIX դարի հայ հետազոտող Անդրանիկը մոռացված այս գավառի տեղագրության և բնակչության տեղաբաշխման փորձեր է կատարում: 1888թ. ճանապարհորդելով Քըղի - Գուգուջան - Դերջան - Դերսիմ – Խարբերդ - Խոզաթ, այսինքն՝ գազա ցեղերով բնակեցված գավառներով, նա վկայում է, որ Գուգուջանում սփռված էին բազմաթիվ քրդական բնակավայրեր, գլխավորապես փոքրիկ ամառանոցներ, որոնք դրված էին ցեղապետ Շահ Հուսեինի տոհմի իրավասության տակ: Փոքրաթիվ հայ համայնքը ներկայացնում էին 10-15 գյուղեր: Նրանցից ամենամեծը՝ Ալթուն Հուսեինը բաղկացած էր 250-300 ծուխ հայ և ընդամենը 8-10 ծուխ քուրդ բնակիչներից[13]: Այն ուներ փոքրիկ ուսումնարան, հայկական եկեղեցի, լավ մշակված հողատարածություններ: Ալթուն Հուսեինի գյուղացիները համառ պայքար են մղել քուրդ ցեղապետերի դեմ: 60-ական թվականների սկզբին, երբ քուրդ բեկերը փորձել են զավթել գյուղի կալվածքները, գյուղացիներն իրենց քահանայի գլխավորությամբ դիմագրավել են՝ բողոքելով Կ. Պոլսի հայոց պատրիարքին և խնդրելով Բ. Դռան միջամտությունը[14]:

Դժբախտաբար Գուգուջանի մյուս հայկական գյուղերի մասին այսպիսի մանրամասներ չեն պահպանվել: Ավելին՝ նրանցից շատերի անուններն առ այսօր հայտնի չեն: Մեր ձեռքի տակ եղած նյութերը

---

[10] Տե՛ս Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, էջ 110, Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. Ա., էջ 530:

[11] Չելեբին այդ մասին գրում է. «Կըզուլչանի լիվան (XVII-րդ դարում լիվա էր - Ա. Մ.) լեռներով հարուստ է: Սրա բնակիչները Բեսյանի աշիրեթի քրդերից են», տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Բ., էջ 45:

[12] Այդ հարյուր գյուղերի տակ հեղինակն ի նկատի ունի նաև քրդական ամառանոցները (ԱՐՎԻԱ, ֆ. 450, ց. 77, էջ 56):

[13] Տե՛ս Անդրանիկ, Դերսիմ, էջ 6, 149:

[14] Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:

հնարավորություն են տալիս որոշ բան ասելու Գուզուջանի մի քանի այլ գյուղերի մասին:

Գուզուջանի հաջորդ գյուղի անունը մեզ հաղորդում է Ինճիճյանը: Դա Բերկրին է: Աշխարհագետի վկայությամբ, այն ավերվել է Երզնկայի ամենաուժեղ երկրաշարժից՝ 1784թ.: Ուսումնասիրվող ժամանակաշրջանին վերաբերող ոչ մի հիշատակություն չկա: Շնորհիվ Շտրեկկերի, պարզվում է, որ այն հետագայում վերականգնվել է և եղել է Ալթուն Հուսեինից արևմուտք ընկած մեծ գյուղ[15]:

Նույն Շտրեկկերի հաղորդած տեղեկություններից մեզ հաջողվում է պարզել նաև Գուզուջանի երրորդ գյուղի անունը՝ Կիզիլ Մեջիդը /Կարմիր Մեջիդ/, որը XIX-րդ դարի 60-ականների վերջին Ալթուն Հուսեինից հյուսիս գտնվող «...մի քանի տուն ունեցող կիսահայկական, կիսաքրդական գյուղակ էր»[16]: Հասկանալի է, որ երեք-չորս տասնամյակում այն ոչ միայն հայաթափվել էր, այլև բնակեցվել քրդերով: Նահիեի 4-րդ և 5-րդ գյուղերի՝ Դանչեկի և Քիրունուդի անունները պահպանվել են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կազմած եկեղեցիների ցուցակներից մեկում[17]:

Վերջապես, այս նահիեի հայկական բնակավայրերից է եղել նրա կենտրոնավայր Բոլոմորը[18]: Մյուս գյուղերի մասին, աղբյուրների անբավարարության պատճառով, դժվար է լուրջ խոսք ասել: Ամենայն հավանականությամբ, նրանք գտնվել են Դերսիմի /Մնձուրի/ լեռների հյուսիսային փեշերին, որտեղ քրդական տարրն ավելի ուժեղ էր, և հայկական կյանքը կտրված էր Երզնկայից, Քըղիից, Դերջանից և հարևան հայկական համայնքներից, մի հանգամանք, որի հետևանքով այդ գյուղերում բնակիչները «...բոլորն ալ մայրենի լեզուն կպահեն քիչ մը աղավաղված /քրդախառն - Ա. Մ./ վիճակի մեջ»[19], այն դեպքում, երբ հայաշատ Քըղիի լիվային սահմանակից Ալթուն Հուսեինը խոսում էր մաքուր հայերենով և պահպանել էր իր ազգային կյանքի բոլոր կողմերը: Եթե այդ անհայտ գյուղերը ևս գտնվեին հայաշատ շրջաններին մոտ, բնականաբար չէին վրիպի ճանապարհորդների և ուսումնասիրողների տեսադաշտից և նրանց մասին կպահպանվեր որոշակի տեղեկություն:

Գուզուջանի էթնիկական ընդհանուր պրոբլեմների ուսումնասիրության տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում 1878թ. Կ.Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանի կողմից հայկական գավառների բնակչությանը վիճակագրելու համար Արևմտյան

---

[15] Տես Штреккер В., ук., соч., Известия Кавказского отдела, т. III, приложение, с. 21.
[16] Նույն տեղում:
[17] Տե՛ս էջմիածին, 1965, N Բ-Գ-Դ, էջ 179:
[18] Տե՛ս Колюбакин А. М., Материалы, т. I, ч. II, с. 249.
[19] Անդրանիկ, Դերսիմ, էջ 149:

Հայաստան ուղարկված Պողոս Նաթանյանի նյութերը: Նա առաջին հեղինակն է, որ ուշադրություն է դարձրել Գուգուջանի քրդացած հայության հարցին: Նաթանյանը նկատել է, որ այնտեղի գյուղերում կան «...խիստ սակավաթիվ հայ բնակիչներ քրդախառն, ասոնք ի վաղուց կեսեն ավելի հայ լինելով ժամանակի բռնութենեն՝ ստիպված են քրդաց հարիլ, ոո այժմ հայերեն անգամ չեն գիտեր. բայց հայ ցեղե ըլլալնին գիտեն»[20]: Նույն հեղինակի վկայությամբ ոչ վաղ անցյալում այստեղ եղել են «բազմահայ գյուղեր», որոնց բնակիչները, չցանկանալով ընտրել քրդացման ուղին, գաղթել են հարևան հայաստվար գավառները[21]: Հայ մեկ այլ հեղինակի՝ Սելյանի համոզմամբ, «Ղուգուջանի ղզլպաշները..., որ առ այսօր /1895թ. - Ա.Մ./ ջարդում են օսմանյան բանակներին, թուրք չեն, այլ մոտ հայերին»[22]:

Տարբեր հեղինակներից բերված այդ վկայությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ նույնիսկ XIX-րդ դարի երկրորդ կեսին Գուգուջանը զգալի թվով հայկական բնակավայրեր ունեցող գյուղախմբերից էր և պայքար էր մղում ազգային ինքնապահպանման համար, չնայած ուներ քրդացած հայ բնակչության մի ստվար հատված, որն արդեն քիչ բանով էր հիշեցնում նախկին ազգային պատկանելության մասին:

Այսպիսով, XIX դարի առաջին քառորդին Երզնկայի լիվայի համանուն կազան Արևմտյան Հայաստանի հայաշատ շրջաններից էր:

Եթե ամբողջ Երզնկայի կազայում հայերը մեծամասնություն էին կազմում մահմեդականների նկատմամբ, ապա լիվայի ընդարձակ մյուս գավառակում՝ Կամախում քրդերի թիվը եթե չէր գերազանցում տեղացիներին, ապա հավակնում էր մոտ ապագայում հասնել և անցնել նրանց:

Կամախի գավառակի միջով հոսող Եփրատը ոռոգում էր նրա հովիտներն ու ծորահովիտները՝ հողագործության և այգեգործության համար ստեղծելով նպաստավոր պայմաններ: Այս հանգամանքը մշտապես իր վրա էր հրավիրում Փոքր Ասիայի թուրքերի և Դերսիմի քրդերի ուշադրությունը: XVIII դարի երկրորդ կեսին, ի տարբերություն Հայաստանի մյուս գավառների, որոնցում թուրք և քուրդ վերաբնակիչները գերադասում էին հաստատվել հայկական գյուղերում, Կամախում նրանք կառավարության աջակցությամբ հիմնեցին նոր բնակավայրեր: Բանն այն է, որ Կամախի և Երզնկայի պատմական գավառները Հայաստանում քրիստոնեության բնօրրաններն էին և

[20] Տես Նաթանեան Պ., Արտօսր Հայաստանի կամ տեղագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի և Երզնկայու, էջ 159:
[21] Տե՛ս նույն տեղում:
[22] Սելեան, Տաճկա-Հայաստանի ազգաբնակչութիւնները, Մուրճ, 1895, հուլիս, էջ 959:

այնտեղ մահմեդական բնակչություն ստեղծելու խնդիրը նվաճված երկրամասում ամուր հաստատվելու կռվաններից էր:

Այդ քաղաքականության հետևանքով, Կամախում բավական կարճ ժամանակամիջոցում ծնվեցին տասնյակ նոր թուրքական բնակավայրեր: Արագացավ հայերի մահմեդականացման գործընթացը: Կամախի գավառակում տեղի ունեցող այս երևույթները կարելի է նկատել Ինճիճյանի հետևյալ տողերից. «Ճոխացեալ է այս գավառ բնակությամբ, բնակեալ ի հայոց մանավանդ ի տաճկաց, որք ըստ մեծի մասին դարձեալ են ի հայոց»[23] այսինքն թրքացել են հայերից: Մահմեդական հեղեղն այնքան ուժեղ է եղել, որ տեղի հայերի մի մասը, նույն հեղինակի վկայությամբ, ստիպված է եղել հեռանալ և հաստատվել Թեքիր Դաղի լեռներում[24]:

Կամախի հայկական և նորաստեղծ թուրքական ու քրդական բնակավայրերի կալվածքների ժառանգական իրավունքը XVIII-րդ դարի վերջին անցավ Սաղըր օղլու կենտրոն դարձավ հայկական հնագույն Կամախ ամրոցը: Հայ բնակչությունը մեծ խմբերով դուրս մղվեց այստեղից: Ինճիճյանը բերում է մի ուշագրավ վկայություն, որի համաձայն դարասկզբին քաղաքն ունեցել է 6 հայկական եկեղեցի, 1500 ծուխ, հիմնականում՝ թուրք և 4000 ծուխ՝ կրկին տեղավորելու հնարավորություն[25]: Առաջին հայացքից կարող է այս տեղեկությունը թվալ հակասական. փոքրամասնության, այսինքն՝ հայերի համար 6 եկեղեցին կարող է թվալ շատ և 4000 ծուխ տեղավորելու հնարավորության մասին հաղորդումն ավելորդ: Սակայն բերված վկայությունից երևում է, որ մահմեդական եկվորների ներհոսքը որքան էլ զանգվածային է եղել, չի գերազանցել հայերի արտահոսքը: Նշանակում է, Կամախում 4000 ծուխ տեղավորելու հնարավորությունը ծագել էր իրենց բնակարանները լքած բազմաթիվ հայերի հեռանալու պատճառով, իսկ նրանց 6 եկեղեցիները թեև կանգուն էին, սակայն, գրկված հայ համայնքի նյութական և հոգևոր աջակցությունից, կանգնած էին հանգչելու կամ մզկիթների վերածվելու վտանգի առջև: Հետևաբար, մահմեդական տարրերով Կամախի բնակեցումը ոչ միայն չխթանեց նրա տնտեսական և քաղաքական զարգացումն, այլև խոչընդոտեց այն քաղաք դառնալու օբյեկտիվ գործընթացը: Առաջ անցնելով նշենք, որ հայ բնակչության արտագաղթի հետևանքով, թեև լինելով բավական ընդարձակ գավառակի վարչական կենտրոն և երզրումից ու երզնկայից դեպի Սեբաստիա, Ակն, Արաբկիր, Խարբերդ և այլ վաճառաշահ քաղաքներ տանող առևտրական ճանապարհի վրա ընկած բնակավայր,

---

[23] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, էջ 102:
[24] Տե՛ս նույն տեղում:
[25] Տե՛ս նույն տեղում:

նույնիսկ ամբողջ XIX դարի ընթացքում Կամախը մնաց իբրև փոքր գավառական բերդաքաղաք:

Մահմեդական բնակչության ներհոսքի հետևանքով հայության արտագաղթ նկատվեց նաև Կամախի գյուղերից: Նորեկ թուրքերն ու քրդերը գավթեցին տասնյակ հայկական գյուղեր, ինչպես Կետիկը, Բոստին /Բոստնի - Ա.Մ./, Թանը, Ճինաղիճը, Էրմենիքը /Էրմենիկ, Արմենիկ/, Լիճը, Խնձորին, Պահաճորը և այլն[26]:

Այդուհանդերձ, Կամախի հայությունն ի հայտ բերեց զարմանալի կենսունակություն: Այն շարունակում էր հարատևել՝ աչքի ընկնելով երեք խմբերով:

Արևմտահայ գավառներից միջնադարում բռնի մահմեդականացման կնիքը, թերևս ամենաուժեղ կրում էր Սպերի հարևան Թորթումի լիվան: Միջնադարում զանգվածային կոտորածների, արտագաղթի և գավառի ամայացման վկայություն էին 120 եկեղեցիների և 10 վանքերի ավերակները.[27] Այսուհանդերձ, XIX-րդ դարի սկզբներին Թորթումի մի շարք բնակավայրեր հայաբնակ էին: Դա երևում է Ինճիճյանի հետևյալ վկայությունից. «ունի վիճակ նորայ գիւէօրէս իբրև 30. ըստ մասին բնակեալ ի հայոց, և ըստ մասին ի տաճկաց»[28]: Ինչպես Սպերում, այնպես էլ Թորթումում, որոնք առավել խոշոր չափերով էին կրում բռնագաղթի և մշտատև ավերումների ազդեցությունը, չկային բազմամարդ բնակավայրեր: Ինճիճյանի նշած 30 գյուղերից բացի, այս լիվայում կային ևս մի քանի տասնյակ այլ բնակավայրեր, ընդամենը՝ 70[29]: Սակայն նրանց մի մասը փոքրիկ յայլաներ կամ կիսավեր ու լքված բնակատեղիներ էին:

Գավառի կեսկեսների զգալի մասը գրեթե ոչնչով չէր տարբերվում մնացած հայ բնակչությունից: Նրանցից շատերն անգամ վարժ չէին խոսում թուրքերեն, իսկ ոմանք էլ ընդհանրապես չգիտեին այդ լեզուն: Մի մասն էլ խոսում էր թուրքերենի հետ խառն հայերենով:[30]Կարելի էր հանդիպել բազմաթիվ կեսկեսների, որոնք ունեին հայկական անուններ և ազգանուններ՝ միայն թուրքական օղլի վերջավորությունով./օրինակ՝ Կիրակոսօղլի, Պետրոսօղլի և այլն/: Ճանապարհորդների այն հարցին, թե ինչ ազգության են պատկանում, հետևում էր «իսլամ եմ» նրանց ազգության մասին ոչինչ չասող պատասխանը, տերմին, որի տակ Կ.

---

[26] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, էջ 104-105:
[27] Տե՛ս Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, էջ 77-79 և «Փորձ», Հունվար, էջ 144:
[28] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 93-94:
[29] Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 37:
[30] Տե՛ս Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին,, էջ 78-82:

Կոխի արտահայտությամբ Թուրքիայում ընկալվում էր միմիայն օսմանլին՝ թուրքը:[31]

Թորթումի համանուն վարչական կենտրոնը դարասկզբին փոքրիկ ավան էր: Նրանից հյուսիս ընկած Թորթում անրոցը փաստորեն ավելի մեծ բնակավայր էր՝ ուներ 400 ծուխ[32] /մոտավ. 2400 շունչ- Ա. Մ./ հայ և հայ – կեսկես բնակիչ:[33]Բազմամարդ բնակչություն ունեին միայն հայկական Նորաշեն, Քցխա /Քիսա/, Խախու, Շիփեկ, Վերին Լսկավ, Վերին գյուղերը: Քցխան, որը գտնվում էր Թորթում ավանից հյուսիս, և նրանից հարավ ընկած Նորաշենը, իրենց շրջակայքում միավորում էին գավառի հայկական գյուղերի մի ամբողջ շարք /Սխտորուտ, Պոչենց, Խաշուտ, Գեղիկ, Մեղուս, Վախթիկանց, Վարդաշեն/: Այդ ժամանակաշրջանում նրանց մի մասը կանգնած էր թրքացման վտանգի առջև: Համեմատաբար բարվոք վիճակում էին կաթոլիկական գյուղերը, հատկապես Նորաշենը, որոնք ստանալով ֆրանսիական հյուպատոսների և կաթոլիկ քարոզիչների որոշ աջակցությունը, կարողանում էին մասամբ հեռու մնալ բռնի մահմեդականացումից, սոցիալական բիրտ շահագործումից և բնակչության նկատվող արտագաղթի ընդհանուր միտումից[34]: 1820-1823 թթ. պարսկա - թուրքական պատերազմի հետևանքով ի թիվս Արևմտյան Հայաստանի հյուսիսային այլ գավառների, սարսափելի ավերածությունների ենթարկվեց նաև Թորումի գավառը: Ազգաբնակչության նոր խմբեր հեռացան այդ շրջաններից[35]: Կարևոր է նշել, որ տեղի հայ բնակչության մի մասը, լազերի բռնություններից ազատվելու համար հաճախ իրեն ներկայացնում էր ոչ միայն մահմեդական, այլև լազ: Պատահական չէ, որ նրանց, ինչպես վերը նշվեց, հաճախ անվանում էին ոչ թե կեսկեսներ, այլ հայ – լազեր: Այսպիսի հայ – լազեր կային նաև Ապերի, Բաբերդի, Կելկիթի և Արևմտյան Հայաստանի այն գավառներում, որոնք սահմանակից էին Պոնտական լեռներում և նրանց փեշերին բնակվող լազերի բնակավայրերին:[36]Հայ – լազերով բնակեցված գյուղերի մի որոշ մասն էլ արդեն լիովին կորցրել էր նախկին հայկական դիմագիծը և փաստորեն վերածվել էր տիպիկ թուրքական բնակավայրերի: Այդպիսին էր, օրինակ, ուշ միջնադարում իբրև հայկական գյուղ հիշատակվող Աաղերը[37]: Բնականաբար,

---

[31] Տե՛ս Koch K., նշվ., աշխ., էջ 57-59:
[32] Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ., աշխ., էջ 93:
[33] Տե՛ս Ерицов А., Список населенных пунктов, //Известия Кавказского отдела, приложение, с. 79.
[34] Տե՛ս Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, էջ 64-65:
[35] Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թ. 163բ, վ. 486, թ. 1:
[36] Տե՛ս Սարգսեանց Լ., Այց Թուրքաց Հայաստանին, Մուրճ, 1889, դեկտեմբեր, էջ 123-123:
[37] Տե՛ս Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, էջ 66-67:

մահմեդականացման, բռնի . ազգափոխության դրոշմը կրող յուրաքանչյուր գավառի, այդ թվում Սպերի և Թորթումի ազգաբնակչության թվակազմի և տողաբաշխման պրոբլեմները քննարկելիս. չի կարելի աչքաթող անել բնակչության այն շերտերին, որոնք գտնվում էին կրոնափոխության և ասիմիլացվելու, այսինքն՝ անցումային փուլում[38]:

Այսպիսով, Էրզրումի նահանգի բնակավայրերի տեղաբաշխման և նրանց ազգային կազմի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ թեև XIX-րդ դարի սկզբին գավառների մեծ մասը հիմնականում հայաբնակ էր, սակայն ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմաններում հետզհետե ուժեղանում էր թյուրքալեզու և իրանալեզու ժողովուրդների ներհոսքի միտումները, երևույթ, որը պայմանավորված էր առաջին հերթին թուրքական իշխանությունների քաղաքական նկատառումներով, աստիճանաբար կազմում էր Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական զարգացման հիմնական ուղղությունը:

Թեև քրիստոնյաների համեմատությամբ մահմեդականները սակավաթիվ էին, սակայն օտար տիրապետության ավերիչ իրադարձությունները հող էին նախապատրաստում գավառի հետագա էթնիկական դիմախեղման համար: Այդ իմաստով հատկապես ծանր հետևանքներ ունեցավ 1730–ական թթ. կեսերին Նադիր խանի (հետագայում՝ շահ) արշավանքը: Կարսի, Բայազետի, Կաղզվանի, Կարինի և այլ գավառների ավերումից հետո Նադիրը ներխուժեց Հյուսիսային Հայաստան, որտեղից գերված 6000 հայ բնակիչների բռնագաղթեցրեց Պարսկաստան:

Խոսելով օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում ինչպես ողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Ախալցխայի նահանգում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերի մասին՝ հայերի շրջանում կարելի է առանձնացնել էթնիկ զարգացումների հետևյալ միտումները.

ա)Վրացիներից զատ, մահմեդականանում են մեծ թվով հայեր:

բ)Հայերի մի զգալի մասը դավանափոխ է լինում. ովքեր ընդունում են ուղղափառությունը, նախ՝ վրացանում են, ապա, կորցնելով ազգային ինքնապաշտպանական հատկանիշները, բավական արագ էլ մահմեդականանում–թուրքանում են՝ համալրելով «մեսխեթցի» էթնոկրոնական շերտերի շարքերը:

գ)Հայության մի հատված, եվրոպական կաթոլիկ քարոզիչներից ստանալով որոշ աջակցություն և անձի ու գույքի ապահովության խոստումներ, կաթոլիկանում է:

---

[38] Քրիստոնյա հայերի բնակավայրերից տարբերելու համար մահմեդականացած հայերի և կեսկեսների բնակավայրերը տե՛ս տողերի հեղինակի «Էրզրում» աշխատության հավելվածում, ուր նշված են աստղանիշով:

Այս բոլոր երևույթները հստակորեն նկատել է Ղուկաս Ինճիճյանը: Խոսելով Ախալցխայի էյալեթի ամայացած ու լքյալ բազմաթիվ բնակավայրերի ու եկեղեցիների առկայության մասին՝ նա նշում է, որ դրանց տարածքում այժմ ապրում են «տաճիկներ», որոնք ժամանակին եղել են հայեր ու վրացիներ. «Գիւղօրէք այսր նահանգի սակաւ ըստ մեծութեան նորա, յորս ըստ մեծի մասին երևին մինչև ցայժմ մենաստանք և եկեղեցիք մեծաշէնք, այլ կամ լքեալք և կամ քայքայեալք: Բնակիչք նոցա ըստ մեծի մասին տաճիկք, դարձեալ գրեթէ առհասարակ կամ ի հայոց և կամ ի վրաց» (ընդգծումն իմն է –Ա.Ա.):[39] Այսօրինակ զանգվածային մահմեդականացումը թելադրված էր ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական դրդապատճառներով. գործում էր մի օրենք, ըստ որի՝ իսլամն ընդունած քրիստոնյան ազատվում էր դրամահարկ՝ իսփենջ վճարելուց:[40]

Ղ. Ինճիճյանը նկատում է նաև Ախալցխային բնորոշ էթնիկ գործընթացների մյուս առանձնահատկությունը՝ հայերի ուղղափառ, այս դեպքում, ավելի ճիշտ՝ վրացադավան դառնալն ու վրացացումը: Նա այն միտքն է հայտնում, որ նահանգի քրիստոնեաբնակ գյուղերի բնակիչների մեծ մասը նախապես եղել են հայեր. «են և գիւղօրէք բնակեալք մինչև ցայժմ ի քրիստոնէից հայոց նաև ի վրաց, որք գրեթէ առհասարակ սերեալ երևին ի հայկազեանց»[41] (ընդգծումն իմն է–Ա.Մ.): Այնուհետև, հմուտ պատմաբան–աշխարհագետը հստակ ներկայացնում այդ երևույթի ողջ էվոլյուցիան: «Բազմութիւն իշխանաց մերոց, նաև հասարակ ժողովրդեան,– գրում է նա,–որք ապա սակաւ առ սակաւ սովորեալք ի լեզու ի բարս, նաև ոմանք ի ծէսս վրաց, փոխեցան յազգ նոցա»:[42] Ի դեպ, «ծէսս» ասելով, Ինճիճյանն ի նկատի ունի դավանական ծիսական խնդիրները, այսինքն՝ վրացադավանության ընդունումը: Այսօրինակ վրացադավան հայերը համալրեցին նախկինների շարքերը, որոնք XVII դարի հեղինակ Հակոբ Կարնեցուն Տայքում ծանոթ էին որպես «ազգաւ և կրօնիւն վրացի, բայց հայի լեզուաւ խօսէին»:[43] Բայց արդեն XVIII դարում, առավել ևս Ախալցխայի նահանգում իրավիճակն այլ էր: Այստեղ միջավայրը հիմնա-

---

[39] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 123: Այն տեսակետը, ըստ որի տաճիկների՝ թուրքերի զգալի մասը նախապես եղել են ոչ միայն վրացիներ, այլ նաև հայեր, պաշտպանում է Պ. Հակոբյանը. «Ախլցխայի ...հին գիւղերում ապրում էին նաև թուրք ընտանիքներ,–գրում է նա,– որոնք, ամենայն հաւանականութեամբ, երբեմնի հայեր էին եւ բռնութեամբ հաւատափոխ էին դարձել երկրամասի իսլամացման շրջանում, XVII-XVIII դարերի ընթացքում» (Յակոբյան Պ., նշվ. աշխ., էջ 88): Նույն կարծիքին է նաև արևելագետ Ավ. Փափազյանը (Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16–19–րդ դարեր), Ե., 1999, էջ 27):

[40] Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 44:

[41] Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 123:

[42] Նույն տեղում:

[43] Մանր ժամանակագրություններ, հ. Բ, Ե., 1956, էջ 554:

կանում «տաճկախոս» էր և մասամբ՝ վրացախոս. «հասարակ լեզու նահանգիս է տաճկերէն և վրացերէն՝ որ հասարակ է նաև ի տաճիկս»: Ուստի հայերը, շարունակում է իր միտքը Ղ. Ինճիճյանը «...խօսին ՝ի լեզու վրաց»:[44]

Մյուս էթնոերևույթը՝ հայերի կաթոլիկացումն սկսվեց ավելի ուշ՝ XVIII դարի երկրորդ կեսին և ընդգրկեց հիմնականում Ախալցխա քաղաքն ու շրջակա գյուղերը: Ախալցխան, ինչպես նշվեց, ինքնուրույն էջմիածնական թեմ էր: Բայց XVIII դարի առաջին կեսին Էրզրումի Կարմիր վանքի առաջնորդները Ախալցխայի թեմը ենթարկեցին իրենց:[45] 1750-ական թվականներին այնտեղ հայտնված կաթոլիկ քարոզիչների պասառակտչական գործունեության հատևանքով հաջողվեց 60-ական թթ. վերջին համայնքը երկփեղկել: Սկսվեց Հայ առաքելական եկեղեցիների բռնազավթման, էջմիածնից հրաժարվելու մի եղծելի շրջան: Ախալցխայում ստեղծված կացությունից անհանգստացած՝ 1769 թ. նոյեմբերին Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին կաթոլիկ քարոզիչներին գրում էր. «Ընդէ՞ր ոչ բաւականանայք այնու, քան եկեալ մտանէք իբրև զգողս ի մէջ հօտից մերոց, և գողանայք զոչխարս մեր և օտարացուցանէք ի մէնջ և ձերացուցանէք, փեռեկտէք ի միմեանց իբրև զյափշտակող գայլս և զայլայլութիւնս և զաւիտենական խռովութիւնս արկանէք ի մէջ սոցա: Զինչ գոյր ձեզ ի յԱխլցխա, հայրենի քաղա՞ք է ձեր, եթէ ունէիք անդ զբնիկ ժառանգութիւնս և զժողովուրդս, զի այնքան երկար մնայիք անդ»:[46] Ցավոք, կաթողիկոսի ջանքերը՝ կաթոլիկացած հայերին իրենց դավանանքին վերադարձնելու ուղղությամբ, հաջողություն չունեցան:[47] Արդյունքում Ա-

---

[44] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 122–123: Զավեշտական է, որ անդրադառնալով XVIII դ. 60–70-ական թթ. Ախալցխայում տեղի ունեցող էթնոդավանական գործընթացներին, Շ. Լոմսաձեն ոչ միայն չի տեսնում հայերի վրացադավանություն ընդունելու ակնհայտ երևույթը, այլև առանց հիմքի, մերկապարանոց «եզրակացության» է հանգում. իբրև թե «...Ախալցիխեի շատ ուղղափառներ այս ճանապարհով *երևի* (ընդգծումն իմն է – Ա.Մ.) Գրիգորյան (առաքելական) հավատն են ընդունել (ლომსაძე შ., სამცხე ჯავახეთი, էջ 303):

[45] Սիմեոն Երևանցի, Զամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, 1873, էջ 41, 247 և Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 763: Ըստ մի նյութի՝ մինչ այդ Ախալցխան Ախալքալաքի և Չլդրի հետ եղել է Կարսի նվիրապետական աթոռի ենթակայության տակ (Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 600 և Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Ս. էջմիածին, 2001, էջ 3504):

[46] Мартиросян В. М., Чобанян П. А., Документы, Кавказ и Византия, вып. 3, Е., 1982, с. 240.

[47] Ախալցխայի և շրջակայքի գյուղերի կաթոլիկացման պատմությունը մանրամասն տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, էջ 347, 622–623. 693, 736–737, 763, Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 3537-3540, Мартиросян В. М., Чобанян П. А., նույն տեղում, էջ 237–244 և Յակոբեան Պ., նշվ. աշխ., էջ 51–72:

խալցխայի և նրա գյուղերի մեծ մասը դարձավ կաթոլիկ: Նրանց ձեռքն անցան քաղաքի հինավուրց Ս. Նշան և Ս. Հովհաննես եկեղեցիները: Ս. Աստվածածին եկեղեցին հայտնվեց կապուչինականների հսկողության ներքո:[48] Եկեղեցիներից զրկված և փոքրամասնության մեջ հայտնված հայ առաքելական համայնքը ստիպված ձեռնամուխ եղավ նոր եկեղեցու շինարարությանը:

Կաթոլիկացման գործընթացները բավականին մեծ ծավալներ ընդունեցին նաև նահանգի այլ գավառներում՝ Արդվինում, Արդահանում և այլուր:

Օսմանյան տիրապետության շրջանում ազգային–կրոնական հալածանքների, լեռնականների ասպատակություններից ազատվելու մղումներով, կաթոլիկացած հայերի մեծ մասը, ստանալով Հռոմի պապի և եվրոպական երկրների որոշ աջակցությունը, առժամանակ խուսափեց մահմեդականացումից ու վրացացումից և շարունակեց պահպանել իր նախկին հայեցի ինքնության շատ տարրեր: Ուստի հասկանալի է XVIII դարի վերջին հիմնականում ամայի ու անմարդաբնակ դարձած Ախալցխայի և նրա շրջակա գավառների հայության մեջ կաթոլիկ հայերի թվական գերակշռության և ինքնուրույն կաթոլիկական հոգևոր թեմ, նստավայր ու քահանայական դաս ունենալու փաստը:[49]

XVIII–րդ դարի վերջին կաթոլիկ հայերի մեծ մասը բաժին էր ընկնում Ախալցխա բերդաքաղաքին: «Բնակիչք նորա,– կարդում ենք Ղ. Ինճիճյանի աշխատությունում,– առհասարակ իբրև 30000 տունք (պետք է հասկանալ նույնքան շունչ – Ա.Մ.). որք են տաճիկք, վիրք, և յազգէս հայոց առաւել քան զվիրս»:[50] Պարզ է, որ «տաճիկների» մեջ իրականում թյուրքական ծագում ունեցողները սակավաթիվ էին և մեծամասնություն էին դարձել ի հաշիվ մահմեդականացած վրացիների ու հայերի: Վերջիններս, ինչպես նշվեց, ավելի բազմամարդ էին, քան վրացիները: Մխիթարյան միաբանության անդամ Ինճիճյանը, հասկանալի պատճառով անհրաժեշտ չի գտել ընդգծել այդ հայերի կաթոլիկական դավանանքը՝ նրանց իրավամբ համարելով հայեր և նախապատվությունը տվել է միայն դրանց հայ լինելու հանգամանքին: Այդ ժամանակ զուտ հայաբնակ են եղել Ախալցխային կից, փաստորեն նրա թաղամաս դարձած Իվլիտան, Խզաբավրան (100 տուն), խառը՝ հայ–վրացական բնակչություն են ունեցել Ջավախքում՝ Նաքալաքևը, Ախալցխայի շրջատարածքում՝ Վալեն, Արալը, Ուդեն, Աբասթումանը և այլն:[51] Ղ. Ինճիճյանն առհասարակ Ախալցխայի,

---

[48] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 124, Յակոբեան Պ., նշվ. աշխ., 72:
[49] Յակոբեան Պ., նշվ. աշխ., 83–84:
[50] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 124:
[51] Նույն տեղում, էջ 125: «Խառը» գյուղեր ասելով՝ Ինճիճյանն ի նկատի ունի ոչ միայն հայ–վրաց բնակչությամբ գյուղերը, այլ նաև՝ հայ և ուղղափառ դարձած, այսինքն՝ վրացացած բնակիչներին:

Խերթվիսի, Քոբլիանի և Ադիգենի ենթաշրջաններում հիշատակում է 47 բնակավայր՝ նախկին հարյուրավոր բնակավայրերի փոխարեն:

Ավելի աղետալի վիճակ էր Ջավախքում, որը, լինելով ոչ հայանպաստ էթնոգործընթացների կիզակետում, հիշեցնում էր բազմաթիվ լքյալ բնակավայրերի մի ամայատեղի: Նաքալաքևն ու Խիզաբավրան կաթոլիկացել էին, Կոթելիան և մի շարք այլ գյուղեր՝ քանիցս ենթարկվել բռնագաղթերի: Պատահական չէ, որ երբեմնի մարդաշատ Ջավախքում XVIII դ. վերջին Ինճիճյանը հիշատակում է «Խրթէզը»՝ Խերթվիսը, այն էլ որպես «գիւղ մերձ ի յախալ (Ախալքալաք – Ա.Մ.) և «Փառավանը» կամ «Փառևանը»՝ «գիւղ առ լերամբ և առ լճիւ որք յանուն նորա կոչին»:[52] Թերևս բարվոք վիճակում էր մնացել միայն Ախալքալաք բերդաքաղաքը՝ պարսպապատ ու անխոցելի լինելու պատճառով: Նրա մասին կարդում ենք. «Ունի և բերդ ամուր: Բնակիչք նորա տունք իբր 600 յազգէս հայոց և ի վրաց»:[53] Սակայն, ինչպես կտեսնենք, Ախալքալաքը ևս չմնաց այդ վիճակում և ռուս–թուրքական պատերազմների ժամանակ մեծապես տուժեց:

Այսպիսով՝ հստակորեն երևում է, թե օսմանյան լուծը որքան աղետաբեր էր եղել ինչպես հայ, այնպես էլ վրացի բնակչության էթնոկրոնական վերակերպումների, ազգածուլման համար: Տավոք, այս գործընթացները չդադարեցին և շարունակվեցին նաև XIX դարի առաջին քառորդին և, ի վերջո, հանգեցրին երկրամասի ժողովրդագրական պատկերի արմատական փոփոխության:

[52] Նույն տեղում, էջ 127:
[53] Նույն տեղում:

ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ XVI-XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Կարսի նահանգը պատկանում էր Արևմտյան Հայաստանի այն նահանգների թվին, ուր հայկական տարրը բավականին երկար ժամանակ կազմում էր բնակչության մեծամասնությունը: Ինչպես արևմտահայ մյուս նահանգների, այնպես էլ Կարսի նահանգի ժողովրդագրական պատկերը մեծ փոփոխություններ է կրել դեռ 16-րդ դարի և 17-րդ դարի առաջին կեսին տեղի ունեցած թուրք-պարսկական տևական պատերազմների պատճառով և միաժամանակ ընթացող ջալալիների ապստամբության հետևանքով:[1] Պարբերաբար ավերվում և ամայանում էին բազմաթիվ շեն գյուղեր, սրի մատնվում ու գերության են քշվում հազարավոր հայեր:[2] Օսմանյան կայսրության հպատակ պարսկամերձ արևմտահայ նահագներից առավել տուժվում է Կարսի նահանգը, հատկապես Շահ Աբասի 1603-1604թթ. նաև այս տարածքից կատարած բռնագաղթի հետևանքով: Տարագրվում են Շիրակավանը (Արևմտյան Շիրակ, Շորագյալ), Զարիշատը, Կարսի գյուղերի մի մասը: Աղետալի էր հատկապես Կաղզվանի գավառ կատարած Շահ Աբասի արշավաքը, որի հետևանքով գավառն ամբողջությամբ վեր է ածվում անմարդաբնակ և ավերակ մի վայրի:[3] Այդ մասին է վկայում նաև ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն:[4] Պարսիկների կողմից Կարսի նահանգի սահմանամերձ շրջաններն ավերվում են և բնակիչներն

---

[1] Տե՛ս Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Ե., 1980, էջ 43, 44, 50:
[2] Տե՛ս Լալայան Ե., Հայ ծեռագրերի ցուցակ, Թիֆլիս, 1915, էջ 528:
[3] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, 1884, էջ 26, 38: Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցիոյ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 14: Մանր ժամանակագրություններ XIII-XVIIդդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱ հրատ. 1951, էջ 182: Զուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ /16-17-րդ դարեր/, Ե., 1966, Հավելված, էջ 230:
[4] Tavernier J.-B., Les six voyages de Jean Babtiste Tavernier en Turquie, en Perse, et aux Indes, A la Haye 1718, p. 24: Կաղզվանի գավառի 17-19-րդ դարի առաջին երեսնամյակում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերի մասին մանրամասն տե՛ս Մուրադյան Հ., ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգի Կաղզվանի գավառում /17-19-րդ դարի 1-ին երեսնամյակին/, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք, Երևան, 2001, N 4, էջ 171-177:

գերության են քշվում նաև 17-րդ դարի հաջորդ տարիներին[5]: Նահանգը պակաս ավերվածության և բռնագաղթի չենթարկվեց նաև 18-րդ դարի ընթացքում, մասնավորապես Նադիր Շահի (Թահմասպ ղուլի խան) 1735թ.[6] և 1744թ. դեպի Կարս կատարած արշավանքի ժամանակ[7]: Նադիր Շահը իր զորավարներից Քյալանթար Մասումին հատուկ ուղարկել էր Կարսի նահանգ և պատվիրել. «զի թէ քրիստոնեայ գերեսցես, խաղաղությամբ բերեսցես, իսկ թէ Տաճիկ, զարս կոտորեսցես, և զէգսն գերեսցես, և զշէնսն այրեասցես և աւերեսցես»: Իսկ Նադիրն անձամբ շարժվում է Կաղզվան, այնուհետև ասպատակում է Բասենը, Բայազետը, Կարինն ու նորից գնում Կարսի վրա «և զոր ինչ մնացեալ էր ի գերելոցն Մասումին, զայն ևս խանն գերեաց»:[8] Նահանգի Զարիշատ և Կարս գավառները 1745թ. ենթարկվում են վրացիների ասպատակությանը՝ Սուլխան Օրբելիանու գլխավորությամբ:[9]

Կարսի նահանգի համար անհետևանք չեն մնում նաև 18-րդ դարի երկրորդ կեսի ենիչերիների ապստամբությունը, քուրդ Ալի բեկ անունով ավազակապետի և լեզգիների կատարած ասպատակությունները: Վերջիններիս ասպատակության ժամանակ 18-րդ դարի կեսերին ավերվում է նահանգի մեկ-երրորդը[10]: Նահանգը տուժում է նաև 18-րդ դարի վերջին Կարսի փաշայի և վրացիների միջև տեղի ունեցած բախումների ժամանակ, երբ 1789թ. և 1798թ. Վրաց Գեորգի 12-րդ թագավորի որդիներ Դավիթն ու Հովհաննը լեզգիական գնդի օգնությամբ հարձակվում են մասնավորապես Շորագյալի գավառի վրա և գերում մի քանի գյուղերի բնակիչներին:[11] 1811թ. Զարիշատի գավառն

---

[5] Տե՛ս Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Յիշատակարան է դարու, Կ.-Կոստանեանց, Վաղարշապատ, 1903, էջ 33:

[6] Տե՛ս Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցեցն իւրոց և Նատր-շահին Պարսից, քննական բնագիր, ռուսերեն թարգմ. առաջաբան և ծանոթագրություններ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 67-68: Զաքարիա Քանաքեռցի, Զաքարեայ սարկաւագի պատմութիւն, հ.Ա.,1870, Վաղարշապատ, էջ 87: Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմ. Լ. Մելիքսեթ-բեկ, հ. Գ., Երևան, 1955, էջ 26:

[7] Տե՛ս Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ, էջ 104-109:

[8] Զաքարիա Քանաքեռցի, Զաքարեայ սարկաւագի պատմութիւն, հ.Ա.,1870, Վաղարշապատ, էջ 87:Զաքարիա Քանաքեռցի, նշվ. աշխ., էջ 71: Աբրահամ Կրետացի, Պատմություն, Ե.1973, էջ 67:

[9] Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 121:

[10] Տե՛ս Չոբանյան Պ., Վրացական Ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Ե.,1981, Հավելված, էջ 160:

[11] Վրաց աղբյուրները, հ.Գ., էջ 191 և 203, նաև՝ Brosset M., Histoire de la Georgie, Partie II St-Petersbourg, 1856, p. 266: Նաև՝ Бутков П.Г., Материалы новой истории Кавказа, ч. 2, СПб.,1869, с., 447: Վրաց աղբյուրներ, հ.Գ., էջ 191: Այս մասին հիշատակում է նաև Դավիթ Բագրատիոն արքայազնը իր «Նոր

ավերածության են ենթարկում Երևանի սարդարի ջոկատները:[12] Կարսը նաև ենթարկվել է չըլդրցի էիպ բեկի հարձակումներին: Լեզգիների արշավանքները կրկնվում են նաև 1817թ.: Նրանց չդադարող հարձակումներից դրդված՝ Տայլար գյուղի բնակիչները ծածուկ պայմանավորվում են Երևանի Հասան խանի հետ, որպեսզի վերջինս զորք ուղարկի նրանց սահմանից անցկացնելու համար: Պողոս վարդապետ Պետրոսյանն այդ մասին գրում է. «... որք ի միում գիշերի և անցուցեալ ընդ Ախուրեան՝ յանկարծ գան, վարեալ տանեն զնոսա»:[13] Սկզբում գաղթեցնում են Արարատյան դաշտ, «սրածութեամբ և ոչ տանելով օդոյն մին ի հնգէ հազիւ մնան, և ապա փոխադրին ի Գեղարքունիս յԱրքայագեղ, և յետոյ անտի ևս ի Ցամաքաբերդ գիւղ անապատին Ամանայ: Մինն ի ծերունեաց, որ դեռ ողջ կայ, պատմեաց մեզ»:

Կարսի ժողովրդագրական պատկերի համար հատկապես ծանր են անդրադառնում 1806-1812թթ., 1828-1829թթ., 1853-1856թթ. ռուս-թուրքական, 1820-1823թթ. թուրք-պարսկական պատերազմները և նրանց հաջորդած արտագաղթերն և բռնագաղթերը:[14]

19-րդ դարի սկզբին Ռուսաստանը, հաստատվելով Արևելյան Վրաստանում և Հայաստանի հյուսիսային շրջաններում, հատկապես մեծ նշանակություն էր տալիս այդ տարածքներում ապրող հայ ազգաբնակչության հետ տարվող քաղաքականությանը: Այս քաղաքականության արդյունքն եղավ այն, որ Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի դեմ մղած պատերազմների ժամանակ, ինչպես պարսկական, այնպես էլ թուրքական տիրույթներից մեծ թվով հայեր տեղափոխվեցին ռուսական հպատակության տակ գտնվող տարածքներ:

պատմությունում» (Վրաց աղբյուրներ հ.Գ., էջ 202), տե՛ս նաև՝ Бутков П. Г., Материалы новой истории Кавказа, ч. 2, СПб.1869, с. 282, 447: Նա նշում է 1500 գերի:

[12] Մատենադարան, ձեռագիր 6517, թ. 4:

[13] Արարատ 1872, թիւ է, յուլիս 31, էջ 273:

[14] Մանրամասն տե՛ս ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգի Կաղզվանի գավառում /17-19-րդ դարի 1-ին երեսնամյակին/, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք, Երևան, 2001, N 4, էջ 171-177: Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում 19-րդ դարի 1-ին տասնամյակում, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2001, N 2, էջ 51-59: Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում 1813-1823 թթ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2002, N3, էջ 40-49:

Դեռևս 1801թ. Փամբակը Ռուսաստանին միացնելուց հետո զգալի թվով հայեր Կարսի նահանգից տեղափոխվում են այնտեղ՝ կազմելով տեղի հայության գերակշիռ մասը:[15]

Հարկատու բնակչություն ունենալու շահագրգռությունը Վրաստանի և Լոռու կալվածատերերին ևս մղում էր ակտիվ գործողությունների:[16]

Կարսի նահանգի էթնիկ տեղաշարժերը մեծ ծավալ սկսեցին ընդունել 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Կարսի շատ հայեր իրենք են ընդառաջ գնում գաղթելու խնդրում ռուսների ցանկություններին:

Կարսի նահանգից հայ բնակչության արտագաղթը շարունակվում է նաև հաջորդ տարիներին:[17] Արտագաղթին մեծապես նպաստում է նաև սովը:[18]

Անդրկովկասի ռուսական իշխանությունները ակտիվորեն շարունակում էին նորահաստատ տարածքների վերաբնակեցման գործընթացը: Գաղթականների հոսքն այնքան է ուժեղանում, որ ռուսական զինվորական իշխանություններն սկսում են լրջորեն զբաղվել ներգաղթը պետականորեն կարգավորելու խնդրով: Խստագույնս արգելվում է գաղթականների ինքնահոժար գործունեությունը բնակատեղիների ընտրության հարցում: Ցարական արքունիքը Վրաստանում գործող իր պաշտոնյաներից մի կողմից պահանջում էր խրախուսել Թուրքիայից քրիստոնյաների ներգաղթը, մյուս կողմից՝ Օսմանյան կառավարության դժգոհությունը չառաջացնելու համար, այդ ձեռնարկումները ներկայացնել իբրև Վրաստանից կայսրություն փախած նախկին բնակիչների վերադարձ: Հրահանգվում էր նաև գաղթողներին բնակեցնել պետական հողերում:[19] Միաժամանակ չպետք է ժխտել նաև այն հանգամանքը ևս, որ Աղա Մահմադ խանի արշավանքի, ռուսական զորքերի առաջխաղացման պատճառով, Արևմտյան Հայաստանում հաստատվել էին Փամբակից, Շորագյալից և Բորչալուից փախած ոչ քիչ թվով բնակիչներ:[20] Այնուհանդերձ, դա միայն պատրվակ է ռուսների համար, և նրանք հաճախ էին շահարկում այս փաստը:

Քանի որ դեռևս Ռուսաստանին ենթակա Արևելյան Հայաստանի շատ տարածքներ անվտանգության տեսակետից անապահով էին, ուստի

---

[15] Присоединение ..., т.1, док. 162.
[16] Նույն տեղում, док.135.
[17] Акты, собранные Кавказской археографической комиссией, т. 3, 1866, док. 1071, 1072 /այսուհետև՝ АКАК/. Մատենադարան, ձեռագիր 6517, թ. 3:
[18] Մատենադարան, ձեռագիր 6517, թ. 4:
[19] АКАК, т. 1, док. 544, 555.
[20] Бутков П. Г., նշվ. աշխ., т. 2, с. 340, 477.

զգալի թվով արևմտահայ վերաբնակիչներ, որոշ ժամանակից հետո, թողնում էին Հյուսիսային Հայաստանը և անցնում Վրաստանի խորքերը:[21]

Ցարական կառավարությունն ամայացած Վրաստանը և Արևելյան Հայաստանի իրեն ենթակա շրջանները վերաբնակեցնելու նպատակով աշխատանքներ էր ծավալում նաև հարևան տարածքների մահմեդական բնակչության շրջանում: Կարսում այդ աշխատանքները հիմնականում տարվում էին կարափափախների և մասամբ էլ քրդերի շրջանում: Այս գործը գլուխ բերելու համար՝ Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Տորմասովը մայոր Քանանովին խոստանում է պարգևատրել:[22]

Իրականում կարափափախներն ու քրդերը, ունենալով առավելապես պարսկաթուրքական կողմնորոշում, ձգտում էին ամեն կերպ խուսափել արտագաղթից: Կարափափախներից շատերն իրենք էին ռուսական տարածքներ գաղթելու ցանկություն հայտնում: Այդ դիրքորոշումը հետապնդում էր մի նպատակ միայն ռուսներին ամեն գնով հեռու պահել իրենցից և այդ խառնակ իրադրությունում ժամանակ շահել: Սակայն զարմանալիորեն ռուսական իշխանությունները համառորեն շարունակում են արտագաղթեցնելու փորձերը: Այնուամենայնիվ չպետք է ժխտել, որ վերադարձ, թեև փոքր չափերով, եղել է:

1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական իշխանությունների բռնությունները սաստկացնում են արևմտահայերի փախուստի դեպքերը: Իր նահանգի տարածքից դեպի ռուսական տիրույթներ արտագաղթի ուժեղացումից անհանգստացած՝ 1814թ. Կարսի Մահմուդ փաշան և Կարաբեկը գեներալ Ռտիշչևին խնդրում են Փամբակում և Շորագյալում բնակվող իրենց փաշայության բնակիչներին ուղարկել նախկին բնակության վայրերը՝ փորձելով այդ պահանջը հիմնավորել Բուխարեստի պայմանագրի այն դրույթով, որն արգելում էր հպատակների ազատ երթևեկության իրավունքը: Ռուսական զինվորական իշխանությունները առերես համաձայնվում են թույլատրել կարսեցիների ետդարձը, բայց իրականում խոչնդոտում են այդ գործընթացը:

Թեև ռուսական իշխանությունները բացահայտորեն չէին խրախուսում ներգաղթը, այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանի գյուղերից և քաղաքներից գաղթ տեղի էր ունենում: Եվ այն կարծիքը, թե 1829-1830թթ. և հետո ընկած ժամանակաշրջանում է կատարվել հայաթափման գործընթացը Արևմտյան Հայաստանում, մասնավորապես, Կարսի նահանգում, ու դրանց հետևանքով է նոր միայն հայաշատ դարձել

---

[21] Տե՛ս Մելքոնյան Ա., ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին, Իրան-նամէ, թիւ1-2-3,1998, էջ 14:

[22] АКАК, т. 4, док. 1121.

Արևելյան Հայաստանի շրջանները, այդպես չէ: Դրա վկայությունն են Մատենադարանում պահվող վավերագրերը:[23]

Պարսկամերձ Արևմտյան Հայաստանի գավառներից գաղթի նոր ալիք է սկսվում 1820-1823թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ:[24] 1822թ. աշնանը Հասան խանին հաջողվում է ավերածություններ կատարել նաև Կարսի փաշայությունում: Քանդվում, ավերվում, մոխրակույտի է վերածվում Կաղզվանը, Կարսը ու 2000 տուն հայերով ու առատ ավարով խանը վերադառնում է Սարդարապատ, ուր և նրանց բնակեցնում է:[25] Այդ արշավանքի հետևանքով շատերը գավառից ինքնակամ հեռանում են Գյումրի:[26]

Ժողովրդագրական պատկերի համար հատկապես ծանր է անդրադառնում 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ պատերազմից հետո ռուսական զինվորական իշխանություններն ու կամավորական Մարտիրոս Վեքիլյանի ջոկատը կազմակերպեցին հայության զանգվածային գաղթ դեպի Ռուսաստանին անցած Անդրկովկասի շրջանները:[27]

1829թ. սեպտեմբերի 2-ի պայմանագրի 13-րդ հոդվածով Թուրքիայում ապրող քրիստոնյաներին թույլատրվում էր 18 ամսվա ընթացքում վաճառել իրենց անշարժ գույքերն ու կալվածքները և շարժական գույքով անարգել անցնել ռուսական սահմանները:[28] Պայմանագիրը հայերի համար ծանր կացություն էր ստեղծում: Նրանք կամ պետք է մնային իրենց բնակավայրերում ու իրենց բախտը վերստին հանձնեին թուրքական բռնակալների քմահաճույքին կամ պիտի թողնեին իրենց հայրենի հողերը և անցնեին Ռուսաստանի տիրապետության տակ: Թուրքական հրամանատարությունն իր կրած պարտությունների գլխավոր պատճառը համարում էր հայերի դավաճանությունը և պատրաստ էր ռուսական զորքի հեռանալուց հետո, հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Մոլեռանդ մահմեդական հոգևորականությունը դեռ

---

[23] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ, 13 վավ. 173, թ. 2: Նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 682: Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ .166ա, վավ. 26: Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԳ., Թիֆլիս, 1915, էջ 423:

[24] Այդ ժամանակահատվածի ազգաբնակչության տեղաշարժերի և պարսիկների կազմակերպած արտագաղթի մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ա., Երզրում, էջ 123-128, Լրաբեր, 1988, հ. 5, էջ 17-19:

[25] Մուրատյանց Պ.Հ., Նկարագիր Ս. Հովհաննու վանուց և վիճակի նորին Բագրևանդա, Արարատ, 1889, թիւ Գ, էջ 152:

[26] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257գ, վավ. 86:

[27] Նույն տեղում, թղթ. 66, վավ.185, թ.1:

[28] Տե՛ս Договоры России с Востоком, составил Т. Юзефович, СПб., 1869, с. 78-79.

ռուսական բանակների ներկայության պայմաններում կոչ էր անում պատժել «գյավուրներին», հրահրում էր քրդական ավազակախմբերին կողոպտելու հայկական և հունական գյուղերը: Կաղզվանի քուրդ սանջակբեյ Սանի բեկը 1829թ. հոկտեմբերին սպառնում էր հայ բնակչությանը ասելով, թե՝ «... համբերեցեք, տեսէք, թէ յետ քանի մի աւուր ես ձեր գլուխն ինչ կու բերեմ...»[29]. Դեռ մարտին Կաղզվանի նշանավոր մարդկանցից մի քանիսը և հոգևոր առաջնորդ Սահակ Սաթունյանը Կարսի գեներալին նամակ են գրում .« վասն երեսանկեալ աղաչեմք ... վասն մեր պաշտպանութեան զօրք ղարկես որպես խոստացար»:[30]

Արևմտյան Հայաստանից թուրքերին վերադարձվող տարածքներից հայերին Երևանի նահանգ տեղափոխելու խնդրանքով 1829թ. հոկտեմբերին կոնդակով կոմս Պասկևիչին է դիմում Եփրեմ կաթողիկոսը:[31] 1829թ. հոկտեմբերի 2-ին Կարսի նահանգի Շորագյալի գավառի Ուղուզլի գյուղի հայ ազգաբնակչության անունից գյուղի քահանա տեր-Թաթոսը խնդրագիր է հղում Պասկևիչին, ուր գրում է, որ հողերի հանձնման լուրը շատ անհանգստացրել է հայերին, ուստի խոնարհաբար խնդրում է թուրքերի ճնշումներից ազատվելու համար թույլ տալ Շորագյալ /Արևելյան Շիրակ/ գաղթելու «ուր կկարողանան ապրել և ծառայել կայսրին»[32]: Ն. Աշտարակեցին էլ իր հերթին, մտահոգվելով Կարինի, Կարսի և Բայազետի նահանգների հայ ազգանբակչության խնդրով, Քիշինևից 1829թ. նոյեմբերի 8-ին էջմիածնի միաբանությանը գրում է. «... թէ հնար կայցէ նոցա վերաբնակելոյ ի սահմանս ռուսաց...»[33]: Իսկ 1829թ. նոյեմբերի 8-ին կամավորական պրապորչիկ Մարտիրոս Վեքիլյանը հայտնելով, որ գրավված վայրերից ռուսական բանակի ետ քաշվելու լուրը ծանր տպավորություն է թողել, էջմիածնի միաբանությանն աղերսում է միջնորդել ռուսական իշխանություններին, որ Կարինը չթողնեն. «... վասն գի փոքրիկ ազգ մեր կրկին դարձեալ լինի ի ետին թշուառութենէ հազիւ զերծաք ի դառն ծառայութենէ, ուրեմն աղաչեմք զձերուն բարձրապատիւ սրբազնագոյն Տերութեան ձեր ... միջնորդութիւն զարթուցէք տեր հոգի խղճմտանաց ի վրա բարեպաշտ իւրոյ մեծի կայսրութեան, որ ոչ դարձուցցէ յետս երկիրս մեր»[34]: Մարտիրոս Վեքիլյանի այս աղերսագրին միանում են նաև Կարսի

---

[29] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257[III], վավ. 84, թ. 1:
[30] ՀԱԱ, ֆ. 342, ց.1, գ. 2, թ. 49:
[31] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վավ. 12, թղթ. 61, վավ. 777:
[32] Ներսիսյան Ա. Ն., Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրիենտացիան XIX դարի առաջին կեսին, Երևան, 1962, Հավելված, էջ 172-173:
[33] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 63, վավ. 397, թ. 1:
[34] Նույն տեղում, թղթ. 62, վավ. 231, թ. 1:

ուք նշանավոր անձիք և գրում, ոչ թե իրենք են աղաչում, այլ Կարինի, Բասենի և այլ կողմերի հայ բնակչության անունից. «եթէ յերկիրս մեր կացեալ մնասցէ ի ձեռն հզոր տերութեան Ռուսաց՝ մերձակայ աշխարհաց հայքն ամենայն բաւականապէս բնակեն»[35]:

Թե Ադրիանապոլսի հաշտության դաշնագիրն ինչպիսի տպավորություն թողեց արևմտահայության վրա և ինչ տրամադրություններ առաջ բերեց՝ բացահայտված է նաև Պասկևիչի 1829թ. հոկտեմբերի 10-ի Նիկոլայ Առաջինին հղած հայտնի զեկուցագրում:[36] 1829թ. դեկտեմբերի 3-ին Պասկևիչը հայտնում է Վրաստանի քաղաքացիական նահանգանպետ Պ. Դ. Զավիլեյսկուն, թե հաշտության լուրը ստանալով՝ Թուրքիայում ապրող քրիստոնյաները ցանկանում են գաղթել Ռուսաստանի սահմանները և նրանցից շատերը որպես առանձին ողորմածություն, խնդրում են այդ իրավունքը՝ «չպահանջելով ռուսական կառավարությունից ոչ մի օգնություն»[37]:

Պասկևիչն ընդառաջելով հայերի և հույների ցանկությանը՝ 1829թ. հոկտեմբերին հրահանգում է էրզրումի, Կարսի, Բայազետի ռուսական զորքերի հրամանատարներին անցագիր տալ այն հայերին և հույներին, որոնք այժմ ցանկանում են գաղթել՝ առանց կառավարությունից որևէ օգնություն հայցելու[38]: Սակայն իհարկե, գաղթելու միակ դրդիչը թուրքերի վրեժխնդրությամբ չէր պայմանավորված, այլ գաղթը կամենում էր և ռուսաց կառավարությունը և կովկասյան զինվորական հրամանատարությունը, որը դեռ 1828թ. վերջերից հանձնարարություն ուներ նախապատրաստելու թուրքահպատակ քրիստոնյաների այս շարժումը: «Քրիստոնյաների» տակ առաջին հերթին ի նկատի էր առնվում հայությունը:

Օսմանյան կայսրությունից քրիստոնյաների ներգաղթը կազմակերպելու համար Թիֆլիսում հիմնվում է գաղթականական կոմիտե՝ Զավիլեյսկու նախագահությամբ 1830թ. հունվարի 28-ին:[39] Գաղթի կանոններն ու գաղթականներին տրվող արտոնություններն իրենց բովանդակությամբ նույնն են, ինչ որ 1828թ. նախատեսվել էր պարսկահայերի համար: Հայերի մի մասը, չսպասելով գարնան բացվելուն, թողնելով անգամ շարժական գույքի մի մասը, Բայազետի,

---

[35] Նույն տեղում:
[36] АКАК, т. 7, док. 818.
[37] Նույն տեղում, док. 820.
[38] Նույն տեղում, док. 821, Ներսիսյան Ա. Ն., նշվ. աշխ., Հավելված, էջ 174:
[39] АКАК, т. 7, док. 822.

Ալաշկերտի, Էրզրումի և մի քանի այլ լիվաներից, Կարսի էյալեթից, ուշ աշնանը սկսեց շարժվել դեպի ռուսական սահմանները:[40]

Էրզրումի, Բայազետի և Կարսի հայ գաղթականների ու Պասկևիչի միջև 1829թ. վերջերին և 1830թ. սկզբներին գործուն բանակցություններ են տեղի ունենում գաղթականներին իրենց ցանկացած քաղաքներում և գավառներում բնակեցնելու համար: Քաղաքների և գյուղերի բնակիչների կողմից ընտրվում են պատգամավորներ, որպեսզի ռուսական տարածքներում իրենց բնակության համար հարմար վայրեր փնտրեն: «Այս պատգամավորները,- գրում է Կարնո գաղթականներից Հակոբ Կարենյանցը,- իհարկէ չունենալով այդ մեծ պաշտօնին հարմար գիտութիւնքը և հմտութիւնքը ընտրեցին այն տեղերը, որոնք որ ցույց տուին տերութեան պաշտօնակալքը»[41]:

Կարսեցիները որոշում են վերաբնակվել Գյումրի ամրոցում (հատկապես Կարս քաղաքի արհեստավորներն ու առևտրականները), Շորագյալի, Լոռի-Փամբակի գավառներում ու Արագածի ամայի գյուղերում[42]: Կարսեցիների գաղթի առաջնորդը Ստեփաննոս արքեպիսկոպոս Խաժակնյանն էր (Զախալյանց)[43], ինչպես նաև հետևյալ ազդեցիկ աղաները՝ Մահտեսի-Ավոն, Սեծ Հակոբը, Փոքր Հակոբը, Նազարեթ և Սարգիս Դիլանյանցները (Տիգրանյանցներ) և Մկրտիչ Հարությունյանը (Հայթա -Մկո)[44]:

---

[40] Դարբինյան Ն., Արևմտահայերի 1829-1830թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, 1974, N 2, էջ 93:

[41] Կարենեանց Հ. Խապրիկներ Հայրենիքից, Կռունկ Հայոց Աշխարհին, 1862, Տփխիս, թիւ Բ, փետրվար, էջ 228:

[42] Դարբինյան Մ., Նշվ. աշխ., ՊԲՀ, 1974, N 2, էջ 94: Նաև՝ Дарбинян М.Г., Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830гг., ԲՀԱ, 1977, N. 3, էջ 8-9:

[43] Ծնվել է 1770-ական թվականներին, Բարձր Հայքի Կարին քաղաքում: Սկզբնական անունը Նասիբ էր: 1826թ. նշանակվում է Կարսի նահանգի հոգևոր առաջնորդ: Կաթողիկոսի կարգադրությամբ 1829թ. նշանակվում է միայն կարսեցի գաղթականների հոգևոր առաջնորդ: Իսկ 1836թ-ից Շամախու թեմի առաջնորդն էր: Մահացել է 1842թ. մայիսի 7-ին:

[44] Կրպե, նշվ. աշխ., էջ 97: Տիգրանյանցները բնակություն են հաստատում Գյումրիում: Հակոբ Կարենյանցը գրում է. «Այս երևելի գերդաստանը համարւում է և է իսկապէս պատճառ Կարսայ ժողովրդեան գաղթականութեան» (Կարենյանց Հ., նշվ. աշխ., էջ 230): 1861թ. այդ գերդաստանը բաղկացած էր Նազարեթ և Մարգիս աղաներից, հանգուցյալ Հակոբ աղայի միակ որդի Հովհաննեսից և Նազարեթի երկու որդիներից: Նազարեթ Տիգրանյանն ամբողջովին նվիրվում է Գյումրիում կարսեցիների ձեռնարկած եկեղեցու կառուցմանը: Սուրբ Աստվածածին անվամբ եկեղեցու կառուցումն սկսվում է 1834թ.: Նորաբնակները հոգաբարձու և կատարող են ընտրում կարսեցիներին: Այդ գործի գլխավոր կառավարիչն էր պրապորչիկ մահտեսի Ավոն և օգնականներն էին պրապորչիկ Սարգիսը (Տիգրանյան՝ Հ. Մ.), որը նաև երեցփոխն էր, գանձապետ Ավետիս մահտեսի

Պասկևիչը Կարսի նահանգի հայ բնակչության գաղթի պատասխանատու՝ պրիստավ (մոուրավ) է նշանակում պրապորչիկ Մարտիրոս Վեքիլյանին: Վերջինս 1829թ. նոյեմբերի 6-ին կաթողիկոսի տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսին, հայտնելով Պասկևիչի՝ Կարսի հայ բնակչությանը Գյումրի և Արագածի ստորոտների ավերակ գյուղերը գաղթելու հրամանը, տեղեկացնում է, որ ժողովուրդն իրեն «լալագին դիմօք աղերս գրեալ», որպեսզի Ս. Աթոռի կառավարությունը մի ելք գտնի: Կարսի նշանավոր ութ մեծամեծեր, համազված լինելով, որ գաղթելը մեծ թշվառության է հասցնելու բնակչությանը, 1829թ. նոյեմբերի 8-ին կաթողիկոսին աղերսում են՝ դիմել մինիստրների խորհրդին, խնդրելով չթողնել Կարսը:[45] Ցարական կառավարությունը համոզված լինելով, որ արևմտահայերի գաղթելու ցանկությունն անսասան է, ոչ մի ջանք չգործադրեց գաղթականների անշարժ գույքի և կալվածքների տնօրինման, վաճառելու կամ ինչ որ չափով փոխհատուցում տալու ուղղությամբ: Այդ տեսակետից ուշագրավ է Զավիլեյսկու պատասխանը Կարսի հայերին, երբ վերջիններս փոխհատուցում և օգնություն են խնդրում. «Կարսի գաղթականները,- գրում էր նա,- ոչ մի իրավունք չունեն պահանջելու ռուսական կառավարությունից հատուցել իրենց կալվածքների համար, քանի որ նրանք չեն գաղթում հրամանատարության դրդմամբ, այլ իրենց սեփական ցանկությամբ, որպեսզի փրկվեն թուրքերի կողմից իրենց սպասվող հալածանքներից և զանազան աղետներից, բավական է և այն, որ ռուսական տիրույթներում նրանց տալիս են պետական հողեր, աղքատներին՝ որոշ նպաստ և մի քանի տարով ազատում են տուրքերից և պարհակերից: Կալվածքների վաճառքը կախված է գաղթականների սեփական ջանքից: Կառավարությունը միջոցներ չունի և պարտավոր չէ հարկադրելու մնացող բնակիչներին գնել այդ կալվածքները»[46]:

Ձմռան երկարատև նախապատրաստություններից հետո 1830թ. գարնանն սկսվեց արևմտահայերի զանգվածային գաղթը: Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավիլեյսկին բաժանում է 14000

Մարուքով Տեր-Գևորգյանցը, տիրացու Գրիգոր Պետրոսով Ճորոդյանը, Գևորգ մահտեսի Ավագով Տեր-Մինասյանը: 1836թ. ավարտելով եկեղեցու կառուցումը, ապրիլի 23-ին Սինոդից խնդրում են իրենց մատուցած ծառայության մասին ծանուցել բարոն Ռոզենին (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 88, վավ. 40, թ. 1):

[45] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 62, վավ. 78, թ. 1:

[46] Դարբինյան Մ., նշվ. աշխ., ՊԲՀ, 1974, N 2, էջ 94: Անպատասխան է մնում նաև 1830թ. մարտի 19-ին Կարս քաղաքի հայազգի մի խումբ խանութի տերերի, ռուս գեներալների հրամանով քանդված իրենց խանութների արժեքի փոխհատուցման վերաբերյալ, ռուսական հրամանատարությանն ուղղված խնդրանքը (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257գ, վավ. 88, թ. 1):

չերվոնեց 6000-ականը Էրզրումից, Բայազետից և 2000-ը՝ Կարսից, գաղթը սկսելու համար:

Նախքան ժողովրդի գաղթելը սուլթան Մահմուդը 2-րդը հատուկ հրովարտակով փորձում համոզել՝ չգաղթել: Իսկ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն Արևմտյան Հայաստան է ուղարկում Բարդուղիմեոս եպիսկոպոսին «վնասակար և ազգակործան քայլից» հրաժարվելու համար: Սակայն այս ամենը դեր չխաղաց: Քրիստոնյա բնակչության գաղթով, բնական է, որ արևմտահայ քաղաքներն ու գյուղերն ամայանալու էին, արհեստներն ու առևտուրն անկում ապրելու, վարելահողերը մնալու էին անմշակ և հետևաբար, մասնավոր կալվածատիրական ու արքունի եկամուտները նվազելու էին:

Չնայած թուրք կառավարողների հարուցած բազմաթիվ արգելքներին ու խոչընդոտներին, 1829-30թթ. Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս են գաղթում բազմահազար հայեր և փոքրաթիվ հույներ: Կարսից գաղթած ընտանիքների թիվը 2240-ից հասնում էր շուրջ 2500 գերդաստանի: Կարսի ռուսական ժամանակավոր վարչության տվյալներով այն կազմում էր 2264 ընտանիք կամ 13935 մարդ:[47]

Կարսի նահանգից դեպի ռուսական տարածքներ տեղաշարժ է նկատվում մեծ գաղթից հետո էլ: Նահանգի հայ բնակչության կազմից ռուսական տարածքներ տեղափոխվելու ցանկություն է առաջանում 1853-1856թթ. Ղրիմի պատերազմից հետո ևս: Համանման ցանկություն է դրսևորվում նաև մահմեդական, հատկապես նախորդ ժամանակաշրջաններում Օսմանյան կայսրության տարածք անցած բնակչության կողմից:

Այսպես, Կարսի գրավումից հետո նահանգի կառավարիչ նշանակված գնդ. Լորիս-Մելիքովը 1856թ. ապրիլի 8-ին հայտնում է գեն.-լեյտ. Խրուլևին, որ հիմքեր ունի կարծելու, թե քրիստոնյա բնակչության մի մասը և կարափափախ ողջ բնակչությունը, ովքեր բացահայտորեն պաշտպանել էին ռուսներին, կգաղթեն ռուսական տարածքներ: Նա սպասում է ղեկավարության կարգադրությանը՝ իր հետագա գործողությունների համար. թույլատրե՞լ և նույնիսկ խրախուսե՞լ, թե հնարավորին չափ խոչընդոտել գաղթը: Լորիս-Մելիքովը գտնում էր, որ գաղթը կարող է հապշտապ և արագ կատարվել՝ հաշտության մասին տեղեկություն ստանալուն պես:

Իշխան Բեհբութովը ռուսական տարածքներում բնակություն հաստատելու ցանկություն հայտնած Կարսի բնակչության տեղաշարժին հրահանգում է չխոչընդոտել, իսկ գավառային կառավարիչներին ցուցում տալիս, որ ներկայացնեն գաղթող բնակիչների ճիշտ ցուցակը և սպասեն

[47] Дарбинян М., Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830гг., Вестник архивов Армении, 1977, N. 3, с. 20-21.

գեն. Մուրավյովի վերջնական որոշմանն այն մասին, ուր հատկապես նրանց մշտական բնակության տեղափոխել:

Գլխավոր հրամանատար գեն. Մուրավյովը հավանություն տալով գեն.-լեյտ. իշխան Բեհբութովի կարգադրություններին՝ միևնույն ժամանակ հրահանգում է գեն.-լեյտ. Խրուլևին. «...այդ տեղաշարժերը միայն թույլատրվեն *և ոչ խոչխուսվեն* (ընդգծումը՝ գեն. Մուրավյովի)»:[48]

Կարսի նահանգի քրիստոնյա բնակչությունից շատերն էին ցանկություն հայտնել գաղթել ռուսական տարածքներ, բայց նրանցից յուրաքանչյուրը նախապես առաջարկում էր այդ իրավիճակին շատ հատուկ հարց, թե՞ որտեղ կլինի իրենց նոր բնակավայրը: Շատերն էլ ունենալով ազգակցական և այլ կապեր նախկինում Երևանի նահանգ տեղափոխված հայերի հետ՝ իրենք էին ընտրում իրենց բնակեցման համար որոշակի վայրեր և խնդրում թույլտվություն այնտեղ բնակվելու:

Քանի որ սկզբնական շրջանում ռուսական իշխանությունները չէին կարողանում դրական պատասխան տալ, բնակիչների մեծ մասը, որոնք անկեղծորեն ցանկություն ունեին տեղափոխվել, մնում էին երկընտրանքի և անվճռականության մեջ: Մյուս կողմից, հիմնականում այն մարդիկ, ովքեր առավելագույնս ռուսների նկատմամբ հանդես էին բերել բարյացակամ վերաբերմունք պատերազմի ժամանակ, ընդհանրապես չձեռնարկեին տեղաշարժվել, ապա իրենց մտադրությունը, որն արդեն դարձել էր բացահայտ, ժամանակի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից կենթարկվեին հետապնդման: Բացի դրանից, շատերը, որոնք գարնանացանը վերջացրել էին, հարցնում էին, կթույլատրվի՞ նրանց հավաքել իրենց բերքը, և այն տեղափոխել իրենց նոր բնակավայրերը, եթե այս տարածքն աշնանն անցնի թուրքական իշխանություններին:

Վերաբնակվել ցանկացողների կասկածները փարատելու ցանկությամբ՝ գնդ. Լորիս-Մելիքովը 1856թ. հունիսին տեղեկություն է խնդրում Երևանի ռազմական նահանգապետից, թե որտեղ ազատ հողեր կան և քանի ընտանիք կարող է թույլատրվել նոր վերաբնակեցման համար:

Մինչ Երևանի ռազմական նահանգապետից պահանջվող ազատ հողատարածքների մասին տեղեկություն ստանալը, գեն. Խրուլևին նոր կարգադրություն հետևեց: Գեն. Մուրավյովն անհրաժեշտ էր համարում հնարավորությունների սահմաններում ձեռնամուխ լինել, թեկուզ մոտավոր տեղեկությունների հավաքմանը, թե մինչև քանի քրիստոնյա ընտանիքեր, որոնք ցանկություն ունեն վերաբնակվել ռուսական տարածքներում կարող են տեղաշարժվել և պահանջում էր ընդհանուր տեղեկություն Երևանի նահանգի ազատ հողատարածքների մասին:

---

[48] АКАК, т. XI, Тифлис 1888, док. 307, с. 313-315.

Նկատի ունենալով Կարսի որոշ քրիստոնյաների թախանձագին խնդրանքները՝ ցուցում է տրվում Երևանի ռազմական նահանգապետին անմիջապես դրական և մանրամասն տեղեկություն հասցնել ազատ հողատարածքների մասին, որոնց վրա, որպես սկիզբ, հնարավոր է վերաբնակեցնել 500-ից 600 ընտանիք:

Ռուսական տարածքներ գաղթած թուրքահպատակ ընտանիքների թիվը, նախկինում Կարսի նահանգի տարածք տեղափոխված թալինցիների /շուրջ 50 ընտանիք/ հետ միասին, հասնում է 120 ընտանիքի: Բացի դրանից, խնդրագիր է ներկայացրել մինչև 20 ընտանիք: Իսկ ինչ վերաբերում է հստակեցմանը, թե քրիստոնյա քանի ընտանիք կարող է ցանկության դեպքում անցնել ռուսական տարածքներ, ապա այդ մասին, հնարավոր չէ անգամ մոտավոր տեղեկություն հավաքել, քանի որ գաղթողների թվի հստակեցումը սերտորեն կապված է այն հարցի հետ, թե մինչև երբ ռուսները կմնան Կարսի մարզում: Եթե մարզը զբաղեցված լինի ռուսական զորքերի կողմից մինչև բերքահավաքի ավարտը, ապա Կարսի օկրուգի բնակչության քրիստոնյաների զգալի մասը, այն է՝ Նախիջևանի մահալի բնակիչները մինչև 400, Թախտինի սանջակը՝ 150, Կաղզվանը մոտ 100 ընտանիքներ, անկասկած է, որ բերքահավաքի ավարտով, կիրականացնեն իրենց մտադրությունը: Սպասվում էր, որ նրանց կմիանան մինչև 50 ընտանիք՝ Կիզիլ-չախչախ, Փիրվալի և Ուզուն-քիլիսա գյուղերի բնակիչներից:

Ինչպես 1830թ. գաղթի, այնպես էլ այս անգամ թուրքական իշխանությունները բոլոր միջոցներով ձգտում են բնակիչներին պահել իրենց տարածքներում, դրա համար օգտագործելով մերթ այն հավաստիացումը, որ անցած պատերազմի ընթացքում հակառակորդին ծառայություն մատուցածները, հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածի հիման վրա, ներում կստանան, մերթ սպառնալիքները, որ մարզից ռուսների հեռանալով՝ գաղթածները կպահանջվեն կառավարության կողմից: Այս հանգամանքները զգալիորեն սառեցնում էին դեպի գաղթը ձգտումը: Վերաբնակվել ցանկացողներից ոմանք ձեռնպահ են մնում, քանի որ նաև ուզում են համոզվել, թե բավարար քանակությամբ հողատարածքներով ապահովվա՞ծ կլինեն: 1856թ. Հաթթիի-հյումայունի հրապարակման առիթով Օսմանյան Թուրքիայի ներսում տեղի ունեցող անկարգությունների և հուզումների մասին տեղեկությունները, և այդ բարենորոգման հետ կապված քրիստոնյաների նկատմամբ կատարվող ճնշումները, անգամ էրզրումում, կրկին առաջ են բերում գաղթելու՝ նախկինից ավելի ուժեղ ցանկություն, չսպասելով անգամ բերքահավաքի ավարտին: Այս հանգամանքները կարող էին զգալիորեն ավելացնել գաղթողների թիվը, բայց խստորեն առաջնորդվելով գլխավոր հրամանատարի ցուցումներով, որ *«գաղթը լինի միայն թույլատրված և ոչ խրախուսված»*, Լորիս-Մելիքովը չի ձեռնարկում ոչ մի միջոց

գաղթողների թվի ավելացման համար՝ այն թողնելով բնակիչների կամավոր ցանկությանը:

Ռուսական զորքերի կողմից Կարսի մարզը թողնելուց հետո, ռուսական տարածքներ են գաղթում ևս 2 կամ 3 տասնյակ քրիստոնյա ընտանիք:[49] Կարսում հաստատված թալինցիներից բացի, ռուսական տարածքներ վերաբնակվելու ցանկություն հայտնեցին նաև Արդահանի սանջակում բնակվող 150 ծուխ թուրքմեններ, սակայն, թուրքմենների գաղթը չիրականացավ:

Ինչպես 1806-1812թթ. և 1828-1829թթ., այնպես էլ 1853-1856թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ թուրքական իշխանություններն ամայացնում են սահմանամերձ բոլոր բնակավայրերը: Ուստի պատահական չէ, որ ռուսական զեկուցագրերում նշվում է, թե էրզրումի փաշայության ընկած սահմանամերձ գյուղերը բնակված են հիմնականում մահմեդականներով:

Այդ իսկ պատճառով, երբ 1828թ. հունիսին ռուսական զորքերը մուտք են գործում Կարսի փաշայության տարածք, հանդիպում են միայն հայկական գյուղերի ավերակներին: Նկատի ունենալով, որ մինչև Կարս ընկած գրեթե բոլոր գյուղերը հայաբնակ էին և վախենալով, որ հայերը ռուսական զորքերին աջակցություն ցույց կտան, թուրքական իշխանությունները հայ գյուղացիներին գաղթեցնում են կայսրության խորքերը: Ուստի ռուսական զորքերը հաճախ էին հանդիպում ամայի գյուղերի:[50]

Միաժամանակ, սակայն պետք է նկատել, որ չնայած այս ամենին, Արևմտյան Հայաստանում հայերը դարձյալ մեծամասնություն են կազմել[51]: Այդ է հաստատում նաև ռուս զինվորական Լիխուտինը.«Ասիական Թուրքիայում մենք շատ հայերի տեսանք և հավանաբար այլ քրիստոնյաներ ևս կային»[52],-գրում է նա:

Հայ բնակչության արտագաղթին զուգահեռ տեղի է ունեցել մահմեդական ժողովուրդների հաստատման գործընթաց, ինչպես Կարսում, այնպես էլ ողջ Արևմտյան Հայաստանում: Կարսում քրդերը հայտնվել էին 16-րդ դարի կեսերից[53] և կազմում էին փոքր համայնքներ՝

---

[49] АКАК, т. XI, Тифлис 1888, док. 307, с. 313-315.

[50] Երիցյան Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք 19-րդ դարում, մ. Ա, (1800-1832), Թիֆլիզ, 1894, էջ 400, Кавказ, 1853, 47. Кавказский сборник, т. 30, Тифлис, 1910, Материалы к истории турецкой войны 1828-1829, с. 12.

[51] Գեղամեանց Ե, Պատմական քաղվածքներ, պրակ 5, Բաքու, 1911, էջ 573:

[52] Лихутин М., Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, СПб., 1863, с-.441:

[53] Аверьянов П. И., Курды в войнах Росии с Персией и Турцией в течение XIX столетия, Историческая очерк, Тифлис, 1900, с. 2.

20-30 ընտանիք:[54] Նրանք հիմնականում բնակվում էին լեռնային շրջաններում և զբաղվում էին անասնապահությամբ: Մաղասբերդի շրջակայքում վխտում էին քրդական ավազակախմբերը: Նահանգում մահմեդականների թիվն ավելանում է նախ 18-րդ դարի վերջերից և 19-րդ դարի սկզբներից ռուսների Անդրկովկասում նոր տարածքներ ձեռք բերելուց հետո, երբ այնտեղի մահմեդականները մասսայաբար տեղափոխվեցին հարևան թուրքահպատակ, մասնավորապես Կարսի նահանգի տարածք: Աղա Մահմադ խանի ավերիչ արշավանքից հետո, 1796թ. սկզբին Աղվանքում, Արցախում, Մյունիքում և Գանձակում առաջացած սաստիկ սովի հետևանքով բազմաթիվ հայեր և սակավաթիվ մահմեդականներ տեղափոխվեցին Վրաստան, Երևան, Կարս և այլ վայրեր, անգամ՝ Մագդոկ և Ղզլար:[55]

Ռուսների առաջխաղացումն իր հերթին խթան հանդիսացավ Փամբակի Շորագյալի և Բորչալուի մահմեդական բնակչության փախուստին՝ դեպի Կարսի և Երևանի խանության տարածքներ: Այդպիսի մեծ տեղաշարժ նկատվեց հատկապես Ցիցիանովի երևանյան արշավանքի ժամանակ:[56] Նեսվետաևի կողմից Արթիկը նվաճելու ժամանակ ևս բավականին մեծ թվով թաթարներ հեռացան Երևանի խանություն և Կարսի փաշայություն: 1806թ. ևս նկատվում է Երևանի խանության մահմեդականների արտագաղթ դեպի Կարս:[57] Եվ վերջապես 1826թ., երբ սկսվում է հերթական ռուսական արշավանքը դեպի Արևելյան Հայաստան: Շորագյալի գավառի գրեթե բոլոր մահմեդականները՝ այդ թվում և՛ թաթարները, և՛ քրդերը փախչում են սահմանակից թուրքական տարածքներ:[58] Երևանի քրդերի փախուստը դեպի թուրքահպատակ տարածքներ, մասնավորապես Կարսի նահանգ, տեղի է ունենում 1826թ. Միրաքի ճակատամարտից հետո:[59] Կարսի նահանգում, իսկ հատկապես սահմանամերձ Շորագյալի գավառում մահմեդականների, մասնավորապես պարսիկների թիվն աճում է 1827թ. ռուսների կողմից Երևանի բերդին տիրելուց հետո:[60] Ամենամեծ շարժը թերևս կարելի է

---

[54] Նույն տեղում, էջ 7:

[55] Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797թթ.), Աշխատասիրությամբ Ռ.Տ. Տիտանյանի, Ե., 1981, էջ 192:

[56] Дубровин Н., Закавказье от 1803-1806, СПб., 1866, с. 358. АКАК, т. 2, док. 1153. Նույն տեղում, док. 1810.

[57] АКАК, т. 3, док. 917.

[58] Присоединение Восточной Армении к России. Сборник документов. Т. 2, 1814-1830, Ереван, 1978, док. 133.

[59] Кавказский сборник, т. 23, Тифлис, 1902, Материалы к истории персидской войны 1826-1828, с. 182.

[60] Այդ մասին է վկայում անգլիացի ճանապարհորդ Վիլիամ Համիլտոնը, որը 1836թ. Կարսի նահանգ կատարած այցելության ժամանակ հանդիպել է Երևանից

համարել 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո տեղի ունեցած Երևանի քրդերի արտագաղթը դեպի Կարսի փաշայության տարածք:[61] Այս առումով, հատկապես քրդերի և կարափափախների մասին եղած տեղեկությունները պահանջում է լուրջ ճշգրտում և պայմանավորված է նրանց քոչվորական կյանքով. մի բան, սակայն, միանգամայն պարզ է ու հստակ՝ նրանք նահանգի բնակչության միայն չնչին մասն են կազմել: 1854թ. ռուսական տարածքներ են անցնում 1200 ընտանիք քրդեր:

Նահանգում կային նաև մասնավորապես Շորագյալի գավառում կային նաև կարափափախներ, որոնք հիմնականում գաղթել էին Բորչալուի գավառից:

Այսպիսով, պատմական աղբյուրները վկայում են, որ քննվող ժամանակաշրջանում թուրքական վարչակարգերի վարած հայատյաց քաղաքականության հետևանքով հայ բնակչությունը օրեցօր գնալով նվազում էր: Հայ բնակչության նվազման հիմնական պատճառն ընթացող պատերազմներն էին, որոնց ընթացքում հիմնականում տուժում էր քրիստոնյա ազգաբնակչությունը, ավերվում էին ծաղկուն շեներ, ռազմական գործողությունների ժամանակ գերեվարվում և կոտորվում էր հայ բնակչությունը: Եվ վերջապես, հայ բնակչությունը նվազում էր բռնագաղթերի և արտագաղթերի հետևանքով, որոնց չափերը գնալով ընդարձակվում էին: Պակաս դեր չէր խաղում ռուսական իշխանությունների վարած վերաբնակեցման քաղաքականությունը:

վերաբնակված մահմեդականների (Hamilton W. J., Researches Asia Minor, Pontus and Armenia..., vol 1, London, 1842, p. 205).

[61] История военных действий, ч 1, СПб., 1836. с. XXI.

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹԹ. ԸՍՏ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կ.Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը երեք վարդապետների՝ Գարեգին Սրվանձտյանցին, Մինաս Վահանյանին (Պարտիզակցի) և Արիստակես Տեր-Սարգսյանին (Դեվկանց) հանձնարարեց ուղևորվել Արևմտյան Հայաստան: Տարբեր ուղղություններով մեկնած վարդապետները հրահանգ էին ստացել կազմել Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգների բնակչության, եկեղեցիների, դպրոցների, հողային կալվածքների վիճակագրությունը, նկարագրել ժողովրդի կացությունը, ամոքել նրա վշտերը: Սրվանձտյանցի գործն առավել դժվար էր. նրան հանձնարարվեց երկրորդ անգամ ևս ուղևորվել Արևմտյան Հայաստան: Առաջին ուղևորությունն սկսվեց 1878թ. ապրիլի 30-ին: Նոր էր վերջացել ռուս-թուրքական պատերազմը, օդը դեռևս լի էր պատերազմական արհավիրքներով, պետական վերահսկողությունից դուրս ճանապարհներին վխտում էին զինված ավազակախմբերը: Ոտքով կամ ջորու կռնակին, խստաշունչ ցրտին և ամառվա տապին ու խորշակին, նա շրջում էր հայկական նահանգներում, կատարում պատրիարքի հանձնարարությունը, Կ.Պոլիս ուղարկում իր կազմած վիճակագրություններն ու հաշվետվությունները: Խանդավառված ռուսական զենքի հաղթանակով, Սրվանձտյանցը մեծ հույսեր էր կապում հայկական խնդրի բարեհաջող լուծման հետ: Կ.Պոլսի Ազգային ժողովի և Վարչության անդամներին անհրաժեշտ էին ստույգ տեղեկություններ Արևմտյան Հայաստանի իրավիճակի վերաբերյալ: Եվ հայրենասեր գործիչը կատարում էր իր առաքելությունը. «Երբեք պատճառ չունիմ դժգոհելու, վասնզի հոժարությամբ գնացի, հոժարությամբ շրջեցա, հոժարությամբ գործեցի: Ո՛չ երկրին անիշխանության օրերը, ...ո՛չ արևն ու անհանգիստ ուղիները և այլն, չկրցան վշտացնել զիս ... ասիական ուղևորի մը կրելիք ամենն ալ՝ կրեցի, բայց երբեք ցավ չզգացի, վասնզի սիրով գնացի...: Հայ եղողը Հայաստանի հողույն վրա ինքզինքը կճանաչե, ինքնզինքը վեհ ու կենդանի կգտնե, փորձեցեք և տեսեք»[1]:

Սրվանձտյանցի առաջին ուղևորության արդյունքը եղավ «Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ» աշխատության առաջին հատորը, որը ուղեգրության, հուշագրության, վիճակագրության և ժողովրդագրության ինքնատիպ համաձուլվածք է, Արևմտյան Հայաստանի այդ ժամանակաշրջանի հավաստի նկարագիրը, այդ պատճառով ունի եզակի

[1] Գ. Սրվանձտյանց, հ. II, Երևան, 1982թ., էջ 186-187:

արժեք· Առաջին հատորն ընդգրկում է Սամսոն, Պաֆրա, Սինոպ, Ամասիա, Չիլե, Թոքատ, Սեբաստիա (Սեբաստիա), Տյուրիկ, Գասման և Բենկա, Ակն, Արաբկիր և Մալաթիա քաղաքների, առաջնորդական թեմերի, հայաբնակ գյուղերի ժողովրդագրությունը, հայ և օտարազգի բնակչության թվաքանակը: Հայերինը տրվում է և ծուխերի քանակով (տունք հայոց) և բնակչության թվով: Դա մեզ հնարավորություն է տալիս որոշել յուրաքանչյուր ընտանիքի անդամների մոտավոր թիվը՝ 5-ից բարձր թիվ, տատանվում է 8-10-ի միջև: Որպես կանոն քաղաքների բնակչության մեծամասնությունը թուրքեր էին, որովհետև այնտեղ էին կենտրոնացված զորքը, ոստիկանությունը և պաշտոնեությունը: Գյուղերում գերակշռում էին հայերը՝ երկրագործները և արհեստավորները: Սամսոն քաղաքը Տրապիզոնի վիլայեթի միութեսարիֆություն էր, ուներ 760 շունչ հայ, 342 հույն և 3670 թուրք բնակիչ[2]: Փոքր Հայքում՝ Սինոպ, Մարզվան, Ամասիա, Չիլե քաղաքներում գերակշռողը թուրք բնակչությունն էր, իսկ գյուղերում՝ հայությունը: Սարզվանում կար 6496 հայ, 6874 թուրք՝, չնայած տարբերությունը մեծ չէր, սակայն հայաթափման գործընթացն սկսվել էր: Ամասիայում տարբերությունն ավելի մեծ էր՝ 5700 հայի դիմաց 9823 թուրք[4], իսկ Չիլեն դարձել էր թուրքական քաղաք, որտեղ 16688 թուրքի դիմաց կար ընդամենը 2012 հայ, որոնք կանգնած էին ծուլվելու վտանգի դիմաց:

Սեբաստիայի վիլայեթի Թոքատ քաղաքում կար 8819 հայ, 2600 հույն և հայ-հոռոմներ (այդպես էին կոչվում քաղկեդոնական հայերը), 906 հրեա և 10.500 թուրք[5]: Իսկ 19 գյուղերում կային 4093 հայ. գյուղեր կային, որ լրիվ հայաբնակ էին, 5 գյուղում թուրքերի թիվը կազմում էր 1025: Ստացվում էր, որ հայերի ընդհանուր թիվը կազմում էր 15.512 (հայ-հոռոմների հետ միասին), իսկ թուրքերինը՝ 11.525: Վիլայեթության կենտրոն Սեբաստիա քաղաքում 13.200 հայի դիմաց կար 18437 թուրք, գավառի 35 գյուղերում 13516 հայ և ընդամենը 4183 թուրք. կլորացված հաշվով 3:1 հարաբերություն հօգուտ հայերի[6]: Նույնիսկ երբ գումարում ենք վիլայեթի կենտրոնի բնակչության թվի հետ (13.200 +13.516 = 26716 հայ) և 18437 + 4185 = 22620 թուրք, հայ բնակչությունը 4000-ով շատ էր թուրքերից: Հետաքրքիր մի հանգամանք. Աալաթիայի մյութեսարիֆության մասին «Թորոս Աղբարի» I հատորում չի նշվում որևէ թիվ. միայն նկարագրություններ, հայաբնակ գյուղերի թվարկում, դարձյալ առանց բնակչության թվաքանակի: Գրականության և Արվեստի

[2] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. II, էջ 189:
[3] Նույն տեղում, էջ 199:
[4] Նույն տեղում, էջ 216:
[5] Նույն տեղում, էջ 229:
[6] Նույն տեղում, էջ 259-261:

թանգարանի Թորոս Ազատյանի ֆոնդում են գտնվում Գ. Սրվանձտյանցի ձեռքով գրված ընդարձակ հաշվետվությունները, որոնք մեծ տարբերություն ունեն «Թորոս աղբարի» I հատորից: Սյուրեսարիֆության մեջ Սրվանձտյանցը թվարկում է 5 վիճակ: *Մալաթիո վիճակը.* քաղաքն ուներ 28.000 բնակիչ, որից 20.000-ը՝ թուրք, 8.000-ը՝ հայ, 75 գյուղերն ունեին 15000 բնակիչ, որից 10.000-ը թուրք, 5000-ը՝ քուրդ: Սիակ վայրն է, որտեղ գյուղական բնակչության մեջ ընդհանրապես հայ չկա: *Աղճաքաղու վիճակը.* քաղաք չունի, 125 գյուղերի 25000 բնակիչներից 20.000-ը քուրդ են, 4000-ը՝ թուրք և 7 գյուղերի մեջ ընդամենը կար 1000 հայ: *Պեհեսնիյու վիճակը.* նույնանուն քաղաքն ուներ 15.000 բնակիչ, որից 13.000-ը թուրք, 2000-ը՝ հայ: Վիճակի 160 գյուղն ուներ 35000 բնակիչ, որից 30.000-ը քուրդ, 4.800-ը՝ թուրք և 5 գյուղերի մեջ միայն 200-ը՝ հայ: *Քյախթեյու վիճակը.* քաղաք չունի, 180 գյուղն ունի 40000 բնակիչ, որից 30000-ը՝ քուրդ, 7000-ը՝ թուրք և 3000-ը՝ հայ: Հայերն ապրում են 15 գյուղերի մեջ և ընդամենը մեկ եկեղեցի ունեն: Ընդգծելով այդ փաստը, Սրվանձտյանցը շեշտում է. որտեղ գործող եկեղեցի կա, նրա շուրջն ապրող ժողովուրդը պաշտպանում իր հայությունը, իսկ բացակա վայրերում՝ կորցնում: Շեշտվում է նաև մի այլ հանգամանք. նախկինում հայաբնակ բոլորն վայրերն էլ ունեցել են իրենց եկեղեցիներն ու վանքերը, որոնք կամ ավերվել են կամ վերածվել մզկիթի: *Ադիյամանի վիճակը.* բուն քաղաքի 10.000 բնակչից 7.000-ը թուրք է, 2500-ը՝ հայ և 500-ը՝ ասորի: Վիճակում գտնվող 110 գյուղերն ունեին 35.000 բնակիչ, որից 30000-ը՝ քուրդ, 4.500-ը՝ թուրք, 500-ը՝ հայ, առանց «եկեղեցու և վարժարանի»:

Դրությունը նույնն է նաև Սեբաստիայի վիլայեթի Տյուրիկ գայմագամությունում. «Թորոս աղբարի» I հատորում դարձյալ չի նշվում որևէ տվյալ: Տեղագրված են 13 հայաբնակ գյուղեր, գործող եկեղեցիների, վարժարանների և ուսանողների թվով (դա նշված է միայն 6 գյուղում): Գասման, Զմարա, Բենկա հայաբնակ մեծ գյուղերը ներկայացված են ավելի ճոխ, քան գայմագամության կենտրոն Տյուրիկը (Տիվրիկ): Բենկան մեկնաբանվում է իբրև Սեբեքերիմ արքայի իշխան Բենիկի կառուցած և նորոգած վայր, այդ պատճառով կրում է նրա անունը: Հայաբնակ այդ գյուղն ուներ երեք գործող եկեղեցի, երկու վարժարան՝ 180 աշակերտ-աշակերտուհիներով: Բենկայի մոտակայքում կային հինգ ավերված եկեղեցիներ: Սակայն չի նշված բնակչության թվաքանակը: Նույն փաստը բացակայում է նաև Ակն քաղաքին վերաբերող հոդվածում, ուր դրա փոխարեն տրված է քաղաքի, նրա մերձակա Ապուչեխ և Կամրկապ գյուղ-արվարձանների, եկեղեցիների ու վանքերի շքեղ նկարագրությունները: Կամրկապին մոտ է Կաշո գյուղը, որի բնակիչները հարյուր տարի առաջ «տաճկացյալ հայք» են, որոնց

տոհմերը կրում են հայ անուն և տաճկացել են «թրքաց բռնութենեն ազատվելու համար»[7]: Թուրքեր կան նաև հայկական բոլոր գյուղերում: Դրանց հայ բնակչությունն ապրում է պանդխտությամբ հայթայթած միջոցներով: Սրվանձտյանցը նկարագրում է այդ գյուղերի և Ակնի հայկական տները, ուր նույն սենյակում գրքերի՝ Սաղմոս և Նարեկ, հետ պահվում են վառոդ և գնդակ, «տնական անոթ և զարդուց զգեստ, հրացան և սուր միևնույն պատեն կախված»[8]: Սրվանձտյանցը նկատում է, որ քաղաքի և նրա շրջակա 4 գյուղերի աշակերտների թիվն է 762 տղա և 162 աղջիկ: (Չնայած այսօր մեր գյուղերն ավելի փոքրաթիվ աշակերտություն ունեն): Եւ քանի, որ ըստ Արվանձտյանցի, աշակերտներն էին որոշում բնակչության դիմագիծը, ապա սկսվել է հայության դիմախեղման գործընթացը: Ակնի շրջակայքում կային 4 գյուղեր՝ Ձորակ, Մուշեղկա, Վանք, Շրգու, որոնց բնակիչները հայ-հոռոմներ էին՝ «քաղկեդոնիկության ավարները» (Արվանձտյանցի դիպուկ արտահայտությունն է) որոնց «ընտանեկան և վարժարանի լեզուն հայերենն է», քահանաներն անգամ հունարեն չգիտեն, ուղղակի օտարները պառակտել են հայ եկեղեցին, որի մի մասում առաքելական հայերն են իրենց ծեսերը կատարում, մյուս մասում՝ քաղկեդոնականները: Ակնի շրջակայքում թվարկվում է 21 գյուղերի հայկական անուններ, որոնց բնակիչները «տաճկացյալ հայք » լինելով պահպանել են հայկական անվանումներ՝ Փակեր, Արգո, Ագրակ, Ապրանք, Աղվորիկ, Սերկևիլ, Հողդուր, Արտոս, Բազմաշեն, Փշատի և այլն:

Թվական տվյալներ չկան նաև Արաբկիրի և նրա շրջակա 15 հայկական գյուղերի մասին: Թվերը վերաբերում են միայն քաղաքում և գյուղերում գործող հայկական եկեղեցիներին, վարժարաններին, սովորող երեխաներին (մանկունք և աղջկունք): Այդ թվերի հետ միասին նշվում է, որ չնայած դրանք Արաբկիրի առաջնորդության թեմն են, սակայն նրանցից տասը ենթակա է Ակնի գայմագամության, որտեղ էլ նստում է մյուդիրը: Փաստելով, որ այդ գյուղերը 5-6 ժամ հեռու են Արաբկիրից, Սրվանձտյանցը նկատում է, որ այդ հանգամանքը հոգևոր առաջնորդի համար ստեղծում է մեծ դժվարություններ և առաջարկում է վարչական բաժանումներին համապատասխան ստեղծել հոգևոր վիճակները: Դրանով ավարտվում է «Թորոս աղբարի» I հատորը, առաջին ուղևորության հաշվետվությունները:

1879թ. ապրիլի 26-ին սկսվում է Արվանձտյանցի երկորդ ուղևորությունը, որը հետապնդում էր մի քանի նպատակներ՝ 1878թ. հունիսին կայացած Բեռլինի վեհաժողովը պարզություն մտցրեց բազմաթիվ հարցերում: Ռուսաստանի կողմից ազատագրված

[7] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. II. էջ 279:
[8] Նույն տեղում, էջ 280:

տարածքների մեծ մասը վերադարձվեց պարտված Թուրքիային: Դրանց մեջ ամենակարևորը Բարձր Հայքի կենտրոնն էր: Կարնո նահանգի կամ Էրզրումի վիլայեթի հայության հոծ զանգվածը ոտքի կանգնեց Արևելյան Հայաստան գաղթելու համար: Այդ հանգամանքն ուներ փոքր ինչ դրական, բայց մեծ չափով բացասական կողմեր. դրական էր, որ Արևելյան Հայաստանը դառնում էր հայության կոնսոլիդացման վայրը, առավել բացասական էր, որովհետև հայաթափ էր լինելու Արևմտյան Հայաստանի ամենահոծ հայաբնակ նահանգը, որը հաճախ անվանում էին էրմենիստան վիլայեթ: Նահանգի հայության գաղթը կանխելու և արգելակելու համար պատրիարք Ն. Վարժապետյանը այնտեղ ուղարկեց դեռ 60-ականներից տեղում մեծ ժողովրդականություն վայելող Գարեգին Սրվանձտյանցին, որի խոսքի ուժն ու ազդեցությունը մեծ էր Կարնո հայության վրա: Դրանից բացի, Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածն իբր գործադրելու նպատակով սուլթանական կառավարությունը որոշել էր կոմիսերներ ուղարկել հայաբնակ վայրերը՝ հայության իրական կացությունը պարզելու և նրանց «չերքեզներից ու քրդերից» պաշտպանելու համար: Կոմիսերներն էին Յուսուֆ փաշան և Աբեդին բեյը. ամեն մի կոմիսերի ուղեկցում էր մի հայ՝ Ազգային ժողովի անդամներ Աղաբեկյան Սարգիս էֆենդին և Խորաճանյան Մանաս էֆենդին: Վերջինիս հետ շրջագայում էր պատրիարքի վստահությունը վայելող Սրվանձտյանցը, որին հատուկ կոնդակ էր տրվել, որ ուղարկվում էր «հայրենիքնին թողնելու դիտումներ» ունեցողներին այդ «նպատակեն հետ կեցնելու և իրենց հայրենյաց մեջ մնալու համար խրատելու և հորդորելու պաշտոնով»[9]: Արևմտյան Հայաստանի այդ գավառների և նահանգների նկարագրությունն ու ժողովրդագրությունը կազմում են «Թորոս աղբարի» II հատորի նյութերը: II հատորը լույս տեսավ 1884թ., ճանապարհորդությունից հինգ տարի անց, որի համար հեղինակը ներում է հայցում, մատնանշելով, որ «ուրեք ուրեք խոտորել է իր ընթացքը և Թորոս աղբոր երգերն ալ իրենց եղանակը փոխած լինին»[10]. Դա թափանցիկ ակնարկ էր այն մասին, որ հեղինակը ենթարկվել է գրաքննության և հաճախ կարող է խոսել լոկ ակնարկներով: Սրվանձտյանցի ճանապարհը Տրապիզոնից անցնելու էր Կյումուշհանե, Երզնկա, Կամախ, ապա Խարբերդ: Վերը նշված վայրերը նա սոսկ նկարագրում է, իսկ հիմնական նպատակակետը Խարբերդի վիլայեթն էր և նրա առաջնորդության թեմերը: II հատորի ցուցակներում հեղինակը ոչ մի վայրի հայերի թվաքանակ չի նշում, այլ բավարարվում է հայ ընտանիքների թվով՝ տունք հայոց: Այս հատորում Սրվանձտյանցը նշում է հայության դիմախեղման մի երևույթ՝ եվրոպական երկրների գործակալների «շնորհիվ» տեղի հայերը «եղած կան բողոքական,

[9] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. II, էջ 336:
[10] Նույն տեղում, էջ 324:

կաթոլիկ, լատին, դարձյալ հայ. հայ և վերստին բողոքական: ...Լատինք ունին փաթերաներ, կաթոլիկն ունի գերապայծառ, բողոքականք ունին միսիոնարներ: Այս վերջինները շատ են և զորավոր»[11]: Այդ բոլորի համար Սրվանձտյանցը մեղադրանքի իր խոսքն է ուղղում հոգևոր այն առաջնորդներին, որոնք «նախատինք են հայ կղերականության»: Հյուսեյնիկ գյուղից սկսվում է հայերի ծուխերի թվարկումը. գյուղ, որն ուներ 418 հայկական օջախ: Խարբերդի 62 հայաբնակ գյուղերում կային 5052 հայ ընտանիքներ: Եթե դա բազմապատկենք ամենափոքր թվաքանակով՝ 8-ով կստացվի 40000-ից ավելի հայ: Այդ 62 գյուղերից միայն Ինանը և Վարի Խոխը չունեին եկեղեցի[12], մնացածն ունեին գործող եկեղեցիներ, որոնց շուրջը համախմբված էր ժողովուրդը: Խարբերդից հեղինակն անցնում է Չմշկածագ, որի տվյալները ևս բավարարվում են հայկական ընտանիքների թվաքանակով: Սակայն ԳԱԹ-ի Թորոս Ազատյանի ֆոնդի իմ հայտնաբերած նյութերի մեջ գտնվում է մանրամասն վիճակագրություն: Հաշվարկներ կատարելուց հետո պատկերը հետևյալն էր. քաղաքում գերակշռողը թուրքական տարրն էր. 1728 հայի դիմաց (առաքելական և բողոքական) կար 4800 թուրք: Իսկ 24 գյուղերում 4958 հայի դիմաց՝ ընդամենը 1327 թուրք[13]: Երբ գումարում ենք քաղաքի և գյուղերի բնակչության թիվն ըստ ազգերի, գերակշռում են հայերը (4800+1327=6127 թուրք, 1728+4958=6686 հայ): Չարսանջակը Խարբերդի նահանգի գայգամությունն էր, կենտրոնը՝ Փերին գյուղաքաղաքը, առաջին դեպքն էր, երբ կենտրոնում գերակշռում էր հայերի քանակը, 2565 հայի դիմաց տեղում ապրում էին 306 թուրք: Սակայն Չարսանջակի պեյերը այնպիսի ծանր կացություն էին ստեղծել տեղի հայության համար,որ նրանք դատի էին տվել պեյերին: Թուրքական դատարանի քաշքշուկները հուսահատության եզրին էին հասցրել տեղի հայությանը և նրանք Կ. Պոլսի պատրիարքարանին ու Ազգային վարչությանն սպառնում էին անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկելու դեպքում գաղթել ողջ համայնքով. «Այժմ տասնապատիկ ծանրացած է մեր դատն ու զրկանքն, մեր կնիկներն ու աղջիկները մերը չեն, էլմաքի տուրքը մենք կուտանք, հողն աղայինն է, եզն ու քրտինքը մեր, արդյունքն աղայինն է: Աշխարհիս երեսը թռչունն ու մրջյունն իրենց բույն մը ունին, Չարսանջակցի ժողովուրդն տուն ու հող չունի... Ալ մեր ինչուն համար է պատրիարք, ինչու՞ առաջնորդ, ինչու՞ համար էկեր ես դու հոս...»[14]: Արվանձտյանցին մեծ դժվարությամբ հաջողվում է ժողովրդին ետ կանգնեցնել գաղթելու գաղափարից և ինչ-որ քայլեր ձեռնարկել նրանց գործին ի նպաստ: «Թորոս աղբարում» Չարսանջակին նվիրված

[11] Նույն տեղում, էջ 357:
[12] Նույն տեղում, էջ 373-374:
[13] Նույն տեղում, էջ 525-526:
[14] Նույն տեղում, էջ 387:

հատվածում վիճակագրության մեջ բացակայում է բնակչության թվաքանակը և համեմատությունը այլ ազգերի հետ: Զգացվում է գրաքննության ձեռքը: Մակայն ԳԱԹ-ի Թորոս Ազատյանի ֆոնդի III բաժնի գործերի մեջ ես հայտնաբերեցի և հրատարակեցի պատրիարքարանին ուղղված Սրվանձտյանցի տեղեկագրերը, որոնք անհամեմատ ընդարձակ են. նշված է ոչ միայն տունք հայոց, այլև թիվ հայոց, թիվ այլ ազգաց: Թեմ Ա-ում նշված Փերին գյուղաքաղաքից բացի 46 գյուղերում կային 8961 հայեր, ընդամենը 814 թուրք, 224 գզըլպաշ և 10 ասորի, ըստ որում, կային գյուղեր, որտեղ հայ ընտանիքների անդամների թիվը անցնում էր 10-ից: Այսպես, Պասու գյուղն ուներ 25 հայկական տուն, իսկ անդամների կամ շնչերի քանակը 280 էր, կամ Կյոնթեփե գյուղի հայ տների թիվը 40 էր, իսկ շնչերի քանակը 520. բազմաթիվ էին նման գյուղերը: Չարսանջակի Բ և Գ թեմերը (II և III) Մեծկերտի և Խոզաթի գայմագամություններն էին երզնկայի մյութեսարիֆության ներքո, որը պատկանում էր էրզրումի վիլայեթին: Այդ հանգամանքը դժվարություններ էր ստեղծում տեղի հոգևոր առաջնորդի համար, որը թուրք պաշտոնեության հետ հարաբերություն հաստատելու համար գտնվում էր անելանելի վիճակում: Նման թնջուկները շատ էին, այդ պատճառով էլ Մրվանձտյանցը համապատասխան առաջարկություններ էր անում պատրիարքարանին, գտնելով, որ հոգևոր կենտրոնները պետք է համընկնեն պետական վարչական կենտրոնների հետ, որպեսզի տեղերի հոգևոր առաջնորդները կարողանային ժողովրդին հուզող հարցերը լուծելու համար հեշտությամբ հանդիպել թուրք պաշտոնյաների հետ: *Մեծկերտի* թեմի՝ ավանի և 13 գյուղերի հայության թվաքանակն էր 1944, թուրքերինը՝ 270, գըզլպաշներինը՝ 576: Իսկ *Խոզաթի* թեմում գերակշռողը գըզլպաշներն էին: Ավանում և 10 գյուղերում ապրում էին 835 հայ և 1019 գըզլպաշ, թուրքեր չկային:

Խարբերդի վիլայեթի Արդնի Մատենի մյութեսարիֆության ներքո էր Բալու քաղաքը, որի վիճակագրությունը ևս «Թորոս աղբարի» II-ում տրված է շատ համառոտ. ընդարձակ տարբերակը պահպանվում է դարձյալ ԳԱԹ-ի Թ. Ազատյանի ֆոնդում, որը մենք զետեղեցինք Սրվանձտյանցի երկերի II հատորում: 3508 հայի դիմաց Բալուում ապրում էին 3564 թուրք, սակայն թեմի 45 գյուղերում ապրում էին 12715 հայ, 86 թուրք աղա, 212 քուրդ, զազա՝ 291 (212+291=503): Չնայած իրենց փոքր թվին, թուրք աղաներն ու քուրդ պեյերը թափուով սեփականել էին ամբողջ վիճակի հողերը. «Հարյուրեն մեկը հազիվ կա հայոց ձեռքը, զորս կտոր կտոր գնած են: Գեղացի ժողովուրդը աղաներու և պեյերու մարապաններ են. Բալվա մարապայության պայմանն է՝ եզ, գործիք, սերմ, աշխատությունը ժողովրդենեն, միայն հողը աղայինն է. բերքի տասանորդը (կառավարությանը) տալեն ետքը մնացյալեն հինգեն մեկը աղան կառնու»: Ահա ինչ վիճակի մեջ է մեծամասնությունն կազմող հայությունը: Սրվանձտյանցի պարտականությունն էր տալ նաև

Տիգրանակերտի վիլայեթի վիճակագրությունը: Հետաքրքիր է բազմադարյան այդ քաղաքի ժողովրդագրական պատկերը: «Զարմանալի քաղաք է Տիգրանակերտը, ուր կտեսնվին ասիական զանազան ցեղեր և բարբառներ. թուրք, արաբ, ասորի, քուրդ, եզդի, զազա, հույն, հայ, քիլտանի. բազմազան են նաև ի կրոնս. մահմեդականություն իր բաժանմամբ և քրիստոնեություն յուր տեսակներով: Հայք ըստ Հայաստանեայց եկեղեցվո, հայք՝ պապական և պապականք՝ հասունյան և անտի հասունյան՝ լատինականք. հայք բողոքական և բողոքականք՝ երիցական և եպիսկոպոսական, հայ-հոռոմք: Ասորիք՝ ըստ նախնի եկեղեցվո, ասորիք՝ պապական և բողոքական. բոլորը բնիկ են և ունեն առանձին եկեղեցականներ և եկեղեցիներ... բայց հայոց առաջնորդն ամենեն բարձր և գործոն դիրքն ունի իբրև առավելագույն ժողովուրդ ունեցող: ...Բոլոր քրիստոնյա տարրը հայերեն կը խոսին և զիրենք հայ կանվանեն՝ ասորի հայ, քիլտանի հայ, էրմանի հայ և այլն»[15]: Տիգրանակերտի վիլայեթի կարևոր մյութեսարիֆությունն է համարվում Աղերդը, որին «պատկանում էր պատմական Ասունը և գրեթե այն լեռնագավառաց մեծ մասն»: Հետագայում, նոր վարչական բաժանմամբ այդ վայրերն անցան Բաղեշի կամ Բիթլիսի վիլայեթին: Տիգրանակերտի առաջնորդական վիճակը բաղկացած էր 10 գավառից և գավառակներից և ինչպես վիլայեթի կենտրոնում, թեմերում ևս ապրում էին տարբեր ցեղեր ու ժողովուրդներ. թվով գերակշռող հայերի հետ անընդհատ նշվում է քուրդ և ասորի: Միայն Լըճե գավառում հայերից առաջ նշվում է թուրք, քուրդ, ասորի, նոր միայն հայ: Տիգրանակերտի 10 հայկական թեմերի հայ տների քանակը մոտավոր հաշիվներով նշվում է «5000 տունք հայոց»: Այլազգիների թվի նշում չկա համեմատություն անցկացնելու և հարաբերությունը ճշտելու համար:

Հետաքրքիր է մի հանգամանք. չնայած Սրվանձտյանցը հատուկ հանձնարարությամբ էր մեկնել Կարին, բայց «Թորոս աղբարի» ոչ մի հատորում չկա այդ հայահոծ նահանգի մասին ոչ մի տող: Որոնումները մեզ դարձյալ արխիվ տարան: 1973թ. Գրականության և Արվեստի թանգարանը համալրվեց Կ. Պոլսից ուղարկված նոր նյութերով, որոնց մեծ մասը Արվանձտյանցի ձեռագրերներն էին և մեր որոնած՝ Կարինի նահանգի ժողովրդագրական պատկերը: Այստեղ առանձին նշված են Բասենի, Դերջանի, Քեմախի, Բայազետի և Ալաշկերտի, Սպերի և Կիսկիմի, ապա էրզրումի և թեմի վիճակագրությունները: Մի առանձին զեկուցման թեմա կարող է լինել, եթե մենք փորձենք համեմատել Աշոտ Մելքոնյանի «էրզրում» աշխատության ժողովրդագրական փաստերը, որոնք վերաբերում են 19-րդ դարի 20-30-ական թվականներին, Գարեգին Սրվանձտյանցի՝ 1878թ. պատրիարքարան ուղարկած տվյալների հետ:

[15] Նույն տեղում, էջ 431:

Նախ՝ էրզրում քաղաքի և նրա գավառի բնակչության թվաքանակը. Մելքոնյանը վկայակոչում է տարբեր օտար աղբյուրներ, բազմաթիվ թվեր համադրում իրար և կանգնում 110.000-ի վրա[16]: Արվանձտյանցի նշած թիվը անհամեմատ տարբեր է. 20.000 թուրք, 14.000 հայ, 350 հույն և 100 պարսիկ, այսինքն՝ 34.500 մարդ[17]: Ես չեմ կարող կասկածել Արվանձտյանցի հաղորդած տվյալների վրա, որովհետև էրզրում-Կարինում նա գործունեություն էր ծավալել դեռևս 1860-ական թվականներին. ի՞նչն էր պատճառը. ռուս-թուրքական պատերազմից հետո սկսված մեծ գա՞ղթը. այդ առեղծվածը արժե պարզել: Էրզրումի լիվայի գյուղերի մասին խոսելիս, Ա. Մելքոնյանը նշում է երկու խոշոր Նահիեներ (գյուղախմբեր), որոնցից մեկի վարչական կենտրոնը Իլիջայ, մյուսինը Աշկալա նշանավոր գյուղերն էին[18]: Արվանձտյանցի ցուցակում դրանք արդեն վարչական կենտրոններ չէին և ունեին խիստ նվազ հայ բնակչություն: Իլիջայն ուներ 40 հայ տուն կամ երդ՝ 380 շնչով, 140 թուրք: Իսկ Աշկալան (Աշխալա) նվազել էր, ուներ 8 հայ տուն 70 շնչով և 900 թուրք բնակիչ. թուրքացման գործընթացն ակնհայտ է: Բայց կան նաև սփոփիչ տվյալներ. Իլիջայի նահիեի խոշոր *Կանի* գյուղը Արվանձտյանցի տվյալներով ևս պահպանվել էր, միայն եթե Մելքոնյանի մոտ (20-30-ական թթ.) գյուղում կար 2500 հայ բնակիչ, ապա Արվանձտյանցի մոտ նշվում էր 2060-ը և լիվայի այն եզակի գյուղերից էր, որ չուներ ոչ մի թուրք բնակիչ: Կանից հյուսիս ընկած հայկական Սովուք Ջերմուկ (Սառը Ջերմուկ), Շխնոց, Սուտուրկա գյուղերը, 19-րդ դարի առաջին երեսնամյակին նշվում էին առհասարակ «յազգես հայոց»[19], իսկ Արվանձտյանցի տվյալներով համապատասխանաբար 400, 300 և 700 հայ բնակիչներ ունեին, որտեղ արդեն մուտք էին գործել թուրքերը՝ 70, 300 և 30 թվաքանակով: Կռճկնոց գյուղը առաջին երեսնամյակում, իսկ Քոսյանի «Բարձր Հայք» աշխատության տվյալներով նաև 80-ականներին ուներ 150 տուն հայ, իսկ Արվանձտյանցը նշում է 18 տուն-210 հայ և 49 թուրք: Մելքոնյանի աշխատության մեջ թվարկած համարյա բոլոր գյուղերը կան Արվանձտյանցի մոտ՝ Գեղախոռ, Գրիչք, Ումուդում, Երկնիստ, Խաչկավանք, Պատիշեն, Օձնի կամ Ոզնի և բազմաթիվ այլ գյուղեր, թվով 47. չնայած ժամանակի մեծ տարբերությանը (առնվազն կես դար) էրզրում քաղաքից բացի, գյուղական հայ բնակչությունը գերազանցում է թուրքերին: Նման համեմատություն կարող ենք անցկացնել Դերջանի գավառի բոլոր գյուղերի՝ երկու հեղինակների

---

[16] Մելքոնյան Ա., էրզրում, ազգային կազմը, հայերի տեղաբաշխումը, մեծ գաղթը, Երևան, 1994թ. էջ 40:
[17] Գ. Արվանձտյանց, Երկեր, հ. 2, էջ 510:
[18] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 46-47:
[19] Նույն տեղում, էջ 45:

բերած տվյալների միջև[20]: Սրվանձտյանցը գրում է, որ գավառի ամենամեծ գյուղը Բեգեռիչն է, որի 100 տունը ունի 1050 հայ բնակիչ, բայց գգալի է նաև թուրքերի թիվը՝ 600: Մելքոնյանի տվյալներով ամենախիտ հայկական բնակչություն ունեցող Կարագուլակ կամ Քարագուլակ գյուղը Արվանձտյանցի տվյալներով նշվում է իբրև 17 տուն-200 հայ և 700 թուրք բնակիչ ունեցող գյուղ: Նշելով գավառի թուրքաբնակ գյուղերը, Սրվանձտյանցը նրանց ընդհանուր թվաքանակը նշում է 12.000 հայ և նույնքան թուրք, 6000 քուրդ, 400 հույն: Մեծ տարբերություններ կան նաև Սպեր և Կիսկիմ գավառների երկու հեղինակների բերած տվյալների միջև: Եթե առաջին երեսնամյակին Սպերն ուներ 900 տուն հայ կամ մոտ 5000-6000 շունչ, ապա 70-ականների վերջին մնացել էր 25 տուն՝ 230 շունչ հայ և 300 թուրք: Առաջին երեսնամյակին ամենամեծ գյուղը Հունուտն էր, ապա 80-ականների սկզբին ամենամեծ գյուղը Կարմիրքն էր՝ 1200 շունչ հայերով և ոչ մի թուրք: Գավառի բնակչությունը բաղկացած էր. Ապերում՝ 10.000 թուրք, 2000 լազ, 3000 հայ, Կիսկիմում՝ 5000 թուրք, 8350 հայ, 90 հույն[21]: Բայազետի և Ալաշկերտի ընդհանուր թվաքանակը իր խոշոր հայկական գյուղերով դարասկզբին ուներ խիստ ընդգծված հայկական դիմագիծ, իսկ 80-ականների սկզբին լիովին փոխվել էր ժողովրդագրական պատկերը: Երկու գավառների հայերի թվաքանակը Սրվանձտյանցը նշում է. 13.000 հայ, 20.000 քուրդ, 30.000 եզիդի, 1000 թուրք[22]: Այդ երկու գավառներում կային ավերված 137 եկեղեցի: Ահա թե որն էր ազգային դիմախեղման պատճառը: Բասենի գավառի Հասան-Կալա քաղաքատիպ ամրոցը դարասկզբին ուներ 10-11.000 շունչ, գերակշռողը հայ բնակչությունն էր, իսկ 70-ականների վերջին 130 հայի դիմաց կար 2000 թուրք: Փաստորեն պակասել էր ողջ բնակչության թիվը, որը ոչ թե ազգային գործոնի արտահայտություն էր, այլ նաև տնտեսական: Սակայն ողջ գավառի համեմատությունն անգամ ցույց է տալիս հայերի մեծ թվաքանակ. 10.000 թուրք, 6000 քուրդ, 1000 չերքեզ, դրանց դիմաց 18.000 հայ և 200 հույն, նույնիսկ բոլոր մահմեդականներին գումարելու դեպքում, գավառում գերակշռում են հայերը: Եթե այդպես մանրամասն թվարկենք էրզրումի գավառները, կտեսնենք, որ Արվանձտյանցի տվյալներով, անգամ 80-ականների սկզբին ողջ նահանգում հարաբերական մեծամասնությունը կազմում էին հայերը:

---

[20] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 51, Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 2, էջ 485-487:
[21] Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ. 2, էջ 509:
[22] Նույն տեղում, էջ 503:

ԳՈՀԱՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ (ՆԱՀԱՆԳԻ) ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ

XIX դ. առաջին 30-ամյակի ընթացքում՝ ռուս-պարսկական և ռուս-թուրքական երկարատև պատերազմից հետո, Անդրկովկասը միացվեց Ռուսաստանին, որը շրջադարձային նշանակություն ունեցավ տեղի ժողովուրդների տնտեսական կյանքի, մշակույթի և այլ զարգացումների առումով: 1833թ. ստեղծվեց «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտե», որը պետք է զբաղվեր սույն տարածաշրջանի բարեփոխումների ծրագրեր մշակելով և իրականացնելով[1]: Ելնելով ցարիզմի վարած գաղութային քաղաքականությունից, հատկապես վարչատարածքային օրենսդրությունը կիրառելիս անտեսվում էին տեղի բնակչության ազգային առանձնահատկությունները և շահերը, որից առաջին հերթին տուժում էր երկրամասով մեկ ցրված հայությունը. 1840թ. օրենքով Հայաստանին «Արևելից կողմանց» հայաշատ Գանձակը զետեղել էր Թիֆլիսի նահանգի, իսկ Արցախ-Ղարաբաղը՝ Կասպիական մարզի մեջ:

Նշանավոր էր 1867թ. դեկտեմբերի 9-ի օրենքը, ըստ որի ձևավորվեց նաև Ելիզավետպոլի՝ նոր նահանգի, որի մեջ ընդգրկվեցին ութ գավառներ՝ Ելիզավետպոլի, Արեշի, Ղազախի, Շուշիի, Նուխիի, Զանգեզուրի, Զեբրաիլի, Զհանշիրի՝ Գանձակ-Ելիզավետպոլ կենտրոնով: 1815-1825 թթ. այդ քաղաքն ուներ 1500 ծուխ՝ 6500-7000 մարդ: Իսկ 1865թ. այնտեղ կար 7948 հայ և ընդամենը 15081 մարդ. 1825-1865 թթ. ընթացքում այդ թիվը ավելի քան կրկնապատկվել էր նույնանուն գավառում, նույն 1865թ.՝ 75098 մարդ[2]. համեմատաբար մեծամասնություն էին կազմում հայերը: Անդրկովկասն, այդ թվում նաև Ելիզավետպոլի նահանգը, դեռևս վաղ ժամանակներից աչքի էր ընկնում ազգաբնակչության խայտաբղետ կազմով, որին նպաստել է երկրամասի աշխարհագրական հարմար դիրքը. արևելքը՝ արևմուտքին միացնող կարճ ճանապարհը:

Ելիզավետպոլի գավառի, նահանգի տեղաբնիկ հնագույն ազգությունն էր հայությունը, որի հիմնական բնօրրաններն էին պատմական Հայաստանի՝ Սյունիք, Արցախ, Ուտիք-Գարդմանք, Օար-Զանգեզուր և հարակից այլ տարածքներ ևս:

XVIII-XIX դարերի սահմանագլխին Արևելյան Հայաստանի և հարակից երկրների տարածաշրջանում իշխող անբարենպաստ քաղաքական պայմանների ու հարատև պատերազմների հետևանքով

---

[1] Иваненко В., Гражданское управления Закавказьем, Тифлис, 1901, с. 341.
[2] "Сборник статистических сведений о Кавказе", т. I, 1869, отя. IV, 22, 74-75.

ստեղծված անտանելի իրավիճակների պատճառով, հերթական անգամ տեղի ունեցավ հայության զանգվածային արտագաղթ: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում մեծ թվով հայեր տարագրվեցին Վրաստան. Գյանջայի և Ղարաբաղի խանություններից հայերը գաղթեցին Կախեթիա, Սոմխեթիա և Քարթլի, որոնք արդեն Ռուսաստանի տիրապետության տակ էին: Այդ ընթացքում Ղարաբաղում եղած 10000 ընտանիք-ծխերից մնացել էր 3080-ը[3], իսկ մեկ այլ վկայությամբ՝ նրանց թվաքանակը, 30 տարվա (1783-1812) ընթացքում պակասել էր մոտ 6 անգամ՝ 30000-ից մնացել էր 5000 ընտանիք[4]: Ռուսական կայսրության տարբեր վայրերում, այդ թվում նաև Կովկասում հիմնվեցին հայկական բազմաթիվ բնակավայրեր և «Ռուսաստանի հարավային ազատ, խոպան, անբնակ վայրերը՝ աշխատասեր, գործունյա հայերի ջանքերով կյանքի էին կոչվում»[5]:

Բարենպաստ պայմանների դեպքում կատարվում էր ներգաղթի պրոցեսը. հայության տեղաշարժերը տեղի էին ունենում ըստ իրավիճակների. երկրից հեռացած մելիքներից ոմանք ետ վարադարձան և հիմնեցին նոր բնակավայրեր՝ Մեծ Շեն, Մոխրաթաղ և այլ գյուղեր՝ Զրաբերդում: Լոռի գավառում հիմնավորված Մելիք-Զումշուդ Շահնազարյանի միջամտությամբ նախկին շատ բնակիչներ վերադարձան Ղարաբաղ. ոմանք էլ չվերադարձան... 1826-28 ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին Վրաստանի կազմում (ըստ Ալ. Երիցյանցի) «... սկսած Գանձակից և նրա շրջակայքից, մինչև Իմերեթի սահմանը 1821թ. եղել է մոտ 34.000 տուն քրիստոնյա, որոնք բնակվելիս են եղել 6 քաղաքներում և 975 գյուղերում»... Ըստ այդ տվյալների Վրաստանի քրիստոնյա բնակչության 1/3-ը հայեր էին, իսկ «վրացիք՝ պակաս քան 2/3-ը: Հայք վերոհիշյալ վեց քաղաքներում (Թիֆլիս, Գորի, Անանուր, Թելավ, Սղնախ, Ելիզավետպոլ) ամենաբազմաթիվ տարրն էր... ութ քաղաքացիներից 7-ը՝ հայ էր և մեկը՝ վրացի, իսկ չորս գյուղացիներից երեքը՝ վրացի, մեկը՝ հայ...»[6]:

1820-25 թթ. տվյալներով Ղարաբաղի երկրամասում կար 18.500 ընտանիք, մոտ 90.000 երկսեռ մարդ, որի 1/3-ը հայ էր և 1/7-ը՝ մահմեդական:

1826-1829 թթ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հաղթական ելքերով, տեղի ունեցած պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթով էլ ավելի մեծացավ կովկասահայության

---

[3] "Собрание актов относящихся к обозрению истории армянского народа", ч. II, с. 223.

[4] Тунян В., Карабахский конфликт, Ер., 1999, с. 5.

[5] "Сборник актов относящихся...", ч. II, с. 296.

[6] Երիցյանց Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում (1800-1832), մաս Ա, Թիֆլիս, էջ 139:

թվաքանակը: 1850-ական թվականներին Անդրկովկասում հայերի թիվը կազմում էր 400.000[7]:

XIX դ. ընթացքում այս երկրամասում հաշվվում էր մոտ 1200 հայկական բնակավայր (ներառյալ Երևանի նահանգը և Կարսի մարզը), որից մոտ 90-ը՝ խառը բնակչությամբ: Հայության ցրված նման իրավիճակը, բնական է բացասաբար էր ազդում նրա ճակատագրի ընդհանուր իրավիճակի վրա... ջլատվում էր ժողովրդի ազգային միասնությունը և թուլանում՝ պաշտպանվածությունը. փոշիանում էին ազգի ունեցվածքը և եկամուտները... Ակայն, դրա փոխարեն, հայերի առկայությունն որևէ վայրում խրախուսվել ու հովանավորվել է, քանի որ հայ գործարար առևտրա-արդյունաբերողների ու մասնագետների երկկողմանի գործառությունները շահավետ ու ձեռնտու են եղել: Մեծ էր շուշեցի և գանձակեցի հայ նման գործարարների դերը, որի գործունեության շրջանակներն ընդգրկում էին Ռուսաստանի և արտասահմանյան երկրների առևտրա-արդյունաբերական ոլորտները և այնտեղի բանկերում ունեին շոշափելի դրամագլուխներ:

1886-87 թթ. Ելիզավետպոլի նահանգի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 728.251 երկսեռ մարդ[8], որում մեծաթիվ էին նաև հայերը՝ հատկապես Շուշիի, Զանգեզուրի և Գանձակի գավառներում:

Հնագույն բնակիչներից էին ուտիները, որոնք XIX դ. ընթացքում ապրում էին Ելիզավետպոլի Նուխի գավառի Վարդաշեն և Նիջ (Նիժ) բնակվայրերում: Ուտիներն իրենց հայեր էին անվանում, խոսում էին ուտերեն լեզվով, գրում էին հայերեն տառերով. մեծ մասամբ լուսավորչական քրիստոնյաներ էին, կրում էին հայկական անուններ ու ազգանուններ: Եվ ավելի քան 20 դար գոյատևելուց հետո, XIX դ. վերջում և XX-ի սկզբում ծուլվելով հայերին, վերացան:

Օագումով հայեր էին այրումները, որոնք XIX դ. կային նաև Պարսկաստանի Մակու, Խոյ, Սալմաստ ու Արևելյան Հայաստանի Արագածոտն և Արևելից կողմանց՝ Գարդմանք-Ռուտիք գավառներում: Գանձակի լեռնակողմը, նրանց անունով կոչվում էր «Այրումլու» և այլն... նրանք մահմեդականացվել էին և վիճակագրական նրանց տվյալները տրվում էին թուրք-թաթարների հետ միասին:

Ուշ միջնադարից սկսած, հյուսիս և հարավ-արևելքից Անդրկովկաս ներթափանցեցին թուրք-թաթարական խառնիճաղանջ քոչվոր ցեղախմբեր, որոնք ուժով գրավում էին տեղաբնիկների տարածքները և հաստատվում այնտեղ: XVIII-XIX դդ. նաև Ղարաբաղի հայ մելիքների միջև ծագած անհամաձայնություններից օգտվեցին նրանց ցեղապետերը և հանձինս Փանահ խանի ու նրա հետնորդների (որոնք հովանավորվում էին նաև Ռուսաստանի կառավարության կողմից) օրոք, նրանց ջանքերով

[7] "Кавказ", 1854, N 80-91 (Дюлорье, "Армяне").

[8] "Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа", Тифлис, 1888. с. I.

Հայաստանի «Արևելաց կողմանց» տարածքները՝ հատկապես Ղարաբաղը, լցվեց թուրք-թաթարական բազմաթիվ ցեղախմբերով. նրանք իսլամի միավորող ազդեցությամբ՝ իրենց անվանում էին մահմեդականներ. դա ուներ ոչ միայն հավատքի, այլ նաև ազգային պատկանելիության հավաքական նշանակություն: Պարսկական ծագում ունեցող մահմեդականներ էին թաթերը, թալիշները, որոնց մի մասը բնակվում էր Զանգեզուր գավառի հարավում Լեկվազի և Նյուվադի գյուղական համայնքներում, նաև՝ Ղազախի Թաթի և Կադիր գյուղերում: Անդրկովկասի արևելյան շրջաններում կային թաթախոս հայեր, որոնց մեծ մասը մահմեդականներ էին:

Նահանգի Ելիզավետպոլ և Ղազախ գավառներում հայտնի էր «թարաքյամա» կոչված մեկ այլ տոհմածյուղ, որն՝ իրենց իսկ մեկնաբանությամբ, նշանակում էր «կոպիտ, վայրի թաթար»: Մահմեդական բնակչության երկրորդ խոշոր հատվածը քրդերն էին. Ղարաբաղում հայտնի էին ջվանշիր, քենգերլի, դիլազարդա, քոլանի և ֆարիկյան անուններով քրդական ցեղախմբեր, որոնց մեծ մասը կենտրոնացած էր Զանգեզուրի գավառում (եղած 113 գյուղերից, 91-ը՝ գտնվում էին այնտեղ): 1897թ. նահանգում եղած 17.545 երկսեռ մարդուց՝ 3042-ը քուրդ էր և 13.503-ը՝ եզիդի[9]: Կային նաև թուրք-թաթարական այլ ցեղախմբեր: Մահմեդականների խայտաբղետ զանգվածը բաժանված էր կրոնական 3 ճյուղի՝ շիա, սունի, ալի-ալլախ, որոնք միմյանց չէին հանդուրժում և այդ պայքարը հաճախ հանգեցնում էր արյունալի միջադեպերի: Քարոզիչ մոլլաներն իրենց հոտին ներշնչում էին սեփական կրոնի ու անձի հանդեպ առաջնայնություն, ինքնահավանություն, ինքնավստահություն, և ատելություն, արհամարանք մյուս կրոններին ու դավանանքներին հետևողների, հատկապես քրիստոնյաների նկատմամբ: Հավատացյալների վրա անմիջական ազդեցություն էին ունենում մոլլաների այն քարոզները, թե «գյավուրներին» թալանելը, կողոպտելը և սպանելը մեղք չէ, դրանով նրանք ապահովում են իրենց նյութական կյանքը՝ այս, և մահից հետո դրախտը՝ հանդերձյալ, աշխարհներում. կամ նամազ անելով և ուխտագնացության մեկնելով սրբավայրերը, հավատացյալները կմաքրվեն գործած մեղքերից, և ամենակարող ալլահը կների և կպահպանի նրանց: Հակաքրիստոնեական այս տրամադրություններն օգտագործվում էին նաև միջպետական քաղաքական ոլորտներում... Ներշնչված հիշյալ քարոզներով, իրենց տոհմացեղապետերի, հետագայում խաների, շահերի ու սուլթանների կողմից վարվող ռազմատենչ պատերազմների ընթացքում, քշելով ու սպանելով տեղաբնակ ազգերին, յուրացնում էին գրավված տարածքները, տիրանում նրանց բարեբեր հողերին,

[9] Всеобщая перепись Российской империи 1897г.

անասուններին, ունեցվածքին. այդ գործողություններն ուղեկցում էին իրենց ողջ կյանքի ընթացքում: Եվ պատահական չէր, որ «Նրանք Ելիզավետպոլի մարզում զբաղեցնում էին դեպի դաշտավայր տանող բոլոր կիրճերի մուտքերը. օգտագործում էին հարթավայրային ջրովի հողատարածքները և լեռնային արոտավայրերը... Մյուս ազգերի համեմատությամբ, թաթարներն ամենաապահով բնակիչներն են, քանի որ մարզում տիրապետող ցեղն էր, հատկապես Գյանջայի խանության ժամանակներից սկսած»[10]:

Անդրկովկասում հայտնի էին քոչվոր մահմեդականները. իրենց մոլեռանդությամբ ու թվաքանակով աչքի էին ընկնում թաթարները: Ուսումնասիրողներից մեկի բնորոշմամբ. «Անդրկովկասի պետական գյուղացիության մի ստվար մասը մտնում է բնակչության մի այնպիսի խմբի մեջ, որն իր մարդկային հատկություններով, մշակույթի ու կենցաղի ցածր մակարդակով, խիստ տարբերվում է մյուսներից, դրանք քոչվորներն են, որոնք իրենց վարած հատուկ կյանքով... մի ինքնատիպ բացառություն են, որը շատ հեռու է մարդկայնորեն ընդունված համընդհանուր չափանիշներից: Նրանք ոչնչով կապված չեն շրջակա բնակչության հետ և իրենց ապրելաձևով ու վարքագծով հակակրանք են առաջացնում հարևան մյուս ժողովուրդների մոտ»[11]: Քոչվորների հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր. «... առանց որի նրանք կմնային ամենախղճուկ արարածները իրենց անաշխատասիրության՝ ծուլության պատճառով և պատահական չէ, որ անասնապահությունը մշտապես գերադասել են հողագործությունից»[12]: Նրանց զբաղեցրած ամառային ու ձմեռային արոտավայրերի տարածքը 594.965 դես. էր՝ նահանգի ողջ տարածքի 61,46%-ը: Նրանք անասնահոտերը քշում էին մինչև 400 մղոն հեռավորության վրա՝ տարբեր ուղղություններով, ուր տեղադրված էին հայկական բազմաթիվ գյուղեր, որոնց ցանքսերը ոչնչանում էին, իսկ բնակիչները՝ թալանվում, և դա վերջ չուներ. առավել վտանգավոր էին քոչվորների ավազակային խմբերը, որոնք վխտում էին երկրամասի ճանապարհների վրա և ամենուր...

Անդրկովկասը ռուս ազգաբնակչությամբ բնակեցնելու առաջին քայլերը կատարվեցին XIX դ. սկզբներին: Վերաբնակցեման այս գործընթացը՝ ցարական կառավարության կիրառվող գաղութային քաղաքականության հիմնահարցերից մեկն էր: Այն կատարվում էր տարբեր փուլերով ու նպատակներով. կարևորը ռազմա-ստրատեգիական ուղղվածությունն էր: Հաջորդ փուլը պայմանավորված էր գրավված նոր շրջանների ներքին կյանքի՝ տնտեսական, ազգային և այլ խնդիրների

---

[10] "Записок" Кавказского общества сельского хозяйства, за 1861г. N 3, 4, 5 (автор И. Серебряков).

[11] "Свод материалов по ЭБГКЗК", т. III, ч. II, с. 65 (Бахтадзе И., Кочевники).

[12] Серебряков И., Сельское хозяйство в Елисаветпольском уезде, Тифлис, 1862, с. 68-69.

մշակմամբ ու իրագործմամբ: Գաղթողները մեծ մասամբ ռուս աղանդավորներ էին, ինչպես նաև քայքայված ճորտ գյուղացիներ: Գաղթելու թույլտվության պաշտոնական որոշումը կայացվեց 1830թ. հոկտեմբերի 20-ի օրենքով. Անդրկովկասում նրանց առաջին բնակավայրերից էին Ղարաբաղը և Գանձակը: Ցարիզմը շուտով հասկացավ, որ Անդրկովկասի գաղութացման գործընթացում նրանք կարող էին լինել հիմք՝ հուսալի հենարան: Եվ ի տարբերություն 1800-1830-ական թվականներին եղած դատապարտող հալածական օրենքների ու որոշումների, ի պաշտպանություն նրանց՝ հրապարակվեցին նորերը: Նախ ստեղծվեց «ռուս վերաբնակիչների տեղավորման» հանձնաժողով, որի գլխավոր խնդիրը պետք է լիներ Անդրկովկասում վերաբնակվող ռուսների կարիքները հոգալը՝ հատկացնել բնակելի հարմարավետ տարածքներ, վարելահողեր և այլն[13]. և այս գործընթացը շարունակվեց XIX դ. ողջ ընթացքում: XIX դ. վերջում Ելիզավետպոլի ռուս բնակչության թիվը մոտ 12.000 էր, այն ավելին կլիներ, եթե նրանցից մոտ 1330 մարդ չգաղթեր Ամերիկա (Կանադա):

Ռուսներով բնակեցման գործընթացը շարունակվում էր նաև XX դարի սկզբին, 1905թ. վերականգնված Կովկասի վտխարաքայությանն ուղղված պաշտոնական գրություններից մեկում հատուկ նշված էր, որ «փոխարքայի քաղաքականության առաջնակարգ խնդիրը եղել է և մնում է երկրամասը ռուսներով բնակեցնելու չընդհատվող գործընթացը»[14]:

1818-1820 թթ. այստեղ բնակություն հաստատեցին նաև աղանդավոր (լյութերական) գերմանացիները: Ռուսական կառավարության համաձայնությամբ և հովանավորությամբ, կազմակերպվեց նրանց արտագաղթը դեպի ռուսական սահմաններ:

Գանձակի և Շամխորի բնակավայրերում հաստատվեց 455 գերմանացի գերդաստան, ուր հիմնվեցին Աննենֆելդ և Ելենենդորֆ գաղութները: Չնայած կրած դժվարություններին, նրանք կարողացան հաղթահարել բոլոր խոչընդոտները և շնորհիվ իրենց աշխատասիրության և քաղաքակրթության, ժամանակի ընթացքում «ծառաների վիճակից վերծվեցին հարուստ մենատնտեսների...»[15]: 1897թ. մարդահամարի տվյալներով նրանց թիվը կազմում էր 3322 մարդ: Գերմանացիների վերաբնակեցման հարցում ռուսական կառավարությունը ակտիվ դեր կատարեց, որը նպատակ էր հետապնդում տեղում տնտեսական զարգացման, նրանց կենցաղավարության

---

[13] Долженко И., Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении, Ереван, 1985, с. 13-14.

[14] "Обзор переселенческого дела на Кавказе", СПб, 1913, с. 2-6.

[15] Ազգագրական հանդես, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 232-233:

բարերար ազդեցության և այլ առումներով ևս: Սակայն այդ ձգտումները չիրականացան, քանի որ գերմանացի վերաբնակիչներն ապրում էին ներփակ, շրջապատից կտրված՝ մեկուսի կյանքով: Բնիկներին վերաբերվում էին արհամարհանքով, որպես ստորին, սև աշխատանքներ կատարող վարձկանների...

Հրեա ազգաբնակչությամբ առանձնանում էր Նուխի գավառի Վարդաշեն գյուղաքաղաքը, «ուր 200 տարի առաջ հաստատվել էր հրեական 60 ընտանիք: Նրանք այժմ այստեղ իրենց թվաքանակով գերազանցում են մյուս ազգերին. խոսում են պարսկերեն, նրանց թաղամասը խիտ է բնակեցված (կես քառ. մղոնի վրա՝ 304 ծուխ)»[16]. հետագայում այդ թաղամասը վերածվեց առանձին գյուղի, որը կոչվեց Ջհուդլար՝ Վարդաշենի հարևանությամբ: Նրանց թիվը Նուխի գավառում, 1885-86 թթ. տվյալներով, կազմում էր 240 ծուխ, 1203 արական և 1079 իգական սեռերի՝ թվով 2282 մարդ, որը կազմում էր գավառի բնակչության 3%-ը[17]: 1897թ. մարդահամարի տվյալներով՝ 2031 մարդ, որից 175-ը՝ քաղաքաբնակ: Գնալով նրանց թիվը պակասում էր:

Այսպիսով Գանձակ-Ելիգավետպոլի նահանգի բազմազգ բնակչության հիշյալ կազմը պահպանվեց XIXդ. ամբողջ ընթացքում: Պաշտոնական վիճակագրության տվյալները վկայում են, որ ներգաղթի (հատկապես հայերի) և բնական աճի շնորհիվ մեծանում էր բնակչության ընդհանուր թվաքանակը: Որպես օրինակ վերցնենք 1873 և 1886 թվերի ընտանեկան ցուցակների տվյալները[18] և համադրենք:

1873թ.			1886թ.	
Գավառները՝ քաղաքների հետ միասին	ծխերի քանակը	բնակչության (երկսեռ) թիվը	ծխերի քանակը	բնակչության (երկսեռ) թիվը

[16] Сборник материалов описание местностей и племен кавказе, вып. XVIII, отя. III, ст 111 ("Евреи в селе Вардашен").

[17] Материалы для изучения экономического быта государственных крестьян закавказского края, т. VI, ч. II, с. 18.

[18] Свод статических данных извлеченных из по семейных списков населения Кавказа, Тифлис, 1888, с. I.

1.Ելիզավետպոլի..	14.476	100.050	20.540	122.888
2. Արեշի...	6.763	37.657	9.619	51.845
3. Ջեբրաիլի...	6.742	41.032	8.663	46.402
4. Ջևանշիրի...	8.025	48.233	9.694	54.950
5. Զանգեզուրի...	15.191	87.948	19.447	123.997
6. Ղազախի...	9.933	74.852	11.524	84.888
7. Նուխիի...	16.577	94.375	21.637	117.013
8. Շուշիի...	15.839	102.703	22.715	126.268
Ընդամենը	93.546	587.450	123.839	728.251

Ստացվում է, որ 1886թ. 1873 թվի համեմատությամբ (13 տարվա ընթացքում) ծխերի թիվը աճել էր 32,3%-ով, իսկ բնակչության թիվը՝ 23,9, մոտ 24%-ը:

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Վրացական թագավորության անկումից և 1801թ. ռուսական տիրապետություն հաստատվելուց հետո, կազմավորվեց Վրացական նահանգը: Նահանգի կազմի մեջ էին մտնում Վրաստանը (Քարթլի և Կախեթիա) և այսպես կոչված «թաթարական դիստանցիաները»[1]: Վրաստանն իր հերթին բաժանվում էր հետևյալ վարչական միավորների. Վերին Քարթլիի (Դուշեթ կենտրոնով), Միջին Քարթլիի (Գորի), Ներքին Քարթլիի (Թիֆլիս), Սոմխեթիայի (Լոռի), իսկ «թաթարականը»՝ Բորչալուի, Ղազախի և Շամշադինի[2]:

Հայկական Լոռին ու Տավուշը, որոնք այդ շրջանում գտնվում էին Վրաստանի կազմում, մտան Ռուսաստանի տիրապետության տակ: 1803թ. Ռուսաստանը գրավեց Գյանջան (Գանձակ), իսկ 1813թ.՝ Շաքիի, Շիրվանի, Ղարաբաղի, Բաքվի և այլ խանությունները: 1828թ. Ռուսաստանը գրավեց նաև Երևանի և Նախիջևանի խանությունները, իսկ 1829թ.՝ Ախալցխայի փաշայության մի մասը:

Ցարական Ռուսաստանը գրավյալ տարածքներում, ռազմական և տնտեսական հետագա գործունեություն ծավալելու նպատակով կատարում էր հետազոտական և հետախուզական աշխատանքներ, որոնք միտված էին ստեղծելու նոր վարչակարգ:

Հարավային Կովկասի նվաճված տարածքների կառավարումը դյուրին դարձնելու համար 1840թ. իրականացվում են վարչատարածքային նոր փոփոխություններ: Երկրամասը բաժանվում է երկու մասի՝ Վրացա-Իմերեթյան նահանգի և Կասպիական մարզի: Առաջինը կազմած էր 11 գավառից, դրանք էին՝ Թիֆլիսի, Գորիի, Թելավիի, Քութայիսիի (Իմերեթիա), Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Երևանի, Ելիզավետպոլի, Նախիջևանի, Գուրիայի և Բելոկանի (Զաքաթալա) օկրուգի: Կասպիական մարզը բաղկացած էր յոթ գավառից՝ Բաքվի, Շամախիի, Դուբայի, Դերբենտի, Լենքորանի, Նուխիի և Շուշիի[3]:

Հետագայում, կառավարումը հեշտացնելու, տնտեսության արդյունավետությունը բարձրացնելու և այլ նպատակներով, վարչական

---

[1] Նման անվանում ունեին այն պատճառով, որ դեռևս վրացական թագավորների ժամանակ այս շրջանները կառավարվում էին թաթարական ցեղապետերի կողմից:

[2] Шахатунян А., Административный передель Закавказского края, Тифлис, 1918, с. 84; И.Ф.Штукенберг, Статистические труды, т.2, СПб, 1860, с. 3-6.

[3] Шахатунян А., նշվ. աշխ., էջ 85-86:

փոփոխությունները շարունակական բնույթ էին կրում: 1844թ. նոյեմբերին Հարավային Կովկասում (Թիֆլիս) ստեղծեց Ռուսական կայսրության փոխարքայություն՝ իշխան Մ.Ս.Վորոնցովի գլխավորությամբ:

Փոխարքան մեծ լիազորություններ ուներ, նրա ծրագրերի մեջ էին մտնում նաև վարչական փոփոխությունները, ելնելով ազգային բազմազան կազմ ունեցող ու զարգացման ամենատարբեր մակարդակների վրա գտնվող ժողովուրդների առանձնահատկություններից[2]: Սակայն, ինչպես ցույց է տալիս XIXդ. վարչա-տարածքային բաժանումների պատմությունը, Ռուսաստանի կառավարությունն ամեն ինչ անում էր մասնատելու մենէթնիկ կազմ ունեցող վարչամիավորները, հատկապես՝ հայերով բնակեցվածները, այսպես, 1828թ. ստեղծված Հայկական մարզը 1840թ. ապրիլի 10-ին օրենքով լուծարվեց ու բաժանվեց երեք մասի՝ Երևանի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառների: 1873թ. նույն բախտին արժանացավ Շուշիի գավառը, որը բաժանվեց Ջեվանշիրի, Շուշիի, Զանգեզուրի և Ջեբրաիլի գավառների:

1846թ. դեկտեմբերի 14-ին Հարավային Կովկասի տարածքը նոր վարչական բաժանման է ենթարկվում, կազմավորվում է չորս նահանգ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենտի:

Թիֆլիսի նահանգի մեջ էին մտնում հայաշատ Ալեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի, Թիֆլիսի և Ելիզավետպոլի գավառները:

Քութայիսի նահանգում առանձնանում էին Քութայիսիի, Շորապլանի, Ռուչինի, Օզուրգետի և Ախալցխայի գավառները: Շամախու նահանգի մեջ մտան Բաքվի, Լենքորանի և հայաշատ Շամախու ու Շուշիի գավառները: Դերբենտի նահանգը կազմավորվեց Դերբենտի ու Դուբայի գավառներից[3]:

Վարչական վերախմբավորումների հիմքում դրված էին, ոչ թե երկրամասում ապրող բնակչության էթնիկ առանձնահատկություններն ու զարգացման աստիճանը, այլև հնարավորինս հեշտ հպատակեցնելն ու իշխելը: Այդ նպատակով վարչական միավորները կազմավորվում էին այնպես, որ էթնիկ կազմը միատարր չլիներ: Չնայած դրան, ցարական կառավարության 1849թ. հունիսի 9-ի որոշմամբ, ստեղծվեց վարչական նոր միավոր՝ Երևանի նահանգը, որը փաստորեն իր մեջ ամփոփեց Արևելյան Հայաստանի զգալի մասը:

Նահանգը կազմավորվեց Թիֆլիսի և Շամախու տարածքներից: Երևանի և Նախիջևանի գավառները մտան ամբողջությամբ, Ալեքսանդրապոլի գավառի Ախալքալաքի գավառամասը մնաց Թիֆլիսի նահանգի մեջ: Երևանի նահանգի մեջ մտան նաև Շորագյալը, Փամբակը, ինչպես նաև Բորչալուի գավառի Լոռու գավառամասը:

---

[2] Հայ ժողովրդի պատմություն, հ.V, Երևան, 1974, էջ 210:
[3] Шахатунян А., նշվ. աշխ., էջ 89:

Շամախու նահանգից Երևանին անցավ Շուշիի գավառի արևմտյան հատվածը՝ Զանգեզուրը: Այսպիսով, Երևանի նահանգի մեջ մտան Ալեքսանդրապոլի, Երևանի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Օրդուբադի գավառները[4]:

1859թ. Դերբենտի նահանգի հյուսիսային հատվածից կազմավորվեց Դաղստանի մարզը, իսկ Դուբայի գավառը միացվեց Շամախու նահանգին: Մեկ տարի անց, նոր վարչական փոփոխությունների արդյունքում Հարավային Կովկասը բաժանվեց հինգ նահանգների՝ Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի, Բաքվի (Շամախու փոխարեն) և Դաղստանի մարզի: 1862թ. Ալեքսանդրապոլի գավառից առանձնացվեց Լոռին ու կցվեց Թիֆլիսի գավառին, դրանով իսկ խախտելով էթնիկ կազմի հարաբերակցությունը: 1868թ. Հարավային Կովկասը ենթարկվեց վարչական նոր փոփոխության, Բաքվի, Երևանի և Թիֆլիսի նահանգների տարածքների առանձին հատվածներից ձևավորվեց Ելիզավետպոլի նահանգը: Այսպիսով, երկրամասը բաժանվեց վեց վարչական խոշոր միավորի՝ Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի, Բաքվի նահանգների և Դաղստանի մարզի[5]: Վարչական ձևափոխություններ էին կատարվում նաև նահանգների ներսում, մասնավորապես, 1873թ. Ախալցխայի գավառի մի մասից կազմավորվեց Ախալքալաքի գավառը, իսկ 1880թ.՝ Թիֆլիսի գավառից առանձնացվեց նրա հարավ-արևմտյան հատվածը ու ստեղծվեց Բորչալուի գավառը: Վարչական մանր ու մեծ փոփոխությունները շարունակվեցին մինչև դարավերջ, որոնք այդպես էլ բարենպաստ պայմաններ չապահովեցին Հարավային Կովկասի բազմազգ բնակչության կայուն զարգացման ու կոնսոլիդացման գործընթացների համար, քանի որ հաշվի չէին առնվում ազգային ու մշակութային առանձնահատկությունները:

1880-ականներին Թիֆլիսի նահանգը բաղկացած էր ինը գավառից, դրանք էին. Թիֆլիսի, որի կենտրոնը Թիֆլիս քաղաքն էր, Ախալքալաքի (Ախալքալաք), Ախալցխայի (Ախալցխա), Բորչալուի (Շուլավեր), Գորիի (Գորի), Դուշեթի (Դուշեթ), Սղնախի (Սղնախ), Թելավի (Թելավ), Թիոնեթի (Թիոնեթ)[6]: Մինչև XIXդ. վերջը վարչական միավորների թիվը ավելացավ ևս մեկով՝ Զաքաթալայի օկրուգ՝ Զաքաթալա կենտրոնով:

Վարչատարածքային փոփոխությունները հիմնականում ավարտվեցին XIXդ. վերջերին, սակայն Հարավային Կովկասի

---

[4] Шахатунян А.,նշվ. աշխ., էջ 90-91, Հայ ժողովրդի պատմություն, հ.V, Երևան, 1974, էջ 210, Документы и материалы по истории армянского народа, Ер., 1993, с. 9-10.

[5] Шахатунян А., նշվ. աշխ., էջ 93:

[6] Свод статистических данных о населении Закавказкого края, извлеченных из посемейных списков 1886г.(ССДНЗКНПС- 1886), Тифлис, 1893, с.177.

բնակչության, մասնավորապես, հայերի տեղաշարժերը շարունակվում էին նոր թափ առնել:

Հայտնի է, որ հայերը Վրաստանի տարածքում ապրում են հնագույն ժամանակներից: Հետագա քաղաքական անկայուն իրավիճակով պայմանավորված, նրանց թիվը հաճախակի փոփոխության էր ենթարկվում, մասնավորապես, ակտիվ տեղաշարժերի արդյունքում: Հայկական պետականության անկումից հետո, հայ բնակչության մի մասը գաղթեց ու հանգրվանեց Վրաստանում: Նրանք հաստատվեցին Քարթլիում, Գորիում, այլ գավառներում և հատկապես՝ Թիֆլիս քաղաքում:

Նկատի ունենալով 1804թ. գեներալ Ցիցիանովի զորքերի հետ Արարատյան դաշտից հեռացած հայերին, և XVIIIդ. վերջերին - XIXդ. սկզբներին Ղարաբաղի հայ բնակչության ներգաղթը, կարծիք է ստեղծվել, թե հայերը Վրաստանի տարածքում հաստատվել են XIXդ. սկզբներին: Վիճակագրական տվյալներն ու անաչառ ուսումնասիրությունները հակառակն են ապացուցում: Այսպես՝ "Братская помощь пострадавшим в Турции армянам" աշխատության մեջ կարդում ենք. «Միայն պատմությանը անտեղյակ մարդիկ կարող են հաստատել, որ հայերի թիվը Թիֆլիսում ու նահանգում ավելացել է վերջին ժամանակներում (նկատի է առնվում XIXդ. սկզբները - Հ.Ս.), ընդհակառակը, հայերի տեսակարար կշիռը Թիֆլիսում այժմ ավելի փոքր է, քան Վրաստանը Ռուսաստանին միավորվելուց առաջ»[7]. Ասվածը հաստատելու համար, նույն տեղում նշվում է, որ վրացիները հիմնականում հողատերեր ու գյուղացիներ էին, իսկ առևտուրն ու արհեստները գերազանցապես գտնվում էր հայերի ձեռքին, բնականաբար նրանց թիվը շատ էր Վրաստանի քաղաքներում: Այս առումով, կարևոր աղբյուր կարող են հանդիսանալ մեզ հասած վիճակագրական տվյալները, որոնք այս կամ այն չափով վերաբերում են Թիֆլիսի նահանգի բնակչությանը:

Ինչպես Հարավային Կովկասում, այնպես էլ Թիֆլիսի նահանգում մինչև XIXդ. 70-ականների կեսերը բնակչության հավաստի ու ամբողջական հաշվառումներ չեն կատարվել, բացառությամբ տեղական նշանակություն ունեցողները, որոնք իրականացվում էին ոչ պարբերաբար: Այս առումով, շատ արժեքավոր ու բազմաբնույթ նյութեր է պարունակում «Կովկասյան օրացույց» բազմահատոր ժողովածուն, որի յուրաքանչյուր հատորում առանձին բաժիններ են հատկացված Կովկասի բնակչության ժողովրդագրության այս կամ այն խնդիրներին: XIXդ. կեսերից ցարական կառավարությունը Հարավային Կովկասի տարածքում իրականցրեց բնակչության ծավալուն հաշվառումներ: Առանձնապես եզակի ու արժեքավոր էին 1873թ. «Կամերալ ցուցակ-

[7] Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898, с. 553.

ները», 1886թ. «Ընտանեկան ցուցակները» և հատկապես 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի արդյունքները: Ըստ «Կովկասյան օրացույցի»[8], 1855թ. Թիֆլիսի նահանգում ապրում էր. Թիֆլիսի գավառ՝ 6918 ծուխ հայ ընտանիք, որից 63%-ը քաղաքային, Սղնախի՝ 3650, 22%, Թելավի՝ 991, 62%, Գորիի՝ 1130, 34%, Ելիզավետպոլի՝ 3587, 26.6%, մնացած երեք օկրուգներում (Տուշին-Փշավ-Խևսուրի, Օսեթիայի և Լեռնային) միասին 37 ծուխ: Ընդամենը ամբողջ նահանգում կար 16313 հայկական ծուխ, որը քանակով երկրորդն էր վրացիներից հետո (36%) և կազմում էր նահանգի ամբողջ ծխերի շուրջ 26%-ը, ընդ որում, քաղաքային էր 43.6%-ը: Քաղաքային բնակչության մեջ տեսակարար մեծ կշիռ ունեին հայերը, ամբողջ նահանգի քաղաքային ծխերի գրեթե կեսը հայկական էր (7110 ծուխ), իսկ առանձին քաղաքներում նրանք գերակշռող էին, այսպես, Սղնախում 95.3%, Թելավում՝ 87.7%, Թիֆլիսի և Դուշեթի գավառներում՝ 67%, Գորիում՝ 58%, Ելիզավետպոլում՝ 48.2%: Այն փաստը, որ նահանգի քաղաքները հայաշատ էին, ցույց են տալիս վիճակագրական տվյալները՝ քաղաքային հայ բնակչությունը կազմում էր 56.4%, գյուղականը՝ 43.6%: Նահանգի քաղաքների մեջ իր առանձնահատուկ տեղն ուներ հինավուրց Թիֆլիսը, որը ոչ միայն նահանգի, այլև ամբողջ Հարավային Կովկասի վարչական, քաղաքական ու մշակութային կենտրոնն էր:

Ինչպես հաղորդում են ճանապարհորդները դեռևս XVIIIդ. սկզբներին Թիֆլիսում ապրում էր շուրջ 20000 բնակիչ, որից 14500-ը՝ հայեր (500-ը կաթոլիկ), 3000-ը՝ մահմեդականներ, 2000-ը՝ վրացիներ և 500-ը՝ այլ ազգեր[9]: Նույն պատկերն ենք տեսնում նաև մեկ դար անց, այսպես. XIXդ սկզբներին քաղաքում կար 2700 տուն, որից վրացական էր միայն 18-ը[10]: Մեկ այլ աղբյուրի համաձայն, 1817թ. քաղաքի բնակչության 75.6% հայեր էին, 18.9%-ը՝ վրացիներ, 5.5%-ը՝ այլք[11]:

Հետաքրքիր տվյալներ է հայտնում ռուս ճանապարհորդ Ս.Վլադիկինը, ըստ նրա 1821թ. Թիֆլիսում կար 2951 հայկական, 417 վրացական և ռուսական ծուխ, Գորիում՝ 331 և 121, Անանուրում՝ 123 և 24, Թելավում՝ 236 և 74, Սղնախում՝ 377 և 12, այսինքն, Վրաստանի քաղաքները դեռևս մնում էին հայաշատ, ընդամենը՝ 4018 հայկական և 648 վրացական ու ռուսական ծխեր[12]:

---

[8] Кавказский календарь (КК) на 1856г., Тифлис, 1855, с. 113-114; Д.И. Исмаил-Заде, Население городов Закавказского края в XIX — начале XXв., М., 1991, с. 82-83.

[9] Д.И. Исмаил-Заде, նշվ. աշխ., էջ 70-71:

[10] ССДНЗКИПС- 1886, Тифлис, 1893, с. 3.

[11] Первая всеобщая перепись населения Российской империи 1897г.(ПВПНРИ-1897), Тифлисская губерния, СПб, 1905, с. 74.

[12] КК на 1865г., Тифлис, 1864, отд. III, с. 47.

Հետևելով Թիֆլիսի բնակչության ազգային կազմի շարժընթացին, պարզվում է, որ XIXդ. ընթացքում հայերի տեսակարար կշիռը գնալով նվազում է, այսպես, XIXդ. 30-ականներին հայերը կազմում էին քաղաքի բնակչության շուրջ 65%-ը, իսկ դարի կեսերին՝ մոտ 54%[13]: 1886թ., պաշտոնական վիճակագրության համաձայն, Թիֆլիսում ապրում էր 37.4 հազար հայ, որը կազմում էր քաղաքի բնակչության 47.7%-ը[14], իսկ համառուսաստանյան առաջին մարդահամարի արդյունքում՝ 50.4 հազար հայ կամ 31.6%-ը[15]:

Թիֆլիսի բնակչության թվի համեմատաբար փոքր աճը (շուրջ 2 անգամ) XIXդ. առաջին կեսին, նույնիսկ հաշվի առնելով զանգվածային ներգաղթը Հարավային Կովկասի ամենատարբեր մասերից, պայմանավորված էր համաճարակային հիվանդություններով, որոնք հաջորդում էին իրար (1802, 1811, 1830, 1847թթ.): Համաճարակները հազարավոր մարդկանց կյանք խլեցին, մեծացան արտագաղթի չափերը: Այս ընթացքում մեծ թվով հայեր, վրացիներ և այլէթնիկ խմբեր եկան ու հաստատվեցին Թիֆլիսում: Խայտաբղետ ազգային կազմ ունեցող քաղաքում թվային գերակշռություն ունեին հայերը, վրացիները և ռուսները, այլէթնիկ խմբերը կազմել են բնակչության 5-6%-ը: XIXդ. կեսերից բնակչության աճման գործում համեմատաբար հաստատուն մի ժամանակաշրջան է սկսվում, իհարկե չեն դադարում տեղաշարժերը, սակայն դրանք մասամբ կրում էին սեզոնային բնույթ: Ասվածը փորձենք հաստատել վիճակագրական տվյալներով, ըստ որի 1864թ. հաշվառման արդյունքում ամռանը Թիֆլիսի բնակչության թիվը 11 հազարով ավելի էր (71 հազար մարդ), քան ձմռանը, ընդ որում, հայերի թիվն ավելացել էր 3.5, իսկ այլէթնիկ խմբերինը միասին վերցրած՝ 7.8 հազարով, սակայն, վրացիների ու ռուսների թիվն այդ ընթացքում փոքր ինչ նվազել էր[16]: Բնակչության թվի ավելացումը կապված էր հիմնականում աշխատանք փնտրողների ներհոսքի, իսկ վրացիների քանակի նվազումը՝ դեպի հանգստյան գոտիներ կատարված արտահոսքի հետ:՝

Կարևորելով Թիֆլիս քաղաքում հայ բնակչության շարժընթացի առանձնահատկություններն ու տեղաշարժերի բնույթը, շարունակենք ավելի հանգամանորեն ներկայացնել նահանգի հայ բնակչության թվի փոփոխություններն ու դրանց պատճառները: Ըստ «Կովկասյան օրացույցի», XIXդ. 60-ականների սկզբին Թիֆլիսի նահանգում ապրում էր 97.5 հազար հայ, որը կազմում էր ամբողջ բնակչության գրեթե 17%-

---

[13] Полиевктов М. и Натадзе Г., Старый Тифлис в известиях современников, Тифлис, 1929,.с. 30.

[14] Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898, с. 553.

[15] Анчабадзе Ю.Д., Волкова Н.Г., Старый Тбилиси, М., 1990, с. 29.

[16] Владыкин М., Путевадитель и собеседник в путешествии по Кавказу, ч. 1-2, М., 1885, с. 330.

ը[17], իսկ 1865թ.՝ հայ բնակչության թիվն անցնում էր 113 հազարից, կամ 20%-ը[18]: Նահանգի քաղաքային բնակչության 40%-ը հայեր էին, իսկ գյուղականի՝ ընդամենը 13%-ը: Նրանց թիվը մեծ էր Թիֆլիս, Ելիզավետպոլ, Սղնախ քաղաքներում:

1855թ. տվյալների հետ համեմատելիս, տեսնում ենք, որ փաստորեն, ըստ աղբյուրի, տաս տարի անց հայ բնակչության աճ չի արձանագրվել, այս հանգամանքը պետք է բացատրել նրանով, որ նոր հաշվառումների բացակայության պայմաններում, հաճախ օգտագործվում էին հին կամ նախկին տվյալները: XIXդ. 70-ականները, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հարավային Կովկասում, բնութագրվում էր որպես համակարգային փոփոխությունների շրջան՝ պայմանավորված կապիտալիստական հարաբերությունների աշխուժացման հետ, որը խթանում էր նաև բնակչության տեղաշարժերի բուռն վերելքին: Բնակչության զանգվածային տեղաշարժերն ուղղված էին արդյունաբերական համեմատաբար խոշոր կենտրոններ, որոնք արդեն ձևավորվել կամ ձևավորման ընթացքի մեջ էին: Անցումային այս պայմաններում իշխանությունները ձեռնարկեցին բնակչության հաշվառումներ, պարզելու աշխատուժի թիվը, մասնագիտական որակները, սեռատարիքային կազմը և, իհարկե, հարկատուների քանակը:

1873-1875թթ. «Կամերալ ցուցակներում»[19] և հետագայում հրատարակված մի շարք աշխատանքներում[20] նահանգի բնակչության թվի վերաբերյալ ներկայացված տվյալները գրեթե կրկնվում են: Ըստ այդ հաշվառումների, XIXդ. 70-ականների կեսերին Թիֆլիսի նահանգում ապրում էր ավելի քան 660.8 հազար մարդ, հայերի թիվն անցնում էր 162 հազարից (գրեթե 55%-ը տղամարդիկ էին): Հայերը կազմում էին նահանգի ամբողջ բնակչության 24.5, իսկ վրացիները՝ 47.3%-ը:

Հայերը բաշխված էին հետևյալ կերպ. Թի ֆլիսի գավառ՝ 75.1 հազար, որը կազմում էր գավառի ամբողջ բնակչության 34.3%-ը, Սղնախի գավառ՝ 9.4 հազար կամ 11.6%, Թելավիի՝ 7.9 կամ 15.1%, Թիոնեթի՝ 0.3, 0.9%, Գորիի՝ 14.2, 11.4%, Դուշեթի՝ 3.6, 6.4%, Ախալցխայի՝ 15.4, 35.5% և Ախալքալակի գավառ՝ 36.1 հազար կամ 72.5%: Նշենք, որ նահանգի հայերի 5.5%-ը կաթոլիկներ էին: Թի ֆլիսում ապրում էր քաղաքային ամբողջ հայ բնակչության շուրջ 57, իսկ Ախալցխայում՝ 16.3%-ը: Ընդհանուր առմամբ, քաղաքաբնակ էր

---

[17] КК на 1865г., Тифлис, 1864, отд. III, с. 134.

[18] КК на 1865г., Тифлис, 1864, отд. III, с. 122-123.

[19] Свод материалов по изучении экономического быта государственных крестьян Закавказского края, том II, Тифлис, 1887, с. 150-155; Статистический временник Российской Империи, ЦСК МВД, Серия II, вып. 10, СПб, 1875, с.82.

[20] С.Эсадзе, Историческая записка об управлений Кавказом, том II, Тифлис, 1907, с.308; КК на 1878г., Тифлис, 1877, отд. III, с.325; КК на 1881г., Тифлис, 1880, отд. II, с.24.

հայերի 40.4%-ը: Թիֆլիսի նահանգն ուներ 40.4 հազար քառ.կմ տարածք, ուր բնակչության խտությունը մեծ չէր, ընդամենը՝ 16.4 մարդ քառ.կմ-ում, համեմատելու համար նշենք, որ այդ ցուցանիշը Երևանի նահանգում հասնում էր 20-ի:

Արդեն 1880-ականների սկզբներին կատարված հաշվառումները ցույց տվեցին, որ նահանգի բնակչության թիվը նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճել է ավելի քան 56 000-ով կամ 8.5%-ով, անցնելով 700 հազարի սահմանը[21], ինչպես ամբողջ բնակչության, այնպես էլ հայերի քանակն ավելացել էր բնական շարժի հաշվին, այսպես, նահանգում 1881թ. ծնվել էր 25243 երեխա և նույն տարում մահացել էր 12848 մարդ, բնական աճը կազմել էր 12395 մարդ, կամ 1.7%:

1886թ. սկզբներին Կովկասում անցկացվեց բնակչության հաշվառում, որը հայտնի է «Ընտանեկան ցուցակներ» անվամբ: Դրա նպատակն էր ճշգրիտ տվյալներ ունենալ բնակչության ընդհանուր թվի, զինապարտների և հարկատուների վերաբերյալ: Ցուցակները պետք է հաստատվեին Կովկասի քաղաքացիական մասի պետի կողմից՝ համաձայնեցնելով ներքին գործերի և ֆինանսների նախարարությունների հետ: Հաշվառման էին ենթարկվելու և հարկատու, և ոչ հարկատու խավերը՝ բացառությամբ ռուսական վերնախավի:[22] Հարավային Կովկասի բնակչության հաշվառումը սկսվեցին 1886թ. մայիսին և ավարտվեց տարեվերջին:

«Ընտանեկան ցուցակների» մեջ ընդգրկվեցին հետևյալ ցուցանիշները. ծխերի թիվը, տղամարդկանց ու կանանց քանակը, բնակչության էթնիկ կազմը, դավանանքը, սոցիալական և սեռատարիքային կազմը, լեզուն, կրթությունը, զբաղմունքը և այլն: Հավաքված նյութերը մինչև 1890թ. մաս-մաս հրատարակվում էին տարբեր ժողովածուներում, 1891թ. ամբողջ նյութը հրատարակվեց մեկ գրքով:[23]

Ըստ այդ հաշվառման, Թիֆլիսի նահանգում ապրում էր 808.1 հազար մարդ (440.7 հազար տղամարդ, 367.4 հազար կին), այդ թվում հայեր՝ 193.5 հազար կամ բնակչության 24%-ը, վրացիներ՝ 387.4 հազար կամ 48%-ը:[24]

Ստորև ներկայացնում ենք հայ բնակչության տեղաբաշխվածությունը նահանգի քաղաքներում ու գավառներում.

---

[21] КК на 1884г., Тифлис, 1883, отд III, с. 283-285.
[22] ССДНЗКИПС — 1886, Тифлис, 1893, с.IV.
[23] Նույն տեղում, էջ.V:
[24] Նույն տեղում, էջ 177, 181, 191:

Աղյուսակ 1. Թիֆլիսի նահանգի հայ բնակչության թիվն ըստ գավառների և քաղաքների 1886թ.

N	Վարչական միավոր, քաղաք	Տուն	Տղամարդ	Կին	Ընդամենը	Հայ բնակչության տեսակարար կշիռը(%)
1.	Թիֆլիսի գավառ ք. Թիֆլիս[25]	2044 -	6746 20510	5198 16910	11944 37420	48 18
	Ընդամենը	2044	27256	22108	49364	34
2.	Ախալքալաքի գավ ք. Ախալքալաք	4664 -	22236 2162	20065 1921	42301 4083	71 94.8
	Ընդամենը	4664	24398	21986	46384	72.8
3.	Ախալցխայի գավ. ք. Ախալցխա	465 -	2334 5441	2991 4976	4625 10417	10.8 64.7
	Ընդամենը	465	7775	7267	15042	25.6
4.	Բորչալուի գավ.	4218	20673	17159	37832	37.2
5.	Գորիի գավառ ք. Գորի	2860 -	8234 1720	6913 1174	15147 2894	8.7 40.1
	Ընդամենը	2860	9954	8037	17991	10
6.	Դուշեթի գավառ ք. Դուշեթ	539 -	1545 683	1329 475	2874 1158	4.2 58
	Ընդամենը	539	2228	1804	4032	5.7
7.	Սղնախի գավառ ք. Սղնախ	796 -	2319 3412	1894 2442	4213 5854	5.4 55.2
	Ընդամենը	796	5731	4336	10067	11.3
8.	Թելավի գավառ ք. Թելավ	792 -	1938 4472	1491 4710	3429 9182	6.4 81.9
	Ընդամենը	792	6410	6201	12611	19.4

[25] Քաղաքային բնակավայրերի տների թիվը չի նշված:

9.	Թիոների գավառ	66	105	132	237	0.7
Ընդամենը նահանգում		16444	104530	89030	193560	24

Ինչպես երևում է աղյուսակից, նահանգի հայ բնակչության հիմնական մասը ապրում էր գյուղական բնակավայրերում՝ 63.4%: Հայաշատ քաղաքներում կենտրոնացված էր քաղաքային ամբողջ բնակչության ավելի քան 47%-ը: Թիֆլիսի և Ախալքալակի գյուղական ու քաղաքային բնակչությունը միասին կազմել են նահանգի ամբողջ բնակչության 49.5%-ը: «Ընտանեկան ցուցակների» արդյունքները ցույց են տալիս, որ նահանգի տարածքում ապրում էին նաև 16.2 հազար հայ-կաթոլիկներ: Ըստ դավանանքի, պատկերը հետևյալն էր, քրիստոնյաները կազմել են բնակչության 88%-ից ավելին, ուղղափառներ էին բնակչության 61.3%-ը, հայ-առաքելականներ՝ 22%-ը, մահմեդականներ՝ 10.8%-ը:[26] Հայ հոգևորականների թիվը նահանգում հասնում էր 3.5 հազարի: Վերջին երկու հաշվառումների համեմատությունը ցույց է տալիս, որ նահանգի բնակչությունն աճել է 201.4 հազար մարդով կամ 33.2%-ով, տարեկան միջին աճը կազմել է շուրջ 20 հազար մարդ:

Ըստ հաշվարկների պարզվեց, որ հայ բնակչությունն ավելացել է 31.4 հազարով կամ 1.2 անգամ, տարեկան միջինը՝ 2850 մարդ: «Ընտանեկան ցուցակների» համաձայն գյուղական հայ ընտանիքի միջին կազմի բարձր ցուցանիշներով առանձնանում էին Ախալքալակի, Ախալցխայի և Բորչալուի գավառները (8.9-ից 9.9 մարդ): Նահանգի միջին ցուցանիշը հավասար էր 7.5 մարդու:

Ցարական կառավարությունը XIXդ. վերջերին նախապատրաստում էր կայսրության տարածքում անցկացնել մարդահամար, որն իր տեսակի մեջ պետք է լիներ եզակի, համաժամանակյա և հնարավորինս մանրամասն ու օբյեկտիվ: Այս աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին Ռուսաստանի գիտության և մշակույթի շատ գործիչներ: Երկար ձգձգումներից հետո այն իրականացվեց 1897թ.: Այս վիճակագրությունն առանձնանում էր նրանով, որ անցկացվեց մեկ օրում, գրանցելով բնակչության թիվը, սեռատարիքային, լեզվական, դավանանքային, դասակարգային կազմը, սակայն, ցավով պետք է նշել,որ ազգային կազմը չէր ընդգրկվել հարցաթերթիկում: 1897թ. համառուսաստանյան առաջին համընդհանուր մարդահամարի արդյունքները արժեքավոր են նաև այսօր և շարունակվում են օգտագործվել գիտական գրականության մեջ:

[26] ССДНЗКИПС — 1886, с. 191-193.

Անդրադառնալով մարդահամարի արդյունքներին, նշենք, որ Թիֆլիսի նահանգի բնակչության թիվն ըստ այդ մարդահամարի անցել էր 1 միլիոնի սահմանը՝ 1051 հազար մարդ, տղամարդիկ կազմում էին բնակչության գրեթե 55%-ը: Նահանգում հայերի թիվը հասնում էր 196.2 հազարի (105 հազար տղամարդ, 91.1 հազար կին), որը կազմում էր ամբողջ բնակչության 18.6%-ը:

Աղյուսակ 2. Թիֆլիսի նահանգի հայ բնակչության բաշխումն ըստ գավառների ու քաղաքների ըստ 1897թ. մարդահամարի արդյունքների:[27]

N	Վարչական միավոր	Տղամարդ	Կին	Ընդամենը	Հայ բնակչության տեսակարար կշիռը (%)
1.	Թիֆլիսի գավառ	33080	24853	57933	24.7
	այդ թվում՝				
	ք. Թիֆլիս	27123	20010	47133	29.5
2.	Ախալքալակի գավառ	26986	25553	52539	72.2
	այդ թվում՝				
	ք. Ախալքալակ	2104	2032	4136	76.5
3.	Ախալցխայի գավառ	7730	7414	15144	22
	այդ թվում՝				
	ք. Ախալցխա	4593	4442	9035	59
4.	Բորչալուի գավառ	24986	22437	47423	37
	այդ թվում՝				
	Շուլավեր	2126	1910	4036	89.5
5.	Գորիի գավառ	4218	3468	7686	40.2
	այդ թվում՝				
	ք.Գորի	1168	916	2084	20.3
6.	Դուշեթի գավառ	838	842	1680	2.5
	այդ թվում՝				

[27] ПВПНРИ — 1897, СПб, 1905, сс.VI, XIV, 1-5, 82-105; Б.Ишханян, Народности Кавказа, Петроград, 1916, с. 23-25.

	Ք.Դուշեթ	242	227	469	18.4
7.	Սղնախի գավառ այդ թվում՝ Ք.Սոնախ	3290 1179	3102 1357	6392 2536	6.2 28.4
8.	Թելավի գավառ այդ թվում՝ Ք. Թելավ	2358 1620	2396 1845	4754 3465	7.1 24.8
9.	Թիոնեթի գավառ այդ թվում՝ Ք. Թիոնեթ	307 41	231 14	538 55	1.5 4.5
10.	Զաքաթալայի օկրուգ այդ թվում՝ Ք. Զաքաթալա	1242 795	858 605	2100 1400	2.5 46.6
Ընդամենը գավառներում		64044	57796	121840	62
Ընդամենը քաղաքներում		40991	33358	74349	38
Ընդամենը նահանգում		105035	91154	196189	18.6

Աղյուսակից երևում է, որ Թիֆլիսի, Ախալքալակի ու Բորչուլուի գավառներում էր կենտրոնացված ամբողջ նահանգի հայ բնակչության 80.5%-ը, քաղաքային հայ բնակչության մեծ տեսակարար կշիռ ունեին Ախալքալակ, Ախալցխա, Շուլավեր և Զաքաթալա քաղաքները՝ 38%-ը: Նահանգի բնակչության խտությունը 26.8 մարդ էր քառ.կմ-ում: Անցած տաս տարիների ընթացքում, ինչպես երևում է ներկայացված թվերից, հայ բնակչությունն աճել էր ընդամենը 2.6 հազար մարդով,[28] նման շատ ցածր ցուցանիշները արդյունք են նախորդ հաշվառումների ցածր որակի, թերությունների ու անճշտությունների: Հայ բնակչության թիվը հաշվարկվել է ելնելով մայրենի լեզուն հայերենը համարողների թվից, որն այնքան էլ հավաստի չի կարելի համարել: Ավելորդ չէ նշել, որ նահանգի դավանանքային կազմն արտացոլող աղյուսակներում հայ առաքելականների ու հայ կաթոլիկների թիվն անցնում էր 230 հազարից, սակայն չի բացառվում, որ հայերի մի մասը կարող էր դավանել այլ կրոնի կամ ընդհակառակը:

Թիֆլիսի նահանգի հայ բնակչության սեռատարիքային կազմի պատկերը հնարավորություն է տալիս բացահայտելու ոչ միայն առկա, այլև սպասվելիք աճի տեմպերը, այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք գտնում այն ներկայացնել աղյուսակի տեսքով.

[28] ПВПНРИ — 1897, Тифлисская губерния, СПб, 1905, с. 74.

Աղյուսակ 3. Նահանգի սեռատարիքային կազմը 1897թ. մարդահամարի արդյունքներով[29]

Տարիքը	Արական	Իգական	Ընդամենը[30]	Տեսակարար կշիռը ամբողջ բնակ. մեջ (%)
Մինչև 1 տարեկան	3436	3112	6548	2.8
1 - 9	31039	29247	60286	26.2
10 – 19	27360	22856	50216	21.8
20 – 29	20037	15673	35710	15.5
30 – 39	15762	12958	28720	12.5
40 – 49	10920	8952	19872	8.6
50 – 59	7374	6205	13579	6.0
60 – 69	4971	4559	9530	4.1
70 – 79	1849	1728	3577	1.5
80 – 89	774	971	1745	0.7
90 – 99	158	217	375	0.2
100 - 109	47	91	138	0.1

Նահանգի և, մասնավորապես, հայ բնակչության սեռատարիքային կազմերի համեմատությունից հետևում է, որ տարիքային խմբերի տեսակարար կշիռների միջև եղած տարբերությունները շատ փոքր են:

Ներկայացված աղյուսակի տվյալները խոսում են այն մասին, որ հայ բնակչությունը աճելու մեծ հեռանկարներ է ունեցել, բավական է նշել, որ մինչև 20 տարեկանները կազմել են բնակչության գրեթե 51%-ը, իսկ վերարտադրող տարիքինը (20-49տ.)՝ 36.6%-ը:

Ըստ 1897թ. մարդահամարի, հայ բնակչությունը մեծ դեր է ունեցել Նահանգի և հատկապես Թիֆլիսի հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:[31]

Վարչական մարմիններում, դատարաններում, ոստիկանությունում ընդգրկված էր 1200 մարդ (3%), հասարակական ծառայության ոլորտում՝ 725, զինվորականներ՝ 1400, կրոնավորներ՝ 1600, կրթության ոլորտում՝ 580, առողջապահական ոլորտում՝ 440, մասնավոր գործունեություն՝ 9100 (4.6%), հողագործներ՝ 108 հազար (55%), արհեստավորներ, այդ թվում՝ դերձակներ՝ 8000 (4.1%), առևտրականներ՝ 4000 (2.1%):

Այսպիսով, Թիֆլիսի Նահանգի հայ բնակչության թվի կեսդարյա

---

[29] Աղյուսակը կազմվել է ՊՎՊՀՐԻ – 1897, Тифлисская губерния, էջ 284-285-ի տվյալների հիման վրա:

[30] Ընդհանուր թիվը անցնում է 230 հազարից, քանի որ աղյուսակը կազմված է ըստ դավանանքի:

[31] ՊՎՊՀՐԻ – 1897, Тифлисская губерния, с.162-163.

փոփոխությունները դիտարկելիս տեսնում ենք, որ XIXդ. 50-70-ականները բնակչության հաշվառման մակարդակի առումով զիջում են 80-90-ականներին: Մրանք պայմանավորված էին ոչ միայն հաշվառումների մեթոդական անճշտություններով, այլև վարչաքաղաքական անհարկի ձևափոխումներով:

Նահանգի հայ բնակչությունը 1865թ. 113 հազարից, 1897թ. հասել էր 196 հազարի, այսինքն ավելացել էր ավելի քան 1.7 անգամ, տարեկան միջինը 2.6 հազարով: Բնակչության ընդհանուր աճի տեմպերի նվազման մասին է խոսում այն փաստը, որ եթե 1865-1875թթ. այն աճել էր 1.4 անգամ, 1875-1886թթ.՝ 1.2 անգամ, ապա 1886-1897թթ.՝ ընդամենը 2.5 հազարով կամ 1.01 անգամ: Մեր կարծիքով բնակչության թվի նման պատկերը արդյունք է 1865, 1875 և 1886թթ. ոչ հավաստի հաշվառումների, որոնք, ըստ էության, չնայած մոտավոր են, սակայն ընդհանուր պատկերացում են տալիս բնակչության ժողովրդագրական ցուցանիշների մասին:

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈԵՎԱ

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ասորիների մի հոծ զանգված տեղաբաշխված էր Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում՝ Արևմտյան Հայաստանի Վանի վիլայեթի Հաքյարիի սանջակում, ինչպես և էրզրումի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի նահանգներում: Այստեղ ապրում էին հազարավոր ասորիներ՝ միասնական լեզվով, մշակույթով և ազգային սովորույթներով: Նրանք բաժանված էին դավանական և սոցիալական հատկանիշներով: Դավանական առումով ասորիները հիմնականում տրոհված էին նեստորականների, կաթոլիկների /քաղդեացիներ/, ուղղափառների, հակոբինյանների, իսկ սոցիալապես՝ երկու մեծ կաստաների՝ աշիրեթների և ռայաների, որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր:

Խոսելով Օսմանյան կայսրության ազգաբնակչության, տվյալ դեպքում՝ ասորիների թվաքանակի հարցերի մասին, մի շարք պատմաբաններ իրավացիորեն գտնում են, որ պետք է վերապահությամբ վերաբերվել վիճակագրական տվյալներին: Անճշտությունների պատճառները մի կողմից պետք է փնտրել ընդհանրապես Օսմանյան կայսրությունում կանոնավոր վիճակագրության բացակայության, մյուս կողմից՝ զինվորական հարկից ազատվելու նպատակով քրիստոնյաների հաշվառումից խուսափելու և այլ հանգամանքների մեջ: Պարզաբանելով վերոշարադրվածը՝ նշենք, որ Օսմանյան իշխանությունների հակաքրիստոնեական քաղաքականությունը վիճակագրության ասպարեզում տարվում էր երկու ուղղությամբ՝ քրիստոնյա բնակչության թվաքանակի կտրուկ նվազեցմամբ և մահմեդականների թվի բարձրացմամբ: Օրինակ բրիտանական դիվանագիտական այրերը միանշանակ մերժում էին օսմանյան պաշտոնական վիճակագրության հավաստիությունը քրիստոնյա բնակչության թվաքանակը որոշելու համար: Այսպես, անգլիական հյուպատոս Չերմսայդը գտնում էր, որ օսմանյան պաշտոնական վիճակագրությունը «ամենաանորոշն է ու անբավարարը, ինչպես և այն ամենը, ինչը թուրքական իշխանությունների տնօրինության տակ է գտնվում»[1]:

Ուստի, հաշվի առնելով վերոշարադրվածը, պատմական Հայաստանում ասորիների թվաքանակը ճշգրտելու համար դիմենք հայ և

[1] Parlamentary Papers: House of Commons Accounts and Papers, 100/44, p. 94 (Chermside to Goschen, 9 August 1880).

օտարալեզու մի քանի սկզբնաղբյուրների և աշխատությունների: Այսպես, բելգիացի հետազոտող Վ. Քինեն իր «Ասիական Թուրքիա» աշխատության մեջ, անդրադառնալով 1890-ական թթ. Արևմտյան Հայաստանում ապրող 92 հազար նեստորական ասորիների թվաքանակին[2], նշում է. «Նրանց թվաքանակը հնարավոր չէ ճշգրիտ ասել, որովհետև անգամ իրենք՝ նեստորականները հստակ չգիտեն այն: Եթե ինչ-որ մի ճանապարհորդ կպնդի, որ նրանց թվաքանակը Թուրքիայում հասնում է ոչ թե 100 հազարի, այլ 50 հազարի կամ 150 հազարի, դժվար թե գտնվի մեկը, որ փաստեր բերի հիմնավորելու այդ թվի անճշտությունը»[3]:

Պատմաբան Ա. Համբարյանը գտնում է, որ «Վ. Քինեի ուսումնասիրությունը վստահություն չի ներշնչում, քանի որ հիմնված է թուրքական պաշտոնական տվյալների վրա և զրկում է մեզ երկրի տնտեսական էվոլյուցիան ցույց տալու հնարավորություններից»[4]: Իսկ ըստ Մկրտիչ Ավետիսյանի, եվրոպական ճանապարհորդների վիճակագրական տվյալները խիստ պակասավոր են, քանի որ «հյուպատոսները և ուղևորները բնակիչների մանրամասն հաշիվները չեն կրնար հանել, հաճախ հավանականութիւնների, վեր ի վերո ենթադրութիւնների վրա և երբեմն ալ առաջին հանդիպած և զիրենք հյուրընկալող տեղացու ըսածների վրա կը հիմնեն իրենց հաշիվը և շատ անգամ ալ քաղաքական նկրտումներէ ներշնչուած՝ կիջեցունեն կամ կը պակասեցունեն գրչին չափազանց հնազանդ թվանշանները»[5]:

Հայ անվանի ազգագրագետ Ե. Լալայանի վիճակագրական տվյալների համաձայն ասորիների թվաքանակն Օսմանյան կայսրությունում կազմում էր ավելի քան 863 հազար, Ըստ նրա, կրոնական հատկանիշով ասորիները բաժանված էին նեստորականների, քաղդեացիների, ուղղափառների, հակոբինյանների, մարոնիտների և յութերականների: Ե. Լալայանի տվյալները գրեթե նույնությամբ առկա են ռուսական բանակի շտաբս կապիտան հայազգի Բ.Շելկովնիկովի մոտ, որը շրջագայել էր ասորիների բնակավայրերով և ուսումնասիրել նրանց բարքերն ու սովորությունները:

Ա. Ուբիչինին, գտնում էր, որ 19-րդ դարի երկրորդ կեսին, մասնավորապես մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Օսմանյան Թուրքիայում ապրում էր 28 մլն. 500 հազար բնակչություն,

---

[2] Cuinet V., La Turquie d'Asie,T. II, Paris, 1892, p. 635.

[3] Маевский В., Ванский вилайет, Военно-статистическое описание, Т., 1901, с. 98-99.

[4] Համբարյան Ա., Ազգարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում /1856-1914/, Ե., 1965, էջ 6:

[5] Մ. Ա., Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարսել, 1890, էջ 5:

որից 130 հազարը նեստորական ասորիներն էին, 30 հազարը՝ քաղդեացի ասորիները[6]:

1889 թ. «Արծագանք» պարբերականը ասորիների տվյալ ժամանակաշրջանի թվաքանակի մասին գրում էր, որ միայն Վանա լճից մինչև Բաղդադի փաշայությունն ընկած տարածքում ապրում են 500 հազար մաքուր ասորերեն և 200 հազար քուրդ-ասորական խառը լեզվով խոսող ասորիներ[7]:

Ինչպե՞ս էին տեղաբաշխված ասորիներն Արևմտյան Հայաստանի նահանգներում.

1. 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին տասնամյակին Վանի վիլայեթը կազմված էր Վանի և Հաքյարիի սանջակներից: Հաքյարիի սանջակն իր Բաշկալե կենտրոնով խնդրո առարկա հարցի առումով հետաքրքիր է այն տեսանկյունից, որ այստեղ ապրում էին բավականաչափ ասորիներ՝ զբաղեցնելով Մեծ Զաբ գետի միջին հոսանքն ընկած տարածքը: Գրականության մեջ այս շրջանը ընդունված է կոչել «Ինքնավար Ասորական մարզ» հավաքական անունով: Ասորիների դրությունն այստեղ, իբրև երկրագործ ժողովրդի, անմխիթար էր: Նրանք զբաղվում էին բնատնտեսությամբ և ապրում էին ազգային ներփակ կյանքով:

1878 թ. Ա. Երիցյանի ձեռքի տակ եղած տվյալների համաձայն, որոնք ըստ հեղինակի՝ այնքան էլ հավատ չէին ներշնչում, Վանի սանջակում ապրում էին 17 400 ասորիներ, որոնք կազմում էին վիլայեթի ընդհանուր բնակչության 4,5%-ը[8]: Փորձենք այս տվյալները համադրել:

Վանի սանջակում բնակվում էին 56 775 ասորիներ, որոնք միասին կազմում էին 11 353 ծուխ[9]: Վանի ռուսական փոխհյուպատոս Ա. Օլֆերևը 1912 թ. վկայում էր, որ Վանի սանջակում բնակվում են 70 հազար նեստորական և հազար քաղդեացի ասորիներ[10]: Ասորիների վերաբերյալ ռուս դիվանագետի հաղորդած տվյալները, մեր կարծիքով, բավականին նվազեցված են: Հայոց պատրիարքարանից ռուսական դեսպանին ուղղված մի գրության համաձայն՝ 1912-1913 թթ. Վանի սանջակի 350 հազարանոց բնակչությունից 18 հազարը (5%) նեստորական, քաղդեական և հակոբինյան ասորիներն էին[11]: 100-ից ավելի ասորի ընտանիքներ ապրում էին Մահմուդիեի կազայի Մարվանա

---

[6] Убичини А., Современное состояние Оттоманской империи, Спб., 1877, с. 18, 62.

[7] Արծագանք, N 24, 25 հունիսի 1889, էջ 359:

[8] Ерицов А., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881, с. 44-45.

[9] Малома Я. Д., Несториане и округ Хеккари, Изв. Кавк. отд. импер. русск. географ. общ., том II, Т., 1873, , с. 174.

[10] Реформы в Армении, Сбр. диплом. документов, Петроград, 1915, с. 288.

[11] Նույն տեղում, էջ 289:

և Սարայ գյուղաքաղաքներում, սակայն բուն գավառակում ասորաբնակ էր միայն մեկ գյուղ՝ Խարաբասորիկը:

Ջուլամերկի կագայում ըստ Յա. Սալոմայի տվյալների ապրում էին 36 500 ասորի բնակչություն, որոնք տեղավորված էին 790 գյուղերում:

Ե. Լալայանի հաշվարկումներով՝ Ջուլամերկի կագայի ասորիները կազմում էին 4855 տուն, այսինքն՝ շուրջ 41 հազար մարդ: Փաստորեն ասորիները կազմում էին կազայի 95%-ը, Հաքյարիի սանջակի 37%-ը և Վանի վիլայեթի 17%-ը[12]:

Գևար կազայի երեք նահիեներում, բացի Ջելուից, ապրում էին 3200 նեստորական ասորիներ:

Հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ Ա. Թոխմախյանի տվյալների համաձայն՝ Նորդուզի և Շատախի ասորիների թվաքանակը 1880 թ. դրությամբ կազմում էր 447 ընտանիք[13]:

Ջելու նահիեում նեստորական ասորիներին էր պատկանում 2250 ծուխ, ուր բնակվում էին մոտ 11250 ասորիներ[14]: Քրդերն այստեղ շատ քիչ էին:

Աղբակ կազան բաժանված լինելով երկու նահիեների՝ Կոտուր և Արտոշի, իր մեջ ընդգրկում էր 9 գյուղ՝ 1800 նեստորական ասորի բնակչությամբ, շուրջ 360 ծուխ[15]: Ա. Թոխմախյանի բերած տվյալների համաձայն՝ Աղբակում 1880 թ. ապրում էր 1447 ասորի բնակչություն[16]:

Ե. Լալայանի հաշվումներով՝ Վանի վիլայեթի Վանի և Հաքյարիի սանջակներում ապրում էին 79 հազար ասորիներ[17]:

Դիարբեքիրի անգլիացի հյուպատոս Դ. Թեյլորի վիճակագրական տվյալների համաձայն նեստորական ասորիներն այստեղ կազմում էին 99110[18]:

Ըստ Ս. Թոխմախյանի՝ Վանի նահանգի ասորիների թվաքանակը հասնում էր 86368 մարդու[19]:

Համադրելով տարբեր ուսումնասիրություններում նեստորական ասորիների մասին եղած տեղեկությունները, համենայն դեպս, մեկ ընդհանրացնող եզրակացություն արդեն կարելի է կատարել. ի տարբերություն ասորիների մյուս դավանական ճյուղերի, նեստորականների մասին պահպանված տեղեկություններն առանձին

---

[12] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 5:
[13] Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 37:
[14] Малома Я. Д., указ. соч., с. 173.
[15] Նույն տեղում, էջ 174.
[16] Թոխմախյան Ա., նշվ. աշխ., էջ 31:
[17] Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 5:
[18] Shimshir B.N., British Documents on Ottoman Armenians, V. I, Ankara, 1982, p. 67.
[19] Թոխմախյան Ա., նշվ. աշխ., էջ 55:

տարբերություններով հանդերձ գրեթե համապարփակ են: Ուստի պատկերն ավելի ըմբռնելի դարձնելու համար վկայակոչենք ևս մի քանի տվյալներ.

Այսպես, ըստ ասորագետ Գաբրիելլա Յոնանի Հաքյարիում ապրում էին 97040 նեստորական ասորի[20], որոնք բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ կարևորագույն տեղ էին գրավում: Եթե շարունակելու լինենք այս վիճակագրությունը, ապա կտեսնենք, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների համաձայն՝ 1881թ. ամբողջ Վանի վիլայեթում բնակվում էր 88338 նեստորական ասորի[21]: Թուրքիայի արդարադատության նախարարության վիճակագրության տվյալների համաձայն՝ 1890թ. նույն վիլայեթում ապրում էր 59500 նեստորական[22], իսկ ըստ Վ. Քինեի՝ այս նույն տարիներին Վանի վիլայեթում բնակվում էին 52 հացար ուղղափառ, 40 հազար նեստորական և 6 հազար քաղդեացի ասորի[23]: Ռուս դիվանագետ Վլ. Մաևսկին 1898թ. այցելում է նեստորական ասորիների աշիրեթային բնակավայրերը, որտեղ և հայթայթում է 1890թ. վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ըստ որի Թիարում, Ջելուում, Բազում, Թիումում, Դեզում ապրում էին 6180 ծուխ ասորիներ:

Վլ. Մաևսկու հաշվումներով՝ 1897թ. նեստորական ասորիների թվաքանակը Վանի վիլայեթում 90 հազար էր, իսկ ընդհանուր բնակչության թվաքանակը՝ մոտավորապես 405 հազար[24]: Վանի սանջակում 1500 և Հաքյարիի սանջակում 86 հազար ասորիներ ապրելու մասին է հաղորդում Մ. Ավետիսյանը[25]:

Սովորաբար, ասորական գյուղերը մեծ էին. ծխերի թիվը հասնում էր մինչև մի քանի հարյուրի: Օրինակ, Ջուլամերկի կազայի Աշյուտա գյուղը բաղկացած էր 500 նեստորական ծխերից: Բոլոր ասորական գյուղերում կային եկեղեցիներ:

2. Ասորիների բնակության ավանդական շրջաններից է եղել նաև Բիթլիսի վիլայեթը: 1878թ. տվյալներով՝ վիլայեթում կար 120 հազար թուրք և քուրդ, 200 հազար հայ և 8 հազար ասորի[26]: Ասորիներն ապրում էին քրդերի մեջ ամենուր՝ Աղերդից մինչև Դիարբեքիր ընդգրկող տարածքում:

---

[20] Yonan G.. Ein Vegessener Holocaust, Die Vernichtung der Christlichen Assyrein in der Türkei, Göttingen-Wien, 1989, p. 211.
[21] Реформы в Армении, с. 286.
[22] Նույն տեղում, էջ 287.
[23] Cuinet V., op. eit., T.II, p. 635.
[24] Маевский В., Ванский вилает, Военно-статистическое описание, с. 114.
[25] Մ. Ա., նշվ. աշխ., էջ 45:
[26] Հայկական հարց, հանրագիտարան, Ե., 1996, էջ 85:

Սնգլիացի հետազոտող Հ. Լինչի հաղորդած տվյալներով՝ 1890թ. Բիթլիսի վիլայեթի Բիթլիս կամ Բաղեշ քաղաքում և Մերքեզ կազայում ապրում էր 44109 մարդ, որից 16094–ը հայեր, 342-ը՝ ասորիներ և 27673–ը՝ մահմեդականներ[27]: 1894թ. ըստ Հ. Լինչի՝ «Բիթլիս քաղաքում ապրում էր 30 հազար մարդ, որից 10 հազարը հայեր էին, 300 ասորիներ, մնացածը՝ թուրքեր և քրդեր»[28]: Սղերդի սանջակի Խազխեիր կազայի 7 գյուղերում բնակվում էին 1550 նեստորական ասորիներ՝ մոտ 310 ծուխ[29]:

Միայն Սղերդ քաղաքում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ասորիների թիվը հասնում էր 5 հազար ծխի[30]: Բիթլիս և Սղերդ քաղաքներում ապրում էր 1863 քաղդեացի ասորի[31]: Ըստ ռուսական գլխավոր շտաբի պոխգնդապետ Տոմիլովի, թուրքական պաշտոնական սալնամեների տվյալներով Սղերդում բնակվում էր 2860 քաղդեացի և 2695 հակոբինյան ասորի[32], սակայն փոխգնդապետի հաշվումներով Սղերդում և նրան մոտակա 12 բնակավայրերում կային 80 քաղդեական, 15 հակոբինյան, 110 սիրիական կաթոլիկների տներ[33]: Այստեղ նրանք ունեցել են նաև իրենց նեստորական եկեղեցին[34]: Համադրելով տարբեր հեղինակների կողմից նշված վիճակագրական այս տեղեկությունները, որոնք փոքր ինչ հակասական են, պետք է արձանագրենք, որ թվաքանակի այդ տարբերությունները բնական են և բնորոշ են եղել թուրքական կայսրության ժողովրդագրական իրավիճակին: Թեև տվյալ դեպքում այդ վիճակագրական նյութերը, որքանով նկատում ենք, ժողովրդագրական ընդհանուր պատկերը ներկայացնելու խնդրում շատ չեն տարբերվում միմյանցից:

Վլ. Մաևսկին հաղորդում է, որ 1912 թ. վիլայեթում բնակվում էին 5 հազար հակոբինյան և 4 հազար քաղդեացի ասորիներ: Մեկ այլ տեղեկություն ևս. դարի սկզբին Բիթլիսի վիլայեթի Թաուլիք նահիեում ապրում էին 45 նեստորական ընտանիքներ[35]: Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի 1913 թ. տվյալների համաձայն՝ վիլայեթում, բացի

---

[27] Линч Х., Армения, Путевые очерки и этюды, т. II, Т., 1910, с. 532. Տե՛ս նաև Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի,Պէյրութ, 1956, էջ 80:
[28] Линч Х., указ. соч., с. 194.
[29] Малома Я. Д., указ. соч., с. 174.
[30] Термен Р. И., Отчет о полевой поездке 1907г. в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Т., 1909, с. 152.
[31] Shimshir B.N., British Documents on Ottoman Armenians, V. II, Ankara, 1983, p. 129.
[32] Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г., часть 1, СПб, с. 181.
[33] Նույն տեղում, էջ 236, 275.
[34] Ծոցիկեան Ս. Մ., Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947, էջ 671:
[35] Маевский В., Ванский вилает, Военно-статистическое описание, с. 423.

Սղերդի սանջակի հարավային մասից, հաշվվում էր 15 հազար նեստորական, հակոբինյան ու քաղդեացի[36] և 6190 ուղղափառ ասորի[37]:

Աղերդից հարավ-արևելք, Զեզիրեի և Զախոյի մոտ գոյություն ունեին մեծ քանակությամբ ասորական բնակատեղիներ, որոնց բնակիչները կաթոլիկություն էին ընդունել: Զեզիրեում ապրում էին 5200 քաղդեացիներ: Զախոյում ապրում էին 3500 քաղդեացիներ[38]: Բիթլիս քաղաքի Կիզիլ-Մեջիդ թաղում մի մեծ քարափի տակ կառուցված էր ասորական մի եկեղեցի:

3. Ասորիների քիչ թե շատ ստվար զանգվածներ կարելի էր հանդիպել էրզրումի վիլայեթում: Հ. Լինչի տվյալներով՝ 1890-ական թթ. էրզրում քաղաքում ապրում էր 38894 մարդ, որից 1422 ասորիներ: Այլ կազաներում բնակվող ընդհանուր 266746 թվաքանակից 207261 մահմեդականներ էին, 57358 հայեր, 1797 ասորիներ: Երզնկայի սանջակում ապրում էր 191 608 մարդ, որից 155 879 մահմեդականներ, 31 091 հայեր, 2 182 ասորիներ: Բայազետի սանջակում էին բնակվում 568 ասորիներ[39]:

4. Ասորիների բնակության հիմնական օջախներից է եղել Դիարբեքիրի վիլայեթը: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այստեղ ապրում էր 470 հազար մարդ՝ ասորիներ, հայեր, քրդեր, թուրքեր: Մոտ 50 հազարի հասնող ասորիներ հոծ խմբերով բնակվում էին Դիարբեքիրի վիլայեթի հարավային մասում[40]: Այս թվաքանակը տատանողական է, որովհետև հաշվի չեն առնված ևս 60 հազար նեստորականները, հակոբինյանները և քաղդեացիները, որոնք կազմում էին վիլայեթի ամբողջ բնակչության 20,4 %-ը[41]: 20-րդ դարի սկզբին Դիարբեքիր կամ Տիգրանակերտ քաղաքում բնակվում էին 950 նեստորական ասորիներ և 2300 կաթոլիկ ասորիներ ու հայեր[42]: Դիարբեքիրի վիլայեթի Մարդինի սանջակի Զեզիրե կազայի 6 գյուղերում և Դերգուլ նահիեում ապրում էին 3500 ասորիներ՝ մոտ 700 տուն[43]: Ըստ Վլ. Մաևսկու տվյալների վիլայեթի Սիլվանի և Իլիջա կազաներում

---

[36] Նույն տեղում:

[37] Krikorian M.K.. Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908, London, 1977, p. 27.

[38] Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г., с. 236.

[39] Линч Х., указ. соч., с. 532.

[40] Թառոյան Կ. Զ., Արևմտյան Հայաստանը, Արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ, Ե., 2001, էջ 179:

[41] Ղազարեան Հ.Գ., Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 189:

[42] Մկունդ Տ., Ամիտայի արծագանքները, Նիւ-Եորք, 1950, էջ 281:

[43] Малома Я. Д., указ. соч., с. 174.

հաշվվում էին 480 նեստորական ընտանիքներ[44]: 19-րդ դարի վերջին այստեղ կային 3731 հակոբինյաններ, 761 քաղդեացիներ և 15 հազար սիրիացի-կաթոլիկներ[45]: Ըստ թուրքական սալնամեների, դարասկզբին Դիարբեքիրի վիլայեթում ապրում էին 22748 հակոբինյան, 1439 քաղդեական և 11165 սիրիացի կաթոլիկներ, իսկ Ամիդ քաղաքում՝ 1300 հակոբինյաններ, 1100 քաղդեացիներ և 150 սիրիացի կաթոլիկներ[46]:

1913թ. տվյալներով Դիարբեքիրի վիլայեթում 60 հազարը նեստորական, հակոբինյան և քաղդեացի՞՝ և 27544 ուղղափառ ասորիներ էին[48]: Դիարբեքիրից Հալեպ ճանապարհի վրա էր գտնվում Սևերեկը, որտեղ կար մեկ հակոբինյան և Սուրբ Պարսամ ասորական ընդհանուր եկեղեցին: Քաղաքը 19-րդ դարի վերջին ուներ 12 հազար բնակչություն, որի մի մասը մահմեդականներ ու քրդեր էին, իսկ մյուս մասը հայեր ու ասորիներ[49]:

Մարդինում ապրում էին հազար ծուխ հակոբինյան ասորիներ, 350 ծուխ սիրիացի-կաթոլիկներ, 100 ծուխ քաղդեացիներ[50]:

Դիարբեքիրի վիլայեթի կարևոր քաղաքներից մեկն էլ Մծբինն է: Այն 19-րդ դարի վերջին բաղկացած էր 600 ծխից, որից 60-ը պատկանում էին ասորիներին[51]:

5. Խարբերդի վիլայեթում բնակվում էին 5 հազար ասորիներ[52], 413 հակոբինյաններ և սիրիացի-կաթոլիկներ[53]: 1890 թ., ինչպես հաղորդում է Հ. Լինչը, Խարբերդ քաղաքում ապրում էին 422 ասորիներ[54]: Ըստ Մ. Ավետիսյանի քաղաքում ասորիների թվաքանակը հասնում էր մոտ 750-ի[55]: Հայոց պատրիարքարանի տվյալները ևս հաստատում են, որ 1913 թ. վիլայեթում ապրում էին 5 հազար տարբեր դավանանքներին պատկանող ասորիներ[56]: Այստեղ նրանք ունեին իրենց նեստորական եկեղեցին, որը

---

[44] Маевский В., Ванский вилайет, Военно-статистическое описание, с. 433-440.
[45] Shimshir B.N, op. cit., V. II, p. 129, 83.
[46] Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г., с. 181, 256.
[47] Реформы в Армении, с. 280.
[48] Krikorian M.K., op. cit., p. 19.
[49] Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г., с. 263.
[50] Նույն տեղում, էջ 266:
[51] Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г., с. 269.
[52] Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր, Հայաստանի ջարդեր, Կ. Պոլիս, 1919, էջ 74:
[53] Shimshir B.N., op. cit.,V. II, p. 130.
[54] Линч Х., указ. соч. с. 532.
[55] Մ. Ա., նշվ. աշխ., էջ 45:
[56] Реформы в Армении, с. 283.

գտնվում էր քաղաքի հյուսիս-արևելյան մասում և կոչվում էր Բուզուլուկա:

6. Եվ վերջապես, ասորիների ընտրած հաջորդ բնակատեղին դա Սեբաստիայի վիլայեթն էր: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների համաձայն, այստեղ 1913 թ. (բացի հյուսիս-արևմտյան մասից) բնակվում էին 25 հազար նեստորական, հակոբական և քաղդեական ասորիներ[57]:

Եթե ամփոփելու լինենք Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի 1912-1913 թթ. վիճակագրական տվյալները, ապա Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Արևմտյան Հայաստանի նահանգներում, բացի ասորիների հիմնական օջախ Հաքյարիի սանջակից, բնակվում էին 123 հազար նեստորական, քաղդեական և հակոբինյան ասորիներ, որոնք կազմում էին վիլայեթների ընդհանուր բնակչության 4,7%-ը: Այսպիսով, այս տվյալների համաձայն ասորիները տեղաբաշխված էին հետևյալ կերպ. Վան՝ 18 հազար, Բիթլիս՝ 15 հազար, Խարբերդ՝ 5 հազար, Դիարբեքիր՝ 60 հազար, Սեբաստիա՝ 25 հազար: Ասորիների ընդհանուր թվաքանակը կազմում էր 123 հազար[58]:

---

[57] Նույն տեղում, էջ 278:
[58] ՀՀ ՊԿՊԱ, ֆ 57, ց. 5, գ. 15, թ. 120:

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՅՈՒՐԻՆԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Գյուրինի կազան Սեբաստիայի սանջակի հարավային գավառակներից մեկն էր: Վերջինիս սահմաններն էին հյուսիսից՝ Կանգալի կազան, հարավից՝ Հալեպի վիլայեթը, արևմուտքից՝ Ազիզիեի, արևելքից՝ Տարենտեի կազաները:

Վարչական կենտրոնն էր համանուն Գյուրին քաղաքը, որը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայաշատ մի կենտրոն էր: Քաղաքը բաժանված էր բազում թաղերի, որոնց մեծ մասը հայաբնակ էր:

Շուղուլ (Շաղալ) թաղը բնակեցված էր գլխավորապես հայերով, որոնց թիվը հասնում էր 200 տան, որոնցից 60 տուն հայերը բողոքականներ էին[1]:

Էորեն թաղը բաժանված էր 2 մասի՝ Վերի ու Վարի և բաղկացած էր 150 հայ տնից, որից 30 տունը բողոքականներ[2]: Տաբեր թաղն ուներ 50 տուն մահմեդական բնակչություն[3]:

Սմկնա թաղն ուներ 20 տուն բնակիչ, որից 10-ից ավելին բնակեցված էին հայերով[4]:

Չերչի-Կոբը շրջապատված էր բարձրադիր լեռներով՝ շուրջ 20 տուն հայերով, որոնցից նշանավոր էին Մավուսախալյան գերդաստանը[5]:

Յաշ-Թեփե թաղը բաղկացած էր 40 տուն հայ բնակչությունից[6]:

Սև-բլուրն ուներ 100 տուն հայ, որոնցից 30 տունը բողոքականներ էին[7]: Այս թաղի բնակչության թվում էին մի քանի տուն մահմեդականներ[8]:

Սաղ թաղում էր գտնվում հայոց մայր եկեղեցին: Այստեղի հայ բնակչության մասին խոսելիս պետք է անդրադառնալ հետևյալ հանգամանքին: Գյուրին քաղաքի մեջ 60 տնից ավելի կաթոլիկ հայեր կային: Նրանք սովորաբար բնակվում էին Ամկնա, Շուղուլ և Սաղ թաղերի մեջ[9]:

---

[1] ՀՀ ԱԱ, ֆ. 425, ց. 1, գ. 64, թ. 26, տե՛ս նաև Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 436, տե՛ս նաև Առաքել Պ., նշվ. աշխ., էջ 396:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Տե՛ս նույն տեղում:
[9] Տե՛ս նույն տեղում:

Խաս-պաղ թաղը գրեթե ամբողջովին հայաբնակ էր և ուներ շուրջ 200 հայ տուն[10]: Ձախ- ծորը[11] քաղաքի բոլոր թաղերից առաջինն էր թե՛ բազմամարդության և թե՛ ընդարձակության տեսակետից: Ուներ 400 տուն հայ բնակիչ, որից 90-ը՝ բողոքականներ[12]:

Այսպիսով, Գյուրին քաղաքի հայ բնակչության թիվը հասնում էր 1180 տան: Այս տվյալը թույլ է տալիս ենթադրելու, որ այն վերաբերում էր 1870-ական թթ., քանի որ արդեն 1883թ. նրանց թիվը հասնում էր 1300 տան[13]:

Գյուրին քաղաքի անտանելի վիճակը, ցորենի ու հացի չլսված թանկությունը օրական պարենը հայթայթող կյուրինցիների մեծ մասին ստիպում էր արտագաղթել: Կյուրինցիները գաղթում էին խումբ-խումբ[14]: Մնացող Գյուրինցիների հիմնական զբաղմունքը արհեստագործությունն ու առևտուրն էր:

1889թ. մի հոդվածագիր այսպես է բնորոշել կյուրինցիներին. «Գյուրինի հայերն քաջարի արուեստի, վաճառականութեան և գինավարժութեան մէջ մեծ համբաւ ունին իբրև նրբամիտ վաճառականներ և արիասիրտ ճամբորդներ, անվախ ի տուր եւ առ: Ունին վաճառականական տներ հաստատուած Հալէպ, Պոնտոս, Կարին, Պոլիս, Սեբաստիա, Տիգրանակերտ, նաեւ՝ Լոնտոն, Մանչեսթըր»[15]:

Ցավոք այս գավառակը ևս չխուսափեց 1895-1896թթ. թուրքական ջարդերից: Գյուրին քաղաքի բնական աճը խաթարվեց: Թեև այս արհավիրքը խաթարեց հայ ժողովրդի բնական աճը Գյուրին քաղաքում, բայց հայերը շարունակեցին գերակշռել քաղաքի բնակչության մեջ:

1898-1900թթ. քաղաքն ուներ 2000 տուն՝ 12000 բնակիչ, որից 1400 տունը կազմում էին հայերը[16]:

Արդեն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գյուրինն ուներ 2000 տուն կամ 14000 շունչ հայ բնակչություն[17]:

Գյուրինի կազայի հայկական գյուղերից էին Գարա-Սարը, Գարա-էորեն, Ձախրն-Քյոյիվը, որոնք գտնվում էին Գյուրին քաղաքից հյուսիս: 20-րդ դարի առաջին քառորդին այստեղ հետևյալ ժողովրդագրական

---

[10] Տե՛ս նույն տեղում:
[11] Ոմանք Ջաղաց-ծոր են անվանում՝ ծորերի մեջ ջաղաց ունենալու պատճառով:
[12] Տե՛ս նույն տեղում:
[13] Մասիս, Կ.Պոլիս, 1883, մարտի 25, թ. 3441:
[14] Տե՛ս նույն տեղում:
[15] Արտքս, Պետերբուրգ, 1889, էջ 76-82:
[16] ԳԱԹ, Ազատյան Թ., բաժ. 3, գ. 23, թղթ. 1 և 5, տե՛ս նաև Արևելք, Կ.Պոլիս,1898, հուլիս:
[17] Գաբիկեան, նշվ. աշխ., նույն տեղում, Առաքել Պ., նույն տեղում, նաև Աղեքսանդրեան, նշվ. աշխ., էջ 373:

պատկերն էր. Գարա-Սար՝ 72 տուն հայ բնակիչ, Գարա-Էորեն՝ 80 տուն հայ և 20 տուն թուրք, Չախրն-Քյոյիվ՝ 20 տուն հայ բնակչություն[18]:

Թուրքաբնակ գյուղեր էին Թելին (60 տուն), Գուբյուքը (50 տուն), Թուխմիշը (60 տուն), Յազիքեյը (15 տուն)[19]:

Կագայում գոյություն ունեին շուրջ 50 թուրքաբնակ դարձած գյուղեր՝ 2000 տուն բնակչությամբ[20]: Այդ թուրքական գյուղերից միայն մի քանիսում էին բնակվում հայեր, որոնց թիվը հասնում էր 53 տան: Այսպես, օրինակ Գյուրին քաղաքի շրջակայքում գտնվող գյուղերից միայն Եէլքեն ուներ 5 տուն, Կավակը՝ 20 տուն հայ բնակիչ[21]:

Գարատորագ գյուղախմբի 12 թուրքական գյուղերից միայն Գարավերենն ուներ 19 տուն հայ բնակչություն, իսկ Կեռպեք Վերեն գյուղախմբի 30 թուրքական գյուղերից միայն Քյուրքճի և Քյաֆիր-Վերեն գյուղերն ունեին խառը բնակչություն[22]:

Գյուրին քաղաքից բացի, կագայում 20-րդ դարի սկզբին ապրում էին ընդհանուր հաշվով 225 տուն հայեր: Եթե ընդունենք յուրաքանչյուր տան համար բնակիչների նվազագույն թիվը 8 հոգի, ապա ստացվում է շուրջ 2000 անձ: Այսպիսով 1914-1915թթ., մեր հաշվարկով կագայում բնակվում էր շուրջ 16000 հայ բնակիչ:

Թեև հայերի մեծագույն մասը 20-րդ դարի սկզբին կենտրոնացած էր Գյուրին քաղաքում, բայց այնուամենայնիվ ընդհանուր կագայում նրանք ավելի մեծ թիվ էին կազմում, քան թե մյուս էթնիկ տարրերը:

Դեռ 1881թ. հայոց առաջնորդարանի հաղորդած վիճակագրության համաձայն[23] Գյուրինում և շրջակա գյուղերում բնակվում էին 7900 շունչ թուրքեր և կզլբաշներ, 8830 շունչ հայեր, 1600 շունչ քրդեր: Ավելի քիչ էին կզլբաշներն ու քրդերը:

Հայերի համար հայոց առաջնորդարանի ցույց տված տվյալները պետք է համարել մոտավոր: Հայտնի է, որ հարկերից խուսափելու նպատակով, հայոց առաջնորդարանը թուրքական կառավարությանը ներկայացնում էր հայ բնակչության նվազեցված տվյալներ, որը դժվարալուծելի խնդիրներ է առաջ բերում հայ բնակչության իսկական թվերի հաշվարկման ժամանակ:

Փաստորեն հայերը դարավերջին այստեղ կազմում էին ընդհանուր բնակչության մոտ 48,2%-ը, մինչդեռ թուրքերը և կզլբաշները միասին՝ 43,1%-ը, քրդերը՝ 8,7%-ը:

---

[18] Առաքել Պ., նշվ.աշխ., հ. Բ, էջ 411, տե՛ս նույնը Աղեքսանդրեան Ա., նշվ.աշխ. էջ 375:
[19] Տե՛ս նույն տեղում:
[20] Աղեքսանդրեան Ա., նշվ. աշխ., նույն տեղում:
[21] Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 128:
[22] Նույն տեղում, էջ 128-129:
[23] Մասիս, Կ.Պոլիս, 1881, հոկտեմբերի 13, թ. 3015:

Ամփոփելով նշենք, որ Կյուրինի կազան XIX դարի վերջին և XX դարի սկզբին ուներ խայտաբղետ ժողովրդագրական կազմ, որի բաղկացուցիչ էթնիկ տարրերն էին հայերը, թուրքերը, կզլբաշները, քրդերը: Հայերը, գերակշռող տոկոսը կազմելով այս բնակչության մեջ, այս հատվածի մշակութային հարստության կրողն էին:

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 1919Թ.

Հայաստանի անկախության առաջին ամիսներին 12000 կմ քառ. վրա կուտակվել էր 450000 գաղթական[1]: Սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի և գաղթականության խռնվածության պատճառով երկրում սկսեցին մոլեգնել բազմաթիվ հիվանդություններ և համաճարակներ, որոնք մեծաթիվ զոհեր խլեցին: Իրավիճակն ավելի ծանրացավ. հոկտեմբեր ամսին երկրում գրեթե սպառվեցին հացի պաշարները, իսկ խստաշունչ ձմեռը լրացրեց պակասը: Դրությունն այսպես օրհասական մնաց մինչև 1919թ. մայիսի վերջը, երբ Հայաստան հասավ ամերիկյան մարդասիրական օգնությունը: Այս ժամանակահատվածում, ըստ Ներքին Գործոց նախարարության պաշտոնական տվյալների, երկրում մահացածների թիվը կազմում էր 192000 հոգի[2]:

Երկրում շատ թե քիչ կայունություն հաստատվելուց հետո մարդկային և նյութական ռեսուրսները ճշգրտելու համար ՆԳ նախարարությունը որոշում է անցկացնել գյուղատնտեսական վիճակագրություն: Աշխատանքներն իրականացնելու համար հիմնվում է Վիճակագրական Բյուրո, Բախշի Իշխանյանը նշանակվում է բյուրոյի պետ: Վիճակագրության աշխատանքները սկսվում են հունիս ամսից և շարունակվում են հուլիս-օգոստոս ամիսներին (գաղթականների հաշվառում): Սակայն երկրում ծագած մուսուլմանական խռովությունների պատճառով աշխատանքները ավարտին չեն հասցվում: Նոր վիճակագրությունը անցկացվում է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այն վայրերում, ուր փաստացի տարածվում էր հայկական իշխանությունը: Բոլորովին չեն վիճակագրվել Նախիջևանի նահանգը, Լոռու «Չեզոք գոտին», շատ քիչ է վիճակագրվել Սուրմալուն: Չեն վիճակագրվել նաև վեց քաղաքներ՝ Երևանը, Ալեքսանդրապոլը, Նոր Բայազետը, Կարսը, Կաղզվանը, Կողբը:

Բնակչությունը դասակարգվել է հետևյալ կերպ՝ հայեր, մուսուլմաններ, ոչ մուսուլմաններ (եզդի, հույն, ռուս, ասորի և այլն), խառը բնակչություն: Այս խմբերը իրենց հերթին բաժանվել է բնիկների և գաղթականների: Հայ գաղթականները բաժանվել են «թուրքահայ»-ի և «ռուսահայ»-ի, մուսուլման գաղթականները՝ «թուրք»-ի և «քուրդ»-ի, իսկ ոչ մուսուլման գաղթականները՝ «եզդի»-ի, «մոլոկան»-ի և «ռուս»-ի:

Ըստ վիճակագրության պաշտոնական տվյալների բնակչությունը տեղաբաշխվել է.

---

[1] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 199:
[2] Հայրենիք, 1924թ. հունիս N 8, էջ 72

1. Երևանի գավառ: Գավառում կար 240 գյուղ և 1 քաղաք՝ Դամարլուն: Վիճակագրվել էր բնակիչ ունեցող 118 բնակավայր: Չէր վիճակագրվել բնակեցված 64 գյուղ, բոլորն էլ մուսուլմանական: Դատարկ էր 60 գյուղ: Վիճակագրված բնակչության թիվը 93513 հոգի էր, որից՝ հայեր-82124 հոգի (18627-ը գաղթական), մուսուլմաններ-9148 հոգի (4260-ը գաղթական), ոչ մուսուլման-2241 հոգի:
2. Էջմիածնի գավառ: Գավառում կար 239 գյուղ և 2 քաղաք՝ Վաղարշապատը և Աշտարակը: Բնակեցված էր 175 բնակավայր: Չէր վիճակագրվել 44 մուսուլմանական և 4 ոչ մուսուլմանական գյուղեր, բոլորն էլ բնակեցված: Վիճակագրված բնակչության ընդհանուր թիվն էր 144304 հոգի, որից՝ հայեր-112500 հոգի (38852-ը գաղթական), մուսուլմաններ-31214 հոգի (9495-ը գաղթական), ոչ մուսուլման-590 հոգի:
3. Ալեքսանդրապոլի գավառ: Գավառում կար 130 գյուղ: Չէր վիճակագրվել 1 դատարկ հայկական գյուղ: Բնակչության ընդհանուր թիվը 152324 հոգի, որից հայեր-150051 (34172-ը գաղթական), խառը բնակչություն-2273 հոգի:
4. Նոր Բայազետի գավառ: Գավառում կար 88 գյուղ: Բնակեցված էր 49 գյուղ: Չվիճակագրված գյուղեր չկային: Բնակչության ընդհանուր թիվն էր 77898 հոգի, որից՝ հայեր-76902 հոգի (3937-ը գաղթականներ), խառը բնակչություն-996 հոգի:
5. Դարաքիլիսայի գավառ: Էջմիածնի գավառ: Գավառում կար 56 բնակեցված գյուղ և 2 քաղաք՝ Մեծ Դարաքիլիսան և Ջալալօղլին: Չէր վիճակագրվել 2 բնակեցված ոչ մուսուլմանական գյուղ: Վիճակագրված բնակչության ընդհանուր թիվն էր 94429 հոգի, որից՝ հայեր-87223 հոգի (22575-ը գաղթական), մուսուլմաններ-5006 հոգի, ոչ մուսուլման-2200 հոգի:
6. Դիլիջանի գավառ: Գավառում կար 83 գյուղ և 1 քաղաք՝ Դիլիջանը: Չէր վիճակագրվել 23 գյուղ: Բնակչության ընդհանուր թիվն էր 69375 հոգի, որից՝ հայեր-55278 հոգի (7519-ը գաղթական), մուսուլմաններ-10269 հոգի (335-ը գաղթական), ոչ մուսուլման-3828 հոգի (194-ը գաղթական):
7. Դարալագյազի գավառ: Գավառում կար 112 գյուղ: Չվիճակագրված գյուղ չկար: Դատարկ էր 75 գյուղ: Բնակչության ընդհանուր թիվն էր 27061 հոգի, որից՝ հայեր-24221 հոգի (3431-ը գաղթական), մուսուլմաններ-2840 հոգի (600-ը գաղթական):
8. Զանգեզուրի գավառ: Գավառում վիճակագրվել էր 79 գյուղ և 1 քաղաք՝ Գորիսը: Չէր վիճակագրվել Մեղրու գավառամասը: Վիճակագրված բնակչությունը միայն հայեր էին՝ 76653 հոգի, որից 5604-ը՝ գաղթական:
9. Աուրմալուի գավառ: Գավառում կար 226 գյուղ և 2 քաղաք՝ Իգդիրը և Կողբը: Բնակեցված էր 155 բնակավայր: Վիճակագրվել էր

ընդամենը 19 բնակավայր: Բնակչության ընդհանուր թիվն էր 14219 հոգի, որից՝ հայեր-12061 հոգի (1473-ը գաղթական), մուսուլմաններ-150 հոգի, խառը բնակչություն-2008 հոգի:

10. Կարսի նահանգ: Նահանգում կար 579 գյուղ, բնակեցված էր՝ 513-ը: Չէր վիճակագրվել 207 բնակեցված գյուղ: Բնակչության ընդհանուր թիվն էր 162362 հոգի, որից՝ հայեր-46814 հոգի (25755-ը գաղթական), մուսուլմաններ-69121հոգի (11102-ը գաղթական), ոչ մուսուլման-29965 հոգի (7288-ը գաղթական), խառը բնակչություն-16566 հոգի (5830-ը գաղթական):

Այսպիսով, բնակչության ընդհանուր թիվը, ըստ 1919թ. վիճակագրության պաշտոնական տվյալների, վիճակագրված վայրերում կազմել է 912242 հոգի, որից՝ հայեր-723827 հոգի (162044-ը գաղթականներ), մուսուլմաններ-127748 հոգի (25852-ը գաղթական), ոչ մուսուլման-41097հոգի (7482-ը գաղթական), խառը բնակչություն-19570 հոգի (5830-ը գաղթական): Ըստ այս տվյալների վիճակագրված վայրերում բնակչությունը նվազել է 22%-ով[3]:

Սրանք վիճակագրության պաշտոնական տվյալներն են: Սակայն, մենք օգտվելով Զ. Կորկոտյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում 1830-1931թթ.» գրքի տվյալներից և ՀՀ Ազգային արխիվի (այսուհետև՝ ՀՀԱԱ) նյութերից, կատարել ենք ինքնուրույն հաշվարկ, որի տվյալներն էականորեն տարբերվում են պաշտոնական տվյալներից: Զ. Կորկոտյանը ներկայացրել է միայն ՀԽԱՀ-ի մեջ մտած բնակավայրերի տվյալները: Կարսի նահանգի և Աուրմալուի գավառի գյուղ առ գյուղ տվյալները մենք նույնպես չենք հայտնաբերել: Աուրմալուի տվյալները կան ըստ գյուղական հասարակությունների և բնակչության ընդհանուր թվի առումով համընկնում է պաշտոնական տվյալներին, սակայն վերջինիցս տարբերվում է առանձին ազգերի թվի առումով: Կարսի նահանգի տվյալները նույնպես կան ըստ գյուղական հասարակությունների, սակայն թերի են (չկան 10 գյուղական հասարակությունների տվյալները)[4]: Սուրմալույում մենք ուղղում ենք կատարել բնակչության ընդհանուր թվական տվյալների մեջ, իսկ Կարսի նահանգում ստիպված ենք եղել բավարարվել պաշտոնական տվյալներով, քանզի եղած տվյալները բավարար չէին որոշելու համար յուրաքանչյուր ազգության կոնկրետ թվաքանակը:

Զ. Կորկոտյանը իր գրքում պաշտոնական տվյալներից բացի, որն ինքն անվանել է «Տպագիր», ներկայացնում է ևս երկու ցուցակ. 1-ինը կոչվում է «Ձեռագիր» իսկ 2-րդը՝ «Սևագիր», որից ստուգողական

[3] ՀՀԱԱ, Ֆ.127 ց.1, գ.13, թթ. 1-13:
[4] ՀՀԱԱ, Ֆ.127 ց.1, գգ 6-13:

նշումներ է կատարել[5]: ՀՀԱԱ-ում մենք գտել ենք 1919թ, գյուղ առ գյուղ վիճակագրության տվյալները ներկայացնող մի կիսատ-պռատ ցուցակ (ՀՀԱԱ ՆՊ Ֆ163, g1, գ2855), որն էլ հավանաբար Զ. Կորկոտյանի հիշատակած «Սևագիր» ցուցակն է: Կորկոտյանի ներկայացրած գյուղ առ գյուղ տվյալները գումարելով՝ տվյալները հիմնականում համընկնում են «Չեռագիր»-ի տվյալներին ըստ գավառամասերի (31 գավառամասից 22-ի դեպքում լիովին, 8-ի դեպքում տարբերությունը չի գերազանցում 1000 հոգին, իսկ 1-ի դեպքում՝ Վաղարշապատի, տարբերությունը 1628 հոգի է)[6]: Թվական տվյալները բավականին տարբերվում են առանձին ազգերի համար: Ներկայացնենք մեր ստացած տվյալները:

1. Երևան: Ըստ «Չեռագիր» ցուցակի բնակչությունը եղել է 93,789 հոգի, որից հայեր-80,096, մուսուլման-9148 հոգի, ոչ մուսուլման-3817 հոգի, խառը բնակչություն-728 հոգի:

   Կորկոտյանի մոտ գյուղերի բնակչության ազգությունը նշելիս մենք մի քանի սխալներ ենք գտնում: Այսպես, Ողջաբերդի բնակչությունը նա նշել է «խառը»[7]: Սակայն Ողջաբերդի բնակիչները միշտ էլ եղել են հայեր: Ախտայի գավառամասի Սովուղբուլաղ գյուղի բնակչությունը նշված է «քրդեր»[8], սակայն պետք է լիներ եզդի, որն ուղղել ենք: Ղարաչիչակ գյուղի բնակչությունը նշված է «խառը»: Գյուղում իրոք խառը բնակչություն էր՝ ռուս (մոլոկան) և հայեր: Սակայն մենք ունենք այս գյուղի բնակիչների թիվը ըստ ազգերի, այն է՝ ռուս-288 հոգի, հայեր-440 հոգի[9]: Այս մի քանի ուղղումները կատարելուց հետո մենք Երևանի գավառի բնակչության ընդհանուր թիվը ստացել ենք 94789 հոգի, որից՝ հայեր-81536 հոգի, մուսուլմաններ-9148, ասորիներ-2570 հոգի, ռուս-1026 հոգի, հույն -325 հոգի, եզդի-148 հոգի:

2. Ալեքպոլ: Ըստ «Չեռագիր» տվյալների գավառի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 151882 հոգի, որից հայեր-143123, ոչ մուսուլման-5993 հոգի, խառը բնակչություն-2766 հոգի:

   Ժամանակին դեռ Կորկոտյանն է նկատել, որ թյուրիմացաբար Հաջի Խալիլի գավառամասի 5340 հոգի եզդիներին հաշվել են հայերի հետ: Նման թյուրիմացություն կա նաև Դուգքենդի գավառամասում, ուր 343 եզդիների հաշվել են հայերի հետ: Պետք է նշել, որ Զ. Կորկոտյանը Բաղդատ Դոլութախտ գյուղի բանկիչներին նշել է «քրդեր»[10], սակայն մենք, ըստ արխիվային տվյալների, ուղղել ենք: Ղզլ-Ղոչի

---

[5] Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում 1830-1931թթ., Երևան, 1932թթ, էջ XLV-L:
[6] Նույնը, էջ XLVI-XLVII:
[7] Կորկոտյան Զ., նշված գիրքը, էջ 127:
[8] Նույնը, էջ 102:
[9] Հ ԱԱ, Ֆ.127 g.1, գ.5, թ. 14:
[10] Կորկոտյան Զ., նշված գիրքը, էջ 103:

գավառամասի Բայթար գյուղի 310 հույների[11] նույպես հաշվել են հայերի հետ: Այս ուղղումները կատարելուց հետո մենք Ալեքպոլի գավառի բնակչության ընդհանուր թիվը ստացել ենք 151902 հոգի, որից՝ հայեր-143143 հոգի, եզդիներ-5683 հոգի, հույն -310 հոգի, խառը բնակչություն-2766 հոգի:

3. Էջմիածին: Ըստ «Ձեռագիր» տվյալների գավառի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 145990 հոգի, որից հայեր-109525, մուսուլման-29065 հոգի, ոչ մուսուլման-1840 հոգի, խառը բնակչություն-5560 հոգի:

Այստեղ ևս որոշ ճշտումներ ենք կատարել: Կորկոտյանի մոտ էջմիածնի գավառում ոչ մուսուլմանական գյուղեր չեն հիշվում: Ղուրդուղուլիի գավառամասում նշված 2 ոչ մուսուլման գյուղերը 1830 բնակիչով ընդունել ենք Իգդալուն և Խարաբա-Քեթիկը, ելնելով միայն թվական տվյալներից: Ճիշտ է Կորկոտյանը բնակչությունը նշել է «քուրդ», սակայն նա գրեթե ամենուր քրդերին ու եզդիներին խառնում է իրար: Եվ, ի վերջո, մուսուլմանների թիվը համընկնում է «Ձեռագիր» տվյալների հետ, և սա վկայում է, որ այս գյուղերում մուսուլմաններ չեն եղել: Ինչ վերաբերում է Թալինում հիշատակված 1 ոչ մուսուլմանական գյուղին 10 բնակչով, ապա մենք նման գյուղ չգտանք Կորկոտյանի մոտ: Իսկ «Սևագիր» ցուցակում Թալինում իրոք կա 10 բնակչով Թալիշ ռուսի գյուղը[12], սակայն դրա բնակիչները մեկ այլ արխիվային փաստաթղթում նշված են հայեր[13]:

Հավանաբար վիճակագրերին շփոթության մեջ է գցել գյուղի անունը: Մենք գյուղը համարել ենք հայկական: Թալինում ևս մեկ գյուղ՝ Ահագչին, նշված է խառը բնակչությամբ գյուղ 20 բնակչով: Ահագչին խառը բանկչություն է ունեցել նաև մինչև 1919թ., սակայն նոյեմբեր-դեկտեմբերի վիճակագրության ժամանակ Ահագչիի համար «Սևագիր» ցուցակում գրված է. «թուրքերը գաղթել են»[14]: Հենվելով այս տվյալի վրա Ահագչիի բնակչությունը հաշվել ենք հայեր: Այս ուղղումներից հետո մենք էջմիածնի գավառի բնակչության ընդհանուր թիվը ստացել ենք 144362 հոգի, որից՝ հայեր-107927 հոգի, եզդիներ-1830 հոգի, մուսուլմաններ-29065 հոգի, խառը բնակչություն-5540 հոգի:

4. Նոր Բայազետ: Ըստ «Ձեռագիր» տվյալների գավառի բնակչությունը եղել է միայն հայ՝ 79018 հոգի: Սակայն Զ. Կորկոտյանը, Թյուրիմացաբար, թե միտումնավոր, 3 գյուղի՝ Շիշկայայի, Չախրլուի, Քյասիկբաշի բնակչությունը գրել է «թուրքեր»[15]: Մեր ձեռքի տակ եղած վիճակագրական տվյալների համաձայն մենք երեք գյուղի

[11] Նույնը, էջ 123:
[12] Հ ԱԱ, Ֆ.163 ց.1, գ.2855, թ. 18 (ՆՊ):
[13] Հ ԱԱ, Ֆ.214 ց.1, գ.45, թթ. 455-463:
[14] Հ ԱԱ, Ֆ.163 ց.1, գ.2855, թ. 19:
[15] Կորկոտյան Զ., նշված գիրքը, էջ 113, 143:

բնակչությունն էլ ընդունել ենք հայեր[16]: Մեր տվյալներով գավառի բնակչությունը եղել է 79219 հոգի, բոլորն էլ հայեր:

5. Ղարաքիլիսա: Ըստ «Ձեռագիր» ցուցակի գավառի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 99025 հոգի, որից՝ հայեր-89049հոգի, մուսուլման-2365 հոգի, ոչ մուսուլման-2250 հոգի, խառը բնակչություն-5361 հոգի:

Կորկոտյանի մոտ կան մի քանի սխալներ: Այսպես, նա Ահսիմադանը հաշվել է հայկական, սակայն նա հունական գյուղ է և մենք ուղղել ենք[17]: Նիկոլաևկան նույնպես գրել է հայկական[18], որը նորից ուղղել ենք. իրականը՝ ռուսական: Քյուլլուջան գրել է թուրքական, սակայն այն միշտ էլ եղել է հայկական: Կա նաև մի թվական թյուրիմացություն. Որդնավի բնակիչների թիվը նշել է 2347[19], սակայն մենք ուղղել ենք ըստ «Սևագիր» ցուցակի՝ 2374 հոգի, որով և բոլոր տվյալները համընկնում են: Այսպիսով, մեր տվյալներով Ղարաքիլիսայի գավառի բնակչության ընդհանուր թիվը եղել է 99025 հոգի, որից՝ հայեր-88548 հոգի, մուսուլմաններ-2365հոգի, ռուս-2250հոգի, հույն-501հոգի, խառը բնակչություն-5361 հոգի:

6. Դիլիջան: Ըստ «Ձեռագիր» ցուցակի գավառի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 69515 հոգի, որից՝ հայեր-55642 հոգի, մուսուլման-10045 հոգի, ոչ մուսուլման-3828 հոգի: Մեր ուսումնասիրությունների արդյունքում ստացվել է՝ ընդհանուր բնակչությունը 69405 հոգի, որից՝ հայեր-55702 հոգի, մուսուլման-9875 հոգի, ռուս-3578 հոգի, հույն-250 հոգի:

7. Դարալագյազ: Ըստ «Ձեռագիր» տվյալների գավառի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 26706 հոգի, որից հայեր-21486, մուսուլման-4101 հոգի, խառը բնակչություն-1119 հոգի: Կորկոտյանի մոտ մենք 2 սխալ գտանք: Նա Գնիշեկը և Ղուղչին գրել է թուրքական գյուղեր, սակայն 2 գյուղն էլ եղել են հայկական և մենք ուղղել ենք[20]: Արդյունքում ստացել ենք բնակչության ընդհանուր 25511 հոգի, որից հայեր-21931, մուսուլման-2461 հոգի, խառը բնակչություն-1119 հոգի:

8. Զանգեզուր: Ըստ «Ձեռագիր» ցուցակի գավառի բնակչությունը միայն հայեր էին՝ 76448 հոգի: Սակայն այստեղ Գորիսի գավառամասում բնակեցված գյուղերը գրված է 13 և 1 դատարկ գյուղ՝ Խոզնավարը: «Ձեռագրի»-ի տվյալներում բնակչությունը պակաս է նշված 500-ով: Խոզնավարը այն գյուղերից է, որը 1919թ նոյեմբերի սկզբին Ադրբեջանական ուժերը գրավել էին և հավանաբար հենց դրանով է

---

[16] Հ ԱԱ, Ֆ.127 ց.1, գ.4, թթ. 29-30:
[17] Կորկոտյան Զ., նշված գիրքը, էջ 133:
[18] Նույնը, էջ 149:
[19] Հ ԱԱ, Ֆ.163 ց.1, գ.2855, թթ. 17:
[20] Կորկոտյան Զ., նշված գիրքը, էջ XLIX:

բացատրվում դատարկ լինելը[21]: սակայն ազերիների գրաված մյուս գյուղերը՝ Բայանդուրը, Խնածախը, Կոռնիձորը Կորկոտյանի մոտ բնակեցված ենք տեսնում և քիչ հավանական է, որ Խոզնավարցիք ավելի ուշ վերադարձած լինեին իրենց գյուղը: Քանի որ վիճակագրությունը անցկացվել է նոյեմբեր-դեկտեմբերին, ապա չի բացառվում, որ տվյալների տարբերությունը ժամանակի խնդիր է՝ Խոզնավարը մի փոքր ավելի ուշ է վիճակագրվել և տարբերություն կազմող 500 հոգին հենց Խոզնավարի բնակիչների թիվն է: Ի դեպ Խոզնավարի բնակչությունը 1922թ. 477 հոգի էր[22]: Այսպիսով Զանգեզուրի գավառի բնակչությունը մենք ընդունել ենք 76948հոգի:

9. Սուրմալու: Սուրմալուի համար օգտվել ենք ՀՀԱԱ Ֆ 127, ց 1, գ 3-ի նյութերից, ուր բնակչության թիվը նշված է ըստ գյուղական հասարակությունների: Ըստ այդմ, բնակչության ընդհանուր թիվը նույնն է՝ 14219 հոգի, որից՝ հայեր-13869 հոգի, մուսուլման-150 հոգի, եզդի-200 հոգի:

Այսպիսով, մեր տվյալներով ստացվում է, որ 1919թ. վիճակագրության ժամանակ Հայաստանում (վիճակագրված վայրերում) կար 917297 բնակիչ, որից՝ հայեր-715192 հոգի, մուսուլման-122185 հոգի, ոչ մուսուլման-48672 հոգի, խառը բնակչություն-31352 հոգի:

[21] Վրացյան Ս., նշված գիրքը, էջ 353:
[22] Կորկոտյան Զ., նշված գիրքը, էջ 113:

ԿԱՐԷՆ ԽԱՆԼԱՐԵԱՆ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑԱԾ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ներկայումս Թուրքիան բաղկացած է շուրջ 72 վարչատարածքային բաժանումներից կամ մարզերից, որոնցից մօտաւորապէս 18-ը համընկնում են Ուիլսընեան իրաւարարութեամբ Արեւմտեան Հայաստանի, իսկ մօտաւորապէս 9-ը՝ Հիւսիսային Քուրդստանի սահմանների հետ: Համարեա 7-ին կարելի է առանձնացնել որպէս պատմական Կիլիկիոյ սահմաններ եւ միւս 23-ին որպէս Կենտրոնական Անատոլիա:

Անատոլիայի այս չորս երկրատարածքներում ներկայումս ապրում են հայեր, որոնց թւաքանակի եւ ազգային գիտակցութեան մակարդակի կապակցութեամբ կը փորձենք ընդհանուր գծերում բնորոշումներ կատարել:

Թուրքիայի հայոց պատրիարք երջանկայիշատակ Շնորհք արքեպիսկոպոս Գալստեանը 1980 թ.-ին Երուսաղէմում բանախօսութեան մէջ հետեւեալն է ասում գաւառահայութեան մասին. «... Գաւառի մէջ նոյնիսկ մինչեւ մէկ միլիոն հայեր ունենք:

«ա- Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամաւոր կերպով իսլամացել են, խզւել են հայութիւնից եւ ապրում են թուրքերի մէջ: Սրանք են, որ մինչեւ միլիոնի հասնում են իրենց թւով:

«բ- Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրդական աշիրէթական ձեւերով ապրում են մեկուսի եւ չեն խառնւում: Խնուսի շրջանում հարիւր ընտանիքներ կան այդպիսիներից, որ գիտեն, թէ հայ են, գիտակցաբար իրենց մէջ ամուսնանում են եւ փափագում են վերադառնալ իրենց պապերի կրօնին, եթէ իրենց պայմանները ներեն:

«գ- Կամայ թէ ակամայ իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են եւ Պոլիս հաստատւելուն պէս՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «Իսլամ» գրութիւնը «էրմենի»-ով են փոխարինում:

«դ- Բուն գաւառահայերը, որ պատիւ իրենց՝ հակառակ բոլոր զգալի եւ անզգալի դժւարութիւններին՝ հայ են մնացել եւ այսօր Ստամբուլի հայութեան մեծագոյն մասը նրանցից է բաղկանում:

«... Սալաթիա- Հայեր կան, որոնց վիճակը լաւ է, նոյնիսկ ունեւոր են: Էլազիգ- Հայեր կան եւ եկեղեցի ունեն: Տիգրանակերտ- Հայեր կան, իսկ լսածիս համեմատ՝ Սասնոյ լեռների վրայ էլ ցրւած հայեր կան, որոնց մասին ժամանակին, ձեռքս անցաւ 35 գիւղերի մի անւանացանկ...»[1]:

Թէեւ Շնորհք պատրիարքի այս տեղեկատւութեան համեմատ

[1] Ալիք, թիւ 12562, 18 դեկտ. 1980, Թեհրան:

ներկայի կացութիւնը հիմնովին փոխուած կարելի է համարել, այնուամենայնիւ՝ դա բաւարար հիմք է հանդիսանում անատոլահայութեանը տիպաբանական իմաստով բաժանել երեք կատեգորիկ տեսակների.

Ա- Իսլամացած հայութիւն,

Բ- Իսլամացուած հայութիւն,

Գ- Պաշտօնական հայութիւն:

Ա. Իսլամացած հայութիւն

Այս տեսակը հիմնականում բաղկացած է պոնդահայ եւ համշէնահայ, մանր ու խոշոր տոհմական խմբերից:

Անատոլահայութեան այս ինքնատիպ տեսակը բնակւում է սեւծովեան ափերիզում. պատմական Ճանիկից (Սամսունից) մինչեւ Հայ-վրացական սահմանները երկարող տարածքներում:

Ըստ ԱՄՆ-ի Կոլումբիա եւ UCLA համալսարանների շրջանակներում հեղինակաւոր գիտաշխատող Բերտ Վառքսի, համշէնահայութիւնը կարելի է բաժանել երեք ենթախմբերի[2].

ա) արեւմտեան համշէնահայութիւն, որը բնակւում է Սամսունում, Օրդուում, Կիրեսունում եւ Տրապիզոնում, թրքախօս է եւ սունցի դաւանանքին յարած,

բ) արեւելեան համշէնահայութիւն, որը առաւելաբար բնակւում է Արտուինում, խօսում է համշէնահայ բարբառով, բայց յարում է սունցի դաւանանքին,

գ) հիւսիսային համշէնահայութիւն, Աբխազիայում, Աջարիայում, ինչպէս նաեւ ԱՊՀ-ի այլ պետութիւններում բնակւող, համշէնահայ բարբառով խօսող եւ հիմնականում Հայ առաքելական կամ Հայ կաթողիկէ եկեղեցու հետեւորդ:

Անատոլիայում բնակւող առաջին երկու խմբի թւաքանակը գերակշռում է Թուրքիայի սահմաններից դուրս բնակւող վերջին խմբին:

Անատոլիայի համշէնահայութեան թւաքանակի մասին վկայութիւնները բաւական տարբեր են ու այլազան:

Դոկտ. Թեսսա Հոֆմանի գնահատմամբ՝ «...Այնտեղ 20.000 մուսուլման համշէնցիներ կան, որոնց հայրենիքը գտնւում է Տրապիզոնի եւ էրզրումի արանքում...»[3]:

ԱԱՆ-ի հարաւային Կալիֆորնիայի համալսարանի քաղաքական գիտութիւնների թեկնածու Յ. Սիմոնեանը Բէյրութի «Հայկազեան» ճեմարանում իր բանախօսութեան մէջ 24 յունիս 2002 թ.-ին համշէնահայութեան թւաքանակի մասին այսպէս է եզրակացնում.

---

[2] Bert Vanux, THE FORGOTTEN BLACK SEA ARMENIANS, Columbia University, April 2, 1996, pp.1-2.

[3] Dr. Hofmann Tessa, ARMENIANS IN TURKEY TODAY, October 2002, page 11.

«100.000 համշէնցիներ են ապրում ամբողջ Թուրքիայի տարածքում...»[4]:

Գրիգոր Աւագեանի տեսակներով՝ «Թուրքիայում, մասամբ նաեւ այլ երկրներում ապրում են շուրջ 4 միլիոն մուսուլման համշէնահայեր»[5]:

Ըստ բուն համշէնահայ, «Գեօթէ» համալսարանի գիտաշխատող, նախկին վարչապետ Մեսուդ Եըլմազի ազգականուհի Ալիէ-Ալիս Ալթի (Կոստանեան)՝ «Այսօր աւելի քան մէկ միլիոն իր ազգակիցները գտնուում են ազգային ինքնագիտակցութեան ու զարթօնքի գործընթացում»[6]:

Դարերից ի վեր իսլամին յարած լինելով եւ պետականօրէն որպէս էթնիկական փոքրամասութիւն չճանաչելով հանդերձ՝ համշէնահայութեան անատոլական հատուածը յամառօրէն պահպանում է իր քրիստոնէական բարքերի եւ աւանդութիւնների մի մասը (օրինակ՝ Ծաղկազարդ, Վարդավառ եւ այլն):

Պէտք է աւելացնել, որ համշէնահայերը իսլամացել են դեռ միջին դարերում եւ այդ պատճառով՝ հաւանաբար նկատի չեն առնուել նախաեղեռնեան պատրիարքարանի վիճակագրութիւններում: Հետեւաբար՝ կարելի է կռահել, որ յետեղեռնեան հայկական վիճակագրական պատկերներում էլ չեն ներառուել նրանք:

Բ. Իսլամացուած հայութիւն

Այս տեսակը բռնի կերպով եւ իր ֆիզիկական գոյութիւնը պահելու հարկադրանքի տակ իսլամացել է 1915 թ.-ից սկսած: Թուրքիայում հրատարակւող «Ռադիկալ» թերթի աշխատակից Եահեդ Գոչօղլուն մի հետաքրքիր տեղեկութիւն է տալիս հայութեան այս տեսակի մասին, ըստ որի՝ «Մէկ բան ստոյգ է. տեղահանութիւնից յետոյ հայ բնակչութեան թիւը մօտաւորապէս 600 հազար է: Յայտնի չէ, թէ մահմեդական ընտանիքների կողմից որդեգրուած հայ երեխաների թիւը ինչ է, բայց ծանօթ է, որ այս թիւն էլ շատ բարձր թիւ է»[7]:

Այս տեսակ հայութիւնը ապրում է աշխարհագրական մեր պայմանական չորս տարածաշրջանների բազմաթիւ առանձին, քրդական եւ թրքական գիւղերում ու գիւղակներում: Սակայն նրանց իսլամացման գործընթացը իրականացւել է ամենատարաբնոյթ պայմաններում, այսպէս՝ Կենտրոնական Անատոլիայի պարագայում դա կատարւել է անմիջականօրէն, բայց սահմանափակ, պատմական Կիլիկիայի պարագայում՝ առաւել դանդաղ տեմպերով՝ 50-ական եւ 60-ականներին, իսկ մեկուսի քրդախառն շրջաններում, այսինքն՝ հիւսիսային Քուրդստանում եւ Արեւմտահայաստանում, մինչեւ 80-ականները երկարող ժամանակահատուածում եւ յաճախ կոպտութեամբ:

---

[4] http://www.haigazian.edu.ib/announce/pressreiease.htm.
[5] Գրիգոր Աւագեան, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ, 1990, Երեւան, էջ 21:
[6] Դիտակ, մարտ - ապրիլ 2002, Բէյրութ, էջ 26:
[7] Նոր Մարմարա, թիւ 16432, 27 յուն. 2003, Ստամբուլ:

Իսլամացաւած հայութեան կենցաղին առընչւող բազմաբնոյթ վկայութիւններ գոյութիւն ունեն այսօր, սակայն նրանց ընդհանուր թւաքանակի բնորոշման համար, Շնորհք պատրիարքի տեւալներից բացի[8] գրեթէ այլ տեւալ չկայ մեր տրամադրութեան տակ: Միայն մի յատկանշական ակնարկ կայ «Քուրդստանի աքսորեալ խորհրդարանի» փաստաթղթերում, ընդ որում «Մեծ Քուրդստան»-ի Ասորի եւ հայ բնակչութեան թւաքանակի գումարը գնահատւում է ընդհանուրի շուրջ 10 %-ը:

Նոյն աղբիւրը «Մեծ Քուրդստանի» ընդհանուր բնակչութիւնը հաշւում է 20-ից 25 միլիոն: Այս հիմամբ ասորի եւ հայ բնակչութեան թւաքանակը պիտի գնահատել շուրջ 2-ից 2.5 միլիոն, ինչը ըստ ամենայնի լուրջ նկատառման է արժանի:

Նման մի համեմատութեան գործակցի կարելի է հանդիպել քրդական կազմակերպութիւնների հայ անդամների կոնտեքստում եւս. «... ազդեցիկ «Միլլիէթ» թերթում, Թուրքիայի հարաւ- արեւելեան շրջանների ռազմական արտակարգ դրութեան կառավարիչ Ինիլ էրքանը յայտարարել էր.«Մեր համակարգիչներում արձանագրել ենք հայկական ծագում ունեցող 800 PKK-ի անդամներ...»[9]:

Աւելացնենք, որ որոշ աղբիւրների համաձայն[10] PKK-ի զինւած անդամների թիւը գնահատւում է շուրջ 5500, ինչը համապատասխանում է Բիթլիսի տանկային ստորաբաժանման հրամանատար գեներալ Թագմայի տեսակէտին, որով պնդում էր. «որ PKK-ի ամէն եօթերորդ անդամը հայ է...: PKK-ի այդ անդամները զաւակներն են այն հայերի, որոնք Օսմանական կայսրութեան կռնակից դաշնակահարեցին Առաջին աշխարհամարտի ընթացքում...»[11]:

Իսլամացաւած հայութեան քաղաքական ուղղւածութիւնը առաւել ճշգրիտ գնահատելու համար՝ արժէ այստեղ մի փոքր կանգ առնել քրդական կազմակերպութիւնների շարքերում՝ ծագումով հայ անդամների հարցի վրայ: Նոյն գեներալ Թագման, մի այլ առիթով, 1995 թ.-ին, եւս շեշտում էր, որ տեղի ունեցած ինչ որ ծանր մարտերի ընթացքում «...քրդեր չկային այնտեղ: Նրանք, ովքեր մեր ստորաբաժանման ուժերի գրոհների արդիւնքում նահանջեցին դէպի լեռները, հայեր էին...»[12]:

Թրքական «Գիւնեշ» օրաթերթը, 6 յունիսի 1989 թ.-ին գրեց, որ

---

[8] Ալիք, թիւ 12562, 18 դեկտ. 1980, Թեհրան:

[9] Dr. Hofmann Tessa,"ARMENIANS IN TURKEY TODAY", October 2002, page 35.

[10] Directorate for Movements of Person, Migration and Consular Affairs Asylum and Migration Division. " Official general report on Turkey", May 2001, page 31.

[11] Dr. Hofmann Tessa, ARMENIANS IN TURKEY TODAY, October 2002, page 36.

[12] EUROPIAN COURT OF HUMAN RIGHTS, FORMER SECONDS SECTION, CASE OF TEPE v.,TURKEY (Applicatoin no.27244/95), http:// www.vahitbicak. com/tepetr.htmhttp.

Մուշի ճանապարհներին ապաստանած քուրդ փիշմերգներից մի խումբ դիմել է ԱՄՆ եւ բրիտանական իշխանութիւններին՝ պնդելով, որ իրենք հայկական ծագում ունեն եւ խնդրում են ապաստանի իրաւունք:

PKK-ի պաշտօնաթերթերից մէկում կարդում ենք՝ հայաբնակ Սայլակայա (Ջիբին) պատմական գիւղում 1970 թ.-ին ծնուած հայ երիտասարդ Հուսէյն Սարիչիյէքի մասին, որ զոհուել է Թուրքիայի բանակի միջոցով 1988 թ.-ին[13]:

Իսկ Ջազա Ալեւիակման շրջանակներում աշխատող եւ Դերսիմի լեռներում մաքառող TIKKO կազմակերպութեան զոհուածների ցանկում հանդիպում ենք երեք հայ երիտասարդների կենսագրականներին[14].

- Նուբար Եալիմ, ծնուած Մարդինում, 1957 թ.-ին, զոհուած Ամստերդամում, 1982 թ.-ին:

-Մանուէլ Դեմիր, ծնուած Կեսարիայի Բունիան քաղաքում, 1963 թ.-ին, զոհուած Ստամբուլում, 1988 թ.-ին:

- Արմենակ Բաքրչիեան, ծնուած Տիգրանակերտում, 1953 թ.-ին, զոհուած Խարբերդում, 1980 թ.-ին:

Հետաքրքիր է իմանալ, որ Մանուէլ Դեմիրի հերոսական տիպարին ու սխրանքներին նուիրուած թրքերէնով երգ է յօրինուել, որն առատօրէն հնչում է քրդական շրջանակներից:

Միւս փաստը վերաբերում է PKK-ի նախագահական խորհրդի անդամ օր. Նուրիյէ Գեսպիրի եւ PKK-ի Կենտրոնական կոմիտէի անդամներ՝ Բեքիր Բաքրչիեանի եւ Մուսա Հաջրյեւի հայկական ծագմանը, որը բացայայտուել է «Թուրքիյէ» օրաթերթի միջոցով, 2002թ.-ին[15].

Սոյն վկայութիւնները քրդական շրջաններում շօշափելի թուով հայութեան բնակութեան փաստից բացի, լաւապէս ապացուցում են նաեւ այդ զանգուածի հակապետական բիրտ կողմնորոշումը, ինչը հայկական քաղաքական ուրոյն գործօնի բացակայութեան պայմաններում, դրսեւորուում է քրդական պայքարի ճամբով:

«...Այն գիւղը, որ գնացի, մօտ մէկ ժամ կամ աւելի հեռու էր մեր գիւղից եւ հայկական շատ հին գիւղերից մէկն էր (ակնարկը «Ջիբին» գիւղին է- Կ.Խ.): Հէնց այդ տեղից... պարզւում էր հայերի իրաւունքների ոտնահարումն ու նրանց նկատմամբ խտրութիւնը, որովհետեւ այդ գիւղի եկեղեցին վերածել էին մզկիթի, այն պայմաններում, երբ դեռ հայ եղբայրները ապրում էին այնտեղ: Հայրս հետաքրքիր եւ ընկերական կապեր ունէր հայ եղբայրների հետ, եւ նրանցից շատերի հետ խոր ընկերութիւն էր հաստատել... Այս խնդիրը արծարծում եմ, որովհետեւ ֆաշիստ թուրքերը սնապարծութեամբ ու պոռոտախօսութեամբ ասում էին, որ այլեւս հայ չկայ...»: Ահա այսպէս է արտայայտւում Աբդուլլահ

[13] http:// www. pkk.org/2002/03.
[14] http:// babacrdogan.org/partisan.
[15] Turkiye,11.10.2002.

Օջալանը, թուրք լրագրող ու դոկտ. Եալչին Քիւչիւքի վարած մամլոյ հարցազրոյցի ընթացքում, 90-ականների կէսերում[16]:

Այս իրողութեանն ի տես՝ այսօր այլեւս տարօրինակ չպիտի թւայ քրդական, ալիեւական եւ զազայական մշակութային եւ քաղաքական լայն Media- ում՝ հայերէն երգեր կատարող երգիչների գովազդերի ու Link -երի առկայութիւնը: Երգիչներ, որոնք ըստ իրենց կենսագրականի՝ սւազցի, դիարբաքրցի կամ մշեցիներ են: Նիլուֆեր Աքբալը իր «Սարի գելին»- ով, Բեշեր Շահինը իր «Հորովել»-ով, Դիանա Վեքիլը իր «Դելէ եաման»-ով եւ Արամ Տիգրանը իր «Մեր Լենինական սիրուն քաղաք »-ով, ու «Առաքել Մուշեղ»-ով, իրականում հայութեան լինելութեան ձայնն են հնչեցնում:

Գ. «Պաշտօնական» հայութիւն

Այս տեսակը Հայ առաքելական, Կաթողիկէ կամ Աւետարանական եկեղեցիներին կապւող համայնքների տեսքով տակաւին գոյատեւում է անատոլական զանազան նահանգներում եւ աւաններում:

«Թուրքիոյ հայոց համայնքային օրագոյց»-ը, 1991 թ.-ին, ամբողջական մի համայնապատկեր է ներկայացրել Թուրքիայի հայութեան ազգային կառոյցների վերաբերեալ[17]: Դրա բաժնում կարդում ենք. «Կեսարիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին կապւած Անգարայի, Ամասիոյ, Գաստամոնուի, Կիւմիւշհաճըքէոյի, Եոզկատի, Պողազլեանի, Սւազի, Թոքատի եւ Կենտրոնական Անատոլուի <u>բոլոր համայնքներոն</u>»:

Տիգրանակերտի Ա. Կիրակոս եկեղեցիին կապւած են Մալաթիոյ, Էլազիգի, Բիթլիսի, Աասունի եւ այլ հարաւ արեւելեան Անատոլուի <u>հայ համայնքներոն</u>:

Իսկենդերունի Ս. Քառասուն Սանկունք եկեղեցիին կապւած են Ատըեամանի, Մերսինի եւ այլ հարաւ արեւմտեան Անատոլուի <u>հայ համայնքներոն</u> (ընդգծումները մերն են- Կ. Խ.)»:

Եւս 1998 թ.-ի Թուրքիոյ հայոց պատրիարքարանի դիւանի զեկուցման մէջ լայն բացատրութիւն է տրւել նորընտիր պատրիարքի գահակալութեան հանդիսութեան վերաբերեալ: Զեկոյցի 4-րդ կէտի համաձայն՝ «150 հոգանոց պրոտոկոլի ցանկ»-ում ի շարս այլոց նկատի էր առնւել. «Անգարայի, Կեսարիոյ, Ամասիոյ, Գաստամոնուի, Կիւմիւշհաճըգիւղի, Եոզկատի, Պողազլեանի, Սւազի, Թոքաթի, Դիարբաքրի, Ատըեամանի, Սերսինի <u>հայ համայնքներոն</u> ներկայացուցիչները, <u>որոնք յատկապէս գահակալութեան մասնակցելու համար Ստամբուլ են հրաւիրւել</u> (ընդգծումները մերն են -Կ.Խ.)»[18]: Այսպէս կարելի է եզրակացնել, որ Անատոլիայի 17 քաղաքներում

---

[16] Դոկտ. Եալչին Քիւչիւք, Վերածննդեան պատմութիւն, Աբդուլլահ Օջալանի մտքերն ու յուշերը (պարսկերէնով), 1999, Թեհրան, էջ 48 եւ 49:
[17] Արմենիա, յունիս 1991, Սիդնի:
[18] Ժամանակ,11 նոյեմ. 1998, Ստամբուլ:

պաշտօնապէս գոյութիւն ունեն հայկական համայնքներ[19]:

Հակառակ պատրիարքարանի այս յայտարարութեան՝ Թուրքիայի ներքին գործերի նախարարութիւնը միմիայն հինգ համայնքին է պաշտօնապէս արտօնել ընտրական իրաւունք՝ պատրիարաքարանի օրէնսդիր կամ գործադիր մարմինների ընտրութիւններում (Կեսարիա, Տիգրանակերտ, Իսքենդերուն, Քըրքքխան եւ Վագըֆ գիւղ):

Այս հարցը, որպէս համայնքային դժւարութիւն, ի շարս այլոց, հերթական անգամ, արծարծւել է 2000 թ.-ի Մեսրոպ Պատրիարք Մութաֆեանի եւ Թուրքիայի նախկին կրօնի տեսուչ Լիւթֆիւ Տողանի շուրջ մէկ ժամանոց հեռուստազրոցյում:

Պիտի ասել, որ «պաշտօնական» հայութեան թւաքանակի մասին դարձեալ գոյութիւն ունի տեղեկութիւնների խիստ պակաս:

1982 թ.-ին տւած մի հարցազրոյցի ընթացքում Շնորհք պատրիարքը, Անատոլիայի այս տեսակի հայութեան վիճակը բացատրելով, նրա թւաքանակը գնահատել է 10000-ից 20000: Թւում է, թէ այսօր այդ թիւը խոշոր չափերով նւազել է, պարբերական արտահոսքի պատճառով:

Ամբողջական թւաքանակը

Տիպաբանական բնորոշմամբ հանդերձ՝ դիւրին չէ Անատոլիայի հայ բնակիչների թւաքանակի մասին վերջնական տեսակէտ յայտնել: Հետեւաբար՝ անորոշութեան եւ անճշգրտութեան համամատական բարձր մի ցուցանիշ նկատի ունենալով՝ ահաւասիկ մէջբերում ենք մի քանի վկայութիւններ. «Ներկայում շուրջ երկու միլիոն է հաշււում այն հայերի թիւը Թուրքիայում, որոնք իսլամ են ընդունել անցեալում, գոյատեւել են ֆիզիկապէս եւ աճել են քանակութեամբ: Նրանք չեն թրքացել: Շատերը գիտեն իրենց հայկականութեան վերաբերեալ, սակայն վախենում են խօսել այդ մասին: Այդ երկու միլիոն մարդիկ հայ են համարւում...»[20]:

Ըստ երեւոյթին, Արմէն Ալիքեանի վերոյիշեալ դիտողութեան հիման վրայ՝ «Հայաստան-Ափիւռք» կայքէջում Թուրքիայի հայ բնակչութեան թիւը սրբագրւել է 2.080.000-ի:

«Գեօթէ» համալսարանի գիտաշխատող Ալիէ-Ալիս Ալթի համոզմամբ՝ «...Մինչ երեք միլիոն թրքացած հայեր կան, որոնք փորձում են իմանալ իրենց ծագման մասին, տասնամեակների լռութիւնից յետոյ...»[21]:

Իսկ մի շատ հետաքրքական տւեալի ենք հանդիպում՝ «Planet of Diaspora» պարբերաթերթում, ուր Թուրքիայի հայութեան ամբողջական

---

[19] Նոր Մարմարա, 5 փետր., 2000, Ստամբուլ:

[20] http://www.armeniadiaspora.com/population/note_turkey_pop.html, Armen Melikian, Armenian Watch Monitors Human Rights Violations Against Armenian Worldwide.

[21] Դիտակ, մարտ - ապրիլ 2002, Բէյրութ, էջ 26:

թւաքանակը ներկայացնում է 4.500.000[22]:

Վերջաբանի փոխարէն

Մէկից մինչեւ չորս ու կէս միլիոն բնակչութեան մասին են վկայում նշւած փաստերն ու տւեալները: Բնակչութիւն, որ նկարագրային առումով այլակերպւած լինելով հանդերձ՝ ծագումով հայ է, որ պատմական յիշողութեամբ ատակ է օրգանապէս վերամիաւորւելու իր հայկական ակունքներին, համարկւելու հայ ազգին:

Անատոլիայի հայութեան օրակարգը հրամայական նկատառում է դառնում այսօր: Այդ հսկայական ներուժը կարող է կամ ընթանալ սոսկ տարերային զարտուղիներով, շահագործւել այլեւայլ համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի կողմից եւ ի վերջոյ մարել եւ կամ վերածւել ազգային գիտակցական շարժման եւ վերազարթօնքի:

Երկընտրանքի լուծողը, ի հարկէ, պիտի լինի ոչ ոք բացի հայութիւնից:

Թող ուսումնասիրութեան այս նախնական փորձը իր համեստ ազդեցութեամբ խթանի մեր միլիոնաւոր հայ եղբայրների եւ քոյրերի ազգային դիմագծի վերականգնման եւ ինքնահաստատման գործին:

[22] http://www.itap.am/economics/nugr/hayga-e95.htm, «Planet of Diaspora», #25,. 1999.

ՌՈՒԲԵՆ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ /1991-1995 ԹԹ./

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ-ից ծանր ժառանգություն ստացավ: Նա նախկին խորհրդային հանրապետությունների հետ մեկտեղ կրում էր գերտերության փլուզման տխուր հետևանքները, որի կործանման հիմնական պատճառներից էր նաև խիստ կենտրոնացված տնտեսական համակարգի քայքայումը: Վերջինս հանգեցրեց ձևավորված կապերի խզմանն ու ավանդական շուկաների վերացմանը: Արդյունքում գրեթե բոլոր նախկին միութենական հանրապետությունները հայտնվեցին սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամի մեջ: Հայաստանում իրավիճակն ավելի ծանր էր, քանի որ այստեղ հետխորհրդային տարածաշրջաններում առկա համընհանուր հիմնախնդիրներին գումարվեցին նաև ավերիչ երկրաշարժի հետևանքները, պարտադրված հակամարտությունը հարևան երկրի հետ, բազմահազար փախստականների առկայությունն ու շրջափակումը: 1992 թ. Հայաստանում արդյունաբերության արտադրանքի ծավալը նվազեց և հասավ 1971թ. մակարդակին[1]: 1993 թ. գյուղատնտեսության արդյունքի ծավալը, 1989 թ. նկատմամբ կրճատվեց 18 %-ով[2]: Ջգալիորեն անկում ապրեց նաև հանրապետության ազգային եկամուտը, որը 1993 թ. կազմեց 1987 թ. միայն 10-15 %-ը[3]: Այս ամենը հանգեցրեց սպառողական ապրանքների գների կտրուկ բարձրացմանը, որոնք 1990-ական թվականների սկզբներին աճեցին շուրջ 3 անգամ[4].

Հայաստանի Հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական ճգնաժամը, բացի օբյեկտիվ պատճառներից, պայմանավորված էր նաև սուբյեկտիվ գործոններով, որոնք, հիմնականում, ՀՀՇ ղեկավարների 1980-ականների վերջերին զուտ քաղաքական նկատառումներ պարունակող անհեռատես գործելակերպի հետևանք էին[5]:

---

[1]Տես Մեր խոսքը, 29 ապրիլի, 1993:
[2]Տես Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում /1990-2003 թթ./, Երևան, 2003, էջ 82:
[3]Տես Երկիր, 4 փետրվարի, 1994:
[4]Տես ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 113, ց.165, գ. 496, թ. 1, գ. 519, թ. 2:
[5]Տես Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992, էջ 46-50:

ճգնաժամային իրավիճակը մեղմելու նպատակով, հանրապետության նոր իշխանությունները ձեռնամուխ եղան արմատական տնտեսական վերափոխումների իրականացմանը, որոնք նպատակաուղղված էին շուկայական տնտեսությանը բնորոշ հարաբերությունների, ինստիտուտների և կառավարման համակարգի ձևավորմանը[8]: Սակայն այդ գործընթացի սկզբնական փուլը կենսագործվեց ընդգծված քաղաքական բաղադրիչի գերակայությամբ, ոչ հիմնովին նախապատրաստված՝ առանց համապատասխան երկարաժամկետ համալիր ծրագրի մշակման, ակնհայտորեն արագացված քայլերով և համատարած չարաշահումներով: Արդյունքում, 1991-1996 թթ. Հայաստանում համախառն ներքին արդյունքը /ՀՆԱ/ նվազեց 57,5 %-ով[7]:

Տնտեսության անցումային փուլի համապարփակ սոցիալական ծրագրի բացակայության հետևանքով, վերափոխումների ընթացքում գրեթե անտեսվում էին այդ ոլորտի հիմնախնդիրները, ինչը հանգեցրեց բնակչության լայն խավերի սոցիալական պաշտպանվածության երաշխիքների աստիճանական վերացմանն ու կենսամակարդակի կտրուկ անկմանը: Գնալով խորանում էր հասարակության սոցիալական բևեռացումը, տարեցտարի աճում գործազրկությունը: 1995թ. հանրապետությունում պաշտոնապես գրանցված էր 105,5 հազ. գործազուրկ[8]: Հատկապես ծանր էր վիճակը երկրաշարժի գոտում, որին բաժին էր ընկնում հանրապետությունում գրանցված գործազուրկների 34 %-ը: Պաշտոնապես գրանցված գործազուրկներից բացի, Հայաստանում մեծ թիվ էին կազմում նաև այսպես կոչված «թաքնված» գործազուրկները: Արտադրական ձեռնարկությունների անկանոն և ոչ լիարժեք աշխատանքի հետևանքով անգործութան էին մատնված նաև դրանց աշխատողները: 1993 թ. ընթացքում յուրաքանչյուր ամիս միայն տնտեսության պետական հատվածում զբաղվածների 12-15 %-ը /90-115 հազ. մարդ/, գտնվել էր հարկադիր պարապուրդի մեջ, այդ թվում արդյունաբերության ոլորտում՝ 24-31 %-ը /71-82 հազ. մարդ/[10]: «Թաքնված» գործազուրկները առկա էին նաև գյուղատնտեսության բնագավառում, որոնց թիվն ավելանում էր սահմանամերձ շրջաններում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով: Եվ վերջապես, գործազուրկների բավական ստվար բանակ գոյություն ուներ չզբաղված բնակչության /թափառականներ, «մանրավաճառներ» և այլն/ ու բռնագաղթվածների մեջ: 1993 թ. Հայաստանում վերջիններիս թիվը

---

[6]Տես Մինասյան Է., նշվ. աշխ, էջ 65-170:
[7] Տես Հայկական ժամանակ, 12 փետրվարի, 2005:
[8]Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք /1997, 1998/ , Երևան, 2001, էջ 41:
[9]Տես Երկիր, 12 փետրվարի, 1994:
[10]Տես նույն տեղում:

հասնում էր 295 հազարի[11]: Նկատի ունենալով բնակչության վերոհիշյալ խմբերին, համապատասխան մասնագետների կարծիքով «թաքնված» գործազուրկների թիվը հանրապետությունում 1990-ական թվականների կեսերին տատանվում էր 250-350 հազարի սահմաններում[12]:

Հայաստանի իշխանությունների հայտարարությունները տնտեսության զարգացման, գների կայունացման և բնակչության կենսամակարդակի սպասվող բարձրացման վերաբերյալ այդպես էլ մնում էին սոսկ որպես խոսքեր: Հաճախակի փոխվում էին կառավարությունները /1991-1995թթ. ընթացքում հանրապետությունում փոխվեցին չորս վարչապետներ/, որոնք ջանում էին կարգավորել տնտեսությունը, սակայն շոշափելի տեղաշարժեր գրեթե չէին նշմարվում: Շարունակվում էր անկառավարելի շուկայական հարաբերությունների ծավալումը, որի հետևանքով գներն աննախադեպ աճում էին: 1993 թ. սպառողական գների աճի տեմպերը Հայաստանում 130 %-ով գերազանցում էին միջին աշխատավարձի /1990-ականների կեսերին միջին ամսական անվանական աշխատավարձը հանրապետությունում կազմում էր ընդամենը 7060 դրամ[13]/ աճը[14]: Թեև 1994 թ.-ից սկսած հաջողվեց կանխել երկրի տնտեսական անկումը և ապահովել մակրոտնտեսական որոշակի կայունություն, սակայն տարբեր ոլորտներում իրականացված բարեփոխումների անհամաչափության, բացթողումների ու սխալների, վիճակը բարելավելու ոչ ամբողջական, այլ իրավիճակային լուծումների հետևանքով, այն չդարձավ տնտեսական համաչափ ու դինամիկ աճի հիմք և ազգաբնակչության մեծամասնության համար կյանքը շարունակում էր մնալ հիմնականում որպես գոյատևման պայքար[15]: 1995 թ. հանրապետության բնակչության թվում աղքատության մակարդակը կազմում էր գրեթե 55 %[16]: Չնայած հետագայում գրանցված կայուն տնտեսական ցուցանիշներին, նշմարվող տնտեսական աճը չհանգեցրեց աղքատության կրճատմանն ու բնակչության լայն շերտերի կենսամակարդակի բարելավմանը: Եկամուտների ոչ հավասարաչափ բաշխման հետևանքով, էլ ավելի խորացավ սոցիալ-տնտեսական բևեռացումը: 1990-ականներին առավել հարուստ և առավել աղքատ բնակչության 20%-ի ծախսերի տարբերությունը հանրապետությունում կազմում էր 6,6 անգամ, իսկ

[11]Տես Հայաստանի Հանրապետություն, 8 փետրվարի, 1994:
[12]Տես Երկիր, 12 փետրվարի, 1994:
[13]Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք /1997, 1998/ , էջ 62:
[14] Տես Ազգ, 25 հունվարի, 1994:
[15]Տես Անկախության անցումային 10 տարիները Հայաստանում. մարդկային զարգացման ազգային զեկույց,Հայաստան, 2001, էջ 65-66:
[16]Տես նույն տեղում, էջ 94:

եկամուտներինը՝ 32,2 անգամ[17]: Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, Լատինական Ամերիկայի, հարավ-արևելյան երկրների շարքում Հայաստանը առաջին տեղում էր եկամուտների անհավասարությամբ[18]:

Թեև 1992-1995 թթ. ընթացքում հանրապետությունում որոշակի քայլեր կատարվեցին սոցիալական աջակցության քաղաքականության մշակման և իրականացման ուղությամբ /բնակչության սոցիալապես անապահով խմբերին տրվող տարբեր տիպի նպաստների, ինչպես նաև դրամական փոխհատուցումների ձևով/, սակայն, ընդհանուր առմամբ, դրանք համարժեք չէին բնակչության կենսամակարդակի հիմնախնդիրներին: Սոցիալական ոլորտի բարեփոխումները չէին առաջնորդվում հստակ մշակված սոցիալական քաղաքականության գերակայությունների ու նպատակների դասակարգմամբ և հիմնականում ոչ թե ռազմավարական, այլ, մարտավարական բնույթ էին կրում: Տնտեսության իրական հնարավորությունների վրա հիմնված համալիր սոցիալական քաղաքականության հայեցակարգի բացակայության, սոցիալական ապահովության համակարգի սահմանակարգային ու օրենսդրական հիմքերի անկատարության հետևանքով, խոցելի խմբերի կարիքների բավարարմանը ուղղված կառավարության ջանքերը ցանկալի արդյունքների չէին հանգեցնում: Հատկապես ծանր վիճակում էին հայտնվել կենսաթոշակառուները, քանի որ պետության՝ որպես կենսաթոշակային համակարգի հիմնական դոնորի, դերը խիստ կրճատվել էր: Եթե մինչև 1991թ. պետական բյուջեից ֆինանսավորվում էր կենսաթոշակային համակարգի 70 %-ը, ապա 90-ականների կեսերին՝ միայն 4,81 %-ը[19]: Վերջինիս հետևանքով, 1995 թ. հանրապետությունում կենսաթոշակի միջին ամսական չափը կազմում էր ընդամենը 2359 դրամ[20], որն հեռու էր գոյատևման համար անհարժեշտ պահանջմունքները բավարարելուց: Դրա հետ մեկտեղ, բացակայում էր կենսաթոշակների բաշխման սոցիալական արդարության սկզբունքը: Փաստորեն ամբողջ կյանքում աշխատած անհատը ստանում էր գրեթե նույնչափ կենսաթոշակ, որքան մի քանի տարի աշխատածը, ինչն առաջացնում էր երկարամյա աշխատանքային ստաժ ունեցողների մեծամասնության դժգոհությունը:

Այս ամենը ժողովրդական լայն զանգվածների մեջ հիասթափություն առաջացրեց տնտեսական վերափոխումների նկատմամբ: 1990-ական թվականներին հանրապետության բնակչության

---

[17]Տես նույն տեղում, էջ 95:
[18]Տես Making Transition Work for Everyone, Poverty and Inequality in Europe and Central Asia. WB 2000, Washington D. C. 2000, p. 140.
[19]Տես Անկախության անցումային 10 տարիները Հայաստանում. մարդկային զարգացման ազգային զեկույց, էջ 17:
[20]Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք /1997, 1998/ ,Երևան, էջ 72:

74,3 %-ը անբավար էր գնահատում իրականացվող բարեփոխումների ընթացքը[21]:

Ազգաբնակչության սոցիալական ծանր կացությունը հանգեցնում էր նրա առողջական վիճակի վատթարացմանը: Աճի միտում էին դրսևորում վարակիչ և մանկական, արյան ու արյունաստեղծ օրգանների, սրտանոթային համակարգի հիվանդությունները: Լայն տարածում էին ստացել չարորակ նորագոյացությունները, կրկին ի հայտ էր եկել թոքախտը, որը զգալիորեն աճել էր հատկապես երիտասարդության շրջանում: Նույնիսկ մահացածության ցուցանիշի հարաբերական կայունացման պայմաններում, կտրուկ նվազել էին ծնելիության և բնական աճի ցուցանիշները[22]: Հատկապես բնակչության սոցիալապես անապահով խավերի համար, լուրջ հիմնախնդիր էր դարձել բուժօգնության մատչելիությունը: Թեև առողջապահական ծառայությունների գերակշռող մասը պաշտոնապես համարվում էր անվճար, սակայն հիմնականում այդ բնագավառի աշխատողների ցածր վարձատրման հետևանքով, բուժպասարկման գրեթե բոլոր ոլորտներում գործում էր ոչ պաշտոնական լրավճարումների ստվերային համակարգը: Վերջինիս պատճառով բնակչության մեծամասնությունը զրկված էր բուժսպասարկումից · լիարժեքորեն օգտվելու հնարավորությունից: Ուստի զգալի թվով հիվանդներ գերադասում էին ինքնաախտորոշվել /որոշ փորձագետների գնահատումներով՝ հիվանդ մարդկանց 59,4 %-ը[23]/, ինչի հետևանքով հիվանդությունների աճող տեմպերի պայմաններում, բուժհիմնարկներ դիմող քաղաքացիների թիվը նվազում էր և առողջապահության համարգն աշխատում իր հնարավորությունների կեսի չափով: 1990-ականների կեսերին հանրապետության հիվանդանոցներում մահճակալների զբաղվածությունը կազմում էր ընդամենն 35 % /մարզերում որոշ դեպքերում 10-15 %/: 1990 թ. համեմատ, պոլիկլինիկաներում հաճախումների թիվը նվազել էր 45 %-ով, տնային կանչերինը՝ 53 %-ով, իսկ շտապ օգնության կանչերինը՝ 60 %-ով[24]: Այս ամենը պայմանավորված էր բուժսպասարկման, այդ թվում և դեղորայքի, բարձր գներով, բուժծառայությունների որակի զգալի անկմամբ և մարդկանց անվճարունակությամբ:

---

[21]Տես Պողոսյան Գ., Բնակչության վերաբերմունքը Հայաստանում ընթացող տնտեսական բարեփոխումների նկատմամբ: Հայացք տնտեսությանը, 20 մարտի, 2000 թ., էջ 7:

[22]Տես Անկախության անցումային 10 տարիները Հայաստանում. մարդկային զարգացման ազգային զեկույց, էջ 110:

[23]Տես նույն տեղում:

[24]Տես նույն տեղում, էջ 111:

Ելնելով ստեղծված իրավիճակից, ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան առողջապահական համակարգի կառավարման բարեփոխումներին՝ հիմնականում այդ ոլորտի պետական մենաշնորհ հանդիսացող կառույցների արմատական վերափոխումների իրականացման, մասնավորեցման և ապապետականացման միջոցով: Սեփականաշնորհվեցին մի շարք առողջապահական հաստատություններ, որոնց թվում ստացիոնար, ատամնաբուժական պոլիկլինիկաներ, առողջարաններ և այլն: Սակայն հանրապետությունում տիրող ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի պայմաններում, այդ ձեռնարկումները ցանկալի արդյունքի չհանգեցրին, քանի որ բնակչության լայն շերտերն ի վիճակի չէին օգտվելու մասնավոր բուժական հաստատությունների վճարովի ծառայություններից: Դրա հետ մեկտեղ, ՀՀ ֆինանսական ծանր կացության հետևանքով, առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալները գերազանցում էին պետբյուջեով նախատեսված ծախսերը: Ուստի, անխուսափելի էր դառնում նաև առողջապահության պետական համակարգում վճարովի ծառայությունների ներդրումը իր բոլոր սոցիալական բացասական անդրադարձներով:

Հայաստանում վատթարացող սոցիալ-տնտեսական իրավիճակը էական ազդեցությունն էր թողնում նաև բարձրորակ կադրերի պատրաստման մակարդակով ավանդաբար աչքի ընկնող հանրապետության կրթական համակարգի վրա: 1991-1995 թթ. այս ոլորտն, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ըստ էության, դուրս մնաց պետական ու տնտեսական գերակայությունից: Նրա բազմաբնույթ խնդիրների լուծման հիմնական ծանրությունը ընկած էր տեղական իշխանության մարմինների և հասարակության վրա: Արդյունքում աստիճանաբար կրճատվեցին ոլորտին տրամադրվող բյուջետային ծախսերը, որոնք եթե 1992թ. կազմում էին 11,20 %, ապա 1995թ.՝ միայն 8,10 %[25]: Դրա հետևանքով նվազագույնի հասան ուսումնական հաստատությունների նորոգման ու տեխնիկական սպասարկման աշխատանքները, ընդհատվեց լաբորատոր սարքավորումների ու ուսումնամեթոդաբանական այլ անհրաժեշտ նյութերի մատակարարումը, փակվեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, զգալիորեն ընկավ ուսուցման որակը: Թեև հանրապետությունում գործում էր անվճար ուսուցման համակարգ, որն ընդգրկում էր միջնակարգ դպրոցն ամբողջությամբ և հետդպրոցական ուսուցման 20 %-ը, սակայն հիմնականում մանկավարժների և դասախոսների չնչին աշխատավարձի հետևանքով, գրեթե համատարած բնույթ էր կրում ընտանեկան բյուջեներից շոշափելի լրավճարումների հաշվին

[25]Տես նույն տեղում, էջ 108:

իրականացվող արտադպրոցական անհատական ուսուցման կիրառումը: Վերջինս սահմանափակում էր անվճարունակ խավերի որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները և թույլ տալիս ունևոր շերտերին հենց սկզբնական փուլից, որակյալ կրթական ծառայություններ ապահովել իրենց երեխաների համար: Ուստի, սոցիալական արդարության հաստատման կարևորագույն նախադրյալներից էր՝ կրթության բնագավառում բոլորի համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու խնդիրը, որի լուծումը սակայն ավելի էր բարդանում այս ոլորտում կատարվող պետական ծախսերի շարունակական նվազման հետևանքով: Այսպես, եթե 1980-ականներին դրանք կազմում էին համախառն ներքին արդյունքի 7-9 %-ը, ապա 1990-ականներին՝ միայն 2-3 %-ը, իսկ մեկ դպրոցականի հաշվով բյուջեի հատկացումները կազմում էին միայն շուրջ 40 ԱՄՆ դոլար[26]: Երկու ցուցանիշներն էլ այլ երկրների համեմատությամբ բավականին ցածր էին:

Իրավիճակը շտկելու նպատակով, ՀՀ կառավարությունը լծվեց կրթական համակարգի վերափոխումների իրականացմանը, որոնք սկզբնական փուլում հիմնականում ներառեցին կրթության կառուցվածքն ու բովանդակությունը:

Կրթության նախկին համակարգը, որն ընդգրկում էր երեք հիմնական ձև /միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն/ փոխարինվեց բազմաստիճան համակարգով: Միջնակարգ /կամ ընդհանուր/ կրթությունը բաժանվեց երեք աստիճանի՝ տարրական /3 տարի/, միջնակարգ /5 տարի/ և ավագ /2 տարի/: Հիմնական դպրոցների շրջանավարտները շարունակում էին իրենց կրթությունը միջնակարգ դպրոցի հաջորդ մակարդակում կամ գնում էին մասնագիտական դպրոցներ: 1990-ականների կեսերից հանրապետությունում սկսեցին ստեղծվել տարբեր տեսակի, այդ թվում և մասնավոր դպրոցներ:

Որոշակի քայլեր կատարվեցին նաև կրթության բովանդակության փոփոխման և ազգային դպրոցի ստեղծման ուղղությամբ: Որոշումներ ընդունվեցին հայ երեխաների միայն հայկական դպրոցներում սովորելու մասին, կրճատվեց ռուսական դպրոցների թիվը: Ուսուցումը դպրոցներում ազատվեց կոմունիստական գաղափարախոսության կապանքներից: Գերակայությունը տրվեց մայրենի լեզվի, գրականության, հայոց պատմության առարկաների դասավանդմանը: Հրատարակվեցին ուսումնական նոր ծրագրերով, ինչպես հիմնական, այնպես էլ այլընտրանքային դասագրքեր, միջնակարգ դպրոցներին որոշակի ազատություն տրվեց լրացուցիչ առարկաներ մտցնելու, ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ ընտրելու հարցում,:

[26]Տես նույն տեղում:

Սակայն ազգային դպրոցի առջև դրված խնդիրների լիարժեք իրականացմանը խոչընդոտում էին մի շարք գործոններ՝ ուսումնական տարվա և դասաժամերի տևողության կրճատումը /հանրապետության շրջափակման հետևանքով, ձմռան ամիսներին, դպրոցների ջեռուցումից զուրկ լինելու պատճառով, երկարաժամկետ դադարեցվում էին պարապմունքները/, բարձրորակ դասագրքերի պակասը, գրենական պիտույքների թանկությունը, լավագույն ուսուցիչների արտահոսքը: Վերջինս պայմանավորված էր մանկավարժների սոցիալական ծանր վիճակով, ինչի հետևանքով շատ որակյալ ուսուցիչներ, հիմնականում տղամարդիկ, հեռանում էին դպրոցից՝ անցնելով ավելի բարձր վարձատրվող աշխատանքի: Դա հանգեցնում էր կրթության ոլորտում զբաղված կադրերի մասնագիտական մակարդակի անկմանը: Այսպես, 1994-1995 ուսումնական տարվա ընթացքում բարձրագույն կրթությամբ ուսուցիչների թիվը նվազեց 15 %-ով, տղամարդ ուսուցիչների թիվը 5%-ով: Յուրաքանչյուր 6 ուսուցչից 1-ը կենսաթոշակային տարիքի էր: Դպրոց եկած յուրաքանչյուր 4 ուսուցչից 1-ը չուներ մանկավարժական կրթություն: Ուսուցիչների 2,5%-ը ուներ միջնակարգ կրթություն[27]:

Անմխիթար վիճակում էին գտնվում նաև նախադպրոցական հաստատությունները: Բյուջետային կրճատումների հետևանքով, այստեղ ընկել էր երեխաների սննդի և խնամքի որակը, բարձրացել ամսեվարձը: Արդյունքում 1990 թ. մինչև 90-ականների կեսերը մանկապատեզ հաճախող երեխաների թվաքանակը կրճատվեց ավելի քան 50 հազարով, մանկավարժներինը՝ ավելի քան 31 հազարով, իսկ մանկապարտեզներինը՝ 210-ով[28]: Նման նվազումը պայմանավորված էր նաև գործազրկության հետևանքով մշտապես տանը գտնվող մեծահասակների առակայությամբ:

Արդյունաբերական հզորությունների կտրուկ անկման և բանվորական մասնագիտությունների պահանջարկի խիստ նվազման հետևանքով, քննվող ժամանակշրջանում Հայաստանում լիովին փլուզվեց մասնագիտական-տեխնիկական կրթական համակարգը, ինչը հանգեցրեց պրոֆտեխուսումնարանների և այնտեղ սովորողների թվաքանակների աննախադեպ կրճատմանը: Գրեթե նման իրավիճակում էր գտնվում նաև միջնակարգ մասնագիտական կրթական համակարգը[29]:

Ի տարբերություն նշյալ համակարգերի, հանրապետության բարձրագույն կրթության ոլորտը լուրջ կորուստներ չկրեց: Անկախության հռչակումից հետո, իշխանությունների կողմից աշխատանքներ տարվեցին բարձրագույն կրթության հետագա զարգացման ուղղությամբ: 1995 թ. հունիսի 12-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց

[27]Տես Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 209:
[28] Տես նույն տեղում, էջ 210:
[29]Տես նույն տեղում:

ուսուցման նոր, եռաստիճան համակարգի անցնելու մասին[30]: Այն ներառում էր. բակալավրիատը, որտեղ ուսուցման 4 տարվա ժամկետում պատրաստվում էին ոչ լրիվ բարձրագույն կրթությամբ միջին օղակների մասնագետներ, մագիստրատուրան՝ 2 տարի ժամկետում պատրաստվում էին բարձր որակավորման մասնագետներ և ասպիրանտուրան: Նույն թվականից Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանն ու Հայկական գյուղատնտեսական ակադեմիան անցան բարձրագույն կրթության այդ համակարգին: Սակայն մասնագետների կարծիքով, վերջինս զգալիորեն զիջում է նախկին համակարգի մակարդակին[31]:

1990-ականների առաջին կեսին Հայաստանում ստեղծվեցին մի շարք նոր բարձրագույն ուսումնական հաստատություններ: 1991թ. հիմնադրվեց Հայաստանի Ամերիկյան համալսարանը, 1993 թ. բացվեց Գավառի պետական համալսարանը, իսկ 1995թ.՝ ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը և այլն: 1993-1995 թթ. բուհերում ընդունելություն կատարվեց 36 նոր մասնագիտությունների գծով: Քայլեր կատարվեցին նաև բուհերի ինքնուրույնությունն ընդլայնելու և նրանց համագործակցությունը արտասահմանյան ուսումնական և գիտական հաստատությունների հետ ամրապնդելու ուղղությամբ: 1995 թ. Հայաստանի բուհերում ուսանում էր 840 արտասահմանցի ուսանող, որոնցից 8 %-ը՝ ոչ ԱՊՀ երկրներից: Արտերկրից 104 գիտնականներ /75 8 %-ը՝ ԱՄՆ-ից/ հրավիրվեցին Հայաստան աշխատելու: Սակայն այս ամենի հետ մեկտեղ, հանրապետությունում առկա ճգնաժամային իրավիճակն իր բացասական ազդեցությունն էր թողնում նաև բուհական համակարգի վրա: Դասախոսների ցածր վարձատրության հետևանքով, նրանց մեծ մասը զուգահեռաբար տնտեսական այլ գործունեություն էր ծավալում, կամ էլ լրացուցիչ ժամեր վերցնելով, աշխատում գերբեռնվածությամբ, ինչը զգալիորեն սահմանափակում էր պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման հնարավորությունները: Վերջիններիս խոչընդոտում էր նաև ժամանակակից դասագրքերի ու ձեռնարկների խիստ պակասը: Արդյունքում ընկնում էր դասավանդման որակը, նվազում ուսման առաջադիմությունը[32]:

Նոր տնտեսակարգի պայմաններում պետական բուհերում սկսվեց կիրառվել վճարովի ուսուցում: 1991թ. պետական 16 բուհերի վճարովի ուսուցման համակարգում ուսանողների թիվն աճեց շուրջ 6,5 անգամ: 1990-ականի կեսերին պետական բուհերի ուսանողների թիվը կազմում էր

---

[30]Տես ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ. ՀՀ կառավարության որոշումները 1995 թ., N 6, 329 որոշում/ հ. 63, թ. 53-54:
[31]Տես Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 214:
[32]Տես նույն տեղում, էջ 217:

36 հազ. մարդ, որոնցից միայն 19 100-ն էր սովորում պետական պատվերով /անվճար/: Հիմնվեցին նաև վճարովի բազմաթիվ մասնավոր համալսարաններ ու քոլեջներ: 1995թ. հանրապետությունում գործում էին արտոնագրված 42 ոչ պետական ուսումնական հաստատություններ, որոնց թվում Հր. Աճառյանի անվան համալսարանը, ԱՅՈՒԴ-ը, Գլաձոր համալսարանը և այլն: Սակայն նրանց ուսուցման մակարդակը զիջում էր պետական ուսումնական հաստատությունների մակարդակին[33]: Ուստի, հանրակրթական դպրոցների շրջանավարտների մեծ մասը ձգտում էր բարձրագույն կրթություն ձեռք բերել պետական բուհերում: Սակայն պետպատվերով հատկացվող տեղերի խիստ սահմանափակության հետևանքով, հանրապետության բնակչության անապահով խավերն, ըստ էության, զրկված էին բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Դրա հետ մեկտեղ, հստակեցված չէին նաև մասնագիտական–տեխնիկական ու միջնակարգ մասնագիտական ուսուցման հայեցակարգերը: Արդյունքում, ամեն տարի տասնյակ հազարավոր երիտասարդներ, առանց որևէ մասնագիտական պատրաստվածության, մուտք էին գործում աշխատաշուկա: Այուս կողմից, նոր տնտեսակարգի պահանջներին բուհական համակարգի անհամապատասխանության հետևանքով, զգալի անհամամասնություն գոյություն ուներ տվյալ համակարգի շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության մակարդակի և շուկայական պահանջարկի միջև: Բուհերը /այդ թվում և ոչ պետական, որոնց գործունեությունը հիմնականում կանոնակարգված չէր/ շարունակում էին «արտադրել» աշխատաշուկայում անգամ տեսականորեն պահանջարկ չունեցող հազարավոր մասնագետներ, որոնց ճնշող մեծամասնությունը հեռանկարում իր մասնագիտությամբ աշխատելու ոչ մի իրատեսական հավանականություն չուներ: Այս ամենը հանգեցնում էր գործազրկության աճին, սոցիալական լարվածության մեծացմանը, ուսումնառության նկատմամբ շահագրգռվածության նվազմանն ու երիտասարդության բարոյա-հոգեբանական անկմանը: Ուստի, հրատապ էր դարձել կրթության ոլորտի օրենսդրական կանոնակարգումը, ինչը կհանգեցներ այս բնագավառում պետության դերի հստակեցմանն ու երիտասարդության համապատասխան կրթություն ստանալու իրավունքների և սոցիալական երաշխիքների ապահովմանը:

Հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական ճգնաժամն ակնբախորեն դրսևորվում էր նաև գիտության բնագավառում: Նյութական և ֆինանսական միջոցների սղությունը, էլեկտրաէներգիայի և ջեռուցման բացակայությունը, գիտական կապերի խզումն ու գիտական տեղեկատվության պակասը հանգեցրին նրա մակարդակի անկմանը: Գիտությունը չէր ստանում անհրաժեշտ պետական աջակցություն:

[33]Տես նույն տեղում, էջ 217-218:

Արմատական վերափոխումների քաղաքականության ընդհանուր հայեցակարգում այն դիտարկվում էր որպես չափազանց ծախսարար և անթույլատրելի ճոխություն, ինչի հետևանքով պարբերաբար կրճատվում էին նրա ֆինանսավորման ծավալները: 1990-ականների սկզբներին գիտության մակարդակը պետբյուջեի ծախսերի մասով իջավ մինչև 1%-ի[34]: Նման պայմաններում խզվեցին հիմնարար ու կիրառական գիտությունների և արտադրության միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը, փլուզվեցին ժամանակին մեծ համբավ ձեռք բերած գիտական դպրոցները, խաթարվեց գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության տասնամյակների ընթացքում ձևավորված համակարգը, կազմալուծվեց գիտական արդյունավետ հետազոտությունների նյութատեխնիկական հենքը, կտրուկ վատթարացավ գիտաշխատողների սոցիալական վիճակը, նվազեց նրանց թվաքանակը: Այսպես, եթե 1990թ. Հայաստանում գործում էր 130 գիտահետազոտական ինստիտուտ, ուր աշխատում էր 20 հազ. գիտաշխատող, ապա 1995թ.՝ միայն 119 ինստիտուտ՝ շուրջ 5000 գիտաշխատողներով[35]:

Գիտության ոլորտը շուկայական տնտեսության սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով, ՀՀ կառավարությունը 1992 թ. մտցրեց պետբյուջից գիտության թեմատիկ պայմանագրային ֆինանսավորման կարգը՝ փորձագիտական խորհուրդների՝ մրցույթների արդյունքների վրա հիմնված եզրակացություններին համապատասխան: Այս կարգը նպատակաուղված էր գիտնականների նախաձեռնության և ինքնուրույնության դրսևորման խթանմանն ու փոքր, երկրորդական թեմաների կրճատմանը: Սակայն այն ուներ լուրջ թերություններ: Հատկացված միջոցները գործնականում բաշխվում էին որպես աշխատավարձ: Սակայն թեմատիկ ֆինանսավորման դեպքում միջոցներ չէին մնում գիտական հետազոտությունների ապահովման, գիտական աշխատությունների հրատարակման, գործուղումների, տնտեսական և այլ ծախսերի համար: Փաստորեն հետազոտությունների համակարգային և համալիր պլանավորմանը փոխարինելու եկավ ինքնագործունեությունը, արժեզրկվեց գիտական կազմակերպությունների, կոլեկտիվների և գիտական խորհուրդների դերը հետազոտությունների պլանավորման և դրանց արդյունքների համար պատասխանատվության ասպարեզում: Խաթարվեց ժառանգորդությունը գիտության զարգացման բնագավառում: Ըստ էության հաշվի չառնվեց, որ այս ոլորտը չի կարող միանգամից

---

[34] Տես Սարգսյան Ֆ. Տ., Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան այսօր. Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան 60 տարում, Երևան, 2003, էջ 8:

[35] Տես Սինասյան Է., նշվ. աշխ.,էջ 197,1999:

հարմարվել շուկայական մեխանիզմներին, առավել ևս, երբ դրանք վերջնականապես մշակված չէին[36]:

Այսպիսով, ձեռնարկված հապճեպ նորամուծությունները ոչ միայն չնպաստեցին գիտական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացմանն, այլև հանգեցրին գիտական համալիրի քայքայմանն ու գիտական աշխատանքի հեղինակազրկմանը, ինչի հետևանքով մեծ ծավալներ ընդունեց բարձրորակ գիտական կադրերի արտահոսքը: 1991-1995թթ. ՀՀ ԳԱԱ համակարգից հեռացավ 800 գիտաշխատող, որոնցից 200-ը մշտական բնակության մեկնեց արտասահմանյան երկրներ: Նրանցից 44 %-ը հեռացել էր սեփական նախաձեռնությամբ, իսկ 16%-ը չէր վերադարձել գիտական գործուղումից: Վերջիններիս 6%-ը՝ գիտության դոկտորներ էին, իսկ 9%-ը գիտության թեկնածուներ[37]: Հայաստանից մեկնածների մեջ գերակշռում էին հատկապես երիտասարդ և միջին տարիքի առավել օժտված և կարողունակ գիտական կադրերը:

Սոցիալական ծանր վիճակում գտնվող գիտնականներից շատերը, որոնք արտասահման մեկնելու հնարավորություն չունեին, ևս հեռանում էին հանրապետության գիտական հաստատություններից և գործունեություն ծավալում ավելի բարձր վարձատրվող ոլորտներում: 1991-1995թթ. Երևանի պետհամալսարանից հեռացավ 65 գիտաշխատող, որոնցից 14-ը գիտության դոկտոր և 35-ը գիտության թեկնածու, իսկ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտից՝ 909 մարդ[38]: Փաստորեն Հայաստանը կանգնած էր իր երբեմնի հզոր գիտական ներուժի փոշիացման սպառնալիքի առջև, ինչը կարող էր լրջորեն վտանգել նորանկախ հանրապետության տնտեսության, սոցիալական, մշակութային և պաշտպանության ոլորտների ապագա առաջընթացը: Ուստի, հրամայական էր դարձել գիտական ներուժը պահպանելուն, հիմնարար հետազոտությունների զարգացման համար պայմաններ ստեղծելուն, հանրապետության տնտեսության զարգացման գործում գիտության դերը բարձրացնելուն նպատակաուղված քայլերի իրականացումը: Վերջինիս դրսևորումներից էր՝ ՀՀ նախագահի 1993 թ. հրապարակված հրամանագիրը Ակադեմիայի վերաբերյալ: Այդ հրամանագրով Ակադեմիան վերանվանվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի՝ ինքնավար գիտական հիմնարկի կարգավիճակով, որն իրականացնում և համակարգում է հանրապետության հիմնարար գիտական հետազոտությունները և կատարում փորձաքննություն գիտության բնագավառում: Միաժամանակ, ՀՀ ԳԱԱ-ն ճանաչվում էր որպես

---

[36] Տես Սարգսյան Ֆ. Տ.,նշվ. աշխ.,էջ 8,29:
[37] Տես Դրոշակ, թիվ 3, 12-25 փետրվարի, 1999, էջ 19:
[38] Տես նույն տեղում:

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական գիտական խորհրդատու: Այդ փաստաթուղթն ապահովեց նաև Ակադեմիայի ամբողջականության և նրա վարչական միասնության պահպանումը: Սակայն հրամանագիրը, որն 1990-ականների առաջին կեսին գիտության վերաբերյալ ընդունված միակ օրենսդրական ակտն էր, էական ազդեցություն չթողեց հիմնարար գիտության վիճակի վրա: Փաստաթղթում շրջանցված էր Ակադեմիայում կատարվող հետազոտությունների ֆինանսավորման համակարգի և ծավալի մասին սկզբունքային հարցը[39]: Ուստի, վերջինս մասնակիորեն լուծվում էր արտաքին ֆինանսավորման հաշվին: Հայաստանի գիտական ներուժի հսկայական հնարավորությունների օգտագործմամբ մեծապես շահագրգռված էին միջազգային շատ գիտական կենտրոններ ու հիմնադրամներ: 1990-ականների կեսերին ՀՀ ԳԱԱ-ում արտասահմանյան դրամաշնորհների հաշվին, մրցույթային կարգով, ֆինանսավորվել էր 12 գիտահետազոտական թեմա՝ 234 հազ. ԱՄՆ դոլար արժողությամբ[40]: Թեև դրամաշնորհների հատկացումը Արևմուտքին հնարավորություն էր տալիս հանրապետության գիտական ներուժի էժան շահագործման միջոցով մեծ շահույթներ ստանալ, սակայն մյուս կողմից, դա նպաստում էր Հայաստանի գիտական ներուժի պահպանմանն ու որոշ զարգացմանը:

Սակայն գիտության լիարժեք զարգացումը, որը շարունակական գործընթաց է և չի հանդուրժում ընդհատումներ անգամ տնտեսական դժվարությունների շրջանում, պահանջում էր համապարփակ պետական ծրագրի մշակում, որը կներառեր՝ այդ ոլորտի օրենսդրական դաշտի ձևավորման, հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման, գիտատեխնիկական քաղաքականության մշակման և իրականացման ասպարեզում գիտության դերի հստակեցման, նրա կառավարման կատարելագործման, ինչպես նաև գիտնականների սոցիալական պաշտպանվածության ապահովման հարցերը: Վերջիններիս լուծումը կարող էր նպաստել գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացմանն ու դրանց գործնական կիրառման ծավալմանը, հետևաբար նաև՝ հանրապետությունում առկա տնտեսական և սոցիալական դժվարությունների հաղթահարմանը:

Քննվող ժամանակահատվածում անկումային վիճակում էր գտնվում նաև մշակույթի բնագավառը: Հայաստանի երրորդ հանրապետությունը ժառանգեց մշակութային դարավոր ավանդույթներ, խոշոր նվաճումներ, այդ ոլորտի պետական կառավարման պատկառելի փորձ և հաստատությունների հզոր ցանց: Անկախության հռչակումը,

---

[39]Տես Սարգսյան Ֆ. Տ., նշվ. աշխ.,էջ 9:
[40]Տես էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը. գլոբալ մարդակային զեկույց 2001,Երևան, 2001 էջ 46:

քաղաքական, գաղափարական և տնտեսական ոլորտների ազատականացումը մշակույթի զարգացման նոր հնարավորություններ ու հեռանկարներ էին խոստանում: Թվում էր թե ձերբազատումը գրաքննությունից, միակուսակցականության գաղափարական կապանքներից, կառավարման վարչահրամայական մեթոդներից ազգային մշակույթի շեշտակի վերելք է նշանավորելու: Սակայն այդ հույսերն օբյեկտիվ /տնտեսական, հատկապես էներգետիկ, ճգնաժամը/ և սուբյեկտիվ /մշակութային քաղաքականություն իրականացնողների անպատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին ու նոր հարաբերություններին/ պատճառներով չիրականացան:

1990-ականների սկզբներին իշխանական շրջանակներում գերիշխում էր այն թյուր տեսակետը, թե տնտեսական խորը ճգնաժամի և դարաբաղյան հակամարտության առկայության պայմաններում մշակույթի զարգացման համար ջանքեր ու միջոցներ ներդնելն անպատեհ ու անհարկի շռայլություն է: Ուստի, տվյալ բնագավառում ՀՀ կառավարության գործունեությունը հիմնականում սահմանափակվում էր եղած մշակութային հաստատությունների պահպանմանը նպատակաուղղված որոշ քայլերի իրականացմամբ: Այդ հաստատություններին պետության կողմից ֆինանսական միջոցներ էր տրամադրվում միայն աշխատակիցների չնչին աշխատավարձերի վճարման համար, որոնք չէին ապահովում նույնիսկ նրանց տարրական կարիքների բավարարումը: Մշակույթի գործիչների ցածր կենսամակարդակը հարկադրում էր նրանցից շատերին զբաղվել ոչ ստեղծագործական, այլ եկամտաբեր աշխատանքով: Մի մասն էլ լքում էր հայրենիքը, ինչը նվազեցնում էր հանրապետության մշակութային ներուժն ու խոչընդոտում այդ ոլորտի բնականոն զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, անկախության սկզբնական շրջանում մեծ էր միջազգային ասպարեզ դուրս գալու, արտասահմանյան երկրների հետ մշակույթի բնագավառում ուղղակի կապեր հաստատելու ձգտումը: Սակայն միշտ չէր, որ այդ կապերը հեռանկարային բնույթ էին ստանում և զարգացման նպատակ հետապնդում: Հաճախ դրանք սահմանափակվում էին ֆինանսական հսկայական միջոցներ կլանող սոսկ հյուրախաղային միանվագ ձեռնարկումներով:

Փաստորեն մինչև 1990-ականների կեսերը մշակույթի ոլորտում որդեգրած քաղաքականության գերակայությունները, բնագավառի կառավարման համակարգն ու ֆինասավորման մեթոդները էական փոփոխությունների չենթարկվեցին, ինչի հետևանքով այստեղ աստիճանաբար խորանում էին ճգնաժամային երևույթները: Կտրուկ նվազեցին գրահրատարակումների ծավալները, խիստ անկում ապրեց կինոարտադրությունը, զգալիորեն կրճատվեց գրադարանների,

մշակույթի տների, ակումբների, կինոթատրոնների, համույթների և ստեղծագործական խմբերի թվաքանակը[41]: Չնայած այս ամենին, առանձին ստեղծագործական խմբերի, այնուամենայնիվ, հաջողվում էր ուժերի մեծ լարումով պահպանել մշակութային բարի ավանդույթները: Հայրենիքում և արտասահմանում /ոչ հաճախակի/ շարունակում էին հաջողությամբ հանդես գալ Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի պետական ակադեմիական,Գ. Սունդուկյանի անվ. պետական ազգային ակադեմիական, Հր. Ղափալանյանի անվ. դրամատիկական, Երևանի կամերային, «Համազգային» թատրոնների ստեղծագործական կոլեկտիվները, Հայաստանի ֆիլարմոնիկ նվագախումբը, հայ հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը և այլն: Սակայն դա էական ազդեցություն չէր թողնում հանրապետության մշակութային կյանքի առաջընթացի վրա:

Լուրջ բացթողումներ գոյություն ունեին մշակութային կրթության և արժեքների տարածման ու քարոզչության ասպարեզում: Շուկան ողողող մշակութային ցածրորակ դրսևորումները, օտարամոլության լայն ծավալումը, գրեթե ոչ մի դիմադրության չէին հանդիպում, ինչը խիստ բացասաբար էր անդրադառնում ազգաբնակչության, մասնավորապես երիտասարդության, գեղագիտական ճաշակի և ազգային նկարագրի ձևավորման վրա: Նման իրավիճակը լրջորեն վտանգում էր ազգային մշակութային և հոգևոր արժեքների գոյատևումն ու զարգացումը: Դրանից ելնելով, Հայաստանի կառավարությունը 1995 թ. ծեռնամուխ եղավ հանրապետության մշակութային քաղաքականության հայեցակարգային հիմնադրույթների մշակմանը, որոնք վերջնականապես ձևակերպվեցին միայն հինգ տարի անց: Որոշակի աշխատանք տարվեց նաև միջազգային մշակութային համաձայնագրերին միանալու ուղղությամբ[42], սակայն այդ ոլորտի ազգային օրենսդրական դաշտի լիարժեք ձևավորումը շարունակ ձգձգվում էր: Քննվող ժամանակահատվածում մշակույթի վերաբերյալ միայն մեկ օրենք ընդունվեց՝ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման

---

[41] Տես Անկախության անցումային 10 տարիները Հայաստանում. մարդկային զարգացման ազգային զեկույց, էջ 112-113:

[42] Հայաստանը 1993թ. միացավ՝ «Զինված կոնֆլիկտի դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին», «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին», «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի վախանցման արգելմանը և կանխմանն ուղղված միջոցառումների մասին», Սևծովյան տնտեսական համագործակցության դաշնության շրջանակում կնքված «Մշակույթի, կրթության, գիտության և տեղեկատվության բնագավառներում համագործակցելու մասին» կոնվենցիաներին, «Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրին /1995թ./ և այլն:

մասին» /1994թ./[43]: Մինչդեռ մշակութային մի շարք ոլորտներ /գրադարանները, թանգարանները, թատերական և կինոարտադրության բնագավառները/ տակավին զուրկ էին իրենց գործունեությունը օրենքով կարգավորելու հնարավորությունից: Օրենսդրորեն կարգավորված չէին նաև դրանց պետական աջակցություն ցույց տալու սահմաններն ու կարգը: Կառավարության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների սղությունը, մշակութային հաստատություններին ոչ միայն զարգացման ծրագրեր մշակելու, այլև անհրաժեշտ որոշ գործառույթներ իրականացնելու հնարավորություն չէր տալիս: Թեև թատերարվեստի, կինոարտադրության և գրահրատարակչության ոլորտներում գործում էր պետական պատվերի համակարգը, սակայն այն խիստ սահմանափակ էր: Բացի այդ, հստակեցված չէր ստեղծագործությունների ընտրության կարգը. հայտնի չէր թե գերատեսչությունների համապատասխան պաշտոնյաները ինչ չափանիշներով էին որոշում ստեղծագործական կոլեկտիվների կողմից ներկայացված գործերի ֆինանսավորման անհրաժեշտությունը: Հիմնականում չէին արդարանում նաև բարեգործական խողովակներով միջոցներ հաթիայթելու հույսերը: Թեև հանրապետությունում գործող մի քանի մշակութային հիմնադրամներն այս ուղղությամբ զգալի աշխատանք էին կատարում, սակայն նրանց սահմանափակ միջոցներն ի զորու չէին փոխելու ընդհանուր իրավիճակը: Վերջինս, հիմնականում պայմանավորված էր բնակչության սոցիալական ծանր վիճակով, տնտեսության մի մեծ հատվածի ստվերայնությամբ և մշակույթին աջակցող մեկենասների ու հովանավորողների համար հարկային արտոնությունների ապահովման բացակայությամբ: Իրավիճակի շտկումը պահանջում էր, ինչպես համապատասխան օրենսդրական բարենորոգումների իրականացում, այնպես էլ պետական մակարդակով մշակույթի զարգացման հիմնադրամի ստեղծում:

Արմատական վերափոխումների կարիք ուներ նաև մշակույթի բնագավառի կառավարման համակարգը, որին բնորոշ էին պասիվությունը, իներցիան, մասնագիտական որակների ու չափանիշների անկումը: Այստեղ գրեթե բացակայում էր ժողովրդավարական սկզբունքների կիրառումը: Մշակութային հաստատությունների գիտական ու գեղարվեստական խորհուրդները կազմավորվում էին գերատեսչությունների ղեկավարների հայեցողությամբ և հիմնականում ձևական բնույթ էին կրում: Չէին գործում նաև նախկին միջգերատեսչական խորհուրդները: Համակարգում գործառույթների և պարտականությունների բաշխումը հիմնականում շարունակվում էր իրականացվել վարչա-հրամայական մեթոդներով: Հանրապետության գործադիր իշխանության գրեթե բոլոր մարմիններում առկա կադրային քաղաքականության ճգնաժամը,

[43]Տես ՀՀ գործող օրենքների ժողովածու /1990-1995թթ./, Երևան, 1995, էջ 734-750:

հատկապես ցավագին հետևանքներ էր ունենում մշակույթի ղեկավարման ասպարեզում: Այստեղ վերին օղակները մի կողմից օտարվել էին հաստատությունների բուն մասնագիտական խնդիրներից, իսկ մյուս կողմից ամուր պահում էին վերահսկողական և կադրային քաղաքականության լծակները, ինչը հարուցում էր մշակույթի գործիչների մեծամասնության արդարացի դժգոհությունը: Այս ամենը, զուգակցվելով հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական ծանր կացության հետ, խոչընդոտում էր հանրապետությունում մշակութային շուկայի ձևավորմանն ու մշակութային կյանքի բնականոն զարգացմանը:

Վերոնշյալ հանգամանքների ազդեցությամբ, հանրապետության ազգաբնակչության մի մասի մոտ անկախության սկզբնապես իդեալիստական ընկալմանն աստիճանաբար փոխարինելու եկավ անկախության բուն գաղափարի նկատմամբ բացասական վերաբերմունքը: Հայաստանի անկախ կարգավիճակը սկսվեց դիտվել որպես առկա զրկանքների հիմնական սկզբնապատճառ, ինչը նախորդ հասարակարգի նկատմամբ կարոտախտային տրամադրություններ էր առաջացնում: Դրա հետևանքով հասարակության մեջ արմատավորվում էր սեփական պետության խեղաթյուրված ընկալումն ու արժևորումը, հանգեցնելով «սա իմ պետությունը չէ» եզրակացության[44]: Վերջինս նպաստում էր արտագաղթի ծավալմանը, որը գնալով մեծ չափեր էր ընդունում: Այսպես, 1993 թ. ընտանիքներում, դպրոցներում, ներքին գործերի նախարարության մարմիններում հարցումներ և ընտրովի հետազոտություններ անցկացրած մասնագետների մեծամասնության կարծիքով՝ միայն նշյալ թվականին, Հայաստանից արտագաղթածների մոտավոր թիվը կազմում էր շուրջ 400-500 հազ. մարդ[45]: 1991-96 թթ. Հայաստանից արտագաղթել էր մոտ 677 հազար մարդ[46]: Փաստորեն հանրապետության բնակչության ավելի քան 1/7-ը գտնվում էր նրա սահմաններից դուրս: Ընդ որում հայրենիքը լքողների թվում բարձր էր տղամարդկանց տեսակարար կշիռը /ավելի քան 60%/, որոնց մեծամասնությունը ակտիվ աշխատանքային և վերարտադրողական տարիքի էր /20-40 տարեկան/[47]: Արդյունքում, Հայաստանում խախտվում էր բնակչության սեռատարիքային համամասնությունը /տղամարդկանց տեսակարար կշռի անկում և մեծահասակների թվաքանակի հարաբերական ավելացում/, խարխլվում ամուսնա-ընտանեկան հարաբերությունների հիմքերը, նվազում բնակչության բնական աճը:

---

[44]Տես Անկախության անցումային 10 տարիները Հայաստանում. մարդկային զարգացման ազգային զեկույց, էջ 36:
[45] Ազգ, 16 փետրվարի, 1994:
[46]Տես Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 14:
[47] Անկախության անցումային 10 տարիները Հայաստանում.մարդկային զարգացման ազգային զեկույց, էջ 105:

Հանրապետությունից հիմնական արտագաղթողները՝ բնակչության միջին ապահովվածություն ունեցող խավերի ներկայացուցիչներն էին /աղքատներն արտագաղթելու հնարավորություն չունեին, իսկ հարուստները՝ ցանկություն/, որոնց մեծ մասը մեկնում էր ԱՊՀ երկրներ /հատկապես Ռուսաստանի Դաշնություն: 1990-ականների առաջին կեսին արտագաղթողների միայն 25-30 %-ն էր մեկնում հեռավոր արտասահման: Արտագաղթի հիմնական պատճառներից էին՝ աշխատանքի բացակայությունը, բավարար կենսամակարդակ ապահովելու համար վաստակելու անհնարինությունը, կենցաղային ծանր պայմանները, անվստահությունը Հայաստանի զարգացման հեռանկարների նկատմամբ, անձնական անվտանգության զգացողության բացակայությունը և այլն[48]: Հայրենիքը լքողների շարքում մեծ թիվ էին կազմում մտավոր բարձր կարողություններով օժտված բարձրորակ մասնագետներն ու ձեռներեցությամբ աչքի ընկած անհատները: 1990-1995 թթ. Հայաստանը կորցրեց իր մասնագետների 1/3-ը[49]:

Ստեղծված տագնապալի ժողովրդագրական իրավիճակը պայմանավորված էր նաև միգրացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված պետական քաղաքականության բացակայությամբ: Ուստի, հրատապ էր միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի մշակումը, որը կսահմաներ միգրացիոն քաղաքականության առաջնահերթ խնդիրներն ու կնախանշեր վերջիններիս լուծման ուղիները: Սակայն այդ հայեցակարգի մշակման աշխատանքներն անընդհատ ձգձգվում էին: Մինչդեռ ազգաբնակչության արտահոսքի աճող ծավալները վատթարացնում էին հանրապետության ժողովրդագրական իրավիճակը, խոչընդոտում երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը, սպառնում նրա ազգային անվտանգությանը:

Այսպիսով, անկախության հռչակումից հետո, ՀՀ-ն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, գտնվում էր սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ, որը գնալով ավելի էր խորանում՝ ընդգրկելով հանրապետության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները: 1990-ականների սկզբներին, շուկայական հարաբերություններին անցմանը նպատակաուղղված ոչ հիմնովին նախապատրաստված բարեփոխումներն ուղեկցվում էին բնակչության լայն խավերի իրավական ու սոցիալական անպաշտպանության շահագործումով, ինչը հանգեցրեց նրանց կենսամակարդակի շեշտակի անկմանը: Արդյունքում հասարակության անդամների զգալի մասը բարոյա-հոգեբանական անկում էր ապրում՝ աստիճանաբար կորցնելով հավատն ու

[48] Տես Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 189:
[49] Տես Հայաստանի մարդկային զարգացման զեկույց 1996, էջ 14:

վստահությունը սեփական պետության հանդեպ: Սպառնալից չափեր ընդունեց ազգաբնակչության զանգվածային արտահոսքն հանրապետությունից:

Առկա ճգնաժամային իրավիճակի հաղթահարումը մեծապես պայմանավորված էր դարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծմամբ, օրինականության համընդհանուր հաստատմաբ ու տնտեսության կայուն զարգացման ապահովմամբ, որոնց լուծումը պահանջում էր ազգային բոլոր ուժերի համախմբում, համազգային ծրագրի մշակում և իրականացում:

ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՓՈՓՈԽ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Բնակչության աճի և նվազման պատկերը: Դարերի ընթացքում Հայաստանին բնորոշ են եղել բնակչության աճը և տեղաշարժերը: Դրանք տեղի են ունեցել բազմաբարդ շարժառիթներով:

Տարբեր ժամանակներում բնակչության վերարտադրությունը մերթ կայունացել է և թափ հավաքել՝ ծննդի և ներգաղթի հաշվին ավելացնելով բնակչության թիվը, մերթ խստորեն դանդաղել է՝ բարձր մահացության և արտագաղթի պատճառով:

Անհրաժեշտ է նախ և առաջ գնահատել և բացահայտել ժողովրդագրության զարգացման օրինաչափությունների դրսևորման ուղղությունները, միտումները և բնակչության աճի և անկման գործոնների դերը: Ընդհանուր առմամբ, բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորվում են բուն ժողովրդագրական գործընթացների պատմականորեն հանդես եկող և տվյալ պահին որպես ավտոնոմ գործող ինքնուրույն երևույթների և հասարակության սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցության ներքո: Յուրաքանչյուր տվյալ պահին ծննդի, մահվան, ընտանիքի մեծության, գաղթի ընթացքի վրա մեծապես ազդում է բնակչության տարիքային կազմը, որը գոյանում է պատմական զարգացման ընթացքում հասարակության սոցիալ-տնտեսական պայմաններում տեղի ունեցող փոփոխություններին և տեղաշարժերին համընթաց, ինչպես նաև արտակարգ երևույթների (պատերազմ, բնական աղետներ՝ գլխավորապես երկրաշարժ, տարափոխիկ հիվանդություններ, տնտեսական պատճառներով, կամավոր, բռնությամբ և հարկադիր ներգաղթ, արտագաղթ և այլն) պատճառներով:

Այս բոլորի հետևանքով առաջացած տնտեսական վնասները վերկանգնվում են կարճատև ժամանակահատվածում, իսկ ժողովրդագրական հետևանքները երկարատև են և կրկնվում են պարբերաբար: Օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ցածր ծննդի և բարձր մահացության հետևանքները հետագայում կրկնվեցին պարբերաբար: Պատկերը այդպես կլինի նաև Ադրբեջանի հետ չհայտարարված պատերազմի և նոր սոցիալ-տնտեսական պայմանների ժողովրդագրական պատճառներով:

Խորհրդային իշխանության հաստատման պահին Հայաստանում բնակվում էր չափազանց քիչ բնակչություն՝ 720 հազ. մարդ, 1913թ. 1 մլն

փոխարեն: Չափազանց մեծ էր մահացությունը: Այն բազմաթիվ մարդկանց հետ միասին խլում էր շատ մանուկների կյանք: Բավական է ասել, որ մինչև 10-12 տարեկան էին դառնում ծնվածների նույնիսկ կեսից պակաս մասը, իսկ 1913թ. մինչև մեկ տարեկան դառնալը 1000 ծնվածից մահանում էր 204-ը: Ներկայումս այն իջել և կազմում է 13-14 երեխա:

Առաջին համաշխարհային պատերազմի, ապա թուրք օկուպանտների և ադրբեջանական մուսաֆաթիստների բարբարոսական, ինչպես նաև քաղաքացիական պատերազմների և զավթողական քաղաքականության հետևանքով հրի ու սրի էր քաշվել հարյուր-հազարավոր անմեղ հայ բնակչություն: Խորհրդային կարգեր հաստատվելու ժամանակ Արևմտյան Հայաստանի հետ միասին Թուրքիան անվերապահորեն իրեն բռնակցեց Արևելյան Հայաստանի մաս կազմող Ղարսի մարզը, Աուրմալուի գավառը, Արփաչայից այն կողմ ընկած տարածքները, իսկ Խորհրդային Ադրբեջանը ժամանակի ընթացքում Թուրքիայի և Խորհրդային Միության ակտիվ ջանքերով տնօրինեց Երևանի նահանգի Նախիջևանի գավառը: Ադրբեջանին հանձնվեց Արևելյան Հայաստանի Լեռնային Ղարաբաղը և Գարդմանաց աշխարհը: Վրաստանը տնօրինեց Ջավախքին:

Պատերազմում փլավ չես բաժանում: Հայերի հետ միասին դեպի Ադրբեջան գաղթել և զոհվել էին նաև ադրբեջանցիներ: Գաղթողների մեծ մասը հետագայում վերադարձավ Հայաստան, իսկ հայ բնակչության չնչին մասն էլ՝ Ադրբեջան: Հայ բնակչությանը գումարվել էին նաև Արևմտյան Հայաստանից ներգաղթած հարյուր-հազարավոր փախստական հայեր: Խորհրդային առաջին տասնամյակներում բարձր ծննդին (1000 շնչի հաշվով մոտ 56-57 ծնունդ) և ներգաղթի շնորհիվ 1931թ. կեսերին Խորհրդային Հայաստանի բնակչությունը հասավ նախապատերազմյան 1 միլիոնի մակարդակին: Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդող և հետպատերազմյան բարձր ծնունդը հանգեցրին Հայաստանում բնակչության աճին: Հայրենադարձությունը մեծ մասշտաբներ ընդունեց հետպատերազմյան տարիներին՝ 1946-1960-ական թվականներին: Հետագայում այն աստիճանաբար մարեց, քանզի հայրենադարձների մի զգալի մասը անմեղորեն իր վախճանը գտավ աքսորի ճանապարհներին, Սիբիրի խորքերում, Ալթայի երկրամասում: Բայց և այնպես հայրենադարձության հետ միասին տարբեր փուլերում (1950-1962թթ., 1977-1992թթ.) բնակչության չափազանց բարձր ծնունդը ուղեկցվում էր մահացության նվազմամբ:

1970թ. սկսած մինչև 2000թ. Հայաստանը բնութագրվում էր աշխարհում ամենացածր մահացությամբ: Նման երևույթը հիմնականում պայմանավորված էր հանրապետության բնակչության երիտասարդ տարիքային կազմով և բուժսպասարկման համեմատաբար լավ մակարդակով:

Այսպիսով Հայաստանի բնակչության աճի կարևոր գործոններից մեկն էլ եղել է մահացության կրճատումը: Դա հանգեցրել է մարդկանց կյանքի միջին տևողության երկարացմանը, որի շնորհիվ բնակչության

բնական աճն ավելի դանդաղ է իջել, քան ծննդաբերության մակարդակի նվազումը:

1960թ. Հայաստանի ներկայիս տարածքում ծնվեցին շատ երեխաներ՝ 65 հազ., որը երբևիցե չէր նկատվել: 1970թ. դրանց թիվը նվազելով իջավ 55,7 հազ.-ի և ապա 1977թ. սկսած, աստիճանաբար ավելանալով, 1990-1992թթ. հասավ 79 հազ.-ի: Ավելորդ չէր լինի նկատել, որ 1986թ. ծնվեցին 81,2 հազ. երեխաներ: Այդ թիվը հավանաբար այսուհետև կմնա անգերազանցելի, քանի որ ներկայումս ծնվում են 30-35 հազ. երեխաներ: Եթե հասարակությունը բնութագրվում է երիտասարդ բնակչությամբ, մնացած այլ հավասար պայմաններում առկա է բարձր ծնունդը, ցածր մահացությունը: Մի երևույթ, որ տեղ է գտել Հայաստանում մինչև 1980-ականի վերջերը, երբ Խորհրդային Հայաստանի բնակչությունը հնգապատկվեց՝ հասնելով 3,5 մլիոնի: Սակայն 1992թ. առ այսօր ծննդաբերությունը նվազում է և կշարունակվի նվազել:

Ժողովրդագրական զարգացման ցուցանիշներն իրենց խտացված արտահայտությունը գտնում են ծննդաբերության գործակիցների մեջ, որոնք բնակչության սեռատարիքային կազմի հետ մեկտեղ անմիջականորեն արտահայտում են ժողովրդագրական զարգացման մակարդակը:

1993-2003թթ. Հայաստանում ծննդի մակարդակի վրա մեծ հետք են թողել բնակչության տարիքային կազմում տեղի ունեցող տեղաշարժերը: Դա ոչ միայն բնակչության «ծերության» հանգեցնող և սոցիալ-տնտեսական նոր պայմանների, այլ նաև Հայրենական մեծ պատերազմի հետևանքն է:

Բնակչության վերարտադրության վրա երկրորդ համաշխարհայինը իր բացասական ազդեցությունն ունեցավ ոչ միայն պատերազմի տարիներին, այլև 1960-ական թվականների կեսերից մինչև 1970-ականի կեսերը և 1990-ականի սկզբներից մինչև 1990-ականի կեսերը, երբ մի դեպքում ամուսնության տարիք թևակոխեցին պատերազմի տարիներին ծնվածները, մյուս դեպքում՝ նրանց երեխաները և թոռները[1]:

Սակայն... 1988թ. սկսվեց Ադրբեջանի հետ հակամարտությունը: Նա չհայտարարված պատերազմ ձեռնարկեց Հայաստանի դեմ: Ադրբեջանից բռնագաղթվեց Ադրբեջանում բնակվող ամբողջ հայ բնակչությունը՝ թողնելով վիթխարի տարածք, տուն ու տեղ, ունեցվածք և կայք: Հայաստանից արտագաղթեցին ադրբեջանցիները: Նրանք 2,7 անգամ ավելի պակաս էին, քան Ադրբեջանից բռնագաղթված հայերն էին: Ադրբեջանցիները մեծ մասամբ իրենց տները ավելի լավ պայմաններում փոխանակեցին

[1] Մանրամասն տե՛ս իմ նախկին հրապարակումներում, մասնավորապես Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Ե., 1976, էջ 15-131, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Ե., 1983, էջ 315-338, Bevölkerungswachstum und arbeitskragteressourcen, Berlin, 1983, էջ 7-43 և այլն:

հայերի հետ, իսկ երկրաշարժի գոտում՝ նրանք ստացան համապատասխան փոխհատուցում: Հայերը զանգվածաբար կուտակվեցին Հայաստանում: Նրանք Ադրբեջանից բռնագաղթեցին՝ հազիվ դիմանալով սպանդին, ծեծ ու ջարդին և մի կերպ ճողոպրեցին դեպի Հայաստան: Հետագայում նրանց մի մասը արտագաղթեց հեռավոր և մերձավոր արտասահմանյան երկրներ: Նրանց որոշ մասը Հայաստանում ադրբեջանցիների հետ փոխանակեցին իրենց բնակարանները և աշխատանք ձեռք բերեցին: Բայց մի զգալի մասը մնաց անօթևան, առանց աշխատանքի և բռնեց Հայաստանից արտագաղթի ուղին:

Արտագաղթը Հայաստանում ընդգրկեց նաև տեղի բնակչությանը, որը Ադրբեջանի հետ հրադադարից հետո կրում էր նաև տնտեսական բնույթ: Վերջինս կապված էր օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթ կրող մի շարք գործոնների հետ: Չհայտարարված պատերազմի հետ միասին որոշակի դեր խաղացին հանրապետությունում ստեղծված տնտեսական, էներգետիկ (1991-1996թթ.) ճգնաժամերը, արտադրության գրեթե բոլոր ճյուղերի խիստ հետընթացը, որը նաև քմահաճ և անժամանակ սեփականաշնորհումների հետևանք էր: Էլ չենք խոսում աղքատացող խավի մեծ զանգվածների, հասարակության բևեռացման, գործազրկության մեծ մասշտաբների, աշխատուժի ցածր արժեքի և ցածր աշխատավարձի մասին, գործոններ, որոնք դարձան արտագաղթի մշտական ուղեկիցը: Հայաստանում ստեղծված տնտեսական անբարենպաստ պայմանների հետևանքով հայերի հետ միասին արտագաղթեցին ռուսներ, քրդեր, եզդիներ, հույներ, ասորիներ, հրեաներ և այլ ազգություններ:

1991-1992թթ. դրան էր գումարվում սահմանամերձ գոտիներից խաղաղ ու անզեն բնակչության ուղղակի կորուստը՝ փախստական դառնալը, որը շատերին դրդում էր թողնել հայրենի օջախը և բնակություն հաստատել քաղաքներում, հարթավայրային շրջաններում, օտար ափերում, օտար երկնակամարների տակ: Չէ՞ որ դա նույնպես հանգեցնում էր ծննդի նվազմանը:

Վերջին 15 տարիների ընթացքում բազմաթիվ պատճառներով Հայաստանում բնակչությունը նվազեց :

Հեռանկարում ծնվող երեխաների թիվը: Ներկա պայմաններում Հայաստանում բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորող գործոնների դերի, դրանց բնույթի փոփոխության, մի շարք նոր գործոնների ձևավորման ընթացքի վրա մեծ է հանրապետությունում ստեղծված իրավիճակի դերը: Ինչպես նկատեցինք, պատերազմները, երկրաշարժը և ճգնաժամերը գենոֆոնդի վրա ազդում են ոչ միայն տվյալ պահին, այլև ապագայի առումով: Տվյալ պահին, երբ հայրենի հողի համար իրենց կյանքը հերոսաբար նվիրաբերում են ինքնապաշտպանության անձնուրաց ջոկատներում հազարավոր մարտնչողներ: Ապագայի առումով, երբ մատաղ կյանքի թելը չկտրվելու պայմաններում նրանք դեռ պիտի ծլար-

ծայկեին, նոր սերունդներ արարեին, ապահովեին սերնդափոխության անվերջանալի շղթայի նորմալ ընթացքը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժողովրդագրական հետևանքները կհարատևեն մինչև 2006-2007թթ. և աստիճանաբար կմարեն, իսկ Ադրբեջանի հետ չհայտարարված պատերազմի և այդ տարիներին տեղի ունեցող սոցիալ-տնտեսական պատճառներով թելադրվող ժողովրդագրական գործընթացը պարբերաբար կարտահայտվի:

Այնուհանդերձ, նոր դարի սեմին ծնունդը ինչ-որ չափով կավելանա: եթե արտագաղթի մասշտաբները խիստ փոքրանան, նոր դարի սեմին սպասվում է ծնվող երեխաների բացարձակ թվի աճ՝ ի հաշիվ ամուսնացողների թվաքանակն ավելանալու և խառը ամուսնությունները նվազագույնի հասնելու շնորհիվ: Երրորդ հազարամյակի առաջին տասնամյակում ընտանիքների կազմում եղանակ կստեղծեն ամբողջ 1980-ականների բարձր ծնունդը: Այդ ընթացքում, ինչպես հիշտակվեց վերևում, տարեկան ծնվում էին 78-80 հազար երեխաներ: Նրանց մի մասը, անշուշտ, այսօր հայրենիքում չէ, բայց միևնույն է, XXI դարի սկզբներին, ինչպես նկատել ենք մեր նախորդ հրապարակումներում, ծնվող երեխաների բացարձակ թիվն ավելանալու միտում կդրսևորի:

1980-ական թվականների ամբողջ ընթացքի և 1990-ականների առաջին երկու տարիների բարձր ծնունդը XXI դարի առաջին տասնամյակում փոքր-ինչ կաշխուժացնի նորածինների երևան գալը, և այն ելևէջներով կարտահայտվի ոչ միայն նոր դարի առաջին, այլև երրորդ և հինգերորդ տասնամյակների ընթացքում՝ հաջորդաբար դրսևորելով մարվող ալիքի անդրադարձ:

Գալիք տարբեր տասնամյակներում ծնունդը կարող է ավելանալ կամ նվազել, սակայն նվազման միտումը կշարունակվի XX դարի վերջին և XXI դարի առաջին տասնամյակի մեծ արտագաղթի պատճառով: Ծննդի նվազումը տեղի կունենա նոր դարի երկրորդ, չորրորդ և վեցերորդ տասնամյակների ընթացքում: Դա պայմանավորված է 1994թ. մինչև օրս սկիզբ առած ցածր ծնունդով, որոնք ամուսնության տարիք կթևակոխեն երկրորդ տասնամյակի ընթացքում: Ինչպես հայտնի է, 2003թ. ծնվել են 1990 թվի ծնվածների միայն 44,4 տոկոսը:

Պաշտոնական տվյալներով ծննդաբերության ընդհանուր գործակիցը 1990թ. 22,5 մարդուց իջավ և 2003թ. կազմեց 11,1, մահացությունը՝ 8,0, բնական աճը՝ 3,1 մարդ:

Բանն այն է, որ 1993-2003թթ. ծնվածների բացարձակ տվյալներն իրական պատկերը ճիշտ են արտահայտում: Ինչ վերաբերում է բնակչության 1000 շնչի հաշվով ծննդաբերության և մահացության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալներին, ապա դրանք հիմնված են սխալ ելակետային սկզբունքների վրա: Քանի որ արտագաղթած բնակչության այն մասը, որոնք տասնյակ տարիներ ապրում և արարում էին օտար երկրներում և մայր հայրենիքում մնում էին գրանցված, համարվե-

ցին մշտական բնակիչներ: Հետևաբար ծնվածների և մահացածների բացարձակ թիվը 1000 շնչի հաշվով իրականում բաժանվում է բնակչության ավելի մեծ թվի վրա: Արդյունքում՝ ծննդաբերության և մահացության ցուցանիշները մեխանիկորեն նվազում են: Իրականում այդ գործակիցները պետք է հաշվարկել Հայաստանում մշտական գրանցում ունեցող բնակչությունից գաղթի մեջ գտնվողներին բացառելու միջոցով, քանի որ նրանց ծնունդն ու մահը երկրի վիճակագրական տվյալներում չեն արտահայտվում: Տվյալ դեպքում բնակչության 1000 շնչի հաշվով ծնվողների և մահացողների թիվը կկազմի ավելի բարձր:

Այն, ինչ ցույց է տրված ԱՎԾ-ի 1993-2003թթ. ժողովածուներում, ներկայացվում են բավականին ցածր թվերով, որոնք սխալ են:

Վերջին 10-12 տարիների ընթացքում երկրում ստեղծվել է մի այնպիսի կացություն, երբ անհնարին է Հայաստանում մշտական բնակչության իրական ճշգրիտ թիվը և նրանից բխող ժողովրդագրական բնութագրությունը ներկայացնելը:

Ժամանակի ընթացքում, Առաջին համաշխարհային պատերազմի, Մեծ եղեռնից հետո համահայկական գաղթօջախներ էին գոյացել Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Լեհաստանում, Ավստրալիայում, Կանադայում, Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Եգիպտոսում, Հնդկաստանում և այլ երկրներում:

Ինքնաբերաբար կատարվող գաղթի հետևանքով 1988թ. դրանցում հայ բնակչության համահավաքը և խիստ կենտրոնացումը ուղեկցվեց նոր գաղթօջախների հանդես գալով աշխարհի բոլոր ծագերում, մայր ցամաքներում՝ Արևմտյան և Արևելյան Եվրոպայի, Լատինական Ամերիկայի բոլոր երկրներում, Արաբական աշխարհում, Աֆրիկայում և այլուր:

Հնարավոր կլիներ ինչ-որ չափով խուսափել այս երևույթներից, եթե արտագաղթը լիներ չափավոր, տեղի չունենար ինքնաբերաբար՝ տարեցտարի ավելացող մասշտաբներով: Եվ եթե երևույթների ընթացքը, ով գիտե, իշխանությունների թույլ տված սուբյեկտիվ գործոնի բացակայության պատճառով բարվոք դրսևորվեր, ժամանակի ընթացքում թե՛ լեգալ, թե՛ անլեգալ գաղթականների մի մասը կարող էր չարտագաղթել և կամ ետ վերադառնալ հայրենիք: Պետք է ասել, որ արտագաղթի իմաստով երկիրը հայտնվել է մի խորը վիհի մեջ:

Արտագաղթն այդ մասշտաբներով տեղի չէր ունենա, եթե «ռեֆորմների» պայմաններում իշխանության գլուխ չկանգնեին իր ժամանակին չկայացած մարդիկ, որոնց համար հայ ժողովուրդը ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում, բացի անձնական մոլուցքից:

Հայտնի է, որ անժամանակ և հախուռն սեփականաշնորհումների հետ միասին գաղթը բացատրվում է նաև էներգետիկ ճգնաժամով, Իսկ այն հարուցված էր արհեստականորեն, իշխանավորների կողմից: Բայց

այսօր է պարզ դառնում, որ էներգետիկ «ճգնաժամը» ավելի շուտ սադրանք էր, ոմանց համար միլիոններ դիզելու միջոց: Այլապես ինչով բացատրել այն, որ թեև 1997թ. արտադրվել է 290 մլն կվտ/ժ ավելի քիչ էլեկտրաէներգիա, քան 1993թ. (պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ 1993թ. արտադրվել է 6311,1 մլն կվտ/ժ, իսկ 1997թ.՝ 6021,1 մլն. կվտ/ժ), բայց «սահող» գրաֆիկը չկա, էլեկտրաէներգիայից ամեն մեկը օգտվում էր իր հնարավորության չափով: Ի՞նչ էր լինում արտադրված էլեկտրաէներգիան, ո՞ւր էր գնում: Իշխանավորները ժողովրդին ինչո՞ւ մղեցին ծանր փորձությունների: Ո՞ւմ հետ էին հաշվեհարդար տեսնում՝ ժողովրդի՞, ընդդիմությա՞ն, թե՞ աստվածային արարչագործության հրաշքի՝ չքնաղ Սևանի, որի ջրերը լճում խիստ նվազեցին, թե՞ անտառազուրկ մի երկրի անտառների հետ:

Այո, դա 1991-1993թթ. ձմռանն էր, երբ թափառական դարձած հազարավոր մարդիկ ցրտին ու սառնամանիքին լուսացնում էին «Զվարթնոց» օդանավակայանում, ուր ասեղ գցելու տեղ չկար: Մայր ու մանուկ, կին թե տղամարդ, ահել թե ջահել, ճամպրուկները կապած, երեխաներին ցրտից պաշտպանելու համար կրծքերին սեղմած կամ անկողնում փաթաթած՝ շտապում էին օր առաջ լքել կենսատու մայր հայրենիքը, գլուխներն ազատել ստեղծված դժոխային պայմաններից:

Ովքե՞ր, այդ ովքե՞ր պատասխան պիտի տան, կանգնեն ժողովրդի ու պատմության ահեղ դատաստանի առջև, գամվեն արգահատանքի սյունին ոչ միայն «ալան-թալանի», կողոպուտի, կազմավորված տնտեսությունը կազմալուծելու (չէ՞ որ հենց այդ տարիներին հապշտապ և անժամանակ սեփականաշնորհվեց գյուղատնտեսությունը, շատ արդյունաբերական ձեռնարկություններ փակվեցին, տրանսպորտը գրեթե դադարեց երթևեկելուց, շտապ օգնության մեքենաները՝ հիվանդներին վրահասու լինելուց, մարդիկ փողոց նետվեցին, քանզի բնակարանները անտանելի ցուրտ էին...), այլև գերազանցապես այն բանի համար, որ 3,5 միլիոնանոց ժողովրդի մեկ երրորդը թողեց հայրենիքը, տուն ու տեղը, հարազատներին և այսօր դեգերում է օտար ափերում, օտար երկնակամարների տակ: Ո՞վ պետք է պատասխան տա այն եղեռնի համար, որ դրսում ծնված հայ մանուկը ծնված օրից այլևս հայ չէ, նա չի ձևավորվում հայեցի հոգեկերտվածքով ու աշխարհընթացումով, չի տիրապետում հայերենին, չի սնվում հայ գիր ու գրականությամբ, արվեստով, լեզվով, բառ ու բանով, սովորույթով, նիստ ու կացով, վարք ու բարքով, կենցաղով, կեցվածքով, որով էլ փակվում է նրանց տունդարձի ճանապարհը:

Ի՞նչ արեցինք: Այլ երկրների, այլ ժողովուրդների հետ տնտեսապես փոխսերտաճելու փոխարեն, սերտաճեցինք մեր անմեղ մանուկներով, ծնված և դեռևս ապագայում ծնվող նորածիններով, հայ գենոֆոնդը ոչնչացնելով: Եթե դա եղեռն չէ, ապա ի՞նչ է:

Գաղթի քաղաքականության տեսանկյունից չափազանց կարևորվում է հայրենական կապիտալը երկրում ներդնելը, դրանց ուղղություններ-

րի ընտրությունը, իրար փոխարինող տնտեսության այն ճյուղերում ներդնելը, որոնք բարձր արդյունավետության հետ միասին կապահովեին ավելի մեծ զբաղվածություն: Կապիտալն արտահոսեց արդյունավետ ներդրման ոլորտ, կիրառման համար օրենսդրական դաշտ և իրավական պաշտպանվածություն չունենալու, այդ կապիտալը կորցնելու վախի և վտանգի ազդեցության ներքո: Արտադրության մասշտաբների անկման հետ միասին դրան նպաստեցին նաև ենթակառուցվածքային (ծառայություն, տրանսպորտ և այլն) համակարգի ցածր մակարդակը, հանրապետության սահմաններում ձեռներեցությունը ակտիվորեն չխրախուսելու, հայրենական արտադրողների շահերը և իրավունքները, մասնավորապես աշխատանքային իրավունքները պաշտպանելու օրենսդրական նորմերի բացակայությունը, թերամշակ և անգործունակ հարկային քաղաքականությունը:

Այսպիսով, աշխատուժի առաջարկի նկատելի բարձրացումը, որ գոյանում էր հասարակական արտադրության մասշտաբների անկման հետևանքով, և ուղեկցվում էր աշխատանքից ազատվողների թվաքանակի աճի, աշխատուժի պահանջարկի խիստ նվազման, աշխատանքային տարիք մուտք գործող, տնտեսապես ակտիվ տարիքի բնակչության անընախընթաց աճի օբյեկտիվ ընթացքի, Ադրբեջանից բռնագաղթված հայ բնակչության հոծ զանգվածների առկայության հետ, զարնվեց հետընթաց ապրող և անընդհատ կծկվող հասարակական արտադրության պատնեշին: Աշխատուժի առաջարկը, մերթ լճանալով, մի պահ ընկրկեց դրա պահանջարկի առջև, մերթ հորդանալով՝ տարերայնորեն դուրս եկավ ափերից, տեղի տալով զանգվածային արտագաղթի, գործազրկության, աշխատատեղը ինքնակամ լքելու հետևանքով չաշխատող բնակչության ստվար զանգվածների գոյացմանը: Գործընթացը շարունակվում է, այն տարբերությամբ, սակայն, որ եթե 1988-1993թթ. միջպետական գաղթի քառասի տարիներին արտագաղթի հիմնական դրդապատճառների մեջ որոշիչը փախստականներն էին, աղետի և սահմանամերձ գոտու բնակիչները, ապա վերջին 10-12 տարում որակապես փոխվել են արտագաղթի դրդապատճառները: Այն ներկա փուլում բարոյահոգեբանականի հետ միասին հիմնականում տնտեսական բնույթ է կրում և գերազանցապես ընդգրկում է Հայաստանի մշտական բնակչությանը: Դա կապված է Հայաստանում աշխատանքի շուկայի ձևավորման ընթացքում աշխատուժի պահանջարկի և առաջարկի անհաշվեկշռության ավելի խորացման, աշխատանքի միջազգային շուկայում հայ աշխատավորական զանգվածների մասնակցության աստիճանի բարձրացման հետ: Դեր են խաղում ՀՀ և միջազգային աշխատանքի շուկաների տարողունակության աճի տեմպերի և աշխատուժի արժեքների անհամեմատելի մեծ տարբերությունները:

Հողատեր գյուղացիների մի մասը հողը մշակել և անասնապահությամբ զբաղվել չի կարողանում և, ի վերջո, համալրում է արտագաղթողների, քաղաքներում աշխատանք փնտրող գործազուրկների շարքերը՝ ընդ-

լայնելով աշխատանքի շուկան: Աշխատանքի շուկան ինչ-որ չափով ընդլայնվում է նաև գյուղատնտեսական մթերքների վաճառքի հետ կապված գործարքներում:

Արտագաղթը, ամենից առաջ, ազդում է բնակչության գենոֆոնդի վրա: Այդ ազդեցությունն արտահայտվում է ուղղակի և անուղղակի առումով: Ուղղակի, երբ արտագաղթի չափով պակասում է բնակչությունը: Օրինակ՝ 1991-2003թթ. լեգալ և անլեգալ բնույթ կրող արտագաղթի պատճառով ՀՀ բնակչության գաղթի բացասական մնացորդը կազմել է մոտ մեկ միլիոն 400 հազար մարդ: Անուղղակի, երբ նվազում է բնակչության բնական աճը, քանի որ երեխաները ծնվում են այլ երկրներում:

Արտագաղթը հանգեցնում է մայր երկրի բնակչության սեռատարիքային կազմի ձևախեղմանը, ընտանիքների փոքրացմանը, ամուսնության շուկայում առաջարկի ու պահանջարկի հարաբերակցության խեղաթյուրմանը:

Փաստորեն փոխվել է նաև բնակչության տարիքային բուրգը: Ի հաշիվ արտագաղթող երիտասարդության՝ բնակչությունը ծերանում է: Բնակչության թվակազմում ծեր բնակչության տեսակարար կշռի բարձրանալը ուղեկցվում է աշխատանքային և անչափահաս տարիքի բնակչության տեսակարար կշիռն իջնելու հետ: Ուստի ծերանում է նաև աշխատանքային տարիքի բնակչությունը:

Արտագաղթը հանգեցրել է ծնվող երեխաների թվի նվազմանը, մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների թվի կտրուկ անկմանը:

Զանգվածային արտագաղթի հետևանքով ընդհատվել է որակյալ աշխատուժի վերարտադրության նորմալ ընթացքը, խաթարվել են աշխատանքային տարիքի սերնդափոխության շղթայի օղակները:

Բնակչության արտագաղթին մասնակցել են զանազան սոցիալ-ժողովրդագրական խմբեր: Դրանք տարբերվում են նաև իրենց չափերով, սեռատարիքային կազմով: Այդ սոցիալ-ժողովրդագրական խմբերի նման անհամաչափ մասնակցությունը հանգեցրել է հանրապետության բնակչության որակական կազմի փոփոխության, քանի որ գնացողների մեջ մեծ տոկոս են կազմում գիտատեխնիկական առաջընթացի ջահակիր բարձր որակավորման երիտարդությունը: Բնակչության գաղթի այդ ընտրանքային (սելեկտիվ) ֆունկցիան Հայաստանում բացասական դրսևորում է ունեցել:

Արտագաղթը հանգեցրել է հայրենիքում աշխատող բնակչության բեռնվածության բարձրացմանը չաշխատող և խնամքի տակ գտնվող անձանցով (սպառողներով): Այդ բեռնվածությունը հատկապես բարձրացել է թոշակային տարիքի բնակչության հաշվին:

Ժամանակավոր արտագաղթը անվերադարձ գաղթի հիմք է դառնում: Վերադարձի խնդիրը առնչվում է ոչ միայն մայր հայրենիքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական դրական կամ բացասական տեղաշարժերի, այլև, ինչպես նշվեց, արտագաղթողների սերտաճման՝ լեզվի, ազգա-

յին մշակույթի, արվեստի, հոգեբանական կերտվածքի և ազգային այլ արժանիքների կորստի ու նոր արժեքների ձևավորման հետ: Գաղտնիք չէ, որ Հայաստանից արտագաղթած մեր հայրենակիցներին (և ոչ միայն), մասնավորապես աճող սերնդին, սպառնում է ձուլման վտանգը: Դա, անշուշտ, առաջին հերթին վերաբերում է երեխաներին, նրանց դպրոցական կրթությանը և ապա՝ խառը ամուսնություններին: Մի դեպքում ձուլվում է գաղթականը՝ իր սովորույթներով, ազգային առանձնահատկություններով, մյուս դեպքում ծնվում է արդեն ասիմիլացված քաղաքացին: Նրանք իրենց մանկությունն անց են կացնում և դպրոցական կրթությունն ստանում են այլ միջավայրում: Օրինակ՝ ԱՊՀ երկրներում հանգրվանած երեխաները հումանիտար կրթությունը ստանում են ռուսական դպրոցներում, այլ երկրներում ապաստանածները՝ այդ երկրի մայրենի լեզվով: Վերադառնալիս նրանց համար դժվար է այլ լեզվի իմացության հիման վրա Հայաստանում հայերենով բազմաթիվ առարկաների գծով գիտելիքներ յուրացնելը և համապատասխան պաշար ամբարելը: Մտածողության կոդը փոխվում է, լեզվամտածողության նորմալ ընթացքը՝ խաթարվում: Ուստի ներգաղթի քաղաքականության մեջ պարզություն պետք է մտցնել նաև այս հարցում:

Գործընթացն ինչ-որ ծգծգվում է հայերով խիտ բնակեցված բնակավայրերում, բայց միևնույն է, իշխող միջավայրում պահպանելով մշակութային որոշ առանձնահատկությունները, ձուլումը հարթում է իր ճանապարհը, առանց հարկադրանքի կամ բռնության:

ԱՐՏԱՔԻՆ ՀՈՍՔԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայաստանը կանգնած է բնակչության գաղթի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական քաղաքականություն մշակելու փաստի դեմ հանդիման:

Իրոք, Հայաստանը ներկա և մոտ ապագայի կտրվածքով ի՞նչ քաղաքականություն պետք է վարի «ավելցուկ» բնակչության հարցերը լուծելու համար: Խրախուսե՞լ արտագաղթը, թե՞ ընդհակառակը, մշակել սոցիալ-տնտեսական զարգացման մի այնպիսի ծրագիր, որով երկրի «ավելցուկ» բնակչությանը տեղում մնալու երաշխիք ընձեռվի: Կամ սոցիալ-տնտեսական ներկա կացությամբ և մոտ ապագայում սպասվելիք դրական տեղաշարժերով Հայաստանն ի վիճակի լինի ընդունել, բնակեցնել, զբաղմունքով ապահովել, լուծել երեխաների կրթության հարցերն ու խնդիրներն իր այն քաղաքացիների, որոնք այսօր Հայաստանում չեն և անլեգալ գաղթականներ են: Արտագաղթը խրախուսվում է այն դեպքերում, երբ առկա է «ավելցուկ» բնակչություն, որին տվյալ երկիրը չի կարողանում ապահովել համապատասխան զբաղմունքով, կամ զբաղված բնակչության աշխատուժի արժեքը, աշխատավարձի մակարդակը ցածր

են ապրուստի միջին մակարդակից: Դեր են խաղում բնակարանով ապահովվածության, թոշակների, նպաստների, մայրության ու մանկության սոցիալական պաշտպանվածության, երեխաների կրթության և դաստիարակության համապարփակ խնդիրները: Ըստ այդմ էլ սոցիալ-տնտեսական քաղաքականության ծրագրերում ճշգրտումներ պետք է մտցնել՝ նկատի առնելով սոցիալ-տնտեսական, այդ թվում, զբաղվածության և ժողովրդագրական քաղաքականության բնույթը, ուղղվածությունը, նպատակները, սկզբունքները:

Բուն հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է.

Նախ, հանգամանորեն բացահայտել այն դրդապատճառները, որոնք Հայաստանից բնակչության զանգվածային արտագաղթի առիթ և հիմք դարձան:

Երեսնոր, գնահատել այդ դրդապատճառների կենսունակությունը, նոր պայմաններում արտագաղթը կամ ներգաղթը պայմանավորող ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական ո՞ր գործոններն են կորցրել իրենց ուժը և անհետացել: Կամ ի՞նչ նոր գործոններ են հանդես եկել, որոնք կարող են վճռական դեր խաղալ ոչ միայն արտագաղթած բնակչության մի հատվածի վերադարձն ապահովելու, այլև արտագաղթի նոր ալիքի տեղիք չտալու համար: Դրանք հիմք կծառայեն Հայաստանի հետ բնակչության միջպետական տեղաշարժերի միտումները ինչ-որ չափով բացահայտելու համար:

Երորոր, բացահայտել և գնահատել բնակչության արտագաղթի դրական նշանակությունը, բացասական հետևանքները հանրապետության ինչպես սոցիալ-տնտեսական, պաշտպանական, այնպես էլ ժողովրդագրական չափանիշների առումով:

Չորրորդ, պարզել մոտ ապագայում աշխատունակ տարիքի բնակչության չափանիշները, աշխատուժի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը, աշխատանքի շուկայի վարքագիծը, «ավելցուկ» բնակչության աճի միտումները, ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հետ դրանք չափակցելու հնարավորությունները:

Հինգերորդ, մշակել երկրից աշխատանքային գաղթի ժամանակավոր արտահանման կազմակերպման պայմանները:

Հայաստանի հետ բնակչության միջպետական տեղաշարժերն իրենց դրական նշանակության հետ մեկտեղ ունեցել են նաև բացասական հետևանքներ: Դրական նշանակությունը գերազանցապես հանդես է գալիս սոցիալ-տնտեսական առումով, բացասականը ձևախեղում է ժողովրդագրական զարգացման ընթացքը:

Հայաստանի հետ միջպետական տեղաշարժերի դրական նշանակությունն արտահայտվել է.

1. Հայաստանից արտագաղթող բնակչության հիմնական զանգվածը այլ երկրներում, թեև մեծ զոհաբերությամբ, ընդգրկվել է զբաղմունքի որևէ բնագավառում: Դրանով իսկ գաղթականների մեծ մասը սեփական

վաստակով ապահովել է իր և ընտանիքի գոյությունը, փրկվել գործազրկությունից և դրանից բխող բացասական սոցիալական ու բարոյական արժեզրկման վտանգից,

2. նպաստել է մայր երկրում բնակչության մի զգալի հատվածի գոյապահպանությանը, նույնիսկ կենսագործունեությանը՝ իրենց աշխատանքային վաստակից ինչ-որ չափով բաժին հանելով մայր երկրում բնակվող հարազատներին: Արտասահմանում հայ գաղթականների վաստակը, որը տասնյակ անգամներ գերազանցում է մայր երկրում նույնատիպ աշխատանքներ կատարող մարդկանց վաստակին, արտագաղթի չափերն ավելացնող և ներգաղթը կաշկանդող վճռական գործոն է,

3. մեղմացրել է մայր երկրում գործազրկության պոտենցիալը և սոցիալական լարվածության ավելի սուր արտահայտվածության ընթացքը, չնայած նման արտագաղթի պայմաններում, անգամ, գործազրկությունն օրեցօր ավելանում է՝ բացառությամբ ֆինանսավարկային և տեղեկատվական համակարգրում,

4. արտագաղթը շատ չնչին չափով մեղմել է նաև մայր երկրում բնակչության հետագա խիստ բևեռացումը: Շոշափելով նաև ծայրահեղ աղքատության մեջ ընդգրկված որոշ մարդկանց շահերը՝ կասեցրել է բնակչության այդ զանգվածի մի մասին թշվառության գիրկը նետվելու ընթացքը,

5. որոշ չափով սատար է կանգնել պրոֆեսիոնալ որակավորում ունեցող աշխատուժի հետագա ապաորակավորումից և բարոյական արժեզրկումից շեղվելու ընթացքին,

6. թեև աննշմարելի, բայց ինչ-որ չափով խթանել է մայր երկրում ձեռներեցության թոթով քայլեր ձեռնարկելուն, մասնավորապես մասնավոր առևտրի ցանցի ընդլայնման, բնակչության սպասարկման, ծառայությունների ոլորտի և, որոշ չափով, փոքր գործարարության աշխուժացման առումով:

Տնտեսական առումով ի՞նչ բացասական հետևանքներ է հարուցել արտագաղթը:

Հակիրճ և ոչ ամբողջական դրանք կարելի է խմբավորել:

1. Նպաստել է հայրենական կապիտալի արտահանությանը, որը հետևից մագնիսի պես ձգել է երիտասարդությանը: Երիտասարդությունը բարոմետրի նման սկսեց տատանվել՝ անկախ կատարած աշխատանքի բնույթից, որակավորման աստիճանից, պրոֆեսիոնալ մասնագիտական հատկանիշներից: Բնակչության արտագաղթն իր հերթին ավելի թափ հաղորդեց կապիտալի արտահանության հետագա ընթացքին: Պակասեցին արտադրության մեջ կապիտալ ներդրումները, որի հետևանքով չապահովվեց հասարակական արտադրության ոչ միայն ընդլայնված, այլև պարզ վերարտադրությունը: Նեղացան ու կծկվեցին արտադրության մասշտաբները՝ տեղի տալով հասարակության ծայրահեղ բևեռացման:

2. Արտագաղթը չի բխում երկրի պաշտպանունակության և ռազմական հզորության զարգացման շահերից: Արտագաղթը նախ՝ ընդգրկում է նաև զորակոչային տարիքի երիտասարդությանը՝ հանգեցնելով նրա ընդհանուր թվաքանակի նվազմանը: Արտագաղթի պատճառով այն ավելի զգալի կդառնա 2010 թվից սկսած, երբ այդ տարիք կթևակոխեն 1990-ականների վերջերին ծնված տղաները, որոնք, ինչպես նկատեցինք, շատ քիչ էին: Չմոռանանք, որ բանակը երկրի ազգային անվտանգության կարևորագույն պայմաններից մեկն է: Երկրորդ, արտագաղթն ընդգրկում է սահմանամերձ գոտիների բնակչությանը: Երրորդ, արտադրության ռազմավարական ճյուղերում ընդգրկվածներին, մասնավորապես «ուղեղներին»:

3. Արտագաղթի պատճառով երկիրը տուժում է, մանավանդ, երբ նրա քաղաքացիները մեկնում են վաստակի համար: Երիտասարդությունը չի մասնակցում իր երկրում ՀՆԱ ստեղծմանը: Նա այն արարում է մայր երկրի սահմաններից դուրս՝ իր ստեղծածով լիովին սատար չկանգնելով մայր երկրի գոյապահպանության, ազգային անվտանգության և ազգային տնտեսության զարգացման խնդիրներին, էկոնոմիկայի վերարտադրության ընթացքին: Դա նշանակում է, որ մայր երկիրը զրկվում է սեփական արտադրողների հաշվին նաև պետական բյուջե մուտքագրվող միջոցներից: Դրանք կարող էին ծառայել ոչ միայն արտադրության աշխուժացման, նրա ընդլայնման, այլև սոցիալական խնդիրների լուծման նպատակներին: Արտագաղթի բացասական կողմերը թվարկելիս, հավանաբար, դա մղվում է առաջին պլան:

4. Երկրի և հասարակության համար անցանկալի հետևանքներով է հղի ուղեղների, դեֆիցիտային մասնագիտությունների և, ընդհանրապես, պրոֆեսիոնալ բարձր որակավորման մասնագետների արտագաղթը: Դրա հետևանքով ազգային աշխատանքի շուկայի որակազրկումն արտահայտիչ է դառնում: Տվյալ դեպքում խստորեն վտանգվում է հայրենական աշխատանքային ներուժի արդյունավետությունը: Դա տեղի է ունենում ոչ միայն այն պատճառով, որ հայրենիքում ստացած նրանց մասնագիտական որակավորումը, նրանց օժտվածությունը չի ծառայում հայրենիքի շահերին, այլև այն, որ բարձր որակավորման աշխատուժի արժեզրկումը օրեցօր թափ է առնում[2], ուղեղների արտահոսքը ուղեկցվում է դեպի ավելի շատ վաստակ ապահովող աշխատանքի բնագավառներ: Համապատասխան վաստակի և աշխատանքի հեռանկարի բացակայության պատճառով նրանք տեղափոխվում են իրենց որակավորման հետ առնչություն չունեցող ցածր որակավորման աշխատանքների ոլորտներ: Դրանով իսկ ոչ միայն անիմաստ վատնվում է մարդկային կապիտալը, այլև դանդաղում է նրա կուտակումը, քանի որ մասնագետները դիմում են շատ պարզ

[2] Российский социально-политический вестник, 1995, N2, с. 7-8.

գիտելիքներ պահանջող, բայց արագ օգուտ բերող զբաղմունքների[3]: Իր հերթին բարձր արդյունավետություն ապահովող ներուժի որոշ մասը թե՛ երկրի ներսում, թե՛ դրսում անուշադրության է մատնված: Ուղեղների արտագաղթից շահում են նրանց ընդունող երկրները, քանի որ այդ երկրները, ծախսեր չկատարելով կրթության, պրոֆեսիոնալ մասնագիտական որակավորման համար, տնօրինում են պատրաստի կադրերի:

5. Շատերը, ազգային շուկայում զրկված լինելով մասնագիտական զբաղվածությունից, կորցնում են կապը աշխատանքի շուկայի հետ:

6. Վերը թվարկված պատճառներով մայր երկրում իջնում են արտադրության կազմակերպման մակարդակը, արտադրանքի որակական ցուցանիշները, աշխատանքի արտադրողականությունը, մրցունակությունը :

7. Հասարակությունը մայր երկրում արտադրողից ինչ-որ չափով վեր է ածվում սպառողի:

Հայաստանի շահերը թելադրում են գաղթի ընթացքում ընդգրկվել արտաքին աշխատանքի շուկայում և շուկայի հետ փոխսերտաճել պետական հիմունքներով: Դա աշխատանքի շուկայի գերլարված իրավիճակից դուրս գալու ուղիներից մեկն է: Դա հնարավորություն կընձեռի արտագաղթը մեղմելու, դրա չափերը պակասեցնելու, հետևաբար ծնունդը ավելացնելու համար:

Այդ նպատակով աշխատանքի միջազգային բաժանման մեջ Հայաստանը կարող է օգտագործել իր աշխատանքային ներուժը: Որոշելով նրա չափերը՝ պետությունը պետք է նպաստի բարձր որակավորում ունեցող աշխատուժի ժամանակավոր արտահանությանը, համապատասխան նախադրյալներ ստեղծի աշխատանքային ներուժի որակավորման մակարդակն աստիճանաբար միջազգային չափանիշներին մոտեցնելու համար, մշակի բանական-ռազմավարական քաղաքականություն միջազգային մասշտաբներով աշխատուժի արտագաղթի և ներգաղթի համար:

Բնակչության արտաքին գաղթի կազմակերաումը, զանգվածային հոսքերի ուղղությունների որոշումն ու կարգավորումը Հայաստանի գաղթի քաղաքականության ոլորտից գրեթե դուրս է թողնվել, այն կարող է լինել միանգամայն նոր երևույթ: Հանրապետության համար աշխատուժի ժամանակավոր արտագաղթի քաղաքականության առանցքը պետք է դառնան արտագաղթող բնակչության հավաքագրումը, ուղղվածության ապահովումը, որը բացառապես հետապնդի ազգային խնդիրների և շահերի լուծման նպատակ: Նման արտագաղթը հաճախ դիտվում է «ավելցուկ» բնակչությունից և «ավելցուկ» աշխատուժից ազատվելու միջոց:

---

[3] Նույն տեղում:

Պետական մակարդակով աշխատուժի ժամանակավոր արտագաղթի ուղին չափազանց կարևոր է նաև երկրի ներսում աշխատանքի շուկան ձևավորելու և կարգավորելու առումով:

Ուսումնասիրության նպատակը արտաքին միգրացիայի պատճառահետևանքային կապերի բացահայտումը և մեղմելու ուղիների կանխատեսումն է:

Բացառիկ հիմնավորմամբ մեծ տեղ է հատկացվելու արտագաղթը մեղմելու, վերացնելու և ապագայում ներգաղթը աշխուժացնելու կարևորությանը: Որպես արտագաղթը մեղմելու կռվան՝ առաջին պլան է մղվում զբաղվածության հիմնախնդիրների համապարփակ քննարկումը քաղաքներում և գյուղական միջավայրերում:

Պետությունը տնտեսական լծակների օգնությամբ պետք է սահմանափակի բնակչության արտագաղթը գյուղական վայրերից դեպի քաղաքներ և խրախուսի նրանց շարժը խոշոր քաղաքներից դեպի քիչ բնակեցված և փոքր քաղաքներ:

Գաղտնիք չէ, որ արտերկներից գյուղատնտեսական մթերքների չվերահսկվող հոսքը մեծ վտանգ է ազգային արտադրության գոյատևման համար. դա նաև արտագաղթը չափավորելու կարևոր երաշխիք կարող է դառնալ:

Հարկավոր է այդ ներմուծումը փոխարինել տեղական ապրանքների արտադրությամբ, որը կբարձրացնի բնակչության զբաղվածությունը և կիջեցնի արտագաղթը:

Ուստի անհրաժեշտ է մշակել արտահանման իրական ռազմավարություն, որով ինչ-որ չափով կարողանալ բանական դարձնել զբաղվածության մոդելը և դրանով իսկ նպաստել բնակչության արտագաղթի նվազմանը և ներգաղթը խթանելուն:

Գաղթի իրավիճակի գնահատումը թերի կլինի, եթե ինչ-որ ձևով չկանխատեսվի միջպետական գաղթի գործընթացների զարգացման միտումների[4] հավանական ընթացքը XXI դարի նախաշեմին:

---

[4] Հարցը ինչ-որ չափով շոշափվում է հետևյալ հրապարակումներում. Ходжабекян В., Миграционные процессы в Армении, ж. "Миграция", М., 1997, N 4, с. 29-32 (ռուսերեն և անգլերեն), նույնի՝ Управление миграционными процессами в республике, Международный журнал "Проблемы теории и практики управления", М., 1998, N3, с. 68-71; Возможность и регулирования миграции населения РА, նույն ամսագրի 2000 թ., N 3, էջ 25-29; Миграции в трансформирующемся обществе "Аннотированный библиографический указатель литературы, изданной в странах СНГ. 1992-1999 гг.", ответственный редактор Жанна Зайнчковская, М., 2000г. գրքի 41-58 էջերում զետեղված Վ.Խոջաբեկյանի՝ Հայաստանի մասին հոդվածը, Դրոշակ, 1997, N 10, էջ 32-35, Դրոշակ, 2001, N 2, էջ 202-216, Կարապետյան Ս., Արտաքին միգրացիան և նրա ուղղությունները Հայաստանում, Հայաստանի մարդկային զարգացման զեկույց, 1996, կոորդինատոր Տեր-Նիկողոսյան, հոդվա-

Մի բան հստակ պարզ է, որ Հայաստանում մոտ ապագայում «ավելցուկ» բնակչությունը ներկայիս նման կշարունակվի պահպանվել, նույնիսկ առանձին փուլերում թափ առնել: Դա առաջին հերթին կապված է հանրապետությունում սպասվելիք ժողովրդագրական իրավիճակի, ինչպես նաև այլ երկրներում հարյուր-հազարներ կազմող հայ անլեգալ գաղթականների առկայության հետ: Հայաստանի աշխատանքի շուկայում «ավելցուկ» բնակչության պոտենցիալ ռեզերվ կարող է հանդես գալ մերձակա և հեռավոր սփյուռքը նայած դեպքերի զարգացման հետագա ընթացքին: Ուստի մոտ ապագայում ՀՀ բնակչության միջպետական գաղթի գործընթացների զարգացման հետագա ընթացքը կախված է նաև մի շարք պայմանականություններից (երբեմն անկռահելի): Այդ պայմանականությունների վարքագծի ձևավորման հիմքում ընկած են ոչ միայն ՀՀ, այլև նրա հետ կապված մի շարք երկրների սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական առնչությունները, միջազգային մասշտաբով աշխատանքի շուկայի ձևավորման, համաշխարհային ընդհանուր տնտեսության զարգացման (վերելքի կամ համընդհանուր ճգնաժամային իրավիճակների, ահաբեկչությունների, օրինակ, 2000թ. սեպտեմբերին ԱՄՆ-ում, 2002թ. հոկտեմբերին Ռուսաստանում և դրանից առաջ կազմակերպված չեչենական զանազան ահաբեկչություններ) ընթացքը և այլն: Այդ առումով գաղթի քաղաքականությունը պետք է արտահայտի ոչ միայն առանձին երկրների լոկալ, այլև գործընթացում ընդգրկված բոլոր երկրների ընդհանուր շահերը:

Օրինակ, մոտ ապագայում արտաքին աշխարհից Հայաստանի Հանրապետության բնակչության ներգաղթի միտումները կարող են կանխորոշվել Հայաստանում սոցիալ-տնտեսական լարվածության տևականությունը աստիճանաբար հաղթահարելով, դարաբաղյան հակամարտությունը վերջնականապես հօգուտ Հայաստանի Հանրապետության լուծելով, արտաքին աշխարհում հայ անլեգալ գաղթականների նկատմամբ գաղթի քաղաքականության կիրառման ընթացքով, լեգալ գաղթականների աշխատանքային և սոցիալական ապահովվածության աստիճանով, ազգային և սոցիալական խտրականության որևէ կարգի դրսևորումներով, որևէ ժամանակահատվածում համաշխարհային տնտեսական ճգնաժամի երևան գալով և այլն: Չափազանց կարևորվում է արտասահմանում հայ լեգալ և անլեգալ գաղթականների վաստակի չափը:

Հայաստանում իրավիճակը որքան ուշ կարգավորվի, այնքան անհավանական կլինի նրանց վերադարձը:

Ուրեմն, առաջին հերթին, անհրաժեշտ է մտահոգվել հանրապետության իրավիճակը շուտափույթ կայունացնելու մասին:

նավորող՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Ե., 1996, էջ 11-13, Мхитарян С., Миграционное движение в Ереване, с.39-52 և այլն:

Երեխաների ծննդի չարդարացված ծախսերն ու չարաշահումները և ամուսնալուծությունը:

2001թ. մարդահամարը չտվեց մշտական բնակչության իրական պատկերը, քանզի հանրապետությունից արտագաղթած բնակչության մի մասը, ինչպես նկատեցինք, գրանցված էր հայրենիքում, վաղուց ի վեր կտրված էր հայրենիքից, համարվեց մշտական բնակիչ, չնայած նրանք տասնյակ տարիներ է՝ ապրում և արարում են օտար երկրներում: Այդ բացը լրացնելու համար պետք է ունենալ մշտական և գաղթող բնակչության ճշգրիտ թիվը: Բնակչության ընդհանուր թվաքանակի հետ միասին պետք է կարողանալ ճշգրտել նրա սեռատարիքային կազմը, ծերացած բնակչության ընդհանուր թիվը՝ բնակչության տարիքային բուրգը ստանալու համար:

Արտագաղթը և ցածր ծնունդը հակասում են երկրի պաշտպանունակության և ռազմական հզորության շահերին: Այն ընդգրկում է, առաջին հերթին, զինակոչային տարիքի երիտասարդությանը: Նախորդ տասնամյակի համեմատությամբ 2010թ. զինակոչային տարիքի երեխաների թիվը կպակասի 2-2,5 անգամ: Հանրապետությունում հասարակությունն արտադրողից մասամբ վեր է ածվում սպառողի, ավելանում են խնամքի տակ գտնվող ծերերը, քանի որ երիտասարդությունը արտագաղթի մեջ է, իսկ մի զգալի մասն էլ չի աշխատում:

Արտագաղթի խոշոր չափերի հետ միասին ծննդի մակարդակի վրա ազդել են նաև նյութական վատ պայմանները և սոցիալ-տնտեսական վատ գործոնները: Տեղի են ունենում ծննդի հետ կապված չարդարացված ծախսեր ու չարաշահումներ, այդ թվում՝ հիվանդանոցներում: Ամուսնացող զույգերն ունենում են մեկ կամ լավագույն դեպքում՝ երկու երեխա: Դրա հետ մեկտեղ, երեխաների թիվը նվազում է երիտասարդության, մասնավորապես աղջիկների չամուսնանալու հետևանքով: «Ամուսնության շուկայում» բարձրանում է աղջիկների առաջարկը, իջնում պահանջարկը: Աղջիկների որոշ մասն ուշ կամ բնավ չի ամուսնանում, տղաները՝ թերևս ուշ, բայց, այնուամենայնիվ, ամուսնանում են իրենց կամքով և ունենում են քիչ երեխաներ: Բանն այն է, որ նրանք մեծ մասամբ ամուսնանում են ոչ թե իրենց սերնդակից աղջիկների, այլ իրենցից շատ երիտասարդ (5-10 տարով փոքր) աղջիկների հետ և ունենում թվով քիչ երեխաներ: Իսկ տղաների սերնդակից աղջիկներին մեծ մասամբ ամբողջ կյանքի ընթացքում չի վիճակվում մայր դառնալ: Արտագաղթի մեջ գտնվող տղաներն ամուսնանում են նաև այլ ազգության պատկանող աղջիկների հետ: Աղջիկների համար, իհարկե, շատ լավ կլինի ամուսնանալ իրենց ազգությանը պատկանող տղաների հետ: Բայց, այնուհանդերձ, առաջին պլան է մղվում ամուսնությունը: Նրանց համար արդեն միևնույն է, ամուսնանում են սեփական ազգի տղաների հետ, թե ընտրում են խառը ամուսնություն, միայն թե մայր դառնան:

Արտագաղթի պայմաններում ավելանում են նաև ամուսնալուծությունները, թեև հայ ժողովրդին հատուկ է եղել աշխարհում ամենացածր ամուսնալուծությունը: Վերջինս բացատրվում է նրանով, որ հայ ընտանիքները մեծ են եղել, երեխաների թիվը շատ: Ամուսինները միմյանց հետ ինչքան էլ վատ հարաբերությունների մեջ գտնվելիս լինեն, ծանր ու թեթև են անում և որոշակի ժամանակից հետո անախորժությունները մատնում են մոռացության: Նրանք միշտ խորհում են այն մասին, որ միմյանցից բաժանվելու և նոր ընտանիք կազմելու դեպքում իրենց երեխաները կմնան խորթ մոր կամ խորթ հոր «հոգածությանը»: Դա, վերջին հաշվով, քննություն չի բռնում և հաղթում է առողջ բանականությունը:

Իսկ այժմ, որոշակի իմաստով, մեծ մասամբ այլ է ընտանիք կազմելու ընթացքը, երբ ամուսնալուծությունը «հոգ չէ»: Միայնակ մոր կարգավիճակով երեխաների հոգսը հոգալը դարձել է սովորական երևույթ:

Աղջիկների մի մասն էլ չի կարողանում ամուսնանալ կյանքում տեղ չունենալու, հաճախ աշխատանք չգտնելու և ապրուստ չհայթայթելու պատճառով: Քիչ չեն դեպքերը, երբ նրանք մի կերպ մեկնում են արտասահման և զբաղվում մարմնավաճառությամբ:

Ազգը, թեկուզ որքան էլ քաղաքակիրթ ու համապատասխան կրթական մակարդակ ունենա, կանգուն է ոչ միայն իր մշակույթով, ստեղծած նյութական և հոգևոր արժեքներով, այլև սերունդների հաջորդափոխությամբ, նրա բնական աճով:

Երկիրը զերծ պահել աճուրդի վտանգից

ՀՀՇ-ի վարած քաղաքականության հետևանքով սկիզբ առավ մեծազանգված արտագաղթը: Ստեղծված իրավիճակում եթե գլուխ չբարձրացներ հարկադիր արտագաղթը, տեղի կունենար սարսափելին, գործազրկությունը ահռելի չափերի կհասներ: Հայ ժողովրդի նկատմամբ ՀՀՇ-ի՝ վարած հայաթափության քաղաքականությունը մեծ եղեռնագործություն էր: Արտագաղթը դեռ շարունակվում է: Ոճրագործություններ, որոնք անվերադարձ են: Դրանց հեղինակները պետք է բացահայտվեն, մերկացվեն, դատապարտվեն, որից մեկընդմիշտ քաղաքական դասեր քաղվեն:

Արտագաղթի վերստին աճող մասշտաբները ներկայումս կապված են նաև վերջին տարիների ընթացքում արտադրական մի շարք խոշոր օբյեկտների և ոլորտների մասնավորեցման, անհիմն կերպով օտար երկրների ներկայացուցիչներին էժան գներով նվիրաբերելու փաստի հետ (Արմենտել, կոնյակի գործարան, ոսկու, պղնձի, պեռլիտի և այլ հանքեր, ջրատար և այլն):

Երկիրը հանել են աճուրդի:

Էլեկտրաէներգիայի մի զգալի մասը անհետ վատնվում է: Էլեկտրացանցերը մասնավորեցնելիս իբր թե կփրկվեն այդ կորուստները: Ի՞նչ է, կառավարությունն անճարակ էր, ինքը չէ՞ր կարող այդ վիթխարի կորուս-

տը վերականգնել և դրա հաշվին նորոգել էլեկտրական կարողությունները: Ուրեմն կառավարությունը իր հերթին թոթափել է պատասխանատվությունը: Չէ՞ որ էլեկտրացանցերը, Սևան-Հրազդան կասկադը, Տաթև-Որոտան հիդրոկայանները և այլն, ռազմավարական նշանակություն ունեն:

Առանց այդ էլ էլեկտրաէներգիայի գների թանկության և բնակչության ու արտադրության անվճարունակության պատճառով պարտքերն անընդհատ ավելանում են: Չմոռանանք, որ 1991-1996 թվականներին ՀՀՇ-ի ղեկավար կորիզը այդ բնագավառում անձնապես շորթել է միլիոնավոր դոլարներ և առ այսօր մնացել է անպատիժ: Այդ տարիներին ժողովուրդը խարխափեց խավարում և ձմռան ամիսներին բնակարանները վերածվեցին սառնաշունչ քարանձավների: Ո՞ւմ մեղադրել, հհշ-ական ղեկավարությա՞նը, թե՞ այն մարդկանց, որոնք այսօր ձեռնարկեցին բաշխիչ ցանցի ապապետականացումը: Մեղադրել հանցավոր անհեռատեսությա՞ն ու անտարբերությա՞ն, թե՞ դիտավորության և անիմաստ մոլեռանդության համար: Դրանով իսկ, ավարտի չի՞ հասցվում Արևմուտքի և որոշ անձանց այն քաղաքականությունը, որ Հայաստանը թողնեն առանց արդյունաբերության, չէ՞ որ էլեկտրաէներգիայի թանկացող գների պայմաններում արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, էլեկտրական տրանսպորտը և այլ ճյուղեր գործել չեն կարող: Նույն այդ մեղսագործությամբ, առանց ինքներս մեզ հաշիվ տալու, Սևանի ջրերի դարավոր պաշարները դատարկեցինք՝ մեծ մասամբ արգելելով առանց վճարի, ոռոգել մեր հողատարածությունները, և նրանք հորդեցին դեպի Արաքս գետը՝ բաժին դառնալով Ադրբեջանին:

Մեծ չափով իջավ Սևանի մակարդակը, որին, աստված մի արասցե, ճահիճ դառնալու վտանգ է սպառնում: Սևանը ոչ միայն բնության անկրկնելի հրաշք է, բնատուր աստվածային գեղեցկություն, այլև, առաջին հերթին, Հայաստանում հայ ժողովրդի գոյապահպանության ամենաէական երաշխիքներից մեկը: Նրանով են սնվում ոչ միայն Սևանի ավազանի, Հրազդան-Աբովյան-Արարատյան հարթավայրի և նրան հարող նախալեռնային շրջանների՝ Իջևան, Դիլիջան, Աղստև հատվածի բնակչությունն ու գյուղատնտեսությունը: Բնության այս անկրկնելի հրաշքը խաթարելը պիտի համարել հանցագործություն:

Վիթխարի քանակությամբ ջուր են կորզում նաև էլեկտրաէներգիա ստանալու նպատակով: Գաղտնիք չէ, որ հիդրոկայաններից ստացվող էներգիան շատ ու շատ էժան է: Սինչդեռ այն ներկայացվում է որպես ջերմաէլեկտրակայաններից ստացվող էլեկտրականություն և տարբերությունը շորթվում է՝ անձնական գրպանի համար: Ջերմաէլեկտրակայանների նախատեսվող զարգացումը Հայաստանի բնակչության համար կործանարար է: Օդը դառնում է հեղձուցիչ, շնչելը՝ անտանելի: Հոգ չէ, թող Սևանն անընդհատ նվազի: Բացի դրանից, էլեկտրաէներգիա ավելի շատ քամելու համար պատրվակ են բերում գոլորշիացումը: Մոռանում են, որ գոլորշիացումը շատանում է զուտ այն պատճառով, որ լճի մակարդակը

իջել է, ծանծաղուտ ափերով կարող ես կիլոմետրերով առաջանալ և ջրի խորությունը կհասնի ծնկներից մինչև պորտը: Ծանծաղուտներում ջուրն անընդհատ կգոլորշիանա, իսկ խորության դեպքում գոլորշիացումը ինչ-որ չափով կպակասի:

Իսկ գյուղատնտեսության ոռոգո՞ւմը ...

Արարատյան հարթավայրի, Թալինի, Բաղրամյանի ու Եղվարդի գյուղացիների ոռոգելի հողատարածքները, ջուր չլինելու պատճառով հաճախ չեն ոռոգվում, երբեմն էլ ոռոգվում են Սևանի հաշվին: Բնավ ինքներս մեզ հաշիվ չենք տալիս, թե ինչո՞ւ...

Չէ՞ որ խորհրդային իշխանության տարիներին նրա փողերով, վիթխարի կապիտալ ներդրումներով, ոռոգման նպատակով Հայաստանում կառուցվում էր Եղվարդի ջրամբարը: Կառուցելու համար բազմաթիվ հեկտարներով գյուղատնտեսական օգտահողեր ու այգիներ քարուքանդ արվեցին, ծախսվեցին վիթխարի միջոցներ: Այն է, ջրամբարը ավարտվում էր, երբ գտնվեցին մարդիկ, գիտնականներ, որոնք ինչ-ինչ հնարքներով անողոք պայքարեցին ավարտվող ջրամբարի կառուցումը դադարեցնելու համար: Երկար տարիներ պայքարելուց հետո հասան իրենց նպատակին: Ջրամբարի կառուցումը ծախողվեց, կառուցապատող երկաթբետոնե շինվածքները թալանվեցին: Ծախսվող խորհրդային միլիոնները անհետ կորան-գնացին:

Ինչո՞ւ...

Պետությունն ամենուրեք ջուրը վաճառքի հանելու պատճառով գյուղացիների մեծ մասը ի զորու չէ այն գնելու և ստիպված չի կարողանում մշակել հողը և բռնում է արտագաղթի ճանապարհը:

Քայլել համաշխարհային հնքին համաքայլ

Արտագաղթը նվազեցնելու, հետևաբար ծնունդն ինչ-որ չափով ավելացնելու, տնտեսական ու սոցիալական քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը, կայուն տնտեսական աճի՝ ապահովման հիման վրա բնակչության զբաղվածության խնդրի լուծումն է: .

Հանրապետությունում նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով պետության ազգային քաղաքականության մշակման և կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումն է: Խոսքը, կոնկրետ դեպքում, վերաբերում է հանրապետության ներքին տնտեսական աղբյուրների հավաքագրմամբ ազգային տնտեսության ակտիվացմանը, ազգային տնտեսության դինամկարը բնորոշող և ռազմավարական նպատակներ հետապնդող առաջնահերթային ճյուղերի զարգացմանը, նրանց նկատմամբ հովանավորչական քաղաքականության կիրառմանը:

Այստեղից էլ աշխատանքային ներուժի որակական մակարդակը համաշխարհային միջին մակարդակին մոտեցնելու այնպիսի պայմանների ապահովումը, որը բնակչության արտագաղթի փոխարեն հնարավո-

րություն կընձեռի արտահանել բարձր որակավորում պահանջող գիտատար տեխնիկական նախագծեր, փորձաշրջան անցած ստեղծագործական մտքի արգասիք հանդիսացող յուրօրինակ արդյունքներ, տեխնոլոգիական մտահղացումներ, մշակումներ, գյուտեր ու հայտնագործություններ, մարդու բարձր մտավոր կարողություններն ու հմտությունը բնութագրող այլ արտադրատեսակներ: Մանավանդ մտավոր աշխատանքի պտուղները ցանկացած պահի, առանց արհեստականորեն հարուցվող դժվարությունների, կարող են անարգել արտահանվել աշխարհի ամեն մի երկիր՝ զերծ մնալով շրջափակումներից:

Նյութական կորստի վերականգնումը ժամանակի խնդիրն է: Հոգևոր արժեզրկման վտանգն անվերադարձ է: Ավելին, այսօրվա ամեն մի հոգևոր կորուստ հեռահար է, հղի՝ սերունդներին գիտելիքներով, մտավոր ու հոգևոր զարգացման մակարդակով տասնամյակներով ետ շպրտելու ահավոր վտանգով:

Քաղաքակիրթ երկրները նոր դար են մուտք գործում որպես սպասվելիք հուժկու գիտատեխնիկական առաջընթացը մարմնավորողներ, որոնցում փութաջանորեն կերտվում է գիտելիքներով զինված դարի քաղաքացին: Հայաստանը թմբիրի մեջ է: Հոժարակամ հայտնվեցինք նման վեհ ու վսեմ «հոգսերից» ձերբազատվելու պետության որդեգրած քաղաքականության մեջ:

Պետք է փրկել համաշխարհային ճանաչում գտած հոգևոր արժեքները, դրանց կրողներին և արարողներին, կյանք մտնող և XXI դարին տեսք ու կերպարանք հաղորդելու պատրաստակամ սերնդին: Այն պետք է անել բանիմաց, հոգևոր ու նյութական արժեքներ ստեղծելու մտածված քաղաքականությամբ և ոչ թե երկիրը միայն սպասարկման լայն հրապարակի վերածելու թողտվությամբ:

Ուսուցման համակարգն աստիճանաբար վերափոխելու և պետական հովանավորչական քաղաքականությունն ակտիվացնելու միջոցով կրթության, մասնագետ կադրերի և գիտության հարցը բարձրացնելու շնորհիվ հնարավոր կդառնա դեպքերի զարգացման ընթացքը նպատակաուղղել հօգուտ հասարակության և գիտատեխնիկական առաջընթացի: Դրա համար առկա է նաև մեկ այլ, չափազանց կարևոր նախադրյալ՝ երիտասարդությունը: Որակական առումով երիտասարդությունը հանրապետության աշխատանքային ներուժը բազմապատկում է առաջին հերթին համաշխարհային պահանջներից բխող գիտության ու տեխնիկայի հիմունքներին տիրապետելու իր պատրաստակամությամբ և հեռանկարով: Անհրաժեշտ է որոշակի պայմաններ ստեղծել ոչ միայն կյանք մտնող երիտասարդության մտավոր ունակությունների ձևավորման, զարգացման և կատարելագործման, այլև համաշխարհային հեքին համաքայլ ընթանալու բնականոն ընթացքը ապահովելու համար: Դա պետք է հնարավորություն ընձեռի համակողմանի մասնակցություն ունենալու աշխատանքի միջազգային բաժանմանը: Երրորդ հազարամյակի սկզբից նեթ ջանքերը

պետք է ուղղել դեպի հասարակության առաջընթացն ապահովող բնագավառները: Չէ՞ որ այս ասպարեզում է հասարակության գլխավոր հարստության վճռորոշ բաղադրամասը, նրանք են գիտատեխնիկական առաջընթացի ջահակիրները, ապագան կերտողները, նրա անվերջանալի շղթայի բոլոր հաջորդական օղակների շարքը ամբողջացնող բարձր որակավորման սերունդների վերարտադրությունը իրականացնողները:

Վաղը, մյուս օրը, երբ կյանքն իր պահանջները կթելադրի, ջրի երես դուրս կգան պետական մարմինների վարած քմահաճ քաղաքականության շատ կողմեր, հոսանքը իր հետ կսրբի և կտանի այսօրվա չափանիշներով հարցերը «լուծելու» կամային մեխանիզմներն ու մոտեցումները, կիշխեն իրավական օրենքները, որոնց առջև հավասար պատասխանատվություն կկրեն բոլորը՝ վերից վար, հասարակությունը կմտնի իր սովորական զարգացման բնականոն հունի մեջ, և օրինականության պահպանումը կդառնա համընդհանուր երևույթ: Անշուշտ, դա կպահանջի ժամանակ՝ հասարակության և տնտեսության կառավարման ժողովրդավարական հիմունքների լիակատար հաղթանակ, այսինքն՝ գործունեության ազատություն, տնտեսության զարգացման ներքին օրինաչափությունների և օրենքների տրամաբանական զարգացման ընթացքի բացահայտում, դրանց պահանջներից բխող կառավարման քաղաքակիրթ վարվելաձև, խելամիտ մոտեցում և գործելակերպ, ինչպես այժմ կառավարվում են ֆինանսավարկային և տեղեկատվական համակարգերը:

Հենց դա էլ կփրկի հասարակությունը արտագաղթից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

1. Դանիելյան Է.
Հին Հայաստանի ժողովրդագրության հարցեր 5

2. Կրկյաշարյան Ս.
Ժողովրդագրական տեղաշարժերը Հին Հայաստանում 11

3. Գրիգորյան Գ.
Գյուղական նոր բնակավայրերի հիմնումն ու բնակչության
վերաբնակեցումը միջնադարյան Հայաստանում 20

4. Մադալյան Ա.
Տոհմածառերի ուսումնասիրության նշանակությունը
պատմական ժողովրդագրության բնագավառում 40

5. Մելքոնյան Ա.
Հայ բնակչության էթնոկրոնական դիմախեղման
գործընթացներն Արևմտյան Հայաստանում
XVI-XVIII դարերում 47

6. Մուրադյան Հ.
Կարսի նահանգի ժողովրդագրական պատկերը
XVI-XIX դարի կեսին 61

7. Կոստանդյան Է.
Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական
գործընթացները XIX դարի 70-80-ական
թվականներին ըստ Գարեգին Արվանձտյանցի 77

8. Առաքելյան Գ.
Գանձակ-Ելիզավետպոլի գավառի (նահանգի)
ժողովրդագրությունը XIX դ. 87

9. Սարգսյան Հ.
Թիֆլիսի նահանգի հայ բնակչությունը
XIX դ. երկրորդ կեսին 95

10. Խոսրոևա Ա.
Ասորիների տեղաբաշխումը պատմական
Հայաստանում XIX դ. վերջին և XX դ. սկզբին 109

11. Սահակյան Ա.
Կյուրինի գավառակի ժողովրդագրական պատկերը
XIX դ. վերջին և XX դ. սկզբին 118

12. Գրիգորյան Գ.
Հայաստանի Հանրապետության բնակչության
վիճակագրությունը 1919 թ. 122

13. Խանլարեան Կ.
Մահմեդականացած հայութիւնը
ժամանակակից Թուրքիայում 129

14. Ազիզբեկյան Ռ.
Սոցիալ-ժողովրդագրական իրավիճակը
Հայաստանի Հանրապետությունում /1991-1995թթ./ 137

15. Խոջաբեկյան Վ.
Հայաստանի բնակչության տեղաշարժերի
միտումները XX դ. վերջին և XXI դ. սկզբին 156